

ԱՐԴ

Մատենաշար
Թիւ 9

ՍԻՄՈՆ ԶԱՒՐԵԱՆԻ ԱՌՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Պեյքով
2024

ՍԻՄՈՆ ԶԱՒԱՐԵԱՆԻ
ԱՆՏԻՊ ՆԱՍԱԿՆԵՐԸ

Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն
եւ ծանօթագրութիւններ՝ Երուանդ Փամպութեանի:
Պէյրութ, 2024, 216 էջ, 3 ներդիր:

ISBN 978-9953-0-6381-2

**Գիրքին մեկենասութիւնը
ստանձնած է ազգային մը՝
իր հօր յիշատակին:**

ՍԻՄՈՆ ԶԱՒԱՐԵԱՆԻ ԱՆՏԻՊՈՆԵՐԸ

Հ. Յ. Դաշնակցութեան իհմնադիր սերնդի գաղափարաքաղաքական հարուստ ժառանգութիւնն իր արժանի տեղն ունի հայ քաղաքական մտքի ուսկէ ֆոնդում, որի արժէքը պարբերաբար զնահատուել ու վերագնահատուել է սերունդների կողմից:

Տարիների ընթացքում այդ ժառանգութեան ուսումնասիրութիւնը սահմանափակուել է կուսակցութեան անդամների ու հետազօտողների նեղ շրջանակի կողմից՝ Քր. Սիքայէլեանի, Սիմոն Զաւարեանի ու Ռոստոմի (Ստեփան Զօրեան) ոչ մեծ աշխատութիւնների, յօդուածների ու նամակների քննութեամբ։ Սակայն Հայաստանի խորհրդայնացումից յետոյ հայ ազգային-քաղաքական մտքի երկփեղկման արդիւնքում սահմանափակուել են արտասահմանում մնացած եւ, ի վերջոյ, Բոստոնում հանգրուանած Հ. Յ. Դաշնակցութեան արխիւնների ուսումնասիրութեան հնարաւորութիւնները։

Ուստի, սկսած 1920-1930-ական թուականներից, սփիտքեան մամուլի էջերում ու զանազան տպագիր հրատարակութիւններում լոյս են տեսել Հ. Յ. Դաշնակցութեան իհմնադիրների առանձին յօդուածների ու նամակների ոչ մեծ հրապարակումներ։ Սակայն դրանց մի քանի անգամ գերազանցող՝ Հ.Յ.Դ. իհմնադիրների գաղտնի գրութիւնների ու, մանաւանդ՝ նամակների հրատարակութեան գործում կարեւոր նշանակութիւն են ունեցել Սիմոն Վրացեանի կազմած «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան» գոյզ հատորները եւ ապա՝ Հրաչ Տասնապետեանի ու Երուանդ Փամպութեանի ձեռնարկած «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» ստուարածաւալ ժողովածուների տպագրութիւնը։ Ժամանակի ընթացքում կուսակցութեան իհմնադիրների տարաբնոյթ գրագրութեան, ու առաջին հերթին, նամակամիի ամբողջացնան համար զգացուել է նաև նրանցից իւրաքանչիւրի ժառանգութիւնն ամփոփող առանձին հատորների կարիքը, որոնց շարքում լոյս է տեսել Սիմոն Զաւարեանի եռահատորեակը(1):

1.- Տե՛ս «Սիմոն Զաւարեան» մահուան եօթանասունամեակին առքի, Ա. հասոր, Պեյրութ, Համազգայինի Վահէ Սերեան տպարան, 1983, «Սիմոն Զաւարեան» Բ. հասոր, Պեյրութ, Համազգայինի Վահէ Սերեան տպարան, 1992, «Սիմոն Զաւարեան» Գ. հասոր, Պեյրութ, Անրիլիս, 1997:

Ամենելին էլ պատահական չէր, որ Սիմոն Զաւարեանից պահպանուած տարաբնոյք նիւթերն ամփոփող ժողովածուներին երբեմն տրուել է «Նշխարներ»(2) բնորոշումը, որովհետեւ դրանց քաղաքական ու փիլիսոփայական բովանդակութեանը զուգահեռ կարեւորուել է նաև կուսակցութեան խիդը համարուող անհատականութեան բարոյական որակների արժեւորման խնդիրը: Սիմոն Զաւարեան յեղափոխականին ու մարդուն նմանուելու բարոյական մղումը՝ **զաւարեանականութիւնը**, մեզանում ունեցել է ոչ միայն իր քաղաքական, այլև իմացարանական ու բարոյագիտական ակունքները: Ու թէեւ ժամանակն իր կնիքն է դրել նման գաղափարաբոյական անկեղծ մղումների վրայ, այնուհանդերձ, դրանցից խամրել է ոչ թէ Սիմոն Զաւարեանի կերպարը, այլ նրա ժառանգութիւնից հեռացածների յիշողութիւնը:

Եթի իր պատութեան վճռական պահերին հայ ժողովուրդը կանգնել է ինքնամաքրման և ինքնաճանաչողութեան՝ որակապէս նոր աստիճանի հասնելու հրամայականին առջեւ, Սիամանքոյի, Յովի. Թումանեանի, Աւ. Խասհակեանի, Գարեգին Նժդեհի և այլոց շուրթերով արտաքերել է **Սիմոն Զաւարեան** նուիրական անունը: Բանն այն է, որ Սիմոն Զաւարեանը սահմանել է հայ մարդուն ու, մանաւանդ՝ քաղաքական ու պետական գործչին անհրաժեշտ բարոյաքարաքական այն չափանիշները, որոնց չի կարող ստուերել ամենազօր քուացող ժամանակը: Նման իրողութիւնը յանգեցրել է նրան, որ հայ պոէտները Սիմոն Զաւարեանի կերպարը փնտռել են անցեալի փոշիներում, իսկ զիտնականները փորձել են նրա գործունեութեան մէջ տեսնել նոր ժամանակների յեղափոխական շարժումների, մասնաւորապէս՝ ոռուսական յեղափոխական նարողնիկութեան արմատական թերի (Մ. Քակոնին, Պ. Կրոպուտկին) գաղափարների ու բարոյաքանութեան կնիքը: Որպէս համամարդկային որոշակի գաղափարներ ներառող դարաշրջանային **կաղապարներ**՝ այդ գործիչների անարխիստական **զաղափարները** միզուցէ ունեցել են իրենց մակերեսային ազդեցութիւնը Սիմոն Զաւարեանի ներաշխարհի վրայ: Սակայն անհնար է բացայացտել նրա աշխարհայեացքն առանց այն պատմա-քաղաքական յետնախորքի ու, մանաւանդ՝ աշխարհագրական միջավայրի արժեշափերի խորը ըմբռնման, որում ձեւատրուել է Հ. Յ. Դաշնակցութեան խիդը դարձած անհատականութիւնը:

Սիայն հայկականութիւնն անարատ պահպանած միջավայրում էր հնարաւոր հայ ազգին ի սկզբանէ բնորոշ, բայց նրա դարաւոր ստրկացման արդիւնքում զգալի նահանջ ապրած արժեհամակարգի վերածնունդը, առանց որի չէին լինի հայ ազատամարտն ու նրա ծնունդը դարձած Հա-

2.- Տես «Նշխարներ Սիմոն Զաւարեանէ», Պէյրութ, հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան, տպ. Համազգային, 1968:

յաստանի Հանրապետութիւնը: Դարերի պատմութիւն ունեցող օտար արշաւանքների արդիւնք՝ հայրենարնակ հայութեան հիմնական զանգուածի ստրկացման, երկրի էքնիկ դիմագծի աղճատման պայմաններում անգամ Հայաստանի անառիկ լեռներում պահպանուել էր հայ մարդու՝ պարզ ու վճիտ նախնական տեսակը: Սիմոն Զաւարեանը հայոց լեռնաստանների ոգին պահպանած այդ տեսակի մարմնացումն էր՝ մեծամասնութեան ստրկացման արդիւնք կեղծիքի, շողոքրդութեան ու կամային որակների անկման մբնուլորսից հեռու մնացած այն մաքրամաքուր լեռնական հայը, որն իր ժամանակի յեղափոխական ու սոցիալիստական գաղափարների արտաքին կաղապարի միջոցով համամարդկային արժեքները կրկին ներբերեց հայ իրականութիւն:

Պատահական չէր, որ Սիցնադարում կրօնական համայնքի գաղափարաբանութեան տեսքով հանդէս եկած հայկականութեան արժենամակարգի հիմնաքարը՝ կարողիկոս Յովհաննէս Գ. Օճնեցու «Կանոնագիրը Հայոց»ը, աւելի քան հազար տարի անց նրա հայրենիք Օճունի հարեւան Այգեհատ գիւղում ծնուած Սիմոն Զաւարեանը փոխակերպեց նոր ժամանակներում մեր ազգային վարքը կանոնակարգած Հ.Յ.Դ. Կանոնագրի բարոյաքաղաքական նորմերի: Սիցնադարում ու նոր ժամանակներում մեր ազգային կեցութեան հիմքը դարձած այս երկու առաջնային փաստարդերը՝ որպէս Գուգարաց աշխարհի միջուկ՝ չքնաղ Լոռու մշակութային ֆենոմենի զոյգ խտացումներ, հասկանալի են դառնում միայն մեծ լոռեցու՝ Յովհաննէս Թումաննանի քառեակի միջոցով.

*Հազար տարով, հազար դարով առաջ թէ ետ, ի՞նչ կայ որ.
Ես եղել եմ, կա՞մ, կը լինեմ յար ու յաւետ, ի՞նչ կայ որ,
Հազար էսպէս ձեւեր փոխեմ, ձեւը խաղ է անցաւոր,
Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՞նչ կայ որ:*

Նոր ժամանակներում ազգի հնամամաքրման գործընթացի հունաւորման զործում թթխմորի դեր խաղացած հայոց լեռների զաւակները՝ Զաւարեանը՝ Լոռուց, ինչպէս նաև մշակութային մէկ այլ անկրկնելի միջավայրից՝ Գողքն զաւառից սերած Քրիստովոր Սիքայէլեանն ու Ռոստոմը, կերտեցին հայ ազատամարտը: Իսկ նրա ամենահերոսական դէմքերը՝ Դումանի ու Դրոյի նմանները՝ արեւելահայ, եւ Սերոր Աղբիւրի ու Գէորգ Զաւուշի նմանները՝ արեւմտահայ իրականութեան մէջ, նոյնպէս լեռնական անարատ միջավայրերում պահպանուած հայոց գենետիկ որակների կրողներն էին: Դարերի խորքից եկող նման ժառանգութիւնը Սիմոն Զաւարեանին դարձրեց չափազանց պահանջկոտ եւ անգամ դաժան, ինչպէս ինքն էր պարբերաբար կրկնում՝ «երեկոյ ստրուկի զաւակների» հանդէպ: Ուստի նա դարձաւ Հ.Յ.Դ. Կանոնագրի խստապահանջ ուսուցիչն ու նրա-

նից շեղուողների անխնայ քննադատը: Սեփական նուիրումի եւ ինքնազոհարեման բարձրութիւնից գնահատելով իր ընկերներին՝ նա առաջ անցաւ իր ժամանակից, ինչի հետեւանքով ոչ միշտ հասկացուեց ժամանակակիցների կողմից: Հայկական գաւառական միջավայրն ուներ իր իրայատուկ բարոյաբանութիւնը՝ «Մարդկութեան» իր կենցաղային ընկալումը, ուստի, լիներ դա Կիլիկիայում, թէ Տարօնում՝ Զաւարեանի պահանջկոտութիւնը յաճախ դիտում էր որպէս նման պարզունակօրէն գաւառական չափորոշչները ոտնահարող աւելորդ սկսգրունքայնութիւն:

Բայց Զաւարեանը միանգամայն ճիշտ հասկացուեց իր ժամանակի բաղաքական ընտրախսական լաւագոյն ներկայացուցիչների կողմից ու նրանց համար դարձաւ բարձր իդէալ, որի հմայքը չի մարել անզամ բազում տասնամեակներ անց: Ուստի այսօր էլ Զաւարեանի իրաքանչիւր խօսքն ու ասոյքը ոչ միայն կուսակցութեան հիմնախնդիրներից մէկի արժեքաւոր ժառանգութեան մասնիկն են, այլև անկախ պետականութեան պայմաններում անզամ մեզանում պահպանուղ աւանդական արատների յաղքահարման բալասանը:

Այդ պատճառով Զաւարեանի ժառանգութեան ամբողջացման առաջադրանքը վեր է սովորական գիտա-ճանաչողական հիմնախնդիրի մակարդակից: Սա ազգի ներքին առողջացման համար անհրաժեշտ՝ անցեալի ու ներկայի պայքարը նոր սերնդին փոխանցելու հերթական փորձն է: Ուրախալի է, որ այդ փոխանցման դժուարին գործը կրկին իրականացնում է Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիում պահուող Օք. Միքայէլեանի, Նիկոլ Դումանի ու Ռուսոսի անտիպներն արդէն հայ հասարակութեան դատին ներկայացրած՝ հայագիտութեան անխոնջ մշակ Երուանդ Փամպութեանը:

Ինչպէս Օքիստավոր Միքայէլեանի ու Ռուսոսի նամակների դէպքում, այնպէս էլ ներկայ հատորն ընդգրկող Սիմոն Զաւարեանի անտիպների տպագրութեան միջոցով, Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիուց յայտնաբերուած վերջին պատահիկները դրսում են գիտական շրջանառութեան մէջ: Դրանք սկսում են 1890-ականներից մնացած ոչ մեծ գրութիւններով, որոնք 20-րդ դարասկզբից արդէն կանոնաւոր տեսք են ստանում: Ժամանակագրական առումով այդ նամակները հիմնականում ընդգրկում են Հ.Յ.Դ. երկրորդ ընդհանուր ժողովին յաջորդած՝ իրադարձութիւններով հարուստ ժամանակաշրջանը: Չնայած Սիմոն Զաւարեանը Հ.Յ.Դ. երկրորդ ընդհանուր ժողովում ընտրուել էր Արեւելեան բիւրոյի անդամ ու Կովկասում մնացած Հ.Յ.Դ. ամենաճանաչուած առաջնորդն էր, բայց ինչպէս վկայում են արխիուցին վաւերագրերը, դրանից քիչ անց նա ժընեւում էր, ուր նամակներ էր գրում արդէն՝ Արեւմտեան բիւրոյի անունից: Այսպէս, 1903 թ. Յունիսի 9-ին, այդ մարմնի հետ Կիլիկիայի դաշնակցականների խորհրդակցութեան ժամանակ, նա Արեւմտեան բիւրոյի անունից է կազմել համապատասխան եզրակացութիւն, իսկ Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովից յետոյ՝

1905 թուականի սկզբներին, անձամբ ժամանել է Բէյրութ՝ մեծ դեր խաղալով Կիլիկիայի ուղղութեամբ յետագայ աշխատանքների կազմակերպման գործում:

Սինչ այդ նրա ուշադրութեան կենտրոնում էր նաեւ Սասունի ապստամբութիւնից յետոյ Տարօնում ստեղծուած քարդ կացութիւնը, որին օգնելու համար Սիմոն Զաւարեանը հսկայական ջանքեր է գործադրել: Ուստի միանգամայն հասկնալի էր, որ 1908-ի երիտրուրքական յեղաշրջումից յետոյ արդէն, գտնուելով Տարօնում, նա դրա համար հաշիւ էր պահանջելու իր կուսակցական ընկերներից....:

Նոյն շրջանում Սիմոն Զաւարեանն անմասն չի մնացել նաեւ Կովկասում տեղի ունեցող իրադարձութիւններին, մասնաւրապէս՝ Ռուսական առաջին յեղափոխութեան աւարտին կուսակցութեան ներսում ծաւալուած բուռն պայքարին, որն իր տրամարական հանգուցալուծումը գտաւ Վիեննայում տեղի ունեցած 4-րդ ընդհանուր ժողովի որոշումների հիման վրայ:

Երիտրուրքական յեղաշրջումից յետոյ Սիմոն Զաւարեանն արդէն Կ. Պոլսում էր, իսկ Կիլիկիայի հայութեան՝ 1909-ի դաժան կոտորածից յետոյ՝ Աղանայում, որտեղից նոյն թուականի Յունիսին երկար ճանապարհորդութիւն է կատարել տարբեր քնակավայրերում՝ ուսումնասիրելով տեղի ունեցած աղէսի բոլոր մանրամասները, որպէսզի ընդհամենը մի քանի ամիս անց՝ 1909-ի աշնանը, ստանձնի Տարօնի Ազգային վարժարանների տեսչութիւնը....:

Սիմոն Զաւարեանի մեծ հետաքրքրութեամբ ընթերցուող անտիա նամակների ներկայ ժողովածուի վերջին փաստարուղթը 1913 թուականին գրուած անթուակիր մի նամակ է, որում Հ. Յ. Դաշնակցութեան առաջնորդն իրականացնում է երիտրուրքական վերնախսախ ներսում ստեղծուած հակասական դրութեան ու մօսւեցող պատերազմի նախօրէին Ռուսաստանի կողմից խրախուսուղ բարեփոխումների իր վերլուծութիւնը: Մեր օրերի համար խիստ արդիական է Սիմոն Զաւարեանի եզրակացութիւնը՝ միմեանց բախուող, բայց երբեմն նաեւ միահիսուսուղ ռուս-քուրքական շահերի արանքում հայութեան համար ստեղծուած խիստ վտանգաւոր կացութեան մասին, որում առկայ են յիրակի մարգարէական կանխատեսումներ՝ «Սիւ կողմից ռուսների՝ հայերին շոյելը եւ միաժամանակ քրդերին ոյժ տալը թելադրել է տալիս, որ ռուսները ձգտում են ոչ այնքան բարեկարգութեան, որքան պղտոր ջրի մէջ ձուկ որսալու համար... Ընկած ենք երկու կրակի մէջ...» (ընդգծումը մերն է – Գ.Խ.) (4):

Ծաւալով ոչ մեծ, բայց խիստ արժեքաւոր փաստարդերի այս ժողովածուի աղքամական քննութիւնը ցոյց է տալիս, որ մանրամասնօրէն խմբագրուած ու տողատակերում տրուած համապատասխան բա-

4.- Տե՛ս ներկայ ժողովածուի էջ 193-ը:

ցատրութիւններով հիմնաւորուած՝ Սիմոն Զաւարեանի անտիպներով Երուանդ Փամպութեանն աւարտում է մեր մեծերից մնացած գրութիւնների ամբողջական գործը: Աւարտում է՝ կատարուած աշխատանքի կարեւորութեան խորը գիտակցումով, քայց նաև՝ երբեք վերջ չունեցող այս գործի շարունակման ակնկալիքով: Դրանով իր հպարտութիւնն ու պատասխանատուութեան զգացումը նա փոխանցում է նաև մեզ, քանզի պատի ունեցանք լինելու Երուանդ Փամպութեանի նման վաստակաշատ գիտնականի՝ քազում սերունդների համար հաւաքած հարուստ սկզբնաղբիւրների առաջին մեկնարանն ու հրատարակութեան գործի մասնակիցը:

ԳԷՈՐԳ Ս. ԽՈՒԴԻՆԵԱՆ

**Պատմագիտութեան դոկտոր
«Վեմ» հանդեսի խմբագիր**

ՍԻՄՈՆ ԶԱՒԱՐԵԱՆԻ ՆԱՍԱԿՆԵՐՈՒՆ ՍԱՍԻՆ

Սիմոն Զաւարեանի նամակներէն որոշ թիւ մը առաջին անգամ հրատարակած է Սիմոն Վրացեան իր կազմած «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան» գործի երկու հատորներուն մէջ (1934 և 1938 թթ.). ասոնք Զաւարեանի նամակներու հնագոյններէն են և կը վերաբերին 1890-ական թուականներուն: Շատ աւելի ընդհանուր եւ համապարփակ բնոյք ունի, սակայն, 1983, 1992 և 1997 տարիներուն Հրաչ Տաննապետեանի կողմէ Սիմոն Զաւարեանի ամբողջական գործերուն նուիրուած եռահատորը, որուն Բ. և Գ. գիրքերուն մէջ կազմողը լոյս ընծայած է համագումար 423 նամակներ:

Ցայտնենք որ վերեւ յիշուած հատորներուն մէջ լոյս տեսած գրեթէ բոլոր նամակները քաղուած են Պոսթը-Ուորքրատունի Հ. Յ. Դաշնակցութեան արխիվներէն: Այդպէս է, բնականաբար, պարագան նաև ներկայ հատորվ լոյս ընծայուղ 111 անտիպներուն, զորս յայտնաբերած ենք նոյն դիւանատան մէջ կատարուած յաւելեալ պրատումներով:

Ս. Զաւարեանի նորայայտ նամակներուն մեծագոյն մասը գրուած է 1903 թ. յետոյ, հեղինակին Թիֆլիսէն Ժընեւ անցնելէ ետք: Զուիցերիխական այս քաղաքին մէջ, պաշտօնաթերթ «Դրօշակ»ի խմբագրութեան կողքին, իրեւ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ ան պիտի վարեր կուսակցական-կազմակերպական մարմիններու հետ գրագրութեան կապը: Շուրջ տարի մը Ժընեւ մնալէ ետք Զաւարեանը կը գտնենք այլեւայլ վայրեր: 1904-ին Սոֆիա է՝ հոն գումարուող Հ.Յ.Դ. երրորդ Ընդի. ժողովին, ուր կ'ընտրուի անդամ Լեռնավայր-Կիլիկիոյ Պատասխանատու մարմնին եւ այդ հանգամանքով կ'անցնի Արեւելք՝ գործելով ընդհանրապէս Աղեքսանդրիոյ, Գահիրէի և Պէյրութի մէջ: Կովկասի մէջ ծայր առած հայ-թարարական ընդհարումներուն, Բիւրոյի անդամներուն մեծ մասը եւ հանգամանաւոր ընկերներ կը փութան Կովկաս. Զաւարեան եւս 1906 թ. առաջին ամիսներէն հոն է շուրջ երկու տարի, մինչեւ 1908 թ. Օսմանեան Թուրքիոյ մէջ սահմանադրական կարգերու հաստատումը: Այնուհետեւ, 1909-ի Աստանայի կոտորածներէն ետք, զինք կը գտնենք Կիլիկիա, ապա Տարօն-Սասուն, ուր երկու տարեշրջան (1909–1911) կրթական տեսուչի պաշտօնով կը զբաղի այդ լեռնաշխարհի գիւղերուն մէջ լուսաւորութեան գործի զարգացումով եւ տարածումով: Իր կեանքի վերջին երկու տարիներուն Դաշնակցութեան խիդը համարուող Սիմոն Զաւարեան անցած է Պոլիս, ուր եւ 1913 Հոկտեմբեր 14/27-ին կը կնքէ իր մահկանացուն:

*
* *

Ինչ կը վերաբերի Զաւարեանի նամակներուն, անոնք ստորագրուած են առ հասարակ իր ծածկանուններով.— Սմբատ, Ամ. Օհաննան, նաև Սիմոն: Ժընեւ գտնուած միջոցին, կուս. մարմիններուն կամ անհատ ընկերներուն ուղղուած գրութիւններուն տակ կը ստորագրէր «Արեւմտեան բիւրօ»: Այդպէս էր, հակառակ անոր որ ինք անդամ էր Արեւելեան բիւրոյին: Ի դեպ, Արեւելեան բիւրոյի անդամ Ռոստոմ Եւս, երբ գտնուէր Ժընեւ կամ Պոլիս, նոյնապէս կը ստորագրէր Արեւմտեան բիւրոյի անունով:

Ի վերջոյ, Ս. Զաւարեանի ձեռագրին վարժ մէկու մը համար, անոր ընթերցումը մասնաւոր դժուարութիւններ չի յարուցաներ, բացի այն պարագաներէն, երբ, ինչպէս կը պատահի յաճախ, հեղինակը իր գրութիւնը կը խճողէ լուսանցքային եւ տողամէջի սրբագրութիւններով եւ յաւելումներով:

Ե. Փ.

Փաստ. 751-1

Շաքիր փաշայի Կարին ժամանումին առթի (28 Օգոստոս 1895) Ղարամելիքի (Մելիք-Գրիգորեան Բարսեղ) «Արօշակ»ի խմբագրութեան ուղարկած թրակցութեանց վրայ (10 Սեպտ. 1895) իբրև մակագրութիւն կը գտնենք Ս. Զաւարեանի հետեւեալ ծանօթագրութիւնը.—

Նամակները էրգրումից են. դրանց բովանդակութիւնը արդէն յայտնի է լրագիրներից: Գուցէ օգտուէք Տանից(1), լրագրներում դուրս չեկած կտորներից — գրողը Բարսեղ Մելիք Գրիգորեանն է, որը մեծ յոյս էր դնում քրդերի համերաշխութեան վերայ:

1.- Temps, ֆրանսական մեծ օրաքերք:

Սիմոն Զաւարեան (Սմբատ Օհանեան) շատ հաւանաբար կը գրէ Թիֆլիսէն «Դրօշակ»ի խմբագրութեան, Ժընեւ: Իր նամակը կ'ընկերանայ Տապարեան ստորագրութեանք գրութեան մը, ուր կը նկարագրուին 1895-ի Համիտեան կոտորածներու նախօրեակին թուրք անկանոն զինեալներու Տրավիզոն քաղաքի եւ շրջակայքի մէջ կատարած ասպատակութիւնները: Տապար, Տապարեան ծածկանունն է Տրավիզոնի: Գրութիւնը Զաւարեան կը նակագրէ այսպէս. «Վաղուց է գրած, բայց միայն այսօր եմ ուղարկում, 13 Հոկտ.: Բովանդակութիւնը ձեզ յայտնի է արդէն»:

[13 Հոկտ. 1895]

Ահա ինչ ունենք Տրավիզոնից այս քանի օրս: Մրանից յետոյ նամակում գրւած խուժանը պիտի ենթադրել յարձակւել է քաղաքի վերայ եւ հայոց թաղաք արեան դաշտ է դարձել...: Նաւեր չը կան, յարաբերութիւնները Բաթումի եւ Տրավիզոնի կտրած են. այս առթիւ թուուցիկ չը հրատարակեցինք որովհետեւ Պոլսի ցոյցը⁽¹⁾ այս գործի տպաւորութիւնը բոլորովին մարեցրեց: Միւս կողմէից չը գիտէինք արդեօք Պոլսում ի՞նչ դիրք են բռնած մերոնք: Հանէսի⁽²⁾ նամակից էլ երեւում է որ մերոնք առանց իրենց (այսինքն կենտրոնական խմբի) մասնակցած են: Եթէ թուուցիկ հրատարակւէր չէր կարելի դրա մասին չը գրել, բայց ինչպէս գրել երբ ինիցիատիւն⁽³⁾ պատկանում է ուրիշներին! Այստեղ լուր է տարածւել իրեւեւ 24-ին թէ 26[ին] մերոնք պիտի անէին մի բան, բայց ի հարկէ որը առանձին նշանակութիւն չի ունենալ: Մենք զարմացած ենք մեր ընկերների դիրքից Պոլսում: Ինչու էին յետ կանգնում ախր. չէ որ գեռ 2-3 ամիս առաջ գրում էին թէ մի այդպիսի բանի պատրաստում են, եւ մեզանից հարցնում էին ինչ ձեւ. տեղը արդեօք աւելի յարմար է. փող էին ուզում դրա համար: Բոլորը այստեղ դժգոհ են նրանց դիրքից. այդ պատճառաւ էլ ձեզ հեռագրւեց, որ Օհանէսը սխալւած է... Ահա մեր խոհեմ, աւելի «Հիմնական» գործունէութեան հետեւանքը: Մինչեւ մենք պատրաստում ենք, ոյժ ենք ժողովում, ուրիշները յանկարծ մի բան են սկսում եւ դու ստիպւած ես լինում քո ոյժը նրանց տրամադրութեան տակ դնել... Նոյնը կարող է վաղը պատահել եւ վան ուրիշ տեղեր: Պիտի շտապել, եթէ ոչ կամ հարցը կը մեռնի, կամ մենք կը լինենք յետ թողնւած ժողովրդի հոսանքից: Դրութիւնը դա է: Ռուսները կարին աշխատում են համոզեցնել հայերին որ ընդունեն Շաքիր փաշային, բայց չնորհիւ մասամբ մեր ընկերների աշխատանքի դա չի յաջողւել. կարծես այդ զահրումար փոլիթիքայի դրութիւնը սա է: Ռուսները մինչեւ Միքիրիոյ երկաթուղու վերջանալը չեն

ուզում այս կողմերում պատերազմ զարկեցնեն[sic]: Այդ երկաթուղին եւ չի-նացոց պարտքի ապահովելը նեղ դրութեան մէջ է դրած երկրի ֆինանսները: Իսկ անգլիացիք, որովհետեւ տեսնում են որ ռուսների ընթացքից շատ կոր-սընցնում են Զինաստանում, աշխատում են ուշքները այս կողմը ձգել, նոյ-նիսկ առաջարկել բաժանել Տաճկաստանը... իսկ ռուսները դա լաւ հասկա-նում են եւ այդ պատճառաւ էլ աշխատում են ամէն կերպ խաղաղացնել հայ-կական հարցը, ինչ գնով էլ այդ խաղաղութիւնը ձեռք բերւի (թէկուզ ռե-ֆորմներով, որոնք ի հարկէ այնքան էլ դուրեկան չեն):

Բայց ո՞վ գիտէ. անգլիացիք հէնց վախեցնում են մեզ թէ՝ եթէ մի բան ե-ղաւ ներսը, անպատճառ ռուսները գրաւելու են...

**Բարեւ բոլորիդ՝
ՍՄԲ[ԱՏ] ՕՀԱՆ[ԵԱՆ]**

- 1.- Ակնարկութիւն՝ հնչակեան կոսակցութեան կազմակերպած Պայզը Ալիի ցոյցին:
- 2.- Հանէս կամ Օհանէսը՝ Յովի. Եռութեանն է, դաշնակցական հին զործիչ:
- 3.- Նախաձեռնութիւնը:

Ծանօթ խմբագրութեան.-

Արխիային համարակալում չկրող եւ անստորագիր, սակայն որոշ կերպով Սիմոն Զաւարեանի ձեռագրին պատկանող այս գրութիւնը յայտնաբերած ենք Պէյրութի Հ.Յ.Դ. արխիատան մէջ պահուող եւ Սիմոն Վրացեանի կողմէ պատրաստուած թղթապահակի մը մէջ, որ կը պարունակէ յեղափոխական տարբեր դէմքերու, յատկապէս Ս. Զաւարեանի գլուխն պատկանող ձեռագիր փաստաքութեր: Ասոնցմէ մէկը, սոսրեւ ներկայացուած, կը գտնուի բաւական վատ վիճակի մէջ, գրուած է զաղտնի թանաքով ու թէեւ «քացուած» է յաջողութեամբ, այսուհանդերձ տեղ-տեղ որոշ բառեր կը մնան անընթեռնելի:

Ս. Զաւարեանի այս նամակը գրուած պիտի ըլլայ Թիֆլիսէն, հաւանաբար Բիրոյի անունով, եւ ուղղուած Ժընեւ՝ «Իրօշակ»ի խմբագրութեան. այս մէկը յստակ կ'երեւի նամակի պահարանին վրայ գրուած խմբագրատան հասցեով: Նամակին մէջ յիշատակուած գրեթէ բոլոր անունները կը պատկանին Խանասորի արշաւանքին մասնակից անձնաւորութիւններուն: Հոն կը շօշափուին, ի միջի այլոց, արշաւանքէն ետք կարգ մը դէմքերու անցնիլը Թիֆլիս, ուր անոնք Բիրոյի ընկերներու ներկայութեան պիտի կատարէին փոխադարձ մեղադրանքներ:

Նամակի շարուածքին հետ յաջորդական էջերուն կուտանք նոյնպէս բնագիր օրինակին լուսապատճենը:

Ի դէայ, յայտնենք որ Զաւարեանի այս նամակին բնօրինակը ի մօտոյ կը դրկուի Երեւան՝ Հ. Յաշնակցութեան թանգարան:

Ե. Փ.

Սիրելիք!

Վերջերս զբաղւած էինք երկար ու բարակ բանակցութիւններով, Տաճկաստանցիք բացատրում էին թէ ինչո՞ւ չէին կարողացել հաշտ վարւել Նեշտարի ու Նիկոլի հետ(1) եւ պահանջել էին նրանց հեռանալը: Նիկոլը մեղադրում էր նրանց եւ պահանջում է ընկերական դատ ու բաւարարութիւն: Վարդանը(2) մեղադրում է Նիկոլին որ գէնքին[?] դիսցիպինահի չի ենթարկըւել գործի ժամանակ: Բօրիսը(3) մեղադրելով շատ շատերին հրաժարական է տալիս, առաջարկելով այս տեսակ յարաբերութիւններն ու «խնամութիւն»ը մեր մէջ տեղի չունենայ: Գանգատում է մասնաւորապէս Արվախի(4) վարձունքի դէմ Հայկի հետ (հեռանալ 24 ժամում): Բօրիսի եւ Վարդանի ասելով Պոլ[սի] գործը(5) յաջողած է եղել – 4 սենեակ քանդւած է, 200 հոգի վիրաւորւած... Ինչո՞ւ այդ բաները դուք լուռ ու մունջ էք անցկացրած, ինչու այս այն կողմ ձէն ու ձուն չէք տւած այդ մասին:

Մի խօսքով սատանան էլ կը կոտրի իր ոտքը այս ամէնի մէջ: Մի քանիսը առաջարկում են ընկերական դատաստան, միւսները Ընդհ. ժողով: Վերջինիս մասին չը գիտեմ, բայց մենք անցեալ տարւայ ժամանակ[?] հաւանական կ'ունենանք շրջանական ժողով: ... Այս կողմի գործքերի միսիթարականը նաև է որ 61 հոգի հասած են յաջողակ Սերովը(6) մօտ. Սերովըն է ճանապարհ ընկել Աբրօի գերեզմանը(7): Նիկ[օլն] ու Վարդանը հրաժարւեցին առայժմս գնալ: Պատրաստում է գնալ (աւելի իբրեւ ապրանքի պահապան) Սաքօն(8) մի արհեստաւորի հետ ու մի շաբաթ է նստած սպասում է. փող չը կայ ճանապարհ գցելու: Այստեղացոց թիւը աւելացնում ենք. – Ռոստոմի դասընկեր Ստեփան Օհանէսով, (Համլէտ), Վասօյով(9) եւ մի երկու ուրիշներով: Գուցէ դրամական քիչ օգնեն:

Խուզարկութիւնների սեզօնը [2 բառ անընթեռնելի]. Բաքու մի քանիսին [1 բառ անընթեռնելի] վերջերս բանտարկւած է կաթողիկոսի քրոջ տղայ Խորէն Խրիմեանը: Յովսէ[էփ] Արդութեանին(10) բերած են այստեղ:

Ստացած ենք 11, 12, 13 համարները(11): 96 թ.ի զեկուցագիրը շատ լաւ է կազմւած... խոստացածս այս դալմաղալների պատճառաւ ձգձգւեց: Ամենաէկան նրա կէտը (ոչ ազգային անկախութեան) նորէն յայտնւած է վերը յիշւած զեկուցագրում:...

Վազգէնը(12) գնում է... Շարաֆը(13) կենդանի է: Սալմաստցիք վախում են վրէժիւնողութիւնից:

Բարեւներ

13, XI , [18]97

.....


Suisse Genève
Mlle S. Sestier
Roseraie № 28

- 1.- Նեշտար – ծածկանուն Ասրպատականի հիմն ըմկերներէն Օհանեան Քրիստավորի (1860-1932): Նիկոլը՝ Նիկոլ Դումանն է՝ Տէր Յովհաննիստեան Նիկողայոս (1866-1914):
- 2.- Վարդանը՝ Խանասորի արշաւանքին իրամանատար Վարդանն է, բուն անունով՝ Ստեփան Սարգսի (1867-1943):
- 3.- Բորիս – ծածկանուն Խաչատրեան Սմբատի (1863-1937):
- 4.- Արվախի – ծածկանուն Վարդ-Պատրիկեան Յակոբի (+1907):
- 5.- Պոլսի գործը – ակնարկութիւն նախորդ տարի գործադրուած Պանք Օքքոմանի գրաման և անոր զուգընթաց ժուրբիոյ մայրաքաղաքին մէջ տեղի ունեցած կոհմներուն:
- 6.- Սերովը՝ Արքիր Սերոբն է – Վարդանեան – (1864-1899): Զաւարեան կ'ակնարկէ ֆիտայական այն խումբերուն, որոնք այդ տարիներուն Ասրպատականի վրայով անցած էին Սասուն:
- 7.- Աբրոյի գերեզմանը Սասունն է: Այս վերջինին համար այդ ծածկանունը կը գործածուէր իր յիշառակ ծանօթ ֆեսայի Սահակեան Մկրտիչի – Աբրօ (1855-1896), որ այդ լեռնաշխարհի մէջ ձիւնամքրիկի զոտ զացած էր:
- 8.- Սարօ – ծածկանուն Խանասորի արշաւանքի դեկավար դէմքերէն Ծովիանեան Սարգսի (1870-1908):
- 9.- Վասօ – ծածկանուն հին յեղափոխական դէմքերէն Մելիք-Գրիգորեան Բարսեղի (1856-1915):
- 10.- Արդուրեան Յովենի (1863-1925) – ծանօթ Իշխան ծածկանունով, Խանասորի արշաւանքի հրամանատարներէն:
- 11.- Ակնարկութիւն «Դրօշակ» պաշտօնաթերթի համարներուն:
- 12.- Վազգէն – ծածկանուն յայտնի մարտիկ Տերոյեան Տիգրանի (1872-1898), որ իր զինատար խումբով Վան հասնելէ տարի մը նոր պիտի զոհուէր Կուռուպաշի կոուին:
- 13.- Շարաֆ – քրտական մազրիկ աշիրերի ցեղապեսն էր, որ յաջողած էր պրծիլ Խանասորի արշաւանքի ժամանակ:

Յաջորդ էջերուն՝ Ս. Զաւարեանի զաղտնի թանաքով գրուած բնագրի լուսապատճենները: Վերջին էջին՝ «Դրօշակ»ի խմբագրութեան հասցէն:

Wrote! Letter of Dr. J. and H. L. Finsen
and General Jameson of Scotland. Wrote to my
old friend Mr. George and the Rev. Mr. Finsen
the next day. The Edinburgh - Edinburgh
in memory of the Queen, Francis C.
Left for my - 50th birthday. In my 50th
and - self-sacrifice spirit - the - very - very
old; long - life - long - 53. Left
at 10:30 a.m. by train to Edinburgh
and took a boat to Fife. I was very
tired after the long journey and had
nothing to eat or drink during the
day. Spent the afternoon at the
Glasgow & Edinburgh University
library. Bought a book and a
copy of the "Quarterly Review".
Left Edinburgh at 2:30 p.m.
Left (distance 24 miles). Traveled
by express until 6 p.m. Got 3 - 4 miles
to Kirk - 4 miles to Newmarket & 2, 200
feet of height - 34 - 37 -
feeling quite well as far as I could tell
myself. Left - 34 miles from
38 - a mile 384 yards above sea level.
The railway was made by the hand

Want to you what do. I have had
enough of it. I have been away from
you all day long: I have been back
15 hours. They fed me two meals
in general practice when
they arrived: ... You have got what
you wanted. On 5-7-61 G. H.
was sent to you by Mr. W. M. S.
Wardle & I am writing to tell what
H. has done: He is - trying to make
the arrangements. G. H. is trying to
get you (and his) money paid
out (and) because of last night's
H. - It is hard to - try and make
arrangements. G. H. is trying to make
it hard: He is trying to make
you - money paid him. He is trying
to get you (and) his money paid
to him - and he is trying to get you
his wife:



Յարգելի Օր. Մարիամ!(1)

Անցեալ անդամ լուր ստացայ Զեզանից որ քննութիւնների ժամանակ հանդիպած էք անյաջողութեան եւ մտադրութիւն ունէք բոլորովին թողնել արտասահմանը եւ վերադառնալ ընդմիշտ Կովկաս։ Թէ եւ ես անձամբ շատ էլ ուրախ չեմ այդ ձեր անյաջողութեան համար, այնուամենայնիւ եթէ ձեր գրածը վերջնական որոշում է, ես ունիմ մի փոքրիկ առաջարկութիւն։ Բաժնումի շրջանի Արտանուշ քաղաքում փնտում են վարժուհի։ Ռոճիկը 40 ո[ուբլի] է ամսական, չհաշւած բնակարանը։ Զեր աւանդելիք առարկաները լինելու են հայերէն եւ թուաբանութիւն (չաբաթական եթէ չեմ սխալիր 18 դաս)։ Եթէ դուք ուզենաք օգտւել տեղական պայմաններից եւ պարապել ֆըրանսերէնի դասերով, համոզւած եմ կարող էք վաստակել էլի մի 30 ո[ուբլի] եւ այլ միջոցներով բոլորովին ապահովել ձեր ընտանիքը։

Նորից կրկնում եմ, ներէք այս իմ առաջարկութեանը եւ ընդունէք իբրեւ հաւաստիք իմ դէպի ձեզ ունեցած յարգանքը եւ ընկերական սէրը... Պատասխանը հարկաւոր է իմանալ ձեզանից մինչեւ Յունիսի 18-ը։

Մնամ Զեզ յարգող
Ս. ՕՀԱՆԵԱՆ

1.- Զաւարեանի այս նամակը գրուած է Թիֆլիս եւ ուղարկուած Ժընեւ։

Սիրելի Յարութիւն ի Կարս,

Քանի շաբաթ առաջ շնորհակալութեամբ ստացայ քո գրած լուրերը Արիշի [?] եւ Մենակի(1) մասին։ Դժբախտաբար այդ լուրերից մէկում կային տիպուր կէտեր եւ ես անհամբերութեամբ սպասում էի որ նոր տեղեկութիւնները միջոց կը տան ինձ քիչ աւելի հանգիստ լինել։ Ահա ինչ, եթէ մինչեւ նամակիս առնելը չես գրած, շտապիր գրել նոր ունեցած տեղեկութիւնները։ Զանազան կողմէրից տարբեր տարբեր խարարներ են գալիս, որ գցում են ինձ մտատանջութեան մէջ... բացի այդ ես մտածում էի մի քանի գրքոյկներ գրել Արաբոյի, Սարկաւագի, Թաթուլի(2) եւ մի քանի այլ մեր ժողովրդական գործիչների մասին։ Տեղեկութիւնները շատ են պակասում։ Խնդրեր է[ի] ընկերներից ինչպէս եւ քեզ ծանօթ աշուղներից ժողովել այդ տեղեկութիւնները, նրանց մասին եղած երգերը (քրդերէնը հայերէնի թարգմանելով) եւ այլ յիշողութիւնները եւ ուղարկելու ինձ։ Դրանով շատ ու շատ կը պարտաւորացնես զիս եւ փոխարէն պատրաստ ժամանակ ամէն մի մասնակցողին եւ աշխատակցին կը նւիրեմ մի քանի տասնեակ օրինակ։

Վաղուց է Վահանից(3) (Աբրոյի գերեզմանատեղից) նամակ-լուր չունիմ։ Ի՞նչ է պատահել, արդեօք հիւանդ չը լինի։

Գերմանական թերթերում լուր պտտեց իբր թէ Բայազէդի վրայով իսմբեր են անցել դէպի ներս եւ իբր թէ ուուսաց կառավարութիւնը ուզում է այդ միջոցաւ հայոց խնդրը նորից բանալ։ Ճի՞շտ է արդեօք դա։

Ուզածդ թերթերը միշտ ուղարկուում է. լուր չը տւիր ստանում ես թէ չէ։ Երկաթը(4) գնալու էր Գիւ[ակ]ի տեղը(5). Հասա՞ծ է արդեօք։ Ի՞նչ վիճակի մէջ են գաղթականները... նրանց ազա՞տ թողած են թէ միայն ժամանակամիջոց են տւած։ Յուսով եմ այս բոլոր հարցերին կը ստանամ պատասխան եւ որ առ հասարակ գոնէ ամիսը մի անգամ կը թղթակցես հետո, գրելով բոլոր նորութիւնները. այդ տեղեկութիւնները այնքան էլ անկարեւոր չեն, ինչքան քեզ թւում է։

Շատ ու շատ բարեւներով՝ քո Ս. ՕՀ[ԱնեԱն]

Մրգաստանից(6) ստացար իմ գրքերը։ Հասցէս նոյնն է։

1.- Մենակ՝ Առստամեան Գէորգ (1882-1903):

2.- Թարուլ, Արամ-Աշոտ (Արամ Արամեան). կախաղան բարձրացած 1899ին։ Արարոն նահատակուած էր 1893ին։ Սարկաւագի բուն անոնը՝ Տէր Ղետնդեան Յակոբ (1840-1890):

3.- Վահան Սանտէլեան, Դաշնակցութեան ներկայացուցիչը Սասնոյ նէջ։ Աբրոյի գերեզմանատեղը՝ Սասոնն է։

4.- Երկաք, Աշոտ Երկաք (Արմենակ Լեւոնեան) (1871-1904):

5.- Գիսակ, Վարդգէս (Յովիկ Սերենկիլեան), Վան-Վասպորականի ղեկավարը։ «Գիսակի տեղ» կանն է։

6.- Երեւանից։

Արեւելեան քիւրոյի (Թիֆլիս) կողմէ Ատրպատականի Կ. կոմիտեին ուղարկուած նամակ, Ս. Զաւարեանի (Ս. Օհանեան) ստորագրութեամբ:

3 / II / 1902

Հնկերներ!

Մօտ 10 օր առաջ փոխադրւած է ձեզ (Մարտիրոսի) անունով 300, որ հաւանական ստացած կը լինիք: Ուկ[անապատ]ից(1) էլ փոխադրած են 200: Յուսով ենք սա առայժմս բաւականութիւն կը տայ Գիսակի(2) պահանջներին: Ինչպէս միշտ, այդ դրամի մի մասը հարկաւ Շամ(3) կը փոխադրէք: Առանց դժւարութեան ամիսը 100 նրանց կարող էինք հասցնել այդ գծով: Եթէ շատ ուշացի, լուր տւէք, յիշեցրէք:

Գիսակը իր վերջի նամակում շեշտած է զին[լորական] վարժողութիւններին ծանօթ մէկի վերայ: Սամսոնն(4) էլ մի ուրիշին էր ուզած իրա շրջանի համար. երկուքն էլ Անմեղին(5) էին յիշած, այն ինչ վերջինս մեր շրջանի հարիւրապետն է վաղուց: Մեզ առաջ էլ թւում էր որ այստեղ վարժողութեան գործը շատ աւելի գէշ, ուրեմն եւ կարեւոր է քան ներսը: Վերջապէս, այսքան դէպքերից յետոյ Անմեղին նորից դիմելը մի քիչ ծանր է: Գուցէ ինքը այդ տեսակ առաջարկ անէ. դա ուրիշ հարց է:

Այդտեղի Վարդանը (Պետրոսի ուզած ուուս[ական] անցագիրը դորա համար չը հասկացայ ինչու համար է) – Վարդանը լաւ կ'անէր եթէ Մուշեղի հետ յարաբերութեան մէջ լինէր: Նրանք միմիանց լաւ ճանաչում են ու կարող են շատ օգտակար լինել Մուշեղի հայրենիքի կողմերը. վերջապէս այս կողմերը մնալով Մուշեղը կարող է փչանալ – ինչպէս լսել եմ խմել է սկսել եւ եթէ այդպէս շարունակի վատ հետեւանք կարող է ունենալ... Եթէ Վարդանը գրէր, գուցէ նա գնար այդ կողմերը. պատրաստէին որպէսզի յարմար ժամանակ կարողանային միասին գնալ... ես Մուշեղի հետ խօսած եմ... դրանք բաւարարութիւն կը տային եւ Գիսակի պահանջին:

Դուք «մասեր»(6) էիք ուզած. բանից գուրս է գալիս որ ձեր ուզած մասերից այստեղ չը կայ... գուցէ թորոսը կարողանայ (եթէ այս կողմերը անցնէ) մեր ունեցած խառը քանակութիւնից ջոկել... 10 Հ[ազար] մանրուք էինք ուղարկած Մրգաստանի(7) կողմերը. արդեօք ստացաք թէ չէ...

Մեր բախտը չի բանում ու չի բանում... Առաջնորդի յայտարարութեան հիման վերայ գտած էինք 3 հատ ուսուցիչ: Արդէն մէկը նոյնիսկ ճանապարհւելու էր առանց Առաջնորդից պատասխան առնելու, երբ յանկարծ եկաւ պատասխանը Համբարձում Առաքելեանին որ ուսուցչները արդէն վարձւած են: Դա ինչ Փոկուսներ(8) են... Այդչափ էլ լրբութիւն?!

**Ինչպէս երեւում է այդ թող փչողը բոլորովին իր ֆրոնտը փոխել է...
Ես չեմ կարծում որ ձեր յայտնած վախը նշանակութիւն ունենայ զուռնա-
[չի]ների(9) առաջ գնալու վերաբերմամբ:**

**Զէ որ նրանք բաժանաւած են համարում որեւէ «ազգային» բնաւորութիւն
կրող գործից, եւ քարոզում են միանալ ընդհանուր բանւորական շարժման?**

**Իսկ այդտեղ բաժանումը կարող է միայն թայֆայական բնաւորութիւն
ունենալ... Իսկ թայֆայութիւնների ոտը կարճ է առհասարակ:**

**Պարթեւը ասում էր որ այդտեղի պարտքերի վճարելը աւելորդ է, ինչպէս
դա հասկանալ?**

**Անտոնը(10) մի քանի ամսով հեռանալու է. նամակները կը ստորագրէ
սրանից յետոյ պլր. Մինասեանը:**

**Նամակաբերս գալիս է այդ կողմերը իր մասնաւոր գործերով: Եթէ պէտք
ունենաք, ձեզ էլ կարող է օգտակար լինել – լաւ արհեստաւոր է: Ընկերնե-
րից մի քանիսը ասում են որ բաւականին վստահելի է: Հետը կապ ունենալը
կարող է օգտակար լինել: Սամսոնին տւած հասցէներով կարող էք շարունա-
կել գրել... Սամսոնի գրած 3 նամակները ստացւած են:**

**Բարեւներ
Զեր Ս. ՕՀԱՆԵԱՆ**

1.- Պարուից:

2.- Գիսակ կամ Վարդգէս (Յովի. Սերենկիլեան), Վասպուրականի դեկավար դէմքերէն:

3.- Վաճ, Վասպուրական:

4.- Սամսոն կամ Գարեգին. Աստրատականի դեկավար դէմքերէն Ստեփան Թադէոսեանն է,
Քրիստավիրի բրոջ դրիմերէն:

5.- Անմեղ, Անմեղեան ծածկանունն էր Սե Զարեցի Սաքոյի (Սարգիս Ծովիանեան):

6.- Խոսք կը վերաբերի գէնքի մասերու:

7.- Սրգաստան. ծածկանուն Երեւանի: Մանրութ – այստեղ կը նշանակէ փամփուշտ:

8.- Խալեր, աճպարարութիւններ:

9.- Հնչակնաններու:

10.- Անտոնը նոյն ինքն Ս. Զաւարեանն է, որ արդարեւ շուտով պիտի հեռանար Կովկասէն: Յա-
զորդ ամիսներուն զինք կը զտնենք Երևան, Մարտ-Ապրիլ ամիսներուն՝ Պերլին, Մայիսին՝ Փարիզ,
այնուհետեւ Ժընեվ:

Փաստ. 12-6

Կեղծ նամակ է, որ պէտք է «քողարկէր» Վան՝ Գիսակին (Յովհ. Սերեն-կիլեան) ուղղուելիք Ս. Զաւարեանի իսկական գրութեան, հաւանաբար զաղտնի թանաքով գրուած:

11 Փետրւար 1902

Յարգելի բարեկամ

Իմ վերջի նամակը հաւանական(1) այժմս ստացած լինիս: Նրա մէջ գրած էի իմ առեւտրական գործերի մասին ինչպէս եւ առողջութեան: Առաջինը այնքան էլ լաւ եւ յաջողակ չէ: Ամէն բանի մէջ արտայայտւող կրիզիսը ազդեց եւ իմ վերայ: Առեւտուրը կիսով չափ ընկած է, իսկ խանութի վարձ, պարտքերի տոկոս հարկաւոր է ամէն ամսւայ վերջ վճարելու... Բանկերը այլեւս մուրհակով ոչ մի կոպէկ չեն վճարում, իսկ պարտատէրերը սկսում են աւելի եւ աւելի խիստ վերաբերել: Զը գիտեմ երբ կը լինի վերջ այս դրութեան: Բայց քամբախտութիւնը կարծես մենակ չի դալիս. առեւտրական անյաջողութիւններին աւելացան եւ ընտանեկան անյաջողութիւններ: Բողազացաւը այնքան տարածւած է, որ բոլոր մեր ընտանիքի անդամները մէկը միւսի յետեւից հիւանդացան. կար ժամանակ որ մեր ննջարանը հիւանդանոց էր ներկայացնում՝ 4 հոգի է պառկած մի սենեակում: Վերջի վերջոյ բողազացաւի հին միջոցները (նաշարաբին(2) եւ խորոված սերգելիլը) աւելի յարմարը եւ լաւը դուրս եկան, քան նոր բժիշկների գործածւող զանազան աղի եւ դառը դեղորայքները... ինչեւէ, հիմա առողջ ենք, ինչ որ ցանկանում ենք եւ ձեզ: Գրէք եւ ձեր մասին. անհամբեր սպասում եմ.

Բարեւներ Քո ՍիՄՈՆ

Միւս նամակը կարելի չափ չուտ հասցնել Գիսակին:

- 1.- Զաւարեան յաճախ «հաւանական» կը գրէ հաւանաբարի իմաստով:
- 2.- Նաշարաբի՝ նույի հիւք:

Միքայէլ Վարանդեան իր «Սիմոն Զաւարեան» (Գծեր իր կեանքէն) մեծ յեղափոխականին նուիրուած աշխատասիրութեան մէջ, Զաւարեանի 1901 թ. Երոպա անցնելուն առիթով, կը զրէ որ 1902 թ. զարնան ժընելի մէջ տարեկան ուսանողական համագումարի առիթով հաւաքուած երիտասարդները լսելով անոր Պերլին հասնիլը «սրտազին տողեր կ'ուղին, բարի զալուատ կը մարքեն անոր: Եւ ահա պատախանը – փակ քարտ նը Սիմոնէն – որ այն օրերէն փոշեթաթախ կը մնայ թղթերուս մէջ»: Արդարեւ, Զաւարեան 1902-ի Մարտ-Ապրիլ ամիսներուն Պերլին է, Մայիսին՝ Փարիզ, այնուհետեւ կ'անցնի Ժընել և կը ստանձնէ «Դրօշակ» պաշտօնաքերքի խմբագրութիւնը:

[Գարուն 1902]

Սիրելի ընկերներ,

Զեր նամակները ինձ շատ ուրախացրին եւ նոյնիսկ յուզեցին... տողերի միջից զգացի ինչ տրամադրութիւն կը լինէր այդտեղ. իմ կեանքում ես դեռ չեմ տեսած, որ 100 հոգի հայ ազատօրէն խօսեն եւ արտայայտեն իրենց զգացածը... Ունէի նոյնիսկ մի առաջարկութիւն ուսանողութեան... Զեր խօսակցութիւնները հաւանական է վերաբերւին Երկիր գալու մտքին: Դրա մասին սա կարող եմ ասել, որ ինտելիգենտ մարդկանց ամենամեծ պակասութիւնը զգացւում է Վանայ-Մշոյ շրջանում, որտեղից Գիսակը⁽¹⁾, միշտ «խոհեմ», նւիրւած, եւ կարելիի չափ «փորձւած» ընկերներ է ուզում: 1-1½ ամիս առաջ մենք խնդրած էինք նրանց Շամից⁽²⁾ գալ Անդրանիկի եւ միւսների մօտերքը, որպէսզի եկող գարնան սպասւելիք ընդհարումների ժամանակ կարողանան տեղացիներին համախմբել, հաշտեցնել եւ լուրջ դիմադրութիւն ցոյց տալ տաճիկների յարձակւած դէպքում:


Եթէ դրութիւնը փոխւած չէ, նւիրւած ուժերը շատ կարեւոր կը լինեն...

«Սիմոն Զաւարեան», Ա. հասոր, Պէյրութ, 1983, էջ 33-34:

1.- Գիսակ – ծածկանուն Յովի. Սերենիկիւնանի, որ այդ օրերուն կը գտնուէր Վան-Վասպուրական:

2.- Շամ – ծածկանուն Վան-Վասպուրականի:

Ս. Զաւարեան Կովկասէն անցած է արդէն Ժընեվ, ուրկէ կը գրէ «Դրշակ»ի պաշտօնական թուղթի վրայ: Զաւարեանի այս նամակին կը պակսի ստորագրութիւնը. պէտք է ըլլայ «Արեւմտեան թիրօ»:



20 Օգոստոս 1902, ՃՐՆԵԼ

**Ասրապատականի Հ. Յ. Դաշն. Կ. կոմիտէին
Ընկերներ!**

Մենք մասնաւոր բանակցութիւնների մէջ ենք հնչ[ակեան] կենտրոնի անդամներից մէկի հետ եւ մօտ ապագայում այդ բանակցութիւնները հաւանական են առնեն պաշտօնական գոյն։ Այդ բանակցութիւնները Հ. Յ. Դաշնակցութեան] մարմինների ոգուն համապատասխան վարելու համար, մեզ անհրաժեշտ է իմանալ կուսակցութեան բոլոր կենտրոնական մարմինների տեսակէտը ներկայ պարագաներում։ Ինչպէս երեւում է հնչ[ակեան] կենտրոնը ժողնում է սոցիալիզմը մի կողմ, ընդունում է Տաճկահայաստանի քաղաքական անկախութիւնը իբրեւ նպատակ, կենտրոնը համարում է անհրաժեշտ (ընդունելով եւ նահանգային վարչութիւնների իրաւասութիւնը տեղական գործերի նկատմամբ)։ Ժողովրդական ապստամբութիւնը նրանք ընդունում են իբրեւ միակ միջոց ազատութեան, բայց չը նայած դորան այնքան էլ չեն համակրում մեր ունեցած խմբակներին եւ հաւանական դէմ լինեն Պոլսի գործունէութեան...

Ասում են որ ունեն մօտ 50,000 ֆր. Ամերիկա հանգանակած, բայց հաւանական է որ երկրում չունեն կապեր, եւ թոյլ են մաքուր, նւիրւած ինտելիգենտ ուժերով:

Նրանց կարծիքով աւելի նպատակայարմար է ոչնչացնել եղած թերթերի եւ կուսակցութիւնների անունները եւ մի նորը կազմել: Խոյս են տալիս համերաշխ, միացած գործելուց այս այն վայրում, որոշ նպատակի համար, գերադասելով նախ միանալ, յետոյ համերաշխ գործել:

Ի՞նչ է ձեր կարծիքը միութեան ինդրի առթիւ, ի՞նչ գործնական ուղղութիւն բռնել որպէս զի մի քանի քայլ արած լինենք դէպի առաջ, նախ քան պաշտօնական միութիւնը. կարող էք արդեօք դուք այդտեղ համերաշխ, կամ միացած գործել այդտեղ գտնւած հնչակ[եան]ների հետ (եթէ այդպիսիները կան ձեզ մօտ): Կա՞ն արդեօք ձեր շրջանում արմենականներ, ի՞նչ ուժով, ինչ պիսի՞ են ձեր յարաբերութիւնները նրանց հետ, կարելի՞ է արդեօք համերաշխ գործել եւ նրանց հետ:

Այս բոլորի մասին խնդրում ենք գրել եւ Գիսակին(1) եւ նրանց կարծիքը իմանալ...

Մի քանի երիտասարդ, նւիրւած, ինտելիգենտ ուժեր գտնւում են այս ըովէիս կովկաս եւ մտադիր են Գիսակի, Վահանի հետ միանալ(2): Դա՝ Մրաւը, Գէորգը (ձեզ արդէն ծանօթ արշաւախմբից), Աղասէրն են, ինչպէս եւ Ամերիկայից եկած Լեւոնեանը(3): Ինչպէս տեսնում էք այսօր յարգելի ուժ է կազմւում այդ շրջանում: Եթէ բախտը մեզ ժպտայ եւ այս ամառ խաղաղ անցնի, բոլոր մեր ուժերը թափելու է այդ վայրը ամբացնելու համար: Վախենում ենք մենակ Սամսոնը(4) իր ուժով անկարող լինի փոխադրութեան գործը տանել այդ արագութեամբ որը պահանջւում է: Ո՞ւր է Վարդանը(5) որ եկած էր արհեստանոցում պարապելու համար: Միթէ դեռ ներս չէ գացած: Բացի այդ, անհրաժեշտ է, որ արհեստաւորները հէնց հիմիկւանից վերսկսեն իրենց գործունէութիւնը հին ապրանքները կարգի բերելու նկատմամբ... Դուք աշխատած էիք ամբողջ մեղքը գցել Մ[եծ] Ք[աղաք]ի վերայ (ուր ասում են, ձեր ուղած մասերը չկան)(6), բայց դա այնքան էլ ճիշտ չէ: Միթէ ձեր շրջանը այնքան չի կարող դրամ հայթայթել, որպէսզի զի գոնչ արհեստաւորներին պահէ? Հայերը ամէն տեղ հայեր են. եթէ հանգանակութիւն կարելի է անել Ամերիկա, Բուլղարիա, Եգիպտոս, Ապառաժ, Քարոտ(7), ինչու չի կարելի կատարել նոյնը այնտեղ, այն էլ այս տեսակ մի ճգնաժամի մէջ, որպիսին է ներկան Աբրոյի գերեզմանի(8) վերաբերմամբ...?

1.- Գիսակ, Վարդգևս (Յովի. Սերենկիւեան): «Նրանց կարծիքը իմանալ», այսինքն Վան-Վասպորականի կարծիքը:

2.- Վահանը (Սանուելեան) Դաշնակցութեան ներկայացուցիչն էր Սասնյ մէջ, իսկ Գիսակը՝ Վան-Վասպորականի:

3.- Մրաւ կամ Մռաւ՝ Սարգար Ժամհարեան: Գէորգը՝ Եգոր Առստամեանն է, Աղասէրը՝ Գրիգորեան Յակոբ՝ ուսանող Գերմանիոյ մէջ: Լեւոնեանը (Արմենակ) ծանօթ էր Աշու Երկար ծածկանունով:

4.- Սամսոն՝ Թաղէուեան Ստեփան (1870-1945):

5.- Վարդան Շահպազ՝ մասնակցած Պամբ Օքքունանի գրաւման

6.- Սեծ Քաղաքը Թիֆլիսն է, այլ խօսքով՝ Արեւելեան քիլոմ: Մասերը՝ խօսքը զէնքի մասերու մասին է:

7.- Ապառաժ՝ Ղարաբաղի, իսկ Քարոտ՝ Ալեքսանդրապոլի կուսակցական ծածկանուներն են:

8.- Աբրոյի (Մկրտիչ Սահակեան) գերեզմանը՝ Սասունն է:

Օգտուելու է հանգամանքից: Վերսկսելու է հանդանակութիւնը եւ ձեր շրջանում... Դրա վերայ ենք դարձնում ձեր ուշադրութիւնը եւ արտասահմանի գործերի տեսակէտից: Բրիւսէլի ժողովով չի վերջանալու այստեղի մեր աշխատանքները. ընտրւած կոմիտէն դեռ եւս նոմինալ մարմին է. մենք է որ տալու ենք նրանց տեղեկութիւններ, մենք է որ յիշեցնելու ենք այս այն գործի, քայլի մասին, հոգալու ենք անհրաժեշտ ծախքերը եւայն... 150 հայ ուսանողները չեն կարող այդ պահանջներին բաւարարութիւն տալ... Ամէն տեղի հայեր նպաստելու են, այդ պահանջներին բաւարարութիւն տալու համար...

Раніше він, не зважаючи на відсутність часу
зібравши та накопівши багато цікавого, але
забороненого, письмом Ділового кабінету...
Він зібравши та накопівши багато цікавого, але
(як, звичайно, усіх цих писем було багато), вже
він зміг писати до Ділового кабінету з писем
їх письмами, якими він був відмінно відмінний
заслужений членом Академії наук УСРР...?
Однакоже він зміг писати до Ділового кабінету
їх письмами, якими він був відмінно відмінний
заслужений членом Академії наук УСРР...?
Однакоже він зміг писати до Ділового кабінету
їх письмами, якими він був відмінно відмінний
заслужений членом Академії наук УСРР...?

Նմոյշ 41-26 փաստաբուղթի վերջին հատուածէն:

Փաստ. 41-24

Ս. Զաւարեանի ձեռագրով եւ Ա. Բ. ստորագրութեամբ նամակ, գրուած Արեւամտեան քիւրոյի պաշտօնական թուղթի վրայ: Ուղղուած է Ատրապատականի (Վրէժ) Կեղը. կոմիտէին:

11 Մեպտեմբեր 1902, Ժընեւ

Վրէժի Կ. Կ.ին

Սիրելի ընկերներ!

Ստացած ենք Յուլիսի 25-ին ուղարկւած գրութիւնները (թւով 9-ը). յուլիսի ենք թղթակցութիւնները ստանալուն պէս կը հասցնէք մեզ: Զէք մոռանայ նաեւ ուղարկել Ախբօր(1) կենսագրութիւնն ու պատկերը, որպէսզի թարմութիւնը չկորչի:

Մ[եծ] Ք[աղաք] Վահանից(2) աւելի նոր նամակ են առած, որով կը հաղորդէ որ քրդերը բռնեցին իրենց հին դիրքերը (Աշմունքի մօտերքը) եւ յարձակման վախը անցաւ: Նա աւելի մուլթ գոյներով է նկարագրում այդ շրջանի վիճակը, քանց մինչեւ օրս մենք կարծում էինք: Հաւանական(3) Վահանի վերայ ծանրացած գործը իր ուժից վեր լինի: Այդ տեսակէտից շատ ցանկալի է որ նոր գնացող ընկերները շուտով հասնին նորան, որպէսզի գործը կարելի լինի տանել աւելի հաստատ հողի վերայ: Մեզ համար զարմանալի է նմանապէս որ Գիսակի մօտ մինչեւ Յուլիս՝ 70 հատ էր միայն հասած, մի թիւ որի մասին խոռված էր գեռ մէկ տարի առաջ: Բացի այդ, այդ ապրանքի մասին Վահանը գրում է որ «ժանգոտած» է: Զենք ուղղում հաւատալ: Միթէ Մամոնը(4) այնքան անհմուտ է որ ժանգոտած ապրանքով խարում է ընկերներին եւ ծախսի տակ գցում մեզ: Այդ մասին խնդրում ենք հաղորդել մեզ տեղեկութիւններ:

Վահանի կարծիքով ամենանպատակայարմարն է դրամ հասցնել իրենց, որպէսզի տեղում առնեն իրենց անհրաժեշտ իրերը... Այդ բանը հէնց ի նկատի ունենալով, դեռ Փետրուարին որոշուած էր Մ. Ք. նրանց շրջանը հասցընել մինչեւ 4000 ռ[ուբլի], որը եւ ուղարկւած պիտի լինի, թէեւ մինչեւ Յուլիսի 14-ը Վահանի ձեռքն էր հասած միայն մօտ 100 ռուփի:

Քրդերի, երիտ. թուրքերի վերայ մեծ յոյսեր դնելու չէ: Կարծում ենք Գիսակի միջամտութիւնների հետ (մինչեւ մենք մեր ներքին գործերը կարգաւորած չենք) այնքան էլ նշանակութիւն չունի: Մեր կարծիքով ներկայումս մեր բոլոր ուժերը թափելու է Վահանի եւ Գիսակի շրջանի(5) ուժերը կազմակերպելու եւ շատացնելու վերայ: Այլ կերպ մենք կը տարւենք,

կը լինենք մշտական եւ անվերջ խօսքի շրջանում: Նրանց հարկաւոր են վարժ (զէնքին, վառօդ-փամփուշտ պատրաստելում) տասնապետներ, ինչպէս եւ զինագործներ: Եթէ տեղումդ չը կան, դիմելու է Սասուն: Ինչո՞ւ Պետրոսի (բուլղարացի) եղբայրը⁽⁶⁾ չի վարժւում մեր գործարանում:

Գիսակը շատ ճիշտ նկատում է, որ այս կամ այն մարմիններ (Ամերիկայի ինքնապաշտպաշտան) եւ կանանց ընկերությունների վատահութիւն են ունենալու դէպի կազմակերպութեան մարմինները եւ ոչ թէ այս կամ այն անհատը...

Ի՞նչ կարծիք ունիք դուք հնչ[ակեաններ]ի հետ համերաշխութեան կամ միութեան մասին: Կարո՞ղ էք արդեօք ձեր շրջանում դա իրագործել. ի՞նչ ձեւով աւելի լաւ է դա անել:

Հեռագիր ուղարկելիս, կրկնակի ծախս չանելու համար, բաւական է միայն մեզ ուղարկել. անմիջապէս կը հասցւի P[ro] A[rmenia]-ին(7):

Արդեօ՞ք չէք մտածում հանգանակութեան մասին ձեր շրջանում: Ճի՞շտ է արդեօք, որ ամերիկացի չէզոք մարմնի ներկայացուցիչը որոշած է եղած գումարը յետ տանել:

Միւս նամակը կը հասցնէք շուտ Գիսակին:

Արդեօ՞ք թերթերը (եւ ձերը) ուղարկելու են Խոյ: Միթէ այդ տեղի հասցէ չը կա՞յ:

**Բարեւներ՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]**

— Ուղարկէք մեզ հասցէ Սամսոնի եւ Խոյի մեր ընկերների հետ յարաբերութիւն պահելու: Թղթակցութիւնները միք ուշացնել:

— Երէկ մեր ընկերներից մէկը գնաց Վահանի մօտ. նրանց գործերը երեւի աւելի յաջողակ կը գնան:

1.- Աղբէր (Մոկացի Յարութիւն, իսկական անունով՝ Դաւթեան-Փոլատեան Յարութիւն, 1866-1902), Պետոյի եւ Նիկոլ Դումանի զինակիցներէն. Խանասորի արշաւանքի մասնակիցներէն:

2.- Սեծ Քաղաքը Թիֆլիս է. Վահանն՝ (Սանուէլեան) Դաշնակցութեան ներկայացուցիչը Սասունյ մէջ:

3.- Հաւանաքարի իմաստով գործածուած յաճախ Զաւարեանի կողմէ:

4.- Սամսոն – ծածկանուն Ստեփան Թաղէստեանի, որ պատասխանատուն էր Ասրապատականէն դէպի Երկիր գէնքի փոխադրութեան:

5.- «Վահան» (Սանուէլեան) եւ Գիսակի (Յովի. Սերենիլիլեան) շրջան», յաջորդաբար Սասուն եւ Վասպուրական:

6.- Բուղդարացի Պետրոսը՝ Սերեմճեան Պետրոսն է (1874-1901), «Աւրերով լի» ծանօթ երգի հերոսը: Եղբայր՝ Արտաշէսն է, ծանօթ Թորգոն ծածկանունվ:

7.- Դաշնակցութեան հովանաւորութեանք Փարիզ իրատարակուող ֆրանսերէն երկշաբաթերը, նուիրուած հայ դասի քարոզչութեան:

Յ. Գալֆայեանին, Աղեքսանդրիա(1)

Սիրելի ընկեր!

Հաւանական արդէն տեղեկացած լինես ինչ տխուր դրութիւն է ստեղծւել Ո[սկեհանքում]: Ամբողջ խնդիրը հիմա պտտում է «Որոտումի» շուրջը(2): Կը կարողանա՞ն արդեօք նրանք շարունակել սկսած գործը: Բացի այդ, լուրջ հարց է եւ հասցէի հարցը, որի մասին աշխատում է: Հաւանաբար մի քանի օրից դուք ստանաք նամակներ Ո[սկեհանք] ուղարկելու համար: Հարկ չը կայ գրելու որքան կարեւոր է շուտ ուղարկելը: Մարթինը(3) առ այժմս կը մնայ այստեղ մինչեւ մի քանի հարցերի (գլխաւորապէս այդ շրջանի գործունէութեան ուղղութեան) որոշելը... Կարեւոր է եւ ձեր մտածումները: Մանրամասնութիւնների վերայ կանգ չենք առնում՝ կը հասկանաք ինքներդ: [Մ[ինաս] Օ[ղուփ](4) վերաբերմամբ մեր կարծիքը նոյն է եւ ինչ որ մի քանի ամիս առաջ: Երկրից դուրս մենք իրաւունք չունենք այդ տեսակ ծախքեր անել: Եթէ կարող էք համոզել գնալ Սողա (Սոխումի մօտ) մինչեւ խնդրի պարզւելը (իրա ծրագիր կազմելը, մեր հաւանութիւնը) տւէք ճանապարհածակք: Հակառակ դէպքում ծախքեր անելը հակառակ է մեր շահերին եւ ծրագրին... Մոռանալու չէ որ եւ Վիշապի Պ[ատ.] Մ[արմն]ի(5) խոշոր ձեռնարկը առ այժմս ջուրն է ընկած եւ երկու հոգի բանան են... Դժւար է ասել կը կարողանա՞նք արդեօք եւ հետեւել դորա ծրագրած գործին...

Վարդի(6) առաջարկը վատ չի երեւում, բայց ինչպէս որ էր մի քանի տարի առաջ, նախ անհրաժեշտ է որ որոշւեն դորա եւ մեր յարաբերութիւնները: Ո՞ւր են գնալու հանգանակւած գումարները. լինելո՞ւ են արդեօք կազմակերպութեան տրամադրութեան տակ, թէ Կիլիկիոյ Պատասխ. մարմնի, որի մէջ կարող էր մտնել եւ ինքը, թէ բաժանւելու են որոշ մասերի: Մենք մանրամասնութեան մասին հարցնելու ենք Ամերիկա, բայց անհրաժեշտ է այդ հարցերը պարզել...

Հաշիւները ստացանք: Ապագայի համար կը խնդրական է ամէն 3 ամիս. եւ բացի այդ, նախ քան ուղարկելը առաջարկել եւ վաւերացնել տեղական կ. Կ.ից: Դա ե'ւ աւելի օրինական կը լինի ե'ւ աւելի կը կապէ գործի հետ տեղացիներին, որոնց մօտ մասնակցութիւնը շատ կարեւոր է... իսկ եթէ դրանք արժանի չեն այդ պաշտօնին, աւելի լաւ չէ՞ր յայտարարել դրանց սոսկ դրամ[ական] խումբ... (7): Արդեօք չէր կարելի գործը այնպէս տանել

որպէսզի մի քանի ժամանակից յետ, դուք կարողութիւն ունենայիք հեռանալ այդտեղից...

Այդ շրջանի դրութեան մասին, ինչպէս եւ ձեր կարծիքները ապագայ անելիքների վերաբերմամբ խնդրում ենք գրէք կարելիին չափ մանրամասնութեամբ:

Բ[րո] A[rmenia-ի] մասին կարգադրութիւն արւեց. երեւի ստացաք: Սուրէնը ուղարկա՞ծ է արդեօք ձեզ՝ Մարին(8) հասնելիք գրքերը: Միթէ՞ դորա կատարելը պահանջում է ամիսներ:

Բարեւներ. երկրից թղթակցութիւններ շատ կարեւոր են. ինչո՞ւ մի մի անգամ յօդւածներ չէք գրում թերթի համար:

Հնկերական ողջոյններ.

ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐԾ

1.- Յարութիւն Գալֆայեան, որ Աղեքսանդրիայէն կը համակարգէր Կիլիկիոյ (Լեռնավայր) եւ Իզմիրի (Օսկեհանք) գործերը:

2.- «Որոտում»ը Իզմիրի (Օսկեհանք) դաշնակցական խումբներէն մէկն է:

3.- Մարթին, Աշոտ Մարթին (Մոլուստեան Մարթին) անդամ էր Կիլիկիոյ պատ. մարմնին:

4.- Յովի. Սինասեան, հնչակեան մարտիկ:

5.- Վիշապ՝ Պոլսոյ կուսակցական ծածկանունն է:

6.- Վարդ, Վարդ-Մանուշակ, Արքահամեան Յակոր:

7.- Դրամական անունը կը տրուէր համակիրներէ կազմուած խումբերուն, որոնք նիւթապէս կ'օժանդակէին կուսակցութեան:

8.- Մար – ծածկանունն է Սիրքայէլ Տէր Մարտիրոսեանի, որ 1899-էն ի վեր կը գտնուէր Մարաշի բանտը: Մուրէն – ծածկանուն Սիմէռն Շխեանի (1865-1947):

Պ. Յ. Գալֆայեանին, Աղեքսանոլրիա

Սիրելի ընկեր!

Քանի օր առաջ արդէն գրած էինք կարճ կերպով տեղական խնդիրներու մասին... Ո[սկեհանք] կատարւածների մասին տեղեակ էք արդէն: Որոտում(1) խումբը պատրաստականութիւն է յայտնում 20(2) — հարկ եղած դէպքում շարունակել ընկեր են ուզում եւ զգում են դրամի պակասութիւն: Քանի որ Զարեհն ու Աւոն հեռացած են, պարզ է որ մենք գործը կարող ենք շարունակել մի միայն որոտ[ում]ցոց հետ: Աղողեօք Զոհրաբը կարո՞ղ է գործել նրանց հետ ձեռք ձեռքի տւած: Եթէ այո՛, եւ եթէ նա հնարաւորութիւն ունի ներս մտնելու առանց Որ[ոտումի] օգնութեան, ճանապարհ ձգէք: Մի Տիգրան ոմն էլ Վառնայից խնդրած է այդ մասին (նրա մասին գրած են եւ որոտ[ումց]իք), բայց չենք վստահանում: Զոհրաբը թող նպատակ ունենայ առ այժմս կապւելու եղած ընկերների հետ, հետեւելու տեղացիներին, տրամադրութիւններին, վստահելի լուրեր տայ: Զարժէ առ այժմս խոշոր գրաւոր դրսի դիմումների հետ խառնել մանրերը եւ ներսից: Երբ հաստատւեն, կարելի է անել եւ ներսից... ժամանակին մենք խնդրած էինք Կ. Կ.ից իր պատասխանատութեամբ անել ամէն ինչ. բայց նրանք խնդրած էին մեզ տալ հասցէ եւ այն... մենք դա գտնում էինք անյարմար: Իրենց հրահանգի համաձայն նախքան դիմումները մենք սպասում էինք իրենց խոստացած հեռագրին Ալթէնքից... իսկապէս հէնց տեղից ցրելը աւելի յարմար էր, բայց հիմա ուշ է: Զեզ մօտ թղթեր միք պահել. զգոյշ եղէք:

Մինչեւ հասցէի եւ դիմումների խնդիրը լուծւի՝ Մարթինին(3) պահում ենք: Տեսնենք ի'նչ կը լինի...

**Ընկերական բարեւներ
Ա[ՐԵՒՄՏԵԱՆ] Բ[ԻՒՐՈ]**

1.- Որոտումը Իզմիրի (Ոսկեհանք) դաշնակցական խումբերէն նեկն է:

2.- Ծածկագիր 20-ը կը նշանակի ահաբեկչութիւն, տեղոր:

3.- Մարթին Մուրատնան:

Ատրպատ[ականի] Կենտր. կոմիտէին

Սիրելի ընկերներ!

Երէկ ստացանք ձեր Նոյեմբ. 14 գրած նամակը: Հեռագրից արդէն իմացած կը լինիք, որ մենք Հնդկաստանի կողմերը չենք մտածում ոչինչ անել... Յանկանում ենք յաջողութիւն: Լաւ կը լինէր գնացողի հասցէն մենք ունենայինք (Բոմբայ, Կալկաթա, Բուշիր եւ այլ տեղերում), հարկ եղած տեղեկութիւնները գրելու, թերթեր ուղարկելու համար:

Պատւիրեցէք այդ կողմերում ցրւած հայերի հասցէներ վերցնել որպէսզի թերթեր կարելի լինի ուղարկել, ինչպէս եւ հետները կապւել...

Զհասկացանք ինչի մէջն է կայանում ձեր եւ ամերիկացոց մէջ կայացած համաձայնութիւնը. արդէն մարդ էք ուղարկում այնտեղ թէ [մէկ բառ անընթեռնելի] հարցն է առաջ եկել նորից: Եթէ վերջինս է վախենում ենք միայն աղմուկ դուրս գայ դորանից առանց գործնական հետեւանքի: Յամենայն դէպս դրա մասին արժէ մտածել միայն վերջը երբ կ'ունենանք ներսում հարկ եղած պատրաստութիւնը: Իսկ դորա համար աշխատելու է առանց ժամանակ կորցնելու: Ինչպէս լուսմ ենք բաւականին հաւաստի աղբիւրից, մակեդոնացիք (երկու հատւածներն էլ) որոշած են գարնան վերսկսել ապստամբութիւնը... Եթէ մենք չը կարողացանք ոչինչ պատրաստել Վիշապում(1) կամ այդ կողմերը, ուստի ենք կը մղեն մեզ եւ առաջ կը գայ մակեդոնական հարցը առանձնապէս: Դա ցանկալի չէ: ... Վերջին նամակում Գիսակը(2) եւ միւսները էլի ընկերներ են ուզում: Այս պայմաններում Բուլղարացու(3) եղբայրը արդեօք կարո՞ղ չէր աւելի մեծ ծառայութիւններ մատուցանել երկրում, քանց անում է այդտեղ: Դա անկասկած է. մենք կարօտ ենք ոչ միայն կազմակերպող ուժերի այլ եւ քիչ շատ վարժ զինւորականների, ինչպիսին է նա: Վահանը(4) նրա նման մարդու մեծ կարիք ունի (համոզւած ենք): Մտածեցէք այդ մասին: Յետոյ ուշ կը լինի...

Երկրորդ անգամն է ինչ գրում էք Ամերիկայի եւ ձեր մէջ ծագած տարածայնութեան մասին: Փնտուեցինք պատճէնագրի մէջ. այդ նամակները չը գտանք (երեւի Անտոնն(5) է գրած եւ մոռացած է պատճէնը ինքը վերցնել)... Դա նոյնքան էլ կարեւոր չէ. մէկներս սխալւած ենք: Ամերիկայից էլ գրում են որ անցածը անցած է. աշխատելու է միայն որպէսզի ապագայում բոլոր այնտեղից եկող գումարները հասցւեն երկիր եւ այնտեղից ստացւեն ընկա-

լագրեր: Այդտեղի ծախսերի մասին էլ դուք հոգ տարէք... Զեռնարկեցէք ձեր շրջանում եւս հանգանակութիւն եւ դա բաւականութիւն կը տայ տեղական ծախքերին:

Հնդկաստանի վերայ յոյս դրէք, բայց նաղդը⁽⁶⁾ ձեռքից մի թողնէք:
.....(7) գանգատում է քուրդ[երէն] եւ թուրքերէն թերթ չուղարկելու պատճառով: Առաջինը վաղուց է դուրս չի եկել. երկրորդների մէջ էլ քիչ անդամ է համակրեխ բան պատահում. Չուղարկւելու պատճառը դա է... յամենայնդէպս կ'ուղարկենք...

Եթովպիայում (Հարար եւ այլ քաղաքներում) «Երկրում կռւող ընկերների համար» հանգանակւած է 1000 ֆ. որը ուղարկում ենք ձեզ իրենց հասցնելու համար յատուկ ընկալագիր ստանալու պայմանաւ: Նոյն նպատակին ստացած ենք եւ 10 անգլ. ոսկի (255 ֆ.) եւ Բոստոնի ինքնապաշտպանութեան խմբից որ ուղարկում ենք Մ[եծ] Ք[աղաք]ի(8) միջոցաւ: Գուցէ քիչ աւելի շուտ հասնէ:

Գիսակի, Վահանի, Դժ[ոխք]ի(9) նամակների հետ միասին ստացանք եւ ձեր կարծիքը հնչ[ակեանների] հետ բանակցութիւնների մասին, բայց, կարծում ենք մի քիչ դա արդէն ուշ է: Միութիւն ասւած բանը դատարկ խօսք է եղել... Պարոնները նորից կուել են եւ միմեանց դէմ մերկացումներ են տպում. տես Շարժում եւ Հայրենիք. Նոյեմբերին դուրս եկաւ 2 «Հնչակ». մէկը N6 կազմած ոռոսահայ բարբառով, միւսը առանց որեւէ N-ի միայն «Նոյեմբեր», կազմած տաճկահայ բարբառով... էդ էլ նոր ձեւի օյին!... Աշխատէք մօտեցնել դրանց մէջ եղած մաքուր եւ անկեղծ տարրերը. միւսները աւելի լաւ է մեզանից հեռու լինեն:

Միտք է ծագած դիւրացնել Կովկասում ապաստանած գաղթականների փոխադրութիւնը դէպի Պարսկաստան: Թէ եւ մենք շատ լաւ ըմբռնում էինք դրա դժւարութիւնները եւ նոյնիսկ անկարելիութիւնը, բայց այնուամենայնիւ չուզեցինք ձեռքից բաց թողնել եւ այդ միջոցը, մանաւանդ որ դա լաւ միջոց է խնդիրը սեղանի վերայ պահել[ու]: Մեր բարեկամների դիմումների հիման վերայ Ֆրանսիայի արտաքին գործերի մինհաստը դիմած է թեհրանի դեսպանի միջոցաւ Շահին՝ դիւրութիւններ տալ հայերին, որպէսզի նրանք հաստատեն Պարսկաստանի հողի վերայ: Գրելու էք այդ մասին Գաղթաշէնի(10) մեր ընկերներին՝ ձեռքերից եկածը անեն... Մենք (Ֆրանս[այի] բարեկամների միջոցաւ) առաջարկած էինք հետեւեալ պայմանները:

1) Որ գաղթականները հաստատեն Սալմաստի, Մակւայ, Ուրմիի եւ Ղարադղի ռեսնային[?] մասերում, ուր ջերմ չը կայ:

2) Որ նրանց յատկացւելիք հողերը լինեն տէրունական (խալիսա), ունենան խմելու եւ ոռոգելու անհրաժեշտ ջուր, բաժանւած լինեն մահմետականների հողերից, որ 10 տարւայ ընթացքում գաղթականները ազատ լինեն հարկերից (հաստատելու համար) իսկ յետոյ վճարեն 1/10...

Արժէ մի քանի կարեւոր կէտեր եւս աւելացնել այս պայմանների վերայ եւ

աշխատել ընդունել տալ թեհրանում... Գրեցէք ուր եւ ում հարկն է:

Նորեկը (Ֆ) այստեղ մօտ է եղել մերոնց, թէեւ «պաշտօնապէս» ոչ մի մարմնում չի համարւել... վստահելի տղայ է լինելու: Նախ քան հրաւիրելը յամենայն դէպս լաւ է պաշտօնական դիմում անւի եւ հարցւի նրա համամիտ լինելու մասին մեզ մօտ գլխաւոր կէտերի նկատմամբ...

Դպրոցների ծրագիրներ այնքան կան որ չը գիտեմ որը ընտրեմ. ամէն կանոն այստեղ իրա դպրոցական ծրագիրն ունի... այս քանի օրս կ'ուղարկեմ...

Դրօշակը նստում է կազմակերպութեան վերայ ամիսը մօտ 700 ֆ., իսկ համարը 20 սանտ[իմ] իսկ տարին մօտ 2½ ֆ. (1 ռուբի) եւ աւելի, իսկ ամբողջ հրատարակութիւնների ծախսելը (Pro Arm., Բիւրօ եւայլն) կրկնակի: Այդ ծախսը ներդաշնակաբար բաժանելու համար, որոշած ենք ամէն կ. կ.-ից խնդրել վճարել իրա վերայ ծանրանալիքը (ստացւող համարների թիւը բազմապատկած) 2½ ֆ-ի (2 ռուբլու) վերայ: Ուստի ձեզանից սպասում ենք 200 ռուբլի, չհաշւած ուղարկւած գրքերի արժէքը որ նոյնպէս կ'ուղարկէք: Զմունանք խնդրում ենք: Պարտքեր շատ ունենք: Թէ չէ բոլոր տեղերն էլ գանգատւում են որ «գործող շրջանների հետ են կապւած» եւ չեն կարող մեզ օգնել:

Եկող տօներին ձեռնարկում էք հանգանակութեան թէ չէ:

Հնկերական բարեւներ

Էջերու լրացքներուն վրայ Ս. Զաւարեան նանը տառերով կատարած է հետեւեալ յաւելումները.

— Կենսագրութիւնների սերիան սկսելու համար պակասում են տեղեկութիւններ Գոլոշեանի եւ ընկերների շրջանի մասին: Տեղումդ ծանօթ մարդիկ կը լինեն, որոնք կարող են տեղեկութիւններ տալ յեղափոխ[ական] գործունէութեան այդ շրջանի մասին:

— Միքայէլի(11) ճանապարհորդութիւնը Աւստրօ-Հունգարիա լաւ հետեւանքներ է խոստանում: Տեղացի հայերը արթնանում են: Յոյս կայ ազդեցիկ հայկական կոմիտէ կազմել օտարացիներից...

— Ո՞ւր է թորոսը(12): Ինչո՞ւ չէք ուզում օրինակ դառնալու համար մտցնել ձեր կ[ոմիտէ]ի մէջ 1/10-ի վճարումը ինչպէս անում են Ամերիկա:

— այնտեղ աշխատում են համերաշխաբար մաքուր հնչակ[եաններ]ի հետ...

— Բաւարար են գնում գործերը եւ կիլիկիայի շրջանում:

— Եւ Աբրոյի գերեզմանից Շամի(13) գէնքերի մասին, եւ ռուս-տաճկ[ա-


կան] սահմանագլխից Կարսայ զէնքերի մասին գանգատներ են գալիս՝ որ լաւը չեն, որ հարկ եղած դէպօւմ օգտի տեղ կարող են վնասել... Զեր բոլորիդ ու մանաւանդ զինագործ եւ Մինարէթի(14) ընկերների ուշադրութիւնն ենք հրաւիրում այս տխուր հանգամանքի վերայ: Փոխադրելու է անպայման յուսալի ապրանք: Ափսոս են մարդիկ, ափսոս են ծախսեր:

1.- Պոլսում:

- 2.- Գիսակ կամ Վարդգէս – բուն անունով՝ Յովի. Սերենկիլեան, Վանի ղեկավար դէմքերէն:
- 3.- Բոլղարացի – Պետրոս Սերեմճեան: Եղբայր՝ Արտաշէս:
- 4.- Վահան Մանուկեան – Դաշնակցութեան ներկայացուցիչ ուղարկուած Սասուն:
- 5.- Ս. Զաւարեանը, նոյնինքն նամակագիրը:
- 6.- Առձեռն, պատրաստի զումարը:
- 7.- Անընթեռնելի անձնանուն:
- 8.- Թիֆլիսի կամ Արեւելեան բիբոյի:
- 9.- Հրայր-Դժոխք, իսկական անունը՝ Արմենակ Ղազարեան:
- 10.- Խոսքը Ս. Թաղէի վանքին նասին է:
- 11.- Սիրայէլ Վարանդեանի:
- 12.- Գալուստ Ալոյեանը, որ ծանօթ էր Թորոս և Դարվիշ ծածկանուներով:
- 13.- Արքոյի գերեզմանը՝ Սասունն է. Շամք՝ Վան-Վասպուրական:
- 14.- Մինարէք՝ Սալմաստի կուսակցական ծածկանունը:



Յովիաննէս Սերենկիլեան
(Վարդգէս, Գիսակ)



Գալուստ Ալոյեան
(Թորոս, Դարվիշ)

Փաստ. 41-47

Գրուած է Արեւմտեան բիւրոյի պաշտօնական քուղթի վրայ եւ ուղղուած՝ երեսի Աղեքսանդրիայի վրայով՝ Լեռնավայր-Կիլիկիոյ Կեղը. կոմիտէին: Մելանք տարածուած ըլլալով, տեղ-տեղ դժուար ընթեռնելի է: Բոլորովին սեւցածները տրուած են բազմակետերով:

30 - XII - 1902

**Վահրամին, Մարթինին եւ միւսներին(1).
Սիրելի ընկերներ**

Ստացած ենք ձեր 14 Նոյեմբեր, 27 Նոյեմբեր, 18 Դեկտեմբերի նամակները ինչպէս եւ հեռագիրը: Կնիքը եւ բլանկները քանի օր առաջ ուղարկւած են:

Ամերիկայից դրամը Մ. Գ.-ի անունով ուղարկելու մասին ցաւում ենք, համոզւած լինելով սակայն որ դա հասարակ թիւրիմացութեան հետեւանք է, կամ արուած է ապահովութեան տեսակէտից:

Ֆարհամթին(2) օգնելու մասին կարգադրութիւն չարինք հաստատ չը գիտենալով նրա անունը. լաւ կ'անէիք միայն երկու բառով հեռագրէիք տիկնոջ անունը եւ մականունը. հեռագիրը առնելուն պէս 1-200 ֆր. կը փոխադրենք Մարս[էլլ] առաջարկած գծով իրանց հասցնելու համար:

Սիսալում էք որ երկրէն եկած նամակները (Ռահվերից(3) եւ միւսներից) կարգացած եւ ուշադրութեան չենք առած: Կարգացած ենք բայց... համոզւած չենք որ նրանց գրածները ներկայացնում են այն տեսակ լուրջ եւ հաստատ ծրագիրներ, որոնց վրայ արժենար ծախսել տասնեակ հազարներ եւ դորանով մենք կարողանալինք համոզել մեր այդ վաճառականին... Գործի յաջողութեան համար, ինչպէս քանիցս անգամ այստեղ էլ խօսւեց անհրաժեշտ է նաեւ տեղական պայմաններին եւ ազդեցիկ տեղացիներին լաւ ծանօթի այցելութիւնը, որպէսզի նրանց հաւանութիւնը առնելով, նրանց հետ միասին գործնական ծրագիր կազմւէր, ապահովութիւն ցոյց տրւէր, որ գնացած դրամները կը ծառային մեր ընդհանուր դատի եւ ոչ թէ աննպատակայարմար կերպով կը ծախսւեն, ինչպէս դա եղաւ 90-ական թւականներին, երբ կովկասից մօտ 2-300 մանլ[իխեր] ֆր-ի գէնք բաժանւեց երկրի հայերին. այդ գէնքերը ծառայեցին սրա նրա անհատական կարիքին, պահւեցին այս այն անհատի մօտ եւ փչացան ու նոյնիսկ ծախսեցին քրդերին: Բոլոր ծրագիրները կը լինեն վերացական, թէական՝ եթէ նրանք կազմւած չը լինեն տեղացի վստահ անձերի կողմից, կամ գոնէ նրանց հետ միասին: Հարկաւոր էր տեսնըւել եւ լուրջ խօսել մեր Ատանայի ընկերոջ հետ եւ նրա ստեղծած մարմինների. այդ ծրագիրը կազմելիս Վ[ահրամ]ը տասն անգամ աւելի մեծ դեր կարող էր խաղալ քան Ռահվերի(3) նման եկտորներ: Երբ բոլորս էլ կը գանք այն եզ-

բակացութեան որ այդ ընդունւած ուղղութիւնը ցանկալի, իրագործելի եւ մեր ուժերին համապատասխան մեզ ընկեր ունենալը տեղում գտնւած, ազդեցութիւն ունեցող մարմիններ եւ երկրորդ՝ որպէսզի այդ մարմինները անկեղծ կերպով ընդունելով մեր բռնած ուղղութիւնը եւ համակիր լինելով ապստամբութեան, կազմեն գործնական ծրագիր այդ գործը յաջող կերպով առաջ տանելու: Նախ քան այդ լայն տեղեկութիւններ ունենալը, նախ քան դրա իրականացման մէջ համոզւելը եւ մեր ուժերի հետ հաշտեցնելը անկարելի է, ափսոս է, մեղք է մեծ մեծ ծախքեր անել: Դրամ ծախսելը դեռ եւս գործ անելու նշան չէ: Տեղացի, այս այն պատահական անհատների խոստումները այս այն անել եթէ դրամ լինի (եւ մեծ դրամ) դեռ եւս ապացոյց չէ, որ իրականապէս այդ անհատները մեզ հետ կը գնան, որ եթէ գնան էլ կարող են մեծ եւ ցանկալի շարժում առաջ բերել: Գործի յաջողութիւնը պահանջում է որ եղած անհատներն ու մարմինները կանգնած լինեն իրենց եւ գործի բարձրութեան աստիճանի վրայ, որ նրանք մի հոգի կազմեն մեզ հետ, որ նրանք կատարեալ հաւատ ներշնչեն եւ կազմակերպութեան եւ այլն մարդկանց, որ ծախսերը վերցնում են իրենց վերայ: Այն տեղեկութիւնները որ կան Ռահվերի եւ միւսների նամակներում չեն ապացուցում, որ այժմս մենք կանգնած լինենք այդ հաստատ հողի վրայ:

Գուցէ դուք այլտեղ ունենաք արդէն աւելի ճիշտ եւ յուսալի տեղեկութիւններ, բայց եթէ դրանք միայն կրկնութիւններ են իրենց գրւածների, դա ա'յն չէ, որի համար մենք անհրաժեշտ էինք գտնում Վ[ահրամ]ի կամ մէկ ուրիշի համար. այն ժամանակ մենք պիտի ճիզեր թափենք եւ աշխատենք դա իրականացնել: Նամանաւանդ որ դուք էլ տեսնում էք ինչ սուղ գնով են ձեռք բերւում այդ դրամները: Մինչեւ որ կատարեալ վստահութիւնը խոյս է տալու գործնական քայլերից, հոգալու է միայն ընկերների ապրուստի եւ ճանապարհորդութեան ծախքերը: Ի նկատի ունենալով եւ Վ.ին անհրաժեշտ ծախքերը եւ (հարկ եղած մարդկանց հետ տեսնելու համար), մենք այդ նախնական ծախքերը հաշւած էինք (Մարթինին ուղարկւած է մեծ մասամբ) 10.000 ֆր., որի մասին եւ գրւած էր Ամ[երկայի] պատգամաւորական ժողովին, աւելացնելով որ եթէ Ոսկ[եհան]քը(4) տայ այդ գումարը, հարկաւ նրանց հարկ չի լինել միջամտելու: Քանի որ այստեղից ձեզ ուղարկւում է բաւականաչափ գումար, նրանց օգնութիւնը կարծում ենք աւելորդ կը լինի: Մեր այս գրւածից յետոյ Մարթինի գրած 5000 տոլի մասին անյարմար է յիշեցնել ամերիկացոց:

Մարթինի գործածած ոճը (վերջին նամակում) «ոչ մի սանթիմ չը պահել», որ մենք ենք պատասխանատուն եւայլն, կարծում ենք աւելորդ են: Միջոցները պիտի ծառայեն գործին ուր դա պահանջւում է եւ մենք էլ ցոյց չենք տւած առանձին սէր դէպի սանտիմները, մնալով միշտ պարտքի մէջ, որպէսզի գործը չը տուժէ. «պատասխանատութիւնն» էլ (էական եւ ոչ ձեւական) դժւար է ասել ում վերայ աւելի կը ծանրանայ:

..... չեմ կարծում որ շանտաժի մէջ մեղաղբեն անծանօթ մարդկանց. պատասխանատուն կը լինի այն ում անունը յայտնի է, որ գանձում է դրամները...

Զ.ի 800-ի մասին աւելորդ ենք համարում խօսել. ստացողը վաղուց ծախսած է այդ գումարը եւ ծախսած է գործի վերայ: Ստացւածից մի քիչ էլ ծախսը լած է այստեղ եւ ծախսաւած է հարկ եղած տեղոր: Յուսով ենք դժգոհ չէք լինի:

Ուղարկում ենք մեր ստացած նամակների ամփոփ պարունակութիւնը եւ այն ինչ պատասխանելու է մեր կարծիքով այդ պարուներին: Ինչպէս տես-նում էք միայն 1/3 է պատասխանած: Նախ քան դիմումը կարեւոր է վստահ լինել որ մեր սպառնալիքը ապագայի խօսք չեն մնալու. Հարկաւոր է վստահ ելի ընկերներ ունենալ ուր հարկն է. բացի այդ, մեր կարծիքով պահանջները պակսեցնելու է (ինչպէս գրւած է), որպէսզի մարդիկ հնարաւորութիւն ունենան վճարել(5):

Հաւ է նամակներ ուղարկել կամ հինգ ի [զմիր]ից կամ մօտիկ տեղերից:

Շատերը տւած են Մանչեստրի հասցէ:

..... եւ ցանկանալու այն տեղից բացակայել, այնտեղ կանչել դրամ ստացողին, կամ իրենք, պատգամաւոր ուղարկել:

Այդ պարագայում որեւէ եզրակացութեան յանգելու համար, հարկաւոր է, որ բանակցողը իշխանութիւն[?] ունենայ վերջացնելու գործը ըստ իր հասկացողութեան: Այդ մասին մտածելու է լուրջ կերպով:

Դիմումների թիւը եղածից աւելացնելու չէ. դա կը մանրացնէ եւ շփոթութիւն առաջ կը բերէ:

Լեռնավայրը՝ (6) շրջանին մասին տեղեկադիր եւ ընդհանուր ծրագիր կազմելիս շատ ցանկալի էր, որ [պէսզի] մասնակցէին շրջանում գտնւած եւ գործը պրտներին մօտ ընդունող մեր բոլոր ընկերները (ինչպէս Վ.-ը, Էթմ.-ը, Աղասէրը, որ չուտով այդտեղ է լինելու եւ միւսները): Ինչ վերաբերում է գործնական հարցերին, կարծում ենք Վ.-ի նման մարդու ձայնը շատ աւելի կարեւոր է, եթէ չասենք անհրաժեշտ է համարելու քան դրսեցիներից շատերի մտածումները:

ՀԱԿԵՐԱԿԱՆ ԲԱՐԵԼՈՒՆԵՐՈՎ, յաջողութիւն ՍՄԲ[ԱՏ]

Հաւ կը լինէր որ ունենայինք եւ ուրիշ հասցէ քաղաքներու[?] համար:
Զգուշութիւնը լաւ բան է:

- 1.- Յաջորդաբար՝ Յարութիւն Գալֆայեանին եւ Մարքին Սուրատեանին:
 - 2.- Ֆարիաս՝ ծածկանուններէն մէկն էր Պանք Օքրոմանը գրաւող ընկերներու դեկավարներէն Հրաշին (Հայկ Թիրեաբեան), որ բանտ կը գտնուէր եւ դրամական օժանդակութիւնը հետեւարապ պիտի ըլլար իր կնոց:
 - 3.- Ռահմէն – Սիսաք Վարդանեան: Կիլիկիոյ գործիչներէն: Նոյնպէս Վահրամ – ծածկանուն Յարութիւն Գալֆայեանի:
 - 4.- Ուկեհանք – ծածկանուն Իզմիրի:
 - 5.- Հարցը կը վերաբերի բռնի դրամահաւաքի գործին, ուր Զաւարեան կը թելադրէ պահանջներուն մէջ չափաւոր ըլլալ:
 - 6.- Կիլիկիոյ:

Փաստ. 42-56

Ստորեւ, յաջորդաբար տրուած փաստաքուղթերը (42-56, 42-7, 1028-4 և 1028-9) կը վերաբերին բռնի հանգանակութեան՝ «Փոքրիկ»ի գործունեութեան, զոր կը դեկավարէր Զրիստափոր Սիքայէլեան անձամբ: «Փոքրիկ»ը ուներ նաեւ օժանդակ մարմիններ, որոնցմէ մէկն էր Իզմիրի կոմիտէն: Երոպայի մէջ, Արեւմտեան բիւրոն Ժընեվէն կը պահեր հաղորդակցական կապը: Այստեղէն է որ Ս. Զաւարեան իբրեւ Բիւրոյի անդամ կը դեկավարէր այս բռնի հանգանակութեան զործը: Ստորեւ տրուած նամակներով, ան տեղեակ կը պահէ «Փոքրիկ»ի պատասխանատունները, այս պարագային շատ հաւանաբար Իզմիրի մէջ գործող մարմինը, ստացուած նամակներու բովանդակութեան եւ անոնց տրուելիք ընթացքին մասին: Իզմիր եւ Աղեքսանդրիա ուղարկուած կարգ մը նամակներով Ս. Զաւարեան կը լին կ'անդրադանայ նոյն հարցերուն:

Անունները առ հասարակ յիշուած են ծածկագրով (շիֆր – շեղագրով տրուած), որ կը բացուի «Մայր Արաքսի ափերով»ի բանալիով: Տեղ-տեղ կիրարկուած է նաեւ գաղտնագրութիւն, զոր փորձած ենք նոյնպէս վերծանել:

7 - I - 1903

20) Պ. Միհրան Զանպաքճեան,

Իզմիրից 3/15 XI-ի նամակով հայերէն չը գիտնալով, թուրքերէն կը գրէ, որ կոտորածից յետոյ տուները թալանւեցան (իր ծննդավայրում [անունը չէ յիշուած]) որ ոչինչ չունի, որ 3, 5, 7 տարեկան զաւակ, կին ու մայր ունի, որոնց հազիւ կ'ապրեցնէ: Կը հայցէ ձեր ներողամտութիւնը, որ պահանջւած գումարը այսօր չի կարող դրկել: Խնդրում է միջոց տալ մինչեւ 40 օր եւ վստահ լինել «գումար մը պատրաստելով ձեզ պիտի գոհացնեմ». Խնդրում է Աղեքսանդրիայի գործակալի հասցէն, որովհետեւ դրամը հոն փոխադրելը իրա համար աւելի հեշտ է (հոն հայրենակիցներ ունի): Խնդրում է նամակի ստանալու եւ 40 օրւան պայմանաժամի շնորհելու մասին հաճիլ իրեն տեղեկացնել:

(Պահանջւած է N 58ով՝ 50... կարծում ենք լաւ է բաւականանալ կիսով):

21) Մերկեր Մերկերեան իզ[միր]ից 17 XII-ի նամակով ուղարկում է 600 fr. (պահանջւած 300 ռ[ուբլի]ի տեղ) եւ խնդրում է յատկացնել, «ի նպաստ

ծննդավայրէն հեռանալու ստիպւած տարաբախուտ ազգայիններուն» (Սորա մասին մեր կարծիքը արդէն յայտնած էինք նախորդ նամակով):

Պ. Զարեհ Շատրվան 22/12 XII-ի նամակով փոխադրած է 1000 fr. առանց խօսք մը գրելու (պահանջւած է N 79-ով, 200 ո[ուբլի]: Մինչեւ գումարի $\frac{1}{2}$, մնացած 1000-ը պահանջել մի ամսւայ ընթացքում. միւսը կամ զիջել, կամ վարւել ինչպէս միւսների նկատմամբ):

22) Արմենակ Կամսարական 31 XI-ից Աղեքսանդրիայից կը գրէ որ «Երէկի թղթաբերով ստացած է Իզմիրէն Միսաք Մօրուքեան ստորագրութեամբ նամակ մը, որով յիշեալը կը խնդրէ ինձմէ կարգադրել ընկերութեանդ այս եղի մասնաճիւղի հետ իրեն վերաբերեալ հաշիւները եւ իմացնել իրեն համաձայնութեան արդիւնքը:

Արդ, «Երէկէ ի վեր ըրած հետազօտութիւններս ի զուր ելան, գտնելու պաշտօնապէս ճանչցւած մասնածիւղ մը, ուստի ինդրում է հաղորդել Աղեք-սանդրիխ որու հետ կարող է կարգադրել այդ հաշիւր»:

Դեռ մի շաբաթ առաջ, սա առաջարկած էր ուղարկել 1000 fr. գաղթականին: Մենք տւած ենք հասցէ:

Խնդրած էինք չաւելացնել նորերի թիւը։ Լաւ է սկսածը վերջացնենք։ Կրկնելու ենք նոյնը։ Գրելու է հզմիր, որ թողնեն մեզ հետ բանակցելու։

Սիրելի ընկերներ!

Կ[նիք] եւ էնտէտէ(1) թղթերը ճամբւած է ձեզ 24 - XII.ին [1902]. ստաց-
ւած նամակների տեղեկագիրը - 2 - 3 - I-ին [1903]: 4-ին՝ ստացած գումարից
3000 ֆ-ը. միւս մասը կ'ուղարկւի այսօր վաղը (դեռ չի ստացւած բանկից).
նոյնիսկ մի քիչ ուշացած դէպքում կոչտ լեզու գործածելը լաւ չէ. բացի
խանգարելուց, գործը նրանից առաջ չի գնայ:

Մարթինի(2) նախորդ նամակում գրուած էր որ Վառնայից ընկեր էք ու-
զած. 100 ֆ. ճանապարհածախս ուղարկւած է. իսկ 30 - XII-ին նամակով կը
հարցնէ արդեօք (հասկանալի է որ այդ ինդրի մասին լրջօրէն
նախքան ցրելը) շրջանում յարմարը չունէք...

Արդեօք պարոնը չի համաձայնած թէ անյարմար էք գտած: Կովկասի մա-
սին լուր չունինք, յաջողակ աչքի ընկնող բան չը կայ:

Գիսակը, Երկաթը(3) եւ միւսները լաւ են. նրանք էլ ընկերներ են ուզում:

Ներփակ կը գտնէք նոր դիմողների ցանկը: Բոլոր ցանկերը ապահով տեղ
պահելու էք:

**Բարեւներ
ԱՐԵՒՄՏ. Բ[ԻՒՐՈ]**

Միքայէլը(4) վաղուց տեղս է:

Լաւ է ապահով նոր հասցէ տաք... ձեզ հետ թղթակցելու համար...

1.- Էնտէտ - նամակաբույրին վերեւ տպուած վերնագիր:

2.- Մարթին Մուրատեան:

3.- Գիսակը՝ Յովի. Սերենկիլիեանն է. (Վարդգէս). Երկաք, Աշոտ Երկաքը՝ Արմենակ Լեւոնեան:
Առաջինը կը գտնուէր Վան, երկրորդը՝ Սասուն:

4.- Վարանդեան Միքայէլ:

Ալեքսանդրիա

Հնկերներ!

Ուղարկում եմ 4000-ի չէք. յուսով եմ թիւրիմացութիւն չի ծագիլ եւ գումարը կը ստանաք: Յամենայն դէպս լաւ է ունենալ եւ այլ հասցէ:

Կ. Թոփալ[եան] Եղբ[այրներ] ուղարկած են այսօր Մանչ[եստր]ից 100 անգլ. ոսկի: Գանգատում են որ «առջի նամակնուս դարձը չեն առած». խնդրում են դրամի ստանալուն մասին իմաց տալ: Խնդրում են տեսութիւն մը, որ նրանց ասելով օգտակար կարող էր լինել մեր գործին... խնդրում են տեղն ու ժամանակը իմաց տալ իրենց. պէտք ունին:

Հարկաւոր է այդտեղից գրել այս 100-ի ստանալու մասին եւ խնդրել (ինչպէս արդէն գրւած է) լրացնել գումարի կէսը եւ վճարել մնացած 50 ռ[սկին], իսկ միւս կէսը (200) վճարել վեց ամսւայ ժամանակամիջոցում:

Պ[արոն] Մ. Զանզաքճան եւ Ընկ. ամսոյս 8-ից Մանչ[եստր]ից գրում է որ «մինչեւ օրս Նոյեմբ. եւ Դեկտ.ի նամակներուն պատասխան առած չեն... Մենք առաջի օրէն ըսած չենք որ կը մերժենք... կը բաղձանք օգնելու ձեր բարեգործութեան. մենք խնդրած ենք Մանչ[եստր] դիմէք. վերջը գրեցինք նաև մեր բարեկամին՝ Գրիգոր Թամիրեանցի ի Ֆիլիպէ, որ ձեր ներկայացուցիչը տեսնայ եւ համաձայնի: Ուստի կը խնդրենք կամ Ֆիլիպէ առ Թամիրեանց կամ Գայրո մեր տան Սիվիլիսարեան Ազնիւ-ի դիմէք ու պէտքը կարգադրէք. նաեւ կը խնդրենք մեր այս նամակին պատասխանել»:

Հնկերներ!

1) Մ. Ազնաւորեան եւ Հնկ. Յունտարի 8-ից գրում են «մենք առջի օրէն ըսած չենք որ կը մերժենք ձեր խնդիրը, բայց կը բաղձանք օգնելու ձեր բարեգործութեան. մինակ խնդրած էինք Մանչեսթր դիմէք. վերջերս գրեցինք նաեւ մեր բարեկամ Գրիգոր Թամիրեանցին Ֆիլիպէ, որ համաձայնի ձեր ներկայացուցչի հետ... Ուստի կը խորհինք կամ Ֆիլիպէ, կամ Գալրո մեր տան Սիվրիապ (Ազնի) դիմէք ու պէտքը կարգադրէք. նաեւ կը խնդրենք մեր այս նամակին պատասխանէք եթէ ձեր բաղձանաց համաձայն ենք»...

— Մենք պատասխանում ենք որ իրենց առաջարկի մասին գրւած է իզմիրի կոմիտէին: Ֆիլիպէ նրանք առաջարկում են միայն 100 ոսկի: Նրանց գործակալը որ այստեղով անցաւ ուզած էր ամսական կտրւի, որ շատ անյարմար է: 6 ամսից երկարացնելը անխոհեմութիւն է:

Անձնական միջամտութիւնները այստեղ անյարմար են: Աւելի լաւ է պահանջը նամակով դրւի:

2) Թոփալեան եղբայրները (Մանչեսթրից) ամսիս 12-ից ուղարկելով հարիւր անգլ. ոսկի գրում են «առջի նամակնուս դարձը չենք առել. խնդրում ենք տեսութիւն մը. օգտակար կրնար լինել ձեր գործին. եթէ կարելի տեսնում էք, տեղն ու ժամանակը իմաց տւէք. պէտք ունինք. եթէ ոչ զանց կ'ընենք»:

Ինչպէս եւ առաջ, զիջելով 1/3-ը եւ ստացած լինելով 150 (50+100), պահանջել մնացածը միանգամից կամ մաս մաս մի քանի ամսւայ ընթացքում... դիմումները ուղղել Մանչեսթր քաղաք:

3) Օլիվիօ Բակիրջեան, 11 Princess Street, Մանչեստր գրում է Յունտարի 14-ից — «ինդրում է որ վերոգրեալ հասցէով դիմելու հաճիք, որ պէտքը կը հոգանք»:

— Գրելու է Մանչ[եստր] ինչ որ միւսներին՝ հինգ հարիւրից զիջել 1/3, կէսը վճարել անմիջապէս, միւս կէսը՝ որոշ ամիսների ընթացքում:

4) T. Saccaënts, Co Thomas Esqre, 143 Upper Broog street Manchester-ից նամակս 16-ից գրում է — «անցեալ ամսոյն 19-ին գրած նամակի պատասխան չեմ ստացած թէեւ, սակայն կը սպասեմ միշտ եւ պիտի սպասեմ, որ այդ գործը կարգադրուի ինձ հետ, երբոր բարեհաճիք ձեր տնօրինութիւնը ինձ իմացնել. ներկային կու զամ վերոգրեալ երկու բարեկամներուն համար եւս խնդրել ձեզմէ (Ստեփան Սպարթալը եւ Երուանդ Սպարթալ) որ անոնցմէ ըրած պահանջնիդ ոչ ինձ իմացունել բարեհաճիք, քանզի ինչպէս նախորդիւս

ալ գրած եմ, այս քաղաքներու մէջ կատարելապէս անկարելի է ձեր պահանձը կարգադրել: Ուրեմն, բարեհաճեցէք հաշանգ տալ ուր որ հարկ է, որ այդ պահանջս ուղղակի չընեն սոյն անձերէն... Ուստի գրած նամակներուս պատասխանը ձեզմէ ստանալէս անմիջապահէս ետքը՝ պատրաստ [եմ] ձեզ հետ կարգադրել այս գործերն, որ եթէ յանձնւած է այն երեք բարեկամներուս կողմանէ. մնամ...»:

Կ'աղաչեմ Զեր նամակը դրկեցէք հետեւեալ հասցէին (սկիզբը գրւած է)

— Այս նամակի երրորդ անձնաւորութիւնը Դուկան Եսայեան է:

Ինչպէս գիտէք, առաջինից պահանջւած է 600, երկրորդից 1000, վերջինից 1000:

Մեր կարծիքն է, տւած հասցէով (Մանչ[եստր]) գրել (զատ զատ երեքին) որ նամակը առնելուց յետ 2 շաբաթւայ ընթացքին որոշւած գումարների կէսը հասցնել իրենց գիտեցած հասցէով (Գասպ[արեան]), իսկ միւս կէսի մասին կը բանակցւի յետոյ:

Լաւ է, եթէ հնարաւորութիւն կայ, գլխաւոր նամակները գոնէ (եթէ անկարելի է բոլորը) այրել 7-ից:

Բանակցութեան խնդիրը, ինչպէս տեսնում էք նորից դրւում է. լուրջ մտածելու է այդ մասին:

Ալեքսանդրիա, Կամսարականից ստացած ենք 1000 ֆր. չէք գաղթակ[ան-ների] համար: 7-ից նրան սպառնացել են: Հանգիստ թողնելու է: Գործներս եւ անելիքներս (դիմումների նկատմամբ) սահմանափակելու ենք եղածով...

Վոլո (Աքենքի մօտ) պ. Մ. Թաքու Մոնմեան (րue Ermouvo 136) մի քանի անգամ նամակներ է գրած: Մարթինին գրելու է տեսնւի հետը: Կարող է օգտակար լինել եւ Վիշապ (իւղ գործածելու ծանօթ է) եւ աւելի գուցէ իր ծնընդափարը յըրում (Ռոտոստօ)... հետաքրքիր է ինչ անձնաւորութիւն է:

Այսօր ստացանք ձեր երկար նամակը:

Բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻԲՐՈ

Փաստ. 13-37

Արեւմտեան բիրոյի անունով Զաւարեան կը գրէ Ասրպատականի Կ. կոմիտեին: Խօսքը կը վերաբերի Սասուն ուժ հասցնելու մասին:

20 - II - [19]03, **Ժընեւ**

**Վրէժի Կ. Կ.ին
Սիրելի ընկերներ!**

Ժամանակին, կարծեմ, դրւած էր ձեզ Գիսակի (Սեպտ. եւ Հոկտ. 27[1902]), Հրայրի (Օգ., Սեպտ.), Վահանի (Սեպտ. 10) նամակների եւ Բաղէ-շի ու Դժոխքի տեղեկագիրների ստանալու մասին(1): Օգտում ենք ուժներիս չափ: Իսկ վերջերս գերմանական եւ ֆրանսական պատգամ[աւորական] ժողովների հարցապնդումների համար — դրանց մի մասը շատ կարեւոր էր... եւ ժամանակին կ'իմացւի արդիւնքի մասին:

Ինչպէս կը գիտենաք Օրման[եան]-ի հարցը անյաջող անցաւ:

Իզմիրում Ք. սպանողին դատապարտած են մահւան. մէկին՝ որը մնում է բանտարկութեան, միւսներին ազատած:

Ամերիկա, Կիլիկիա գործերը լաւ են ընթանում:

Ամենակարեւորը սակայն նա է, որ ոռուս-աւստրիականը ու ֆորմներից ոչինչ չի դուրս գալ. հաւանական, կը ծագի ապստամբութիւն, որը կամ պատերազմով կամ առանց պատերազմի նորից դիւանագիտութեան սեղանի վերայ կը դնէ Արեւելեան հարցը: Մեզ համար շատ աննպատակայարմար է որ մեր իննդիրը մնայ մի կողմ: Դրա բարձրացնելը դժւար թէ առաջ բերեն Փարիզի (ամսիս 15) ժողովների նման ժողովները, ինչքան էլ նրանք փայլուն լինեն:

Մարդասիրական զգացմունքը դեր խաղում է, բայց մի միայն այդ զգացմունքը անկարող է լուրջ քաղաքական հարցեր լուծել: Առանց կենդանի եւ լուրջ բողոքի մենք անկարող ենք լուրջ յոյսեր ունենալ: Մոռացութեան տալ այդ հանգամանքը կը նշանակէ քնել այն ժամանակ երբ պահանջւում է ամենամեծ զգացմութիւն... Ահա այդ տեսակէտը ի նկատի ունենալով է, որ մենք ուզում ենք ձեր ամենալուրջ ուշադրութիւնը դարձնել նամակիս սկըզ-բում յիշւած գրութիւնների մէկ կէտի վերայ:

Տղերքը միաբերան պահանջում են ոչ միայն «դրամ, գէնք, ճարել ուժ» (որ նոր չէ եւ որի օգտակարութեան մասին երբեք կասկած չէ եղած), այլեւ «գործին նւիրւած քիչ շատ գիտակից կուող ընկերներ, որոնք կարողանային խմբեր կազմակերպել եւ կառավարել»: Բոլորը միաբերան խնդրած են այդ տեսակ ուժեր գոնէ մի քանի հոգի հասցնել: Երբ դորա վերայ աւելացնենք եւ դրսի ուժի առանձնակի ազդեցութիւնը եւ մանաւանդ ներկայ պայմանները, երբ պատրաստ ու արթուն է լինելու — պարզ կը լինի ինչքան շտապելու է

«գիտակից եւ վարժ» կուող ուժերի շուտ ներս ուղարկելը: Քանի ամիս առաջ նամակ էր գրած մեզ բուլղարացի Պետոյի(2) եղբայրը, յիշելով իր մտադրութիւնների մասին. ուզած էր Փրանս. մի ինչ որ դասագիրք. (հասցէն կորսնցուցած ենք. գրէք մեզ իրան պատասխանելու համար): Մաքուր, վարժ ուժ է երեւում: Նրա «տաք եւ ջահել» լինելը աւելի դրական յատկութիւն է համարելու, քան բացասական, մանաւանդ ներկայ պարագաներում...

Նոյն տեսակ յարմար ուժ է եւ ուրֆացի Կարապետը, որը հիմա ձեր կողմերն է (կարծեմ Ախապոր(3) տեղը) եւ որի նամակը Տաթեւից մեզ էիք ուղարկած: Նրա մասին մեր Եգիպտոսի ընկերը, ինչպէս եւ Մուրատը շատ լաւ կարծիք են յայտնած,— «պարկեշտ», «մաքուր» տղայ են անւանում «որ ուզում է երկիր անցնել եւ փարիլ իր սիրած գործին»...

Կը գտնեին հաւանական եւ ուրիշ նսիրւած փորձւած ուժեր, որոնց պահելը այստեղ ներկայ պայմաններում նպատակայարմար չէ... նրանք այնքան վարժ են որ «նախապատրաստութիւնը այդ շրջանում» պէտք չէ նրանց, եւ կարող է նոյնիսկ փչացնել:

Այդտեղի համար կարող էք ուժեր ուզել Ոսկանապատից(4), Մ[եծ] Ք[աղաք]ից(5). ամէն [մի] շաբաթ նրանց ուշացնելը կորստաբեր է համարւելու մեր դատի տեսակէտից... Յուսով ենք դրանցով չէք բաւականանալ եւ կ'աշխատենք ուղարկել եւ այլ ուժեր...

Լուր չը տւիք. արդեօ՞ք չը ձեռնարկեցիք ձեր շրջանում հանգանակութեան: Եթէ հիմա էլ չանւի դա եւ բոլոր խաւերը (առանց խարութեան կուսակցութիւնների) էլ ե՞րբ է դա անւելու, էլ ինչպէս ենք միացնելու բոլոր համակրող ուժերը...

Ի՞նչ արւեց գաղթականների] Պարսկաստան] փոխադրութեան համար: Թեհրան գրւած էր, պատասխան դեռ չառինք...

Եկող տարւայ համար այս կողմերից կը գան երկու հոգի մեր ընկերներից՝ գաւառներում ուսուցչութիւն անելու համար: Եթէ օգտակար է, կարող են մեկնել երկու ամսից յետ:

Ի՞նչ եղաւ Հնդկաստանի հանգանակութիւնը:

Հնկերական բարեւներով
Ա[ՐԵՒՄՏԵԱՆ] Բ[ԻՒՐՈ]

1.- Յաջորդաբար՝ Յովի. Սերենիւլեան (Գիսակ), Արմենակ Ղազարեան (Հրայր-Դժոխը) եւ Վահան Սանուելեան: Բաղէշի կողրին յիշուած Դժոխը՝ Սղերդ քաղաքի կուս. ծածկանունն է:

2.- Պուլկարացի Պետո՛ Սերեմենան Պետրոս՝ «Վէրքերով լի» ծանօթ երգի հերուս, որ ծերբակալուած էր Պուլկարիա հայ եւ մակեղոնական խումբի մը քրքական օօրքի հետ բախումի ընթացքին, ապա կախաղան հանուած 1901 թ. Դեկտ. 9-ին: Եղբայր՝ Արտաշէս, ծանօթ թորգում ծածկանունվ (1870-1915):

3.- Ուրֆացի Կարապետ – բուն անունով Համալեան Կարապետ: Ախապէ՛ ծանօթ Մոկացի Յարութիւն ծածկանունվ. բուն անունը՝ Դարենան-Փոլատեան Յարութիւն (1866-1902):

4.- Պարուից:

5.- Թիֆլիսից:

Փաստ. 42-1

11 - III - 1903

**Ատրպատ[ականի] Կ. կ[ոմիտէ]ին
Սիրելի ընկերներ!**

**Ստացած ենք ձեր Յունւարի 23-ին գրած նամակը։ Ափսոսում ենք որ Գի-
սակից(1) եւ ընկերներից նոր լուրեր չը կան. յուսով ենք շուտով կը ստա-
նանք, եւ առանց ուշացնելու ձեզ կը հասցնենք։**

**Դրամ ծախսելու նկատմամբ՝ պակասները լրացնելու ինչպէս եւ ծայ-
րեր(2) առնելու համար մենք էլ այն կարծիքին ենք որ հեռու տեղերից ու-
ղարկւած դրամներին ձեռք տալու չէ։ Դա ծանր տպաւորութիւն կը թողնէ
ուղարկողների վերայ։ Բացի այդ, ինչով պիտի արդարացնել այդ վարմուն-
քը, քանի որ ուղարկող ամերիկացիք աւելի աղքատ եւ աւելի քիչ են թւով
(մօտ 600 դաշնակցական միայն կայ) քան ձեր շրջանի հայերը կամ հարեւան
մարմինները։ Ամերիկայի առատ օգնութիւնը բացատրելու է նրանով որ
այնտեղ առանձնակի նշանակութիւն են տալիս ինքնապաշտպանութեան
գործին եւ դա իրագործելու համար դիմում են բացառիկ միջոցների, տեղ
տեղ սահմանելով նոյնիսկ 1/10-ի տուրք։ Դրութիւնը այնպէս է, որ նոյն լրր-
ջութեամբ նայելու ենք եւ ամէն տեղ։ Մեզ թւում է որ եթէ նոյն ուղիով գնա-
յիք, ձեր շրջանում եւս կը հաւաքւէր ոչ միայն ձեզ հարկաւոր 1000 թումանը
այլ շատ աւելին։**

**Ցամենայն դէպս 20 ուկու համար դիմել այդտեղից հեռու Ամերիկայի
բանւորներին շատ անյարմար բան է։ Հարկ եղած դէպքում անհամեմատ
աւելի ձեռնտու է օգնութիւն խնդրել ձեր հարեւան մարմիններից (Արեւել-
եան) Բիւրօ]ից, Ոսկանապատից, Մրգաստանից(3) եւայլն) կամ նոյնիսկ մե-
զանից, թէեւ մենք միշտ պարտքերի մէջ ենք։ Թէհրան, Զուղա գրելը որ այս-
տեղ բան չուղարկեն, նոյնպէս չարժէ։ արդէն բան էլ չի գալիս. միմիայն ու-
ղարկւած դրքերի արժէքը։**

Արդեօ՞ք Թէհրան գաղթակ[անների] համար մարմին հիմնեց...

**Աշխատէք ընդհանուր հանդանակութիւն բանալ եւ լայն կերպով առաջ
տանել։**

Ի՞նչ էք մտածում եւ անում կուող տղաներ ուղարկելու մասին(4)։

**Հնկերական բարեւներով՝
Ա[ՐԵՒՄՏԵԱՆ] Բ[ԻՒՐՕ]**

Փետրւարի 4/16 Ամեր. Կ. կ. յայտնում է որ ձեզ դրկած է 200 ո[սկի] եւ որ

**յաջորդ շաբթւան մէջ ուղարկելու է նոյնքան գումար: Առանց ուշացնելու
մաս մաս տեղ է հասցւելու:**

1.- Գիսակ կամ Վարդգէս՝ Յովի. Սերենկիվեանն է, որ նախ Վանի, ապա Տիգրանակերտի մէջ բանտ կը գտնուէր եւ ուր պիտի մնար տարիներ՝ մինչեւ Օսմ. Սահմանադրութիւն, 1908-ին:

2.- Ծայրը փամփուշտն է:

3.- Ոսկանապատը Պաքով ծածկանունն է, Մրգաստանը՝ Երեւանի:

4.- Հարցը Սասուն մարտական ուժեր հասցնելու մասին է:

21

Զաւարեանի չհամարակալուած այս նամակը բովանդակութենէն դատելով ուղղուած պէտք է ըլլայ Վրէժի շրջանին, որովհետեւ ընդհանրապէս Ասրպատականի վրայով կը կատարուէր դէպի Կովկաս եւ Երկիր «Դրօշակ»ի եւ այլ հրատարակութեանց ցրումը:

23 - III - [19]03

**Ստացած ենք Փետրուարի 13-ի ուղարկած յայտարարութիւնը, հանդա-
նակ[ութեան] թերթերը, Փետրւարի 20-ի գրածը Մրգաստանի(1) մասին, Գո-
լուշ[եան]ի(2) կենսագր[ութեան] վերաբերեալը:**

**Մրգ[աստանի] ուզածը կ'ուղարկւի: Երէկ յանձնեցինք 2 կապոց իրանց
համար, հին եւ նոր թերթերից եւ գրքոյկներ: Եթէ դուք շատ ուշացնելու չը
լինէք կարող էինք աւելի ուղարկել: Կարգադրելու է ուր հարկն է որ անմի-
ջապէս իրենց հասցւի:**

**Մեծ քանակութեամբ ուղարկւում է Ոսկ[անապատ](3). Երեւի նրանք չեն
ցրում ինչպէս հարկն է: Դր[օշակ] քիչ կան. քիչ ենք ուղարկում...**

**Բարեւներով
ՍՄԲԱՏ**

1.- Մրգաստան՝ ծածկանուն Երեւանի:

2.- Գօլոշեան Վարդան (1867-1889). ազատագրական պայքարի առաջին նահատակներէն:

3.- Ոսկանապատ՝ ծածկանուն Պաքով:

Ամերիկայի Կենտ. կոմիտէին, Բոստոն

Հնկերներ!

Ստացած ենք ձեր 17 Մարտ, 23 Ապրիլ եւ 1 Մայիս նամակները: Ի պատասխան վերջինիս երէկ ձեզ հեռագրեցինք օսի, այսինքն որ դրամը աւելի նպատակայարմար է առ այժմս ուղարկել Թիֆլիս տրւած հասցէով: Դրա պատճառը նա է որ Պարսկա-տաճկ[ական] սահմանագլուխներում անվերջ քրդական կոիւների պատճառով յարաբերութիւնները (այն կողմերը) երկար ժամանակէ ի վեր ընդհատւած են եղած: Յունտարին գրւած նամակները (Գիսակի(1) ձերբակալման մասին եւայլն, որ մի քանի օրից կը կարդաք թերթում(2)) մենք առած ենք միայն Ապրիլի վերջերում: Դրամը Պարսկաստանից չեն կարողանում, աւելի ճիշտ է չեն փորձ անում մեծ քանակութեամբ ուղարկել եւ այն ժամանակ երբ հարիւրաւոր ոսկիներ Պարսկաստան են պառկած, երկրում քաշում են նեղութիւն: Դրամ Թիֆլիսից փոխադրւած էր եւ անցեալում (փոստի միջոցաւ Պոլսի վրայով): Վերջերս հաստատւած պիտի լինի եւ նոր գիծ Երեւանի-Բայազէդի գծով: Հաւանական այդ ուղղութեամբ է որ մինչեւ Մինարէթի(3) շրջանի խաղաղւելը Արեւելեան բիւրոն ուղած է շարունակել փոխադրութեան գործը: Վերջապէս, լինի դրամը Թիֆլիս թէ Թաւրիզ, դա միմիանցից այնքան էլ հեռու չէ: Հարկ եղած դէպքում մի տեղից կարելի է փոխադրել միւս տեղ...

Մանրամասն տեղեկութիւններ կովկասից դեռեւս չունենք: Սա գիտենք միայն որ մի ամիս առաջ մօտ 60 հազար ֆր. կար զանազան մարմինների տրամադրութեան տակ, հանգանակւած գիշաւորապէս Վիշապի(4) գործերի համար: Յամենայն դէպս առ այժմս ամիսը 100-50 ոսկուց աւել չարժէ այդտեղից այն կողմերը ուղարկել: Ապագայում կը պարզէ ո՞ր շրջանի համար աւելի պէտք կը զգացւի:

Գրած էիք դրամի վերայ հսկելու մասին: Մենք եւս այն կարծիքն ունենք որ աւելի ձեռնտու է երկրի մէջ ծախսել գումարները. այդ ուղղութեամբ էլ գրւած է Թաւրիզ. այդ կողմից կարող էք բոլորովին հանգիստ լինել:

Հնկերներ, Բաղդասարեանի գալով այդ կողմերը յուսով ենք ձեր գործերը աւելի յաջողութեամբ կը գնան, ոչ միայն դրամականին վերաբերմամբ, որ մինչեւ օրս էլ արագօրէն զարգանում էր, այլ եւ մեր յեղափոխական գործունէութեան միւս կողմերի տեսակէտից: Մեր շրջաբերականների մէջ գրած էինք զինւորական խմբակների օգտակարութեան մասին եւ դուք էլ ազդա-

րարած էք արդէն խմբերին: Սակայն փորձը ցոյց է տալիս որ ազդարարութիւններով չի կարելի բաւականանալ: Դրամականի հետ միասին մեր գործը զարգանալու եւ առաջ է գնալու եւ միւս կողմերից՝ գործիչների շատութեան, նրանց բարձրութեան եւ փորձառութեան եւայլն... Շատ կարեւոր էր եթէ դուք կարողանայիք միջոցներ գտնել զինավարժական գործը զարգացնելու համար. շատ օգտակար կը լինէր եթէ նւիրւածներից մի քանի հոգի մտնէին զօրքի մէջ յատուկ զինուրական գործը (գէնք, կառավարութիւն) ուսումնասիրելու համար, միւսները ուսումնասիրէին վառօղ պատրաստելը, պայմուցիկ նիւթերի գործածելը, նոյնիսկ զինագործութիւն: Այս ըոպէիս մի 10 այդ տեսակ պատրաստած մարդիկ նոյն մեծ արժէքը կարող են ունենալ գործի տեսակէտից ինչ որ 10,000 տոլարը կարող է ունենալ... խորհեցէք այս մասին եւ ձեռք առէք հնարաւոր միջոցները: Հարկ եղած դէպքում վատ չէր լինի նոյնիսկ նշանակել յատուկ հարիւրապետ կամ հազարապետ զինուրական խմբակները կառավարելու համար:

Մինչեւ օրս կովկասից լուր չառինք արտասահմանում գումարւելիք ժողովն(5) իրենց մասնակցելու մասին: Ի նկատի ունենալով մի քանի տեղերից ստացւած պատասխանները, պաշտօնական ժողով գումարելու միտքը ամառանս ընթացքում թողինք: Առ այժմս աշխատենք ընթանալ այն ուղղութեամբ, որը բխում է այլեւայլ մարմինների կարծիքից: Հաւանական(6) եկող աշուն կամ ձմեռ կը յաջողակի Ընդհ. ժողովը] գումարել եւ աւելի խորապէս քննել բոլոր հասունացած հարցերը...

Զեր Շրջ. ժողովի ատենագրութիւնը ուղարկւեց Ատրապ[ատական]ի Կ. Կ.ին: Միւս եկող ատենագրութիւններից աշխատէք ուղարկել 5-ական հատ այլեւայլ կենտ. կոմ. ուղարկելու համար:

Անցեալ տարւայ Դրօշակների N N 1, 2, 3, 6 դեռեւս չստացանք(7). յիշեցրէք նորից կոմիտէներին:

Ծրագիրներ ուղարկւած են եւ ձեզ եւ բոլոր միւս կոմիտէներին:

Ներփակ ցանկով ամսիս 4-ին (գրքեր) եւ նամակիս հետ միասին (պատկերներ) ուղարկում է զանազան կոմիտէներին մեր եւ մեզ մօտ ունեցած հրատարակութիւններից: Բաց նամակներով(8) մենք էլ գրում ենք, դուք էլ մի շրջաբերականով լուր տէք որպէսզի դոյացած գումարները ամէն մէկ մարմին ուղարկէ ուղղակի Դրօշակի խմբագրութեան: Յիշեցրէք որպէսզի չը մոռանան մաքրել եւ հին հաշիւները, յետ ուղարկելով չը ծախւող գրքերը, մանաւանդ «Ամբոխային տրամաբանութիւնը» եւ «Ազատ[ութեան] ճանապարհին»(9), երկրորդ հատոր, որից մենք այլեւս չունենք եւ որ այլեւայլ տեղերից պահանջում են մեզանից:

Յ. Ճղուկեանը եւ ընկերը այստեղ են: Եգիպտոսի մեր ընկերն էլ այս կողմերն է. շուտով կը հասնի մեզ եւ դրանց հարցը կը կարգադրւի: Յանկալի է որ եկողները աւելի փորձւած լինին գոնէ զինագործութեան մէջ:

Գաղթականների Պարս[կաստան] փոխադրութեան հարցը մնացած է առ-

կախ: Պարսկաստանի եւ Հնդկաստ[անի] առաջնորդը (որին գրած էինք այս մասին) պատասխանում է մեզ որ, հետեւելով ոռուսների օրինակին, պարսիկները նոյնպէս չեն ուզում յատկացնել ազատ հողեր, որ իբր թէ գաղթականները մաս մաս գաղտնի կերպով վերադառնում են հայրենիք։ Պաշտօնական պատասխան պարսիկները դեռ չեն տւած։ Գաղթականները առ այժմս հանգիստ են Ռուսաստանում...

Թաւրիզում բաւականին նպաստաւոր շարժում է սկսում մեր օգտին...

Յ ամիս է Վահանից – երկուքից – լուր չունենք։ Կիլիկիայի գործերը յաջողակ են։

Հնկերական բարեւներով՝ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

Ինչո՞ւ չէք շարունակում ուղարկել նւիրատւութեան ցանկը։

Այս 1-2 ամսում կը տպագրւեն «Կովկասեան խաբրիկները» եւ Փետրւար 15-ի Շատօ տ' Օ-ի կոնֆերանսը։ Ի՞նչ չափերով ուղարկել դոցանից Ամերիկայի զանազան կոմիտէներին։

San Paulo-ի հետ (Brésil) յարաբերութիւն ունէ՞ք արդեօք։

- 1.- Տես 11 Մայիս 1903-ի նամակին թիւ 1 ծանօթագրութիւնը։
- 2.- Իմա՝ «Դրօշակ»ում։
- 3.- Ծածկանոն Սալմաստի։
- 4.- Ծածկանոն Կ. Պոլսոյ։
- 5.- Ակնարկութիւն երրորդ Ընդի. ժողովին, որ պիտի գումարուէր 1904 թ. Փետրուար-Մարտ ամիսներուն։
- 6.- Զաւարեան յաճախ հաւանական կը գրէ, վիխանակ հաւանաբարի։
- 7.- Հաւանաբար ըսել կ'ուզէ անոնց վիխարթէքը։
- 8.- Բաց նամակը կը նշանակէ գաղտնի բանաքով չէ գրուած, այլ պարզ, բացայատ։
- 9.- Յաջորդաբար՝ Քր. Սիրայէլանի եւ Ա. Ահարոնեանի երկեր։ Զեռագրին մէջ Զաւարեան սխալմամբ գրած է «Ամբոխային տրամադրութիւն»։

Վրէժ կ. կոմիտէին Թաւրիզ

Սիրելի ընկերներ

Ժամանակին ստացած ենք ձեր 13 և 27 III-ի, Սամսոնի 10 III-ի, և Պետրոսի 25 III-ի նամակները:

Գիսակին(1) փոխարինելու հարցը այնքան լուրջ եւ մեծ է որ լաւ կշռելու է: Հստ մեզ նրա տեղը գնալու էր նոյն շրջանին քիչ շատ ծանօթներից մէկը (Մենակ, Շամիլ[?], Դժոխվ եւ այլն...) այդպէս էլ գրած ենք Արեւել: Բ.-ին. յամենայն դէպս Բուլղարացու եղբօր եւ Ուրֆացու հարցը շատ ցանկալի եւ կարեւոր է եւ ոչ այնքան Շամիլ(2), ինչքան աւելի ներսի համար, ուր փորձը ւած տասնապետներ-հարիւրապետների կարօտը օրէցօր աւելի զգալի է դառնում: Դա բղխում էր վերջի գրած բոլոր նամակներից: (Եւ Գիս[ակի] եւ Դժ[ոխվ] եւ Վահանի ու Երկաթի(3) ... , որ դուք մեզ ուղարկելիս երեւի ու շաղրութեամբ չէք կարդացած):

Շատ ցաւալի է մանաւանդ այն հանգամանքը, որ չը նայած Ամերիկայի զգալի օգնութեան, Վարդանը իր վերջի նամակում գանգատում է որ դրամ չունի, չեն ունեցած եւ կրած են նեղութիւններ:

Մի ժամանակ գանգատում էինք որ դրամ չը կայ. Հիմա դրամ ունենք եւ չը նայած դրան մեր ընկերները մնում են սոված եւ գործը տուժում: Քանի անգամ դրամ էր որ դրամը կարելիին չափ շուտ փոխադրել... Եթէ այդ գիշը աւերւած էր, ուղարկելու էիք Մ[եծ] Քաղ[աք](4), այնտեղից փոխադրելու:

Առ այժմս Ամերիկայից կ'ուղարկեն Մ. Ք.: Ամերիկայից եկած բոլոր դրամը ներս է գնալու. դա տեղական կոմիտէի պահանջն է:

Մեր կապերը այդքան էլ հաստատ չեն որ կարողանանք մարդիկ նշանակել այս այն տեղ. Դեվելից[?] օգտւելու է իբրեւ օտարացուց... աշխատէք թղթակից դառնայ եւ հիմիկւանից գրէ այս այն տեղ...

«Մաքրելու» հարցին եւ յայտարարութեանը տալիս էք մեծ նշանակութիւն. վախենում ենք քանի շատ դրա յետեւից ընկնենք այնքան աւելի խըրւենք տեղական գործերի մէջ: Մեծացնում էք (արդէն տպւած) յայտարարութեան ազգեցութիւնը...

Ծրագիրներ ուղարկւած են. չը կայ: Ուղարկւած եւ ուղարկելու է Մրգաստանի(5) համար առանձին կապոցներ, չուշացնէք Աստուած սիրէք...

Ասլանից(6) խնդրէք ամիսը մի անգամ գոնէ թղթակցութիւն գրել մեզ:
Ներքին կանոնադրութիւնից (որ ընդհանուր նշանակութիւն ունի) ինչու չէք
ուղարկած մի 5-10 հատ դաշնակցական] մարմինների համար:

**Բարեւներով
ԱՐԵՒՄՏ. Բ[ԻՒՌՕ]**

[Լուսանցքի վրայ].—
Կազմին այստեղից առանձին թերթեր է ուղարկւում:
Ի՞նչ եղաւ գաղթականների] հարցը. միթէ չէր կարելի ոչինչ անել. գոնէ
Ամերիկայում հանգանակւած դրամից օգտւելու համար:
Ի՞նչ եղաւ ձեր ձեռնարկած հանգանակութիւնը:
Արդեօք չէր կարելի անհատական[?] ճանապարհորդութիւն անել տալ
Հնդկաստան:
Գնացող ծրարները ստանում էք այդտե՞ղ, թէ Մակու:

1.- Գիսակ, Վարդգևս (Յովհ. Սերեմկիվեան) Վանի Դաշնակցութեան կեղունական դէմքը, որ 1903-ի սկիզբը ձերբակալուած էր և կը գտնուէր քանո, որ պիտի մնար մինչեւ 1908, Օսմ. սահմանադրութեան հոչակումը:

2.- Շամը կուս. ծածկանուն է Վան-Վասպուրականի: Բուլղարացին՝ «Վէրքերով լի» ծանօթ երգի հերոս Պետրոս Սերեմճեանն է. երայրը՝ Արտաշէս Սերեմճեան: Ուրֆացին՝ Համալեան Կարապետ:

3.- Դժոխվը՝ Հրայր-Դժոխքն է (Արմենակ Ղազարեան). Վահանը՝ Մանուկեան-Տողրամաճեան, Դաշնակցութեան լիազօր ներկայացուցիչը Սասնոյ մէջ. Երկարը՝ Աշոտ Երկար (Արմենակ Լետնեան):

4.- Մեծ Քաղաք, այսինքն Թիֆլիս, ինա՞ Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյին:

5.- Երեւանի:

6.- Ասլան Մարտիրոս Յարութիւնեանի ծածկանունը:



Պետրոս Սերեմճեան

Վրէժ [Կենտ.] կոմիտէին

Սիրելիք!

Թեհրանի մեր ընկերներից մէկից (Տիգրանից) երէկ մի նամակ առինք, որից քաղում ենք հետեւեալ տողերը՝

«Թեհրանի մէջ կայ (Շահի վերջին անգամ ճանապարհորդութեան ժամանակ հետեւորդները Եւրոպայից բերել են) 800-1000-ի չափ մասուցէր եւ վարանտել հրացան իւրաքանչիւրը 3-400 փամփուշտով։ Այդ հրացանները թեհրանի մէջ ծախել հայ վաճառական տան մը ներկայացուցչին միջոցաւ կ'ուզեն ծախել։ Այդ ներկայացուցիչը մեր բարեկամ եւ ընկերներէն է... ի՞նչ միջոցներով կրնաք գնել այդ գէնքերը... հարկաւոր եղած փողը մեզի կը պակսի. աշխատեցէք ձեռքէ չը փախցնել...»

— Այս է նամակի բովանդակութինը։ Ի՞նչ անել արդեօք։

Նախ հարկաւոր է գէնքերը տեսնել՝ ինչքան լաւ եւ նպատակայարմար են մեզ համար։ Թետոյ, եթէ ձեր տրամադրութեան տակ եղած ապրանքը արդէն վերջանալու վերայ է, կամ մնացած է քիչ (50-100 հատ) եւ եթէ գինը բարձր չէ, աշխատենք այդ ապրանքի գոնէ մի մասը (մի 100-200) առնել։ Ի նկատի ունեցէք որ Երկրում եղած մարդիկ (յոյսները կտրելով երեւի փոխադրութիւնից) աւելի գերադասում են ներսում մաս մաս առնել։ Բացի այդ, Եւրոպայում հրացանները շատ արժան են (այստեղ օրինակ հատը 7 ֆր-ով իրենց զօրքի հրացանները կարելի է առնել)։

Կարող է պատահի որ դա հասարակ վաճառականական աֆերա է. եթէ բերողը տէրութիւն է, ինչո՞ւ է ծախւում այդ գէնքերը։ Մեզ թւում է որ առանց ժամանակ կորցնելու զինագործին կամ Սամսոնին(1) (եթէ տեղում անհրաժեշտ չէ) շուտ ուղարկելու է Թեհրան ձեր հրահանգների հետ միասին եւ այդ հարցին մի լուծում տալու։ Եթէ գէնք գնելը օգտակար գտնէք եւ ձեռնտու լինեն պայմանները, մենք էլ, հարկաւ մեր շրջանը, կարող կը լինէինք մի քանի հազ[ար] ֆր[անկ]ի օգնութիւն հասցնել։ Նոյնը գուցէ կարողանար անել եւ Արեւ[ելեան] բ[իւրոն] եւ կարսայ կոմիտէն...»

Զէք մոռանալու որ փոխադրութեան հարցը խաղալու է առաջնակարգ դեր։

Մինչեւ զինագործի թէ[եհրան] հասնելը գուք կարող էք խորհրդակցել այդ մասին եւ Արեւ[ելեան] Բ.ի եւ կարսայ հետ եւ ըստ այնմ կարգադրել։ Յամենայն դէպս եթէ այդ տեսակ հրացանի փամփուշտներ երկրում գնելը դժւար

է, լաւ է ամէն մէկի հետ մի 400-500 հատ փամփուշտ լինի: Աստւած սիրէք առնելու պարագային այնպէս արէք որ պակաս-պուատ բան չը լինի:

Դէպքից կարելի է օգտւել կարծում ենք եւ նոյն վաճառականի եւ անձանց միջոցաւ արտասահմանից մեր ուզեցած ապրանքը ստանալ (իբրեւ թէ արւում է տէրութեան համար...):

Այդ բանի մէջ զգուշութիւն եւ ճարպիկութիւն է պահանջւում, որ տեղացիք աւելի լաւ կը կարգադրեն... Բացի այդ, օգտւելու է այդ դէպքից ինչպէս եւ արձակուրդներից, որպէսզի տեղացի ջոջերը շարժւեն եւ այդ չօշափելի (ապրանքի) միջոցաւ մեզ օգնեն:

Լսած կը լինէք հաւանական որ մի քանի ամսից մտածւած է գումարել Հնդհ. ժողով(2): Շրջաբերականները հաւանական ձեզ կ'ուղարկւեն: Օգտւելու է դէպքից եւ շրջանից կազմակերպութիւնը դնելու աւելի հաստատ եւ գործնական հողի վերայ:

Քանի ժամանակ է Վասպ[ուրականից] նամակ չը կայ, ինչպէս եւ սահմանագլխից: Բուղարացին(3) եւ ընկերը արդեօք գնացի՞ն: Ապրանքի փոխադրութիւնը արդեօք վերսկսւե՞ց:

Ամերիկայում լուրեր են պատեցւում դաշնակցականների եւ հնչակ[եան-ների] մէջ պատահած կոիւների մասին (?): Ի՞նչ կոիւներ են դրանք. այդ մասին իրենց ուղղակի տեղեկութիւններ հաղորդեցէք:

Ամերիկայից եկած դրամներից ո՛ր մասն է Երկիր հասած... ոչինչ գրեցիք այդ մասին: Ամերիկա, Կիլիկիա գործերը լաւ են գնում: Վերջինումս արդէն յուսալի մարմիններ ունենք...

Այս ըոպէիս ստացւեց ուռւաց գրքերի մի ցուցակ (Մայիսի 2-ից գրած): Մրգաստանի(4) համաձայնութիւնը արդեօք առնւած է փոխադրելու համար. մի ժամանակ բողոքում էին: Մրգաստանի կապոցները ուղարկեցի՞ք:

Բարեւներով՝ Ա[ՐԵՒՄՏԵԱՆ] Բ[ԻՒՐՈ]

1.- Սամսոն – Ստեփան Թաղէսնեան, Ատրպատականէն Երկիր զինամքերքի փոխադրութեան պատասխանատու:

2.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. երրորդ Ընդհ. ժողովին, որ պիտի գումարուէր Սոֆիա, 1904 թ. Փետրուար եւ Մարտ ամիսներուն:

3.- Զշփորել Սերեմճեան Պետրոսի հետ, որ արդէն նահատակուած էր. այս մէկը անոր եղայրն է՝ Արտաշէս Սերեմճեան:

4.- Երեւանի:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ ԱՐԵՒՍ. ԲԻՒՐՈՅԻ ԵՒ ՄԻ ՔԱՆԻ
ԸՆԿԵՐՆԵՐԻ (Վ-Ի, Գ-Ի ԵՒ Մ-Ի) ԽՈՐՀՈՂԱԿՑՈՒԹԵԱՆ**

Արխիմեներուն մէջ ներկայ փաստաթուղթն կը գտնուին երեք տարրեր օրինակներ: Անոնցմ մէկը (50-86) Զաւարեանի ձեռագրով է եւ սեւագրութեան բնոյք ունի, զնշումներով եւ լուսանցքային յաւելումներով: Թիւ 50-86ա-ը, այլ ձեռագրով մը մաքրագրուած, արտագրութիւնն է առաջինին: Երկուքն ալ թիւրիմացութեամբ զետեղուած են Արևամտեան թիւրոյի 1906-7 թ. թղթածրարին մէջ: Երրորդը (42-49), զոր հիմք ընդունած ենք ներկայ հրատարակութեան համար, կը կրէ ճիշդ քուականը, 9 Յունիս 1903. առաջին էջո գրուած է Զաւարեանի կողմէ, ապա շարունակած Յար. Գալֆայեանի ձեռագրով: Արդարեւ, այս վերջինը (Վահրամ, Կիլիկիոյ գործիչներէն) 1903 թ. Ապրիլ, Մայիս եւ Յունիս ամիսներուն կը գտնուէր Ժընեվ եւ մասնակից էր խորիրդակցութեանց: Նոյն շրջանին Սիւնիխի ուսանողներէն Աղասէր (Գրիգորեան Յակոբ) եւս հանդիպած էր Ժընեվ:

1) Կիլ[իկիա]ին Պատ. մարմին համարելով՝ Կամք ներկ[այացնող] մարմնի(1) կողմից նշանակւած Ասմանը, Մարթինը եւ վերջերս հրաւիրւած Աղ[ասէրը] եւ Վահրամը, այդ մարմինը աւելի եւս ուժեղացնելու համար առաջարկել եղած անդամներին հրաւիրել նաեւ Կիլ[իկեան]ին, Կարիճին, Վարդոյին, Ռահվերին, Քահանային(2), ինչպէս նաեւ ձգտել պաշտօնապէս կապել Պատ. մարմնի հետ Վարդոյին եւ մանաւանդ Լեռնավ[այրի] ազդեցիկներից մի քանիսին:

2) Հնդունելով փոքրիկ ձեռնարկների աննպատակայարմարութիւնը Լ[եռնավայրի] շրջանի(3) համար եւ սահմանելով այդ շրջանի կարիքը առնուազը 200 հազ[ար] ֆրով, կազմակերպութեան գանձարանից Պատ. մարմնի տրամադրութեան տակ համարել 50 հ[ազար] ֆ. նախապատրաստական ծախքերի եւ սկսած ձեռնարկների համար:

3) Դիմել «Կովկասի հարուստին», եւ ցոյց տալով իրեն Երկրում առնւած քայլերը, մեր որոշումը եւ հարուստի աննպատակայարմար տեսակէտը օգնութեան (պաշարի) հարցի նկատմամբ, աշխատել կապել նրան այժմեանից այդ շրջանի հետ՝ մասնակցել տալով կազմակերպութեան անելիք ծախքերին:

4) Իզմիրում կատարուած դիմումների նկատմամբ տեղացիների միջնորդութեամբ, մտնել յարաբերութեան մէջ Մանչ[եստրի] վաճառականների հետ, ինչպէս նաեւ իզմիրում գտնուածների, սահմանափակելով հարուստ-

Ների թիւը 10-15 հոգով, եւ իբրեւ սկզբունք ընդունելով, որ եղած պահանջից զիջել կարելի է միայն ոչ աւել քան 1/3 եւ մնացեալ 2/3-ի նկատմամբ սահմանել այլեւայլ ժամանակամիջոցներ եւ մինչեւ բանակցութիւնների վերջը, ամէն կերպ խուսափել 20-ից(4), իսկ անխուսափելի դէպքում կատարել ամենավատ համբաւ ունեցող մէկի նկատմամբ: Ուսկ[եհանգ]ի(5) ձեռնարկի շարունակութիւնը եւ վերջացնելը թողնել կ[իլիկի]ոյ Պատ[ասխանատու] մարմնին:

5) Անմիջապէս ձեռնարկել կազմակերպութեան Հնդհ. ժողովի գումարման, եւ դա իրականացնելու համար դիմել Արեւելեան բիւրոյին, պահանջելով՝ դրական պատասխան եւ ցրելով անհրաժեշտ շրջաբերականները ոչ ուշ քան 15 օրից յետոյ: Հնդհ. ժողովի հրաւիրել Հնդհ. ժողովի կողմից որոշուած կոմիտէները եւ հետեւեալ կազմակերպուածներին.

ա. Տիգրանակերտ – Սղերդ

բ. Աղանա

գ. Մարաշ-Այնթապ-Ֆռնուզ

Հնդհակառակը, գոյութիւն չունեցող համարել կարմիր Բերդը(6):

6) Վիշապի(7) գործունէութիւնը ձգել այն Պատ. Մարմնին վրայ, որը թողնելով իր բուն գործը, մինչեւ օրս զբաղուած է դրամական հարցով:

7) Անկախ Հնդհ. ժողովի գումարումից՝ շարունակել սկսուած ձեռնարկները, մանաւանդ որ կազմակերպութեան նիւթական միջոցները այժմ թոյլեն տալիս իրականացնել դրանցից անոնք, որոնք օգտակար կարող են համարուել ներկայ պարագաներում:

8) Խնդրել բոլոր դ[աշնակցական] կ[ենտ] կոմիտէներից եւ կոմիտէներից եւ անհատներից գործածել բոլոր միջոցները՝ իրենց շրջանի մարմինները վերակազմելու եւ զարգացնելու համար, որպէսզի նրանց մասնակցութիւնը Հնդհ. ժողովին չկրէ պատահական բնաւորութիւն:

9) Արտասահմանի պլոպականուը շարունակել նոյն ուղղութեամբ խոյս տալով նոր-նոր ձեռնարկներից եւ ծախքերից:

1.- Դաշնակցութեան Կամքը ներկայացնող մարմինը կեանքի կոչուեցաւ Հ.Յ. Բ. Ընդի. ժողովին կողմէ. (1898), որպէսզի Ընդհանոր ժողովներու միջն իմկող ժամանակաշրջանին պարերաբար գումարուելով կայացնելու կարեւորազնյն որոշումներու: Ան օժոնուած էր լայն իրաւասութիւններով՝ բացառիկ պարագաներու տակ իր պատասխանատութեամբ բացառիկ որոշումներ կայացնելու, ինչպէս նաև կուսակցութեան արտաքին յարաբերութիւնները վարելու: Դաշնակցութեան Կամքը ներկայացնող մարմինը բաղկացած էր երկու Բիւրոներու՝ Արեւելեան եւ Արեւմտեան եւ Պատասխանատու չորս Կերպ. կոմիտէութեանց մեկական ներկայացուցիչներէն: 1904-ի Գ. Ընդի. ժողովը Կամքը պիտի փոխարինէր «Դաշնակցութեան Խորհրդուրութեան միեւնայն լիազօրութիւններու»:

2.- Յաջորդաբար՝ Տոքք. Զարարիա Պատիկեան (Կիլիկիան), Միսար Գոյշումճեան (Կարիճ, գրական անոնով՝ Առաջանձար), Վարդ-Պատրիկեան Յակոր (Վարդ, Վարդո, Արվախ) եւ Միսար Վարդանեան (Ռահվեր):

3.- Կիլիկիոյ շրջանի՝ լայն իմաստով, որովհետեւ Լեռնավայրին մաս կը կազմէին նոյնպէս Լիքանան ու Սուրիխան:

4.- 20-ը կուս. զաղսնագրութեան մէջ ուներ տեսորի, ահարեկչութեան իմաստ: Այսուեղ հարցը կը վերաբերի «Փորորիկ»ի բոնի հանգանակութեան ձեռնարկին:

5.- Իզմիրի:

6.- Կարմիր Բերդ ծածկանունը կը կրէր Գաղատիա-Անգարան:

7.- Կ. Պոլսոյ:

Փաստ. 42-17

16 - VI - [19]03

Ժընեւ

Կիլիկիայի Պատ[ասխանատու] կոմիտէին

Սիրելի ընկերներ!

Վահրամը(1) հասած եւ արդէն պատմած կը լինի մեր խօսակցութիւնների եւ մտածումների մասին: Աւելորդ է կարծում ենք խօսել աւել դրանց վերայ:

Մենք կ'աշխատենք անել ինչ որ մեզանից է կախւած, յուսալով որ դուք էլ չէք զլանայ հարկ եղած տեղեկութիւնները հաղորդելու ինչ[պէս] եւ արագօրէն առաջ տանելու ձեր շրջանի գործերը:

Ներփակ կը գտնէք Փանոսեանից ստացւած թուրքերէն նամակը 20 ա[նգլիական] ո[սկու] հետ: Կը կարգադրէք ինչպէս յարմար կը դատէք:

«Կովկասցի վաճառականից» մինչեւ օրս էլ հեռագրի պատասխան չը կայ: Ոչ մի հաստատ բան նաեւ Փարիզ գնացած ընկերներից, որոնց վերադարձը 7 օրից չուտ դժւար թէ կարելի լինի յուսալ...

Իզմիրի տիսուր անցքերի մասին արդէն իմացած կը լինիք... ափսոս տղայ!

Վասպուրականից(2) Վան անցնող մեր երկու ընկերներին չի յաջողւել ներս մտնել. յետ են եկած, աւելի պատեհ հանգամանքի սպասելու համար:

Այս քանի օրս կ'ուղարկենք ՀնդՀ. ժ[ողով]ին վերաբերեալ շրջաբերականը. յուսով ենք հարկ եղած տեղերը արդէն լուր տւած կը լինէք: Աղասէրի(3) հեռագիրը ստացւեց Վահրամի մեկնելուց յետ...

**Բարեւներով
Ա[ՐԵՒՄՏԵԱՆ] Բ[ԻՒՐՕ]**

1.- Յար. Գալֆայեան, որ Ժընեւ այցելութենէն նոր վերադարձած էր իր պաշտօնատեղին՝ Աղեք-սանդրիա. այս վերջին քաղաքին միջոցով կազ կը հաստատուիր Կիլիկիոյ հետ:

2.- Շատ հաւանարար պիտի ըլլայ՝ «Ասրպատականից»:

3.- Աղասէր (Գրիգորեան Յակով), որ իբրև պատգամատր Հ.Յ.Դ. Ելրոպայի Ուս. միութեան, պիտի մասնակցէր երրորդ Ընդհ. ժողովին:

Ս. Զաւարեանի ձեռագրով եւ Հ.Յ.Դ. Արեմտեան բիւրոյի պաշտօնաթուղթի վրայ գրուած, բայց չհամարակալուած փաստաթուղթ:

19 - VI - 1903, **Ժընեւ**

**Ատրպատականի Կ. Կոմիտէին
Միրելի ընկերներ,**

Վարդանի(1) վերջին գրութիւնների մէջ (Մարտ եւ Ապրիլի 23-ից) շատ շեշտում է զէնքի բացակայութեան վերայ եւ մատնանիշ անւում որ ժողովուրդը իր դրամով ուզում է զէնք առնել, բայց զէնք չի գտնում: Նոյն բանի վերայ քանիցս անգամ շեշտած էր եւ Դժոխվը՝(2) առաջարկելով պահեստներ ունենալ Կարս եւ Սալմաստ զէնքը իրա գնով ժողովրդին ծախելու համար...

Սա յիշեցնում ենք ձեզ Թեհրանի հրացանների հարցի նկատմամբ, որ ի նկատի ունենաք եւ այս հանգամանքը...

Հայկին եւ ընկերոջ յաջողւեց անցնել թէ ոչ:

Վարդանը շատ շեշտում է եւ մասերի, նրանց մաքրելու իւղի եւ ներկի վերայ. բան արեցի՞ք արդեօք:

Ղազվին թերթեր եւ հանգանակութեան թերթ ուղարկւած էր, որովհետեւ պ. Բարիս.....ը(3) մի ուսանողի միջոցաւ էր յայտնած որ այդտեղից այլեւս թերթեր չի ստանում...

Միթէ՞ Պարս[կաստան]ի կամ ձեր շրջանի վերաբերմամբ մենք «ուրիշներ» ենք եւ միթէ մենք ուրախ չենք լինի եթէ այս կողմերը եկող ուսանողներին եւ վաճառականներին դուք խորհուրդներ եւ գործ տայիք: Շատ տեղեր պարսկահպատակներ կան, որոնց մենք դժբախտաբար չենք ճանաչում... կծու ոճ գործածելլ դժւար թէ օգուտներ խոստանայ...

Այդ ի՞նչ երկու սպանութիւն է կատարւած Պարսկաստան: Ի՞նչ ընդհարում դաշնակցակ[անն]երի եւ հնչակ[եանն]երի մէջ:

**Բարեւներով
Ա. Բ. [ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]**

1.- Հաւանաբար Վարդան Շահպազն է, բուն անունով Տօնիկեան Սինաս:

2.- Հրայր-Դժոխվն է, բուն անունով՝ Ղազարեան Արմենակ:

3.- Անունը անընթեռնելի:

**Ամերիկայի Կ. կոմիտէին
Հնկերներ !**

Ներփակ ուղարկում ենք պատճենը այն խորհրդակցութիւնների, որ – օգտելով մեր մի քանի ընկերների ներկայութիւնից – Բիւրոն ունեցաւ վերջերս: Ի նկատի ունենալով զանազան տեղերից ստացւած տեղեկութիւնները Արեւմտեան] բ[իւրոյ]ի շրջանի ժողովի մասին, մենք օգտակար չը դտանք այլեւս այդ ժողովի գումարումը, որոշելով շտապեցնել Հնդկ. ժողովը: Նպաստեց դրան եւ այն տիսուր վախճանը որ ունեցաւ մակեդ[ոնական] հարցը:

Հնդկ. ժ[ողով]ի վերաբերեալ շրջաբերականներ չուտով կ'ուղարկենք: Երկու մարմիններին ոչ պաշտօնապէս արդէն յայտնւած է այդ մասին, որպէսզի ի նկատի ունենան այդ հանգամանքը: Կովկասում կարեւոր շրջաններում գործը լաւ է գնում: Վերջերս յաջողութեամբ անցած պէտք է լինի առաջի ձիւաւոր խումբը (10-15 հոգուց), որ բաւականին պաշար կը հասցնէ ընկերներին(1):

Զեր ուղարկած դրամների քանակութեան մասին ուղղակի երկիր արդէն գրւած էր վաղուց եւ էլի գրւեց:

Դրամը հիմա ուղղակի փոխադրում է դէպի Մուշ: Պարսկ[աստան]ի ճանապարհը քանի ամիս է որ վտանգւած է:

Մեր երեք ընկերներին որ ուզեցել էին գնալ Վարդգէսին(2) փոխարիննելու համար, դժբաղդաբար չի յաջողւած ներս անցնել...

Այս (N 5) համարում(3) յայտարարում ենք որ մենք հրաժարում ենք այլեւս հնչ[ակեան] հատւածների հետ միութեան մասին խօսելուց: Մեր կարծիքով այսուհետեւ ձգւելու[?] է անհատների եւ մասնաւոր խմբակների հետ իրար միանալու: Մուրատի(4) հետ արդէն յարաբերութեան մէջ ենք: Աշխատէք այդ ուղղութեամբ եւ դուք...: Յուսով ենք կը լարէք բոլոր ուժերդ, որպէսզի Հնդկանուր ժողովը տեսնելով իր բազմակողմանի ուժը պարզերս լինի իր խղճի եւ ազդի առաջ:

**Հնկերական բարեւներով
Ա[ՐԵՒՄՏԵԱՆ] Բ[ԻՒՐՈ]**

1.- Խօսքը կը վերաբերի Կովկասէն՝ Սասնոյ պաշտպանութեան համար ուղարկուած օգնութեան:

2.- Վարդգէս – ծածկանուններէն մէկը Յովի. Սերենկիլեանի, այլապէս Գիսակ, որ կը գտնուէր Վանի բանտը:

3.- Իմա «Դրօշակ»ի համարում:

4.- Ակնարկութիւն 1894 թ. Սասնոյ ապստամբութեան դեկավար Սեծն Մուրատի, բուն անունով Համբարձում Պոյածեան:

Կիլիկիայի Կենտրոնական գոմիտէին

Սիրելի ընկերներ!

Զեր 27 VI-ի եւ 4 VII-ի նամակները ստացած ենք: *Հ[նդհ.] Ժ[ողով]ի գումարման մասին գործ կը դնենք բոլոր միջոցները, որպէսզի յարմար ժամանակ ու տեղ կայանայ: Մեր թուլութեան պատճառաւ շրջաբերականը քիչ ու շացաւ, թէեւ մասնաւոր նամակներով ամէն տեղ արդէն լուր տրւած է:*

Կովկասի վաճառականը մինչեւ օրս էլ չի պատասխանած մեր նամակին եւ հեռագրին: Դա բացատրելու է այդտեղի հետ ունեցած բանակցութեամբ: Կողմնակի աղբիւրից իմացանք որ ամառւայ ճանապարհորդութեան ժամանակ այս կողմերն էլ է անցնելու: Հարկաւ կ'աշխատենք, բայց գոնէ չը դանդաղեցնելու համար այդ հարցը կիսով չափ արդէն փակւած էք համարելու, աշխատելով դրա հետ միասին օգտւել եւ Զ. [?] բարեսիրաց ընկերութեան կապերից: Մեզ թւում է որ դա դժւար չէ այնպէս անել որպէս այդ գումարներն, այսինքն բարես. ընկերութեան, թէկուզ կողմնակի կերպով օգտակար լինէր մեր ուղղութեան համար:

Մոռանալու չէ որ դրած պայմանը նոյն իմաստն ունի, ինչ որ եւ մեզ դըրւածը՝ հաւատ կայ միայն դէպի տեղացիք եւ օր առաջ մենք եւս աշխատելու ենք այդ տեսակ մարմին ունենալ: Դորա համար էլ աշխատելու է: Մօտներդ կայ բաւականաչափ գումար. մնացածն էլ կը լրացւի երբ եղածը ծախսելու վերայ լինիք եւ հարկ զգաք որպէսզի այդ մնացած գումարը ձեզ ուղարկւի: Լաւ կը լինէր այս կէս տարւայ հաշիւը տեսնէիք, տեղեկութիւն տալով ինչ նորութիւն, ինչ յաջող կամ անյաջող քայլեր են արւած շրջանումդ:

Ամսիս 2-ին Թոփալեանը Մանչեսթրից գրած էր մի նամակ գանգատւելով որ մի ոմն Պետրոս, 30 տարեկան, իբր թէ Եգիպտոսից եւ Ժընեւի վրայով եկած՝ յարձակում է գործել պ. Թ. ի վերայ... խնդրում էր որ մենք պատժենք նրան: Պատասխանեցինք որ չենք ճանաչում եւ դժւար թէ Դաշնակցութեան] որեւէ մարմնի անդամ լինի դա: Պարոնը (Թ.) յետոյ աւելացնում է. «պ. Փ. 20 անգլ. ոսկի զրկած է մեր խորհրդով... խնդրենք որ այդ հաշիւն գոյւած համարէք. աւելի չէ կարող վճարել:

Ալեքսանդրիայից ստացւած նամակի համաձայն բանակցութիւն սկսւած է պ. որդոց հետ մի պարոնի միջոցաւ, արդիսնքը իմանալը քանի մը ամիս կը տեսէ. երկու եղբայրներ իրարմէ հեռի, եւ միջնորդն Լոնտոն եւ Փարիզ լինելով բարեւում [են] Սարգսին, Դեմիրճեանին եւ Տատուրեանին: Ո՞ւր են խոստացուած նամակներ – գրքերը եւ պատկերները ստացած ե՞նք»:

Նամակի այս մասին (բացի գրքերից, որ մեզ էր վերաբերում) գրել ենք որ

Կը յայտնենք ձեզ: Ուրեմն անօրինում էք ինչ որ հարկն է: ... Քիչ վաղ է (ինչ-պէս երեւում է) մտածել մարդ ուղարկելու մասին: Ժամանակին յոյս ունենք մէկը կը գտնւի. անունը այս բոպէիս անկարող ենք տալ, չը գիտենալով որ այդ ժամանակ կարողութիւն կ'ունենայ ճանապարհ ընկնել եւ ինչ առկախ խնդիրների համար (բացի պի որդոց):

Վ.ի մասին գրածներդ լաւ չըմբռնեցինք. 27 VI-ի նամակում գրում էք ի միջի այլոց, «կը խնդրենք որ խմբագրութեան ոեւէ մէկ անդամ ասկէ վերջը առանց մեր գիտութեան երրորդ անձնաւորութեան մը, Զէյթունցի պատ-ւելիի միջոցաւ յարաբերութիւն պահելէ զգուշանայ Վ.ի հետ եւայլն»: 4 VII-ի նամակում կարդում ենք. «մեզի լաւ ծանօթ ըլլալով այս մարդուն մտքին եւ համոզումներուն վերայ այնտեղի պատւելիին կատարելիք ազդեցութիւնը, աւելի լաւ կ'ըլլար կարծենք... անոր միջոցաւ միւսին մի քիչ հաւատք եւ վստա-հութիւն ներշնչել մեր կազմակ[երաբութեան] նկատմամբ»... Ինչպէ՞ս հաշ-տեցնել այս երկու ուղղութիւնները... Աւելի լաւ է հետեւել Վահրամի(1) այս-տեղ եղած ժամանակ ասածին եւ մեր ձեռքով աշխատել մեր գործը տեսնել մինչեւ դրանց յարաբերութիւնները կը պարզեն: Խօսելիս միշտ աշխատում ենք գործերը շտկել, առաջ տանել... մի մի անգամ էլ անյաջող է լինում:

Ասլանից, Կիլիկեանից(2) եւ միւսներից ի՞նչ լուրեր. խնդրէք գոնէ ամիսը մի անգամ մի մի թղթակցութիւն գրեն: Ճի՞շտ է արդեօք Ասլանի բանտար-կութեան լուրը:

Երկրից վերջապէս մի ուրախ լուր առինք. մէկ քանի շաբաթ առաջ մեր ձիւարոր խմբին յաջողում է Մուշ (եւ հաւանական լեռները) անցնել: 23 հո-գուց 7-ը ուռսաստանցի են, միւսները տաճ[կաստան]ցի (մէծ մասը սւազցի): Հետները տարած են մօտ 15 հազ[ար] փամփ[ուշտ], մօտ 30 հրացան, 25 քիլօ պայմուցիկ նիւթեր եւ այլ իրեր: Զնայած իր յանդնութեան այս գործը յա-ջողութեամբ է փակւած... (3) գնացողները ուղարկում են իրենց համբոյր-ներն ու բարեւները բոլորիդ: Եթէ ժամանակ լինի մանրամասնութիւնները արտագրելով կ'ուղարկեմ:

Ի՞նչ եղան ձղուկեան ու Պոյաճեանը. յաջող, լաւ են արդեօք: Ի՞նչ եղաւ ձեր Շրջ. ժողովը: Գահիրէ գնացող թերթերը արդեօք ծառայո՞ւմ են իրենց նպատակին(4):

Բարեւներով՝
Ա. Բ. [ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]

Ուղարկում եմ Ատրպատ[ականի] Կ.ի 1902-ի հաշիւը: Կնիքները պատւիր-ւած են:

1.- Վահրամ՝ ծածկանուն Կիլիկիոյ գործիշներէն Գալֆայեան Յարութիւնի:

2.- Ասլան՝ ծածկանուն՝ գրող, ինչպէս նաև կոս. գործիշ Զարդարեան Ռուբէնի: Կիլիկեանի բուն անունն էր Պարիկեան Զաքարիա:

3.- Հարցը կը վերաբերի Սասնոյ 1904 թ.ի ապստամբութեան օգնութեան փորացող զիմեալ եւ զինատար խոմբերէն մէկուն:

4.- Հարկ է յիշել որ Արևմտեան բիւրոն Կիլիկիոյ մարմնին հետ կը հաղորդակցէր Եգիպտոսի Աղեքսանդրիս քաղաքի միջոցաւ:

Փաստ. 42-30

12 - VII - 1903, ԺՈՆԵԼ

**Ամերիկայի կենտրոն. կոմիտէին
Հնկերներ!**

Ներփակ կը գտնէք մի նամակի պատճէն, որ ստացւած է Մշոյ դաշտից մեր ընկերների կողմից: Սա առաջի ձիաւոր խումբն է որ անցած է եւ այն էլ մեծ յաջողութեամբ չնայած հազար ու մի խոչընդուների: Գնացողները եղել են թւով 23 (7 ոռոսաստանցի, միւսները տաճկաստանցի, Սվազից գլխաւորապէս): Տարած են մօտ 14 հազար փամփուշտ, մօտ 30 հրացան, ատրճանակներ, պայթուցիկ նիւթեր եւ այլ մանր անհրաժեշտ իրեր:

Տղերանց հասնելը մեծ ուժ կը տայ երկրում եղածներին... Կարսայ շրջանում դրա առթիւ տիրում է մեծ ոգեւորութիւն...

Թիֆլիսից մեզ հաղորդում են որ ձեր ուղարկած 1900 ո.[ութին] ստացւած է: Կարող էք նոյն հասցէով ուղարկել էլի 200-300 ոսկի: Զեր ուղարկած գումարը կը տեղափոխակի արդէն Կարսայ շրջանը եւ Արեւել. բիւրոն զբաղւած է զէնք, մթերքներ առնելով եւ փոխադրութեամբ:

Այս երկու օրս ցրւում ենք Հնդկ. ժ[ողով]ին վերաբերեալ շրջաբերականները...

Բարեւներով Ա. Բ. [ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]

Ինչ տպաւորութիւն են թողնում Սիամանթոյի ոտանաւորները. հասկացւում, սիրում են արդեօք:



Ասոմ Եարճանեան – Սիամանթօ

Հ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդհ. ժողովի գումարման մասին արխի-ներուն մէջ կը զտնենք Հ.Յ.Դ. Արեւելեան և Արեւմտեան բիւրոներուն կողմէ նարմիններուն ուղղուած շրջաբերականի մը մէկէ աւելի տարրե-րակներ. 42-62ա համարը կրող փաստաքուղը կը պատկանի Ս. Զա-ւարեանի ձեռագրին, և սակայն, դատելով գրութեան մէջ բազմաթի-ջնջում-սրբագրութիւններէն, տողամէջի և լուսանցքային յաւելուննե-րէն, կ'եզրակացուի որ անիկա պարզապէս սեւագրութիւն մըն է: Կայ նաեւ թի 42-62ը փաստաքուղը, որ Զաւարեանի ձեռագրին արեւմր-տահայերէնի վերածուած շարադրանքն է: Գոյութիւն ունին նոյնապէս 13-59 և 42-62 թիւրով տպագիր բազմաթիւ օրինակներ, նոյնապէս արեւմտահայերէն:

Ինչպէս ըսունեաւ վերեւ, մեր տպաւորութիւնն է որ այս բոլորին հիմք պէտք է ընդունիլ Ս. Զաւարեանի սեւագիր օրինակը, որ ապա նաք-րագրուած է և արեւմտահայերէնի վերածուած:

Ուստի, ստորեւ կու տանք գլխաւոր երկու օրինակները, ճախ սինա-կով՝ Ս. Զաւարեանի «սեւագրութիւնը», աջին՝ տպագրուածը (արեւմր-տահայերէն տարբերակ): Վերջինիս ընկերացած է Գ. Ընդհ. ժողովի օրակարգը, այլապէս հրատարակուած արդէն:

Փաստ. 42-62ա

13 Յուլիս 1903

Հ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՆԵՐ

ԾՐՁԱԲԵՐԱԿԱՆ

Ընկերներ!

Համաձայն վերջին Ընդիանուր ժողովի որոշման՝ Հ.Յ.Դ. Ընդիանուր ժողովը տեղի պիտի ունենար ոչ ուշ քան 1900 թի վերջերը: Սակայն, մի շարք աննպաստ պայմաններ ինչ-պէս նաեւ Երկրի և դրամական մի-ջոցների սուր վիճակը 1898-ից ի վեր արգելք հանդիսացան Ընդիանուր

ՏՊԱԳԻՐ ՕՐԻՆԱԿԸ

Փաստ. 42-62

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒՆ

ԾՐՁԱԲԵՐԱԿԱՆ-ՆԱՍԱԿ

Ընկերներ,

Համաձայն վերջին Ընդիանուր ժողովի որոշման՝ Հայ Յեղափոխա-կան Դաշնակցութեան հետեւեալ Ընդիանուր ժողովը տեղի պիտի ու-նենար ոչ ուշ քան 1900 թի վերջերը: Սակայն շարք մը աննպաստ եւ ար-գելառիք պայմաններ 1898-էն ի վեր արգելք հանդիսացան Ընդիանուր

ժողովի գումարման, փոխարինելով դա 1901-ին [Դաշնակցութեան] Կամքը ներկայացնող մարմնի գումարու մով:

Ժողնելով առաջիկայ ժողովին մանրամասնօրէն պարզել ժողովի այսափ ուշանալու պատճառները այժմ, ի դիմաց հասունացած պահանջի եւ կարելիութեան, երկու բիւրոները նախաձեռնութիւն են ստանձնում ձեռնարկել Հ.Յ.Դ. Ընդհանուր ժողովի գումարման, որ կազմակերպութեան զանազան մարմիններ՝ պնդելով Ընդհանուր ժողովի գումարման մասին՝ ուղարկել են վերջերս բիւրոներին Ընդհանուր ժողովին առաջարկելիք հարցերը. համաձայն Բ. Ընդհ. Ժ.ի ատենագրութեան 63-րդ յօդածի տրամադրութեան, մենք հենց այժմեանից հնարաւոր ենք համարում առաջարկել ձեզ դրա հետ միասին քննութիք հարցերի ցանկը, մանաւանդ համաձայն --- յօդածի ամէն ներկայացուցիչ հաշւետու է առանձնապէս. ապագայում ունենալով միքանի ստիպողական եւ լուրջ հանգամանքներ, ինչպէս եւ նա որ շատ տեղերում արդէն կայացած են շրջանական ժողովներ, իսկ միաներից ցանկութիւն յայտնած Ը. Ժ.ի գումարման մասին եւ հաւանականօրէն շօշափած առաջարկելիք հարցերը, մենք օգտակար ենք գտնում որ ժողովը կայանայ կարելիին չափ կարճ ժամանակամիջոցում, եթէ կարելի է Հոկտեմբերի սկիզբներին: Այդ պատճառաւ մենք խնդրում ենք Երկրի կենտրոնական կոմիտեներից ներկայ շրջաբերականը առնելու պէս դիմել անմիջապէս անհրաժեշտ պատրաստութիւնների եւ իրենց ներկայացուցիչը (կամ դրա կանոնադրութեան համա-

ժողովին գումարման, որուն փոխարէն տեղի ունեցաւ 1901-ին՝ Կամք ներկայացնող մարմնի նիստը:

Ժողնելով ժողովի այսափ ուշանալու պատճառների մանրամասնօրէն պարզելով առաջիկայ ընդհանուր համախմբման՝ այժմ, հասունացած պահանջի եւ կարելիութեան առջեւ, երկու Բիւրոները նախաձեռնութիւն կը ստանձնեն ձեռնարկել Հ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդհ. ժողովի գումարման: Ասոր հետ միասին, նկատի ունենալով որ կազմակերպութեան զանազան մարմիններ՝ պնդելով ընդհանուր ժողով հրամիրելու կարեւորութիւնը, վերջերս ուղարկեր են Բիւրոներուն՝ Ժողովին առաջարկելիք շարք մը հարցեր, մենք, համաձայն վերջին Ընդհանուր ժողովի ատենագրութեան 63-րդ յօդածի տրամադրութեան, այժմէն իսկ հնարաւոր կը համարենք առաջարկել ձեզի քննութիւնիք հարցերուն ցանկը: Վերջին Ընդհանուր ժողովի ատենագրութեան համաձայն, Ժողովի գումարման մասին կոմիտեներուն լուրջ պէտք է տրւէր գոնե վեց ամիս առաջ: Սակայն ի նկատի ունենալով քանի մը ստիպողական եւ լուրջ հանգամանքներ, մանաւանդ որ շատ տեղեր արդէն կայացած են շրջանական ժողովներ, իսկ միւս տեղերէն ցանկութիւն յայտնած եւ հետեւապէս խօսեցած Ժողովին առաջարկելիք հարցերի մասին, մենք օգտակար կը գտնենք որ Ժողովը տեղի ունենայ կարելի եղածին չափ շուտով, եթէ հնար է՝ ոչ ուշ Հոկտեմբերի սկիզբները: Ուստի մենք կը խնդրենք Երկրի Կենրոնական կոմիտեներէն՝ ներկայ Շրջա-

ձայն): Ժողովի գումարման մասին լուր պիտի տրի կոմիտեներին ոչ ուշ քան վեց ամիս առաջ: Սակայն անկարելիութեան դէպքում գրաւոր կարծիքները անմիջապէս ուղղել դէպի Տաճկաստանից դուրս գտնուող մօտակայ վայրը, լուր տալով բիւրոներից մէկին իրենց արած առաքման մասին:

Երկրի կոմիտեներից պատասխան առնելուց յետ, բիւրոները անմիջապէս կը հաղորդեն ժողովին մասնակցող միևն մարմիններին ժողովի գումարելիք տեղի եւ օրույ մասին:

Ժողովի որոշումները աւելի արժեքաւոր դարձնելու համար ցանկալի է, որ ամէն մարմին ծանրանայ զիսաւոր այն հարցերի վերայ, որոնց մասնակցած է ինքը, գործնականապէս, խոյս տալով խոշոր ու մեծ առաջարկութիւններից, որոնց իրականացնելը վեր է յեղափոխական մարմնի ուժից:

Բոլոր դաշնակցականների անկեղծ ցանկութիւնն է, որ առաջիկայ Ընդհանուր] ժողովը իր առաջ տեսներ այն զինուրական, դրամական եւ կազմակերպական մեծ ուժը [որը] միայն կարող է առաջ մղել մեր դատը:

Հինգ տարի պատրաստութիւնից յետոյ, ընկերներ, աշխատենք ի մի գումարել բոլոր մեր ուժերը եւ պատրաստի լինել գործի պահանջի առաջ:

ԱՐԵՒՍ. ԲԻՒՐՈ
ԱՐԵՒԵԼ. Բ[ԻՒՐՈ]

բերականը ստանալուն պէս՝ խսկոյն եւեք դիմել անհրաժեշտ պատրաստութիւններուն եւ իրենց ներկայացուցիչը (եթէ անկարելիութիւն կայ՝ գրաւոր կարծիքները) անյապաղ դրկել Թիւրքիայէն դուրս գտնուող մօտակայ վայրը, լուր տալով Բիւրոներէն մէկուն իրենց պատզամատրի կամ կարգադրութեան մասին: Երկրի կոմիտեներուն պատասխանները առնելով՝ Բիւրոները անմիջապէս կը հաղորդեն Ժողովին մասնակցող մարմիններում՝ Ժողովի գումարման տեղը եւ օրը:

Ժողովի որոշումները աւելի արժեքաւոր դարձնելու համար՝ ցանկալի է որ ամէն մարմին, ամրապնդած իր շրջանի բոլոր ձեռնհաս ուժերի խորհրդակցական ցուցմունքներով, ծանրանայ զիսաւորապէս այն հարցերուն վրայ, որոնց մասնակցած է ինքը գործնականապէս, խոյս տալով վերացական այն տեսակ առաջարկութիւններէ, որոնց իրագործումը վեր է յեղափոխական մարմնի ուժերէն:

Բոլոր դաշնակցականներու անկեղծ ցանկութիւնն է, որ առաջիկայ Ընդհանուր ժողովը ճշտորէն պատկերացնէր զինուրական, դրամական եւ կազմակերպական այն բոլոր ուժերը, որոնք անհրաժեշտ են հայկական դատը առաջ մղելու համար:

Հինգ տարուայ պատրաստութենէ յետոյ, ընկերներ, աշխատենք, որպէս զի առաջիկայ Համախմբումը լինի շաղկապող, գործնական, ընդունակ տալու սկսած կուին մի նոր եւ ուժգին զարկ:

ԱՐԵՒՍԵԱՆ ԲԻՒՐՈ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈ

13/1 յուլիս 1903

Նմոյշ Ս. Զաւարեանի ձեռագրէն, փաստաթուղթ թի 42-62ա:

**Ատրպատականի Կ. կոմիտէին
Հնկերներ!**

Ստացած ենք 12 եւ 17 VI-ի նամակները ներփակեալ թղթակց[ութիւնը] գրքերի հետ միասին (ապահովագրուած): Ուղարկում ենք Հնդկ. ժ[ողով]ին վերաբերեալ շրջաբերականը: Պարսկաստանի վերաբերմամբ կ'անհք ինչ որ հարկն է: Խնդրում ենք միայն ամէն միջոց գործ դնել, որպէսզի կարելիին չափ շուտ մի քանի օրինակ հասցնէք Շամ(1): Ինչպէս կը կազմակերպեն նրանք իրենց շրջանական ժողովը, ինչպէս կը կատարեն ընտրութիւնները եւ կ'անեն արդեօք այդ ամէնը՝ չը գիտենք...: Մեր բոլորին մշտական սխալն է, որ միշտ աշխատում ենք ամէն գործ պահել գնացողներին, մեր ձեռքը եւ երբ այդ մէկ երկուսը վտանգուում կամ կորչում են, գործը համարւում է վլած: Մի ժամանակ Վանում կար 20-30 «խումբ», բայց կար արդեօք եւ կայ հիմա մի փոքրիկ մարմին (այդ խմբերից ընտրւած, կամ խմբերը կառավարող) վստահութեան արժանի – ոչինչ չը գիտենք: Նոյն իսկ նամակագրութիւնը կատարելու է Վարդանի(2) նման տղան... Յամենայն դէպս մեր կարծիքն է որ պիտի ջանալ ամէն կերպ խորհրդակցել, կարելիին չափ շատ վստահելի մարդկանց հետ, որպէսզի եկողը աշխատող եւ գիտակից մարդկանց կարծիքը բերէ եւ ոչ թէ իրա մի քանի ծանօթ-բարեկամների..., որպէսզի ապագայ ծրագիրները կազմելիս մենք ի նկատի ունենանք Երկրի դրութիւնը եւ ոչ թէ մեր մտքերում կազմած ենթադրութիւնները:

Թէհրանի գէնքերի մասին ձեր ըրածը գուցէ ճիշտ լինի... ինչ վերաբերում է Վարդանի գրածին որ կուողներ չէ ուզում, այդտեղ մի թիւրիմացութիւնը կայ: Մենք գրած էինք Գիսակի, Դժ[ոխքի] եւ Վահանի(3) նամակների հիման վերայ, ոչ թէ հասարակ կուողներ ուղարկելու մասին, այլ մաքուր, նւիրւած ընկերասէր թէկուզ ոչ ինտելիգէնտ ուժերի, որոնք կարողանալին խմբապետներ լինել...: Խօսքերը չեմ յիշում բայց միտքը սա էր: Այդ տեսակ ուժեր էլ ուղարկելու է: Վարդանը ինքը, կարծեմ, աւելի ինտելիգէնտներից չէ ու վերջապէս Մերովը(4) աւելի ինտելիգէնտ ու կազմակերպող էր, ըստ իս, քան մեր ուսանողների ու դիպլոմատորների 95/100-ը...

Ի՞նչ է անում զինագործարանը(5). արդեօք օգտակար չէր լինի եթէ այնտեղ մշտապէս աշխատէին ու սորվէին մի 4-5 հոգի, փոխւելով ամէն մի ½—1 տարի?

**Հնկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] Բ[ԻՒՐՈ]**

Ուզած գրքերնիդ մասին կը հարցնենք:

- 1.- Շամ – ծածկանուն Վան-Վասպուրականի:
- 2.- Խօսքը կը վերաբերի Վարդան Շահրապի (Տօնիկեան), որ այդ տարիներուն կը գործէր Վասպուրականի մէջ:
- 3.- Յաջորդաբար՝ Յովի. Սերենկիվեան (Գիսակ), Դժոխք կամ Հրայր-Դժոխք (Արմենակ Ղազարեան), Տորդանածեան Կարապետ (Մանուկեան Վահան):
- 4.- Սերոք Աղրիւն է (Վարդանեան):
- 5.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. Թաւրիզի զինազործարանին:

33

Փաստ. 42-19

Կուսակցական տարբեր մարմիններու ուղղուած Ս. Զաւարեանի ներկայ, ինչպէս նաև յաջորդ նամակները կը վերաբերին Հ.Յ.Դ. Գ. Ընդհ. ժողովի գումարման, որ տեղի պիտի ունենար 1904 թ. Փետրուար-Ապրիլ ամիսներուն:

17 -VII - 1903, Ժընեւ

**Կիլիկիայի Պատ. Կ. Կ.ին
Ալեքսանդրիա**

Հնկերներ

**Ապահովագրւած ծրարով գրքերի հետ միասին ուղարկում ենք 40 հատ
Հնդկանուր Ժ-ի վերաբերեալ շրջաբերականներ:**

Խնդրում ենք առանց ժամանակ կորցնելու հասցնել շրջաբերականները շրջանիդ կենտ. Կ.ին (Զ, Ա-Հալէպ, Սղ[երդ]-Տիգր[անակերտ]), որպէսզի օր առաջ տեսնեն հարկ եղած պատրաստութիւնները: Եթէ ձեր շրջանից (որ ամենահեռուն է) պատգամաւորները հասնեն Սեպտ. վերջերը, կամ գոնէ լուր տան որ Հոկտեմբերի սկիզբներին կարող կը լինեն գտնւել Տաճկ[աստան]ից դուրս, ժողովը կարելի կը լինէր Հոկտեմբեր-Նոյեմբերին նշանակել եւ լուր տալ միւսներին... Մոյ-Վասպուրականի շրջանից ընկերները կարող են աւելի շուտ հասնել:

Ինչպէս գրած ենք եւ շրջաբերականի մէջ, ցանկալի կը լինէր որ ներկայացուցիչները գային գործի վայրից:

Մասնաւորապէս Լ[եռնավայր]ի(1) վերաբերմամբ շատ կարեւոր կը լինէր որպէս զի իբրեւ[?] խորհրդական այդ վայրից մէկը մասնակցէր: Այս կապոցի մէջ կը գտնէք եւ ձեր ուզած կնիքները. կոթը, թանաքը կարող էք գտնել

եւ տեղումդ, կամ նոյնիսկ տեղերքն[?]:

Զը գրեցիք՝ ի՞նչ տեղեկութիւն էք տւած Քարբերդի(2) դէպքերի մասին, ինչ որ լուրեր ունիք երկրից:

Սղերդ-Տիգրանակերտ լուր տալու մասին (Ընդհ. Ժ-ի վերաբերմամբ) կը գրենք եւ Շամ(3), բայց վախենում ենք որ յարաբերութիւն չունենան:

Զը մոռանաք զրել ձեր նկատողութիւնները շրջաբերականի մէջ զետեղ- ւած հարցերի մասին որպէս զի ապագայ հրաւէրի մէջ (տեղի եւ օրւայ մա- սին) կարելի լինի պակասը լրացնել:

Հնկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՈ

Եգիպտոսի վերաբերմամբ արդեօ⁹ք լաւ չէր լինի շրջանական ժողով գու- մարել որպէսզի իմացւէր այդ շրջանի կարծիքները, ուժերը, ընտրւէր պատ- գամաւորը: Ի՞նչ, ո՞վ կայ իզմիր...

Ուղարկում ենք եւ մի քանի գրքեր Մարին(4) հասցնելու համար... Գալ- ֆան(5) խոստացած էր տեղումդ մնացած գրքերը յետ ուղարկել. Ի՞նչ եղան. մեզ պէտք է «Ամբոխային տրամաբանութիւնը»:

1.- Կիլիկիոյ:

2.- Զաւարեան յաճախ կը գրէ. Քարբերդ՝ Խարբերդի համար:

3.- Վան-Վասպուրական:

4.- Սիր. Տէր Մարտիրոսեան, որ կը գտնուէր Մարաշի քանտը:

5.- Յար. Գալֆայեան, ծանօթ Վահրամ ծածկամունով:

34

Փաստ. 42-31

17 - VII - 1903, ԺԸՆԵՒ

**Ամերիկայի Կ. Կոմիտէին
Բոստոն**

Հնկերներ!

Գ. Ընդհ. Ժ-ին վերաբերեալ շրջաբերականները կ'առնէք սրա հետ միասին:

Քանի որ Հ. Ժ-ը չի կարող կայանալ մինչեւ երկրի մարմիններից լուր առ- նելը որպէսզի օրը եւ տեղը նշանակւի — դուք ձեր առաջ ունէք մի քանի ամիս ձեր շրջանական ժողովը գումարելու համար: Խնդրում ենք զրել եւ ձեր նկատողութիւնները, որպէս զի ապագայ նամակում կարողանանք լրացնել Բիւրոների կազմած քննւելիք հարցերի ցանկը.

Հնկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

Պետրոսին եւ ընկերներին, Վրէժ(1)
Ընկերներ !

Ստացած ենք ձեր 30 Հոկտ. գրածը: Մենք եւս կարծում ենք, որ աւելորդ է այլեւս ընկնել ոչ պատրաստի ապրանքի յետեւից, բայց շարունակել արդեօք առնել, ի՞նչ տեսակի եւ ո՞ւր. դա կարծում ենք աւելի լաւ է թողնել ընկերների, ապագայ Խորհրդին(2) եւ մանաւանդ շրջանական ժողովին: Այսօր իմացանք որ Երկաթն ու Վարդանը ընկերներով եկած են Մինարէ(3): Անհրաժեշտ կը լինի նրանց հետ միասին մանրամասնորէն խօսել շրջանիդ գործերի եւ մասնաւորապէս ապրանքի փոխադրութեան, ներսի գործածութեան ձեւի մասին եւ ի նկատի ունենալով անցեալի փորձերն ու մեր միջոցները, կովկասի մեր ընկերների հետ ըստ այնմ կարգադրել:

Մոռանալու չէ նաեւ եւ նա որ Սար[ուստան](4) մենք ունենք դեռ եւս մի քանի հարիւր պատրաստիներ, որի մեծ մասը գեռ եւս չի փոխադրւած: Երբեք մոռացութեան չէ տալու նմանապէս որ մենք անկարող ենք մեր ուժերով զինել մի ամբողջ ժողովուրդ(5) բուն յեղափակացամբ վայրերին կամ դրանց նման խմբերին այլեւայլ ապահով տեղերում, վատա[չէ]լի մարդկանցից բաղկացած: Ինչ վերաբերում է արհեստանոցի(6) գործունէութեան, աշխատելու է որ սովորելիս լինեն միշտ մի քանի հոգի, անպայման նւիրւածներից, որպէսզի հարկ եղած ժամանակ մտնեն այս այն Երկիր անցնող խմբի մէջ, այս կամ այն վայրը: Զինագործների կարիքը, ինչպէս վկայում են բոլորն էլ, շատ մեծ է եւ մենք բաց չենք թողնելու դա աչքից: Տղերքը ձմեռը պարապ նստելու տեղ թող աշխատեն՝ համ արհեստ կը սորվեն (թէկուզ փոքրիկ չափով) համ հեռու կը մնան անգործունէ-ութեան լքումից...

Մեր ընկեր Գասպարեանի անունով (M. Gasparian) վերջի ամսւայ ընթացքում եկած են տեղիցդ մի քանի ապահովագրւած ծրարներ, որ նրա բացակայութեան պատճառով մեզ չեն յանձնած: Ուղարկողը Ասլանը(7) պէտք է լինէ, մէկ ծրարի վրայ կարծեմ գրւած է Դումանից, միւսները չգիտենք ումնից է ուղարկւած, այսինքն ինչպէս է նշանակւած ծրարի վերայ: Ինդըում ենք ներկայացնելով ստացականները յայտնէք պաշտօնապէս փոստի վարչութեան, որպէսզի նրանք գրեն այստեղի փոստին յանձնել այդ նամակները Mr. M. Joannessian-ին(8) (Roseraie, 29): Եթէ կարելի է հեռագրով լուր տալ փոստի վարչութեան՝ աւելի լաւ: Նամակները ուրեմն այսուհետեւ կը գրէք M. Joannessian-ի հասցէին, կամ ուղղակի խմբագրութեան:

Ընկերական բարեւներով՝
Ա. Բ. [ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]

[Լուսանցքային յաւելումներ]

- Եթէ դժւար չէ ուղարկեցէք խնդրում ենք գոնէ մի պարսկական անցագիր Միքայէլ Գասպարեանի անունով. մեզ դա շատ կարեւոր է(9):
- Եկող տօներին Կովկասում հաւանական կազմակերպւի Շրջ. ժողով. աշխատելու է ձեր շրջանին վերաբերեալ հարցերը այդտեղ դնել եւ դալ համաձայնութեան նրանցում:

1.- Ասրաւատականի Կ. կոմիտէ:

2.- Դաշնակցութեան Խորհուրդ - կուսակցութեան գերագոյն մարմին, կազմուած երկու քիւրոներու և չորս Պատասխանատու Կեդր. կոմիտէութեանց ներկայացուցիչներէն: Խորհուրդը Ընդհ. ժողովներու միջև ինկող ժամանակաշրջանին լիսօրորուած էր կուսակցութեան անունով վճիռներ կայացնելու:

3.- Սինարէ կամ Սինարէք՝ Սալմաստն է: Երկարը՝ Աշոտ-Երկար (Արմենակ Լեւոնեան), իսկ Վարդանը՝ կամ Խանատրայ Վարդանն է (Սարգս Մեհրաբեան) եւ կամ Վարդան Շահրազը:

4.- Սարուստան - ծածկանուն Կովկասի:

5.- Սէկ սող անընթեմնիլ:

6.- Խօսքը կը վերաբերի Թաւրիզի մէջ Դաշնակցութեան հաստատած զինագործական արհեստանցին:

7.- Յարութիւն Մարտիրոսեան:

8.- Մ. Յովհաննիսեան, որ իսկական անունն էր Սիր. Վարաննեանի: Roseraie 29-ը Ժընեւ, «Դրօշակ»ի հասցէն է:

9.- Երոպայի մէջ պատրաստուող կեղծ անցագործը ընդհանրապէս պարսկական էին:



Միքայէլ Վարաննեան

Փաստ. 42-13

8 - XII - 1903, **ԺՈՂՈՎՐԴԻ**

«Որոտում» խմբի անդամներին
եւ իզմիրի շրջանի ընկերներին

Հնկերներ !

Ներփակ տպագրւած ցանկից կը տեսնէք որ մօտ ապագայում տեղի պիտի ունենայ Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր ժողով։ Հստ կանոնադրութեան, ժողովին մասնակցելու էր եւ տեղիդ կենտր. կոմիտէն։ Բայց, նկատելով վերջինիս արդի վիճակը, միւս կողմից օգտակար եւ ցանկալի համարելով գործող մարմինների մասնակցութիւնը կազմակերպութեանս խորհրդի մէջ, մենք խնդրում ենք ձեզ միջոցներ ձեռք առնել եւ խորհրդակցելով յիշւած հարցերի մասին շրջանիդ այլ եւ այլ մարմինների հետ, ընտրել մէկին, որը հանդիսանար Հ. Ժ.ում ձեր մտքերի արտայայտիչը եւ առաջարկութիւնների պաշտպանը։

Ցանկալի է որ ձեր ներկայացուցիչը մինչեւ նոր տարին լինէր Յունաստան կամ մի այլ մօտակայ ազատ վայրում, որպէսզի իրեն տրւէր անհրաժեշտ տեղեկութիւնները ժողովի տեղի եւ ժամանակի մասին։ Զմոռանաք գրել մեզ այս նամակի ստանալու մասին ինչպէս նաեւ մեր ընկերների առողջութեան եւ ընդհանուր վիճակի։

Թերթերը միշտ ուղարկում են եւ ձեր տւած հասցէին։ Արդեօք չեն կորչում։

Հնկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՈ

Մի անյայտ պարոն երկար նամակ է գրած մեզ եւ գովելով «պ. Խորէնին (Պետրոս Ալեպուֆեանին[?]), խնդրում է նրան ընդունել իրեւ հարազատ եւ այլն եւայլն։ Ի՞նչ ինդիր է սա. գրեցէք։

Փաստ. 42-20

10 - XII - 1903, Ժընեվ

Կիլիկիայի Պատ. մարմնին

Հնկերներ !

Ներփակ նամակից կ'իմանաք Գ. Արաբեանցի առաջարկութեան եւ մեր պատախանի մասին Զիբ[ուտի]ի(1) հրացաններ գնելու մասին:

Եթէ ձեր ունեցած փոխադրութեան յոյսերը (Բէյրութ կամ Սուէտիայի միջոցով) աւելի դրական են, կարող էք աւելի խրախուսել նրանց: Մոռանալու չէ որ այդ ապրանքը շատ հին ապրանք է... Հաւանական է որ շատ փոյթեր(2) ունենայ:

Զեր գրութեան հետ միասին խնդրում ենք շուտափոյթ ուղարկել Արաբեանին մեր ներփակ գրութիւնը... – Նրա ուզած հեռագիրը ուղարկում է այսօր...

Երկաթը եւ Շամից(3) երկու ընկերներ եկած են արդէն Պարսկաստան, որպէսզի ուղեւորւեն Լ[նդՀ.] Ժ[ողովի] տեղը: Մշոյ շրջանի ընկերներից հաւանական մարդ չը գայ. Հոկտ. 28-ից նրանք գրում են որ զբաղւած են պատրաստութիւններով, որ կարիք ունեն մեծ քանակութեամբ դրամի, որ գարնան հաւանական ընդհարում լինի... Ուզում են եւ ընկերներ եւ զէնք եւ դրամ...

Դժբախտաբար վերջի խմբի կենդանի մասի տեղ հասնելու մասին ոչ մի լուր չունենք. վախենում ենք, որպէսզի խումբը բոլորովին փչացած չը լինի:

Հ. Ժ. տեղի մասին դեռ հաստատ ոչինչ չենք կարող ասել. Արեւել. Բ-ից պատասխան չունենք: Յամենայն դէպս շտաբեցնելու է որպէսզի ձեր շրջանի [եւ] երկրի ներկայացուցիչները շուտ դուրս գան: Արդէն շրջաբերականում յիշւած էր որ նրանցից է կախւած Ժ[ողով]ի ժամանակը. նրանք էլ լրում են եւ դուք մեզ էք հարցնում: Գրեցէք իրենց որպէսզի աշխատեն մինչեւ ամսիս վերջը ձեզ մօտ լինեն, որպէսզի Ծննդեան կարելի լինի Ժ-ը սկսել...

Ի՞նչ դուրս եկաւ ձեր (Եգիպտոսի) շրջանից(4): Ի՞նչ յարաբերութեան մէջ էք վարդապետի եւ պատւելի հետ:

Իզմիր այս քանի օրս գրւեց որպէսզի շրջանի ընկերների հետ խորհրդակցելով ուղարկեն իրենց ներկայացուցիչը մինչեւ ամսիս վերջը Յունաստան կամ մի այլ մօտ տեղ:

Բարեւներով
Ա. Բ. [ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]

1.- Նաւահանգիստ Սոնալիոյ մէջ (Արեւելեան Ավրիկ):

2.- Փոյթեր՝ արենօ՞ք թերթիւններ, պակասութիւններ իմաստով:

3.- Շամը՝ Վան-Վասպորականն է: Երկաքը՝ Աշոս-Երկաք (Արմենակ Լեւննեան):

4.- Յիշեցնենք որ Կիլիկիոյ հետ հաղորդակցելու համար կ'օգտագործուեր Եղիպտոսը, օգտուելով այդ երկրի վայելած յարաբերական ազատութենէն: Այդ պատճառաւ ալ Զաւարեան Կիլիկիոյ մարմնին ուղղուած այս նամակին մէջ «ձեր»ը ճշդելու համար փակագիծով կը գրէ Եղիպտոս:

**Ամերիկայի Կենտրոն. կոմիտէին
Հնկերներ !**

Տեղեկութիւն առնելով Արեւել. բիւրոյէն գումարւելիք Հ[նդհ.] Ժ[ողով]ի տեղի եւ ժամանակի մասին շտապում ենք հաղորդել Ձեզ, ընկերներ, որպէս-զի ձեր պատգամաւորը առանց ժամանակ կորցնելու մեկնի դէպի Ժընեւ: Ժողովը հաւանականօրէն սկսէ իր նիստերը մեր Ծննդեան (6/15 Յունուարի [օրերին]): ուստի ցանկալի է որ ձեր պատգամաւորը գոնէ 3 օր առաջ լինի այստեղ:

Ինչ վերաբերում է ընկեր Վռամեանի(1) հրաւիրելուն, հիմնելով կանոնադրութեան վերայ, այդ մասին մենք հարցրած ենք համաձայնութիւն երկու պատասխանատու մարմիններից: Հեռագրով պատասխանի ենք սպասում եւ դրական դէպքում, յոյս ունենք որ նախ քան այս նամակի ձեզ հասնելը մեր հեռագիրը ձեզ կը հաղորդէ եւ նրա մեկնելու անհրաժեշտութեան մասին դէպի Եւրոպա:

**Հնկերական բարեւներով
Ա. Բ. [ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]**

1.- Արշակ Վռամեան, բուն անունով Օննիկ Դերձակեան, այդ տարիներուն իրեւ կուս. գործիչ եւ «Հայոնիք»ի խմբագիր կը զսնուեր Ամերիկա: Հարցը կը վերաբերի խորհրդակցական ճայնով զինք հրաւիրելու Ընդհ. ժողովին:



Արշակ Վռամեան

**Լեռնավայրի Պատ[ասխանատու] մարմնին
Սիրելի ընկերներ!**

Ներփակ կը գտնէք 5000 ֆ[րանք]ի չէք Banque Ottom.ի միջոցաւ ստանալու համար: Փոխադրութեան համար վճարած ենք 12½ ֆր., որ Crédit Lyonnais-ից բաւականին պակաս է: Չը գիտենք միայն ստանալիս էլ բան վճարելու էք թէ չէ: Գրէք այդ մասին, որպէսզի գիտենանք ո՛ր բանկայով աւելի յարմար է փոխադրութիւնը:

Մեզ թւում էր օգտակար, որպէսզի նախ քան Լ[նդհ.] ժ[ողով]ին մեկնելը ձեզանից մէկը դիմէր Վարդին(1) ու ընկերոջը, որոշ հարցեր տար Լ[եռնավայր]ի շրջանի գործունէութեան եղանակի մասին, ինչպէս նաև նրան, թէ ի՞նչ գործնական աջակցութիւն կարող է սպասել իրենցից կազմակերպութիւնը:

Ցանկալի եւ կարեւոր է որպէսզի նրանց կարծիքները սահմանափակւած լինեն իրագործելի եւ իրագործութեան համար հնարաւորութիւն ունեցող առաջարկութիւններով:

Բացի այդ, եթէ ձեզանից մէկը Ծննդեան տօների առթիւ կարող է առանց մեծ ծախքերի մտնել Երուսաղէմ, վատ չէր լինի որպէսզի իմացւէր եւ այնտեղ փակւած մի քանի անձնաւորութիւնների կարծիքները ընդհանրապէս մեր (ընդհանուր) ազգային վիճակի մասին եւ մասնաւորապէս մեր բոնելիք դիրքի մօտ ապագայում:

Մոռանալու չէ այն հանգամանքը որ գարնան մակեդ[ոնական] շարժումը հաւանական վերսկսկի վերջնական լուծում ստանալու յուսով: Եւ լոռութիւնը այդ պարագայում գուցէ հաւասար լինի մեր հարցի քաղաքական ինքնասպանութեան:

Ցամենայն դէպս եթէ այս ճանապարհորդութիւնը յաջողւի, լաւ կը լինէր առաջարկել նրանց կազմել մի ընդհանուր տեղեկագիր ամէն մէկին իր գիտեցած շրջանի մասին, կամ ընդհանուր չօշափել երկրի կացութիւնը 95-ից առաջ եւ հիմա, յառաջ եկած փոփոխութիւնները՝ տնտեսական, իրաւաբանական, իրենց փաստաբանւած կարծիքները ապագայ անհրաժեշտ փոփոխութիւնների մասին: Այդ տեսակ մի լայն տեղեկագիր մեզ անհրաժեշտ է, եւ յուսալի է որ դրա մի մասը կը վերցնեն մենաստանում(2) ապրող մեր ազգասէր եղբայրակիցները:

Բարեւներով
Ա. Բ. [ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]

1.- Վարդ, Վարդ-Մանուշակ – Աբրահամեան Յակոբ:
2.- Այսինքն՝ Երուսաղէմի հայոց վանքում:

**Վրէժի Կ. Կ.-ին(1)
Սիրելի ընկերներ !**

**Ստացած ենք Դեկտ. 4ից Պետրոսի գրած նամակը: Զարմանալի է դու-
դուկշիների(2) բռնած դիրքը, մարդկանց, որոնք 7 տարւայ ընթացքում
քնած են եղել կամ զբաղւած ընկերասպանութեամբ, իսկ այժմու գրւածնե-
րին նայելով կարծես ուզում են հրաժարւել այն գործից որի վառման իրենք
ժամանակին այնքան նպաստած են:**

**Յամենայն դէպս մենք յոյս ունենք որ ժողովուրդը հոտառութիւն կ'ունե-
նայ ջոկելու պոռատախօսութիւնը գործից եւ չը նայած ձեր թոյլ ուժերին
դուք կը կարողանաք պաշտպանել գործի շահը եւ ընկերների պատիւը... Լաւ
էք արել Զ-ին կանչելով:**

Աւելի լաւ է կարծում ենք ձեր մօտ շրջանը (մինչեւ Թեհրան եւ վերջինս) ուժեղացնել:

**Զուղա մենք բաւականին համակրողներ ունենք եւ գուցէ աւելորդ լինի
կատարել այդ երկար ճանապարհորդութիւնը: Ռեշտ նոյնպէս կարող էին
աշխատել տեղացիք, մանաւանդ որ հիմա Գրիգորեանն էլ աւելացել է տեղա-
ցիների վերայ: Զմուանանք եւ Մեշեղսէրը ուր քանիսին թերթեր են գնում...**

**Յամենայն դէպս, մեր ամենամեծ գործը հիմա լինելու է ներքին պատ-
րաստութիւնը եւ նրան նպաստելը: Դուք էլ ամէն ճիգ էք թափելու կանոնա-
ւորելու ապրանքի փոխադրութիւնը: Ը[նդհ.] Ժ[ողով]ին ուղարկած հաշւից
երեւում է որ ձեր եւ Մինարէթից Շամ(3) ուղարկած ապրանքի մեծ մասը
զուրկ է մանրուքներից եւ ուրեմն կարող է բոլորովին անպէտք լինել հարկ
եղած ժամանակ: Լրացնելու էք այդ պակասը ուղարկելով գլխաւորապէս
մանրուքներ, մանրուքներ եւ մանրուքներ: Զարմանալի է որ մինչեւ օրս չը
կարգադրեցիք Մրգաստանից(4) ստանալ. էլ ինչի համար են հապա մեր մար-
մինները: Յամենայն դէպս, դրամ հիմա դուք ունէք. անցեալ Դեկտ. 1-ին
Բոստոնից Dr. H. Der-Stepanian-ին Tabriz հեռագրով ուղարկւած է մօտ 1000
ռ[ուբլի]: Դա հետեւանք է Յովսէփեանի(5) (Ուրմիա) պահանջի փոխադրու-
թեան համար, բայց հարկաւ մի մասը կարող էք գործածել եւ այդտեղ: Վեր-
ջանալու դէպքում կը ստանաք Կովկասէն կամ մեզմէն կամ նորէն Ամերի-
կայէն դիմելով Կ. Կ.-ին պաշտօնապէս հարկ եղած բացատրութիւններով
հարկաւ: Նորից կրկնում ենք եղած ապրանքը մանրուքներով ապահովելու
համար դրամ կայ եւ ամէն կերպ ջանալու էք ժամանակ չը կորցնել:**

Աւելացրէք եւ [գինագործական] արհեստանոցում աշխատողների թիւը:


Գարունը գալիս է եւ մենք աշխատելու ենք պատրաստ լինել – ունենալ գոնէ մի քանի նւիրւած արհեստաւորներ:

N 8-ը ուշ ցրւեց (Նոյեմբեր 20-26ին) N 9-ը ուղարկւած է ձեզ 26 Դեկտ.ին(6): Ի դէպ, ձեր, Շամի, Մրգաստանի կապոցները ուղարկւում է Խոյ գանազան եւրոպացիների անուններով: Զը գիտենք արդեօք Խոյից յետ էք ստանում թէ ինչպէս է դա կարգադրւած:

Դա հետաքրքիր է մեզ մանաւանդ Շամի եւ Մրգաստանի նկատմամբ, որովհետեւ նրանք շատ են գանգատում որ զուրկ են մնում հրատարակութիւններից:

[ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]

- 1.- Ասրպատականի:
- 2.- Հնչակեանների:
- 3.- Սինարեքը ծածկանունն է Սալմաստի. Շամը՝ Վան-Վասպուրականի: Վերեւ յիշուած Զունամ՝ Նոր Զուղայի մասին է:
- 4.- Երեւանից:
- 5.- Արտաշէս Յովսէփինան, ծանօթ Մալխաս ծածկանունով:
- 6.- Խօսքը «Դրօշակ»ի համարներուն կը վերաբերի



Արտաշէս Յովսէփինան – Մալխաս

**Կիլիկիայի Կենտրոնական կոմիտէին
Հնկերներ,**

Առած ենք 25 XII-ի եւ 1 - I - 04-ին ձեր գրածները ներփակների հետ միասին: Ինչպէս ժամանակին գրած էինք ձեզ, մեր պայմանական հեռագրով Արաբեանը յոյս էր տւել միայն իրենց շրջանի միջոցների վերայ. մենք առինք իրենից մի նամակ (15 XII-ից գրւած) որով նա յայտնում է թէ երկարների(1) քանակութիւնը կը լինի 200 (թերեւս նոյնիսկ աւել) 1000-ական փամփուշտներով, հատը «թէեւ աճուրդով հրացանները եւ փամփուշտները արդէն ծախւեցան – աւելացնում է Արաբեան – սակայն եթէ երբեւիցէ ուզէք որեւէ քանակութեամբ գնել (բացի մեր նւէրից) մի որոշ քանակութեամբ, իմ տրամադրութեան տակ լինելով պիտի կարողանամ տալ 12 ֆր.ի ամէն մի հրացանը, 100-ի մօտ փամփուշտի հետ միասին»:

Ինչպէս կը լիշէք այս հրացանների մասին, ժամանակին խօսում էր Վարդը(2), որը Արաբեանից նամակ էր առած այդ հարցի նկատմամբ, իբրեւ զէնքի վաճառական: Մենք անյարմար գտանք կապւել ուեէ կերպ այդ խնդրի հետ: Իր գրած նամակներից մէկում Արաբեանը յիշած էր եւ մի հետաքրքիր կէտ, այն է որ ապրանքը Աշխնովի ապրանքն է (90-ական թւականներին ուղարկւած Հնդկաստան), որ տեղացիք չեն սիրում դա, որ փամփուշտների մի փոքր մասը լաւ չէ եւալլն...

Ինչպէս կը նկատէիք եւ մեր իրեն գրած նամակից եւ շեշտումներից, մենք վերաբերում էինք սկեպտիկաբար այդ ապրանքի որակութեան եւ այդ պատճառաւ չէինք ուզեցած կազմակերպութեան միջոցներից ծախսել դորա վերայ: Իրենց տւած 200 նւէրի վերայ դուք աւելացրած էք եւ 200 հատ...

Այդքան շտապելու չէր, դա կարելի էր անել եւ վերջը, ստանալուց յետ:

Ինչ որ է, դա արդէն անցած է: Այժմս աշխատելու է թալաքի(3) մէջ չընկ-նել եւ դորա համար առնելու է մի քանի անհրաժեշտ նախազգուշութիւններ:

Նախ ամէն միջոց ձեռք է առնելու որպէսզի ե՛ւ նւիրւող եւ առնւող ապրանքը եւ փամփուշտները անպայման լաւը լինեն: Զէ[®] որ փոխադրութիւնը 2-5-10 անգամ աւելի է նստելու արժէքից, եւ այդ պայմաններում մեր կողմից անմտութիւն կը լինէր կասկածելի ապրանք ունենալ:

Առաջին՝ որ կասկածելի ապրանք է գնել եւ ներսում, եւ երկրորդ՝ կուռողները դնելով դորա վերայ յոյս՝ իբրեւ լաւ ապրանքի, կ'ընկնեն յուսախաբութեան մէջ եւ չարաչար կը տուժեն, կամ թէ չէ՝ թշնամուն վնասելու տեղ իրենք կը գնան զո՞՝ իրենց զէնքին:

**Որպէսզի այդ ծանր դրութեան մէջ չը լինենք, նախ քան ստանալը ապ-
րանքը, անպայման ենթարկելու է լուրջ եւ մանրամասը փոքքի, կամ նա-
խագդուշացնել Արաբեանին որ ապրանքի վատութեան պարագայում նա
յետ կը դարձեմ իրեն... Դորա համար լաւ է եւ արժէ որպէսզի մի վստահելի
զինագործ յատուկ գնար ապրանքի քննութեան, թէ եւ գուցէ կարելի լինի
գտնել ֆրանսացի մասնագէտ իրա Ձիբուտիի մէջ, բայց ինչպէ՞ս վստահել,
ինչպէ՞ս գտնել նորան, այլ հարց: Աւելի ու ապահով լինելու համար, գուցէ
լաւ լինէր նւէրից զատ ապրանք չը վերցնել: Զը մոռանաք որ 90 թւին էլ
Աւստրիայում առնեց 2000 հրացան, որ հնչակեանները ստիպւեցան վերջի
վերջոյ թողնել Մարտէլ, պահեստի տիրոջ... 50.000 ֆր.ը (մի բարեսիրտ տիկ-
նոջ) զուր ջուրը ընկաւ...**

**Որպէսզի դուք չը լինիք նեղ դրութեան մէջ, ներփակ կը գտնէք մի ամ-
փոփ գրութիւն, որը կազմել է մեր զինագործներից մէկը (որ եկած էր
Հ[նդհ.] Ժ[ողով]ին իբրեւ պատգամաւոր): Այս գրութիւնը գնացողին կամ
Արաբեանին օգտակար կը լինի, թէ եւ մասնագէտի գնալը հարկաւ աւելի լաւ
կը լինէր:**

**Յամենայն դէպս, եթէ ապրանքը լաւ լինի, նրա փոխադրութեան միջոց-
ները վստահելի, կամ ինչ ինչ պատճառներով դուք օգտակար եւ անհրաժեշտ
գտնէք, բայց 200 ընծայից եւ առնել որոշ քանակութեամբ կազմակերպու-
թեան հաշւին, ոչ մի պարագայում չառնէք հրացան, եթէ ամէն մի հրացա-
նին չը յատկացւի գոնէ 800-1000 փամփուշտ, այն էլ լաւ փամփուշտ: Զգոյշ
եղէք, միք գրաւեի արժանութեամբ... Զւէյցարկան զօրքի նախավերջին
զէնքն էլ կարելի է կարծեմ առնել 5-ական ֆր.ով հատը: Բելգիա էլ զէնք կայ
ինչքան ուզէք: Ամբողջ հարցը փոխադրութեան մէջ է եւ յետոյ գործածու-
թեան... Առաջի փորձի համար 200 էլ շատ բաւական էր, իսկ մնացածի վե-
րաբերմամբ Արաբեանը կարող էր գոնէ մի քանի ամիս սպասել, իչնպէս նա
սպասել է տարիների ընթացքում...**

**Ուրախ ենք այդտեղի կենտր. մարմնի կազմութեան համար, ինչպէս եւ
կարմիր խաչի ընկերութեան եւ այլ օժանդակ մարմինների: Յոյս ունենք
կարծելու որ այդ մանր յաջողութիւնները ձեր աչքը չեն թեքի էական գոր-
ծից: Երկաթի(4) ասելով ինչպէս եւ նայելով Բարձր[աւանդակ]ի(5) տեղե-
կագրին, ընդհարումը գարնան անխուսափելի է: Մակեդոնացիք նոյնպէս
մտածում են շարժւել, թէ եւ դորա վերջնական որոշումը կարող է տալ մի-
միայն ներքին կազմակերպութիւնը: Աշխատելու ենք քիչ շատ պատրաստ լի-
նել մեզ սպասող անակնկալութիւնների համար... Զանալու էք տեղումդ
կազմել եւ զինւորական խումբեր, պատրաստել ուժ, որպէսզի հարկ եղած
դէպում ուժի չսպասել Ամերիկայից եւ Եւրոպայից: Յուսով ենք եթէ շրջա-
նական ժողովում չէք խօսել այդ մասին, կը խորհէք լրջօրէն եւ կը դիմէք
անհրաժեշտ միջոցների...**

«Կովկասեան վէրքերէն» ուզած էին Comptoir International-ի համար եւ

մենք ուղարկում ենք contre remboursement: Մերժել – ոչ մի իրաւունք չունէնք, թէ կուզ մեր թշնամիները լինէին:

Արծ[ուաբերդ]ի(6) «մեր հոգին, ձեր ոսկին» վատ հնչեց մեր ականջին... Ամէն մի անհատ, ամէն մի մարմին որոշ վստահութիւն կարող է ներշնչել միայն այն պարագայում, երբ ինք եւս որոշ, չօշափելի փաստեր է տալիս... գործը յաջողութեամբ առաջ կը գնայ միայն այն պարագայում, երբ իրենք եւս իրենց միջոցներից, իրենց գրապանից որոշ, չօշափելի գոհաբերութիւն անեն անհրաժեշտ պատրաստութեան համար եւ հէնց այժմեանից: Դրսի մարմինները, ինչպէս դուք շատ լաւ գիտենալու էք, անկարող կը լինեն հոգալ ներսի բոլոր պահանջները... Այն բոլոր ուժերը, որոնք նպատակ ունեն ներսում գործելու, սկզբից ի վեր եւ այսօր էլ համոզւելու են որպէսզի կազմակերպութեան հետ բոլոր կապւողները իրենք եւս որոշ, գործի մեծութեան համապատասխան գոհաբերութիւն անեն...

Եթէ մեր ընկերները թւով շատ մարմիններ ու կէտեր (անունով օժանդակ գուցէ միայն) ստեղծելու եւ միմեանց հետ կապելու տեղ՝ գերադասէին մի, երկու վայրում հաստատ, դրական, գործող մարմիններ, հող, օժանդակող ունենալ, գուցէ շատ աւելի շահած լինէիք: Ապագայում քանակը եւ թւերը չեն դեր խաղալու, այլ որակը եւ գրականը:

Այստեղից եւ Փարիզից վերջերս ձեզ փոխադրւած է 10.000 [ֆրանկ], որ յուսով ենք կը բաւէ ընթացիկ ծախքերի համար մինչեւ Հ[նդհ.] Ժ[ողով]ի որոշումները:

Վերջի անյաջող խմբի (140-ին) անցնելը կլանել է ահագին միջոցներ (մինչեւ 20-25 հազար ռուբլի), իսկ Վանից եւ մանաւանդ Բ[արձրաւանդակ]ից ահագին պահանջներ են դրած... Աշխատելու է սովալլուկ չը թողնել նորանց:

Աւո-ի(7) կենսագրութիւնը շարւած է:

Բարեւներով
Ա. Բ. [ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]

- 1.- Հրացանների:
- 2.- Վարդ-Պատրիկեան Յակոբ:
- 3.- Թակարդի:
- 4.- Աշոտ-Երկար (Արմենակ Լեւոնեան):
- 5.- Բարձրաւանդակ Սասունն է:
- 6.- Արծուաբերդը Ջեյռունն է:
- 7.- Աւետիս Մաղաքեան, Պոլսոյ հին գործիչներէն, մահացած 1903 Ապրիլին:

Փաստ. 14-41

Սասնոյ 1904 թ. ապստամբութեան առաջին օրերուն գրուած նամակ է, ուղղուած, հաւանաբար Ատրպատականի ճամբով, Վան-Վասպուրականի Կ. կոմիտէին:

Մէկէ աւելի անզամներ յիշուած «Աքրոյի զերեզմանը» Սասունն է: Այդպէս կոչուած էր ի յիշատակ յեղափոխական յայտնի մարտիկ Սահակեան Սկրտիչի – Աքրօ (1855-1896), որ զոհ գացած էր Սասնոյ ձիւնամրրիկին:

10/23 - I - 1904

Սիրելի ընկերներ,

Ստացած ենք Նոյեմբեր 15 եւ 30ին Կոմսի(1) գրած նամակներն ու թղթակցութիւնները: Երկաթը(2) միւսների հետ միասին զբաղւած են եւ կը կարողանան ձեր հարցերին բաւարարութիւն տալ ոչ շուտ քան մի ամսից: Վաղուց ի վեր ոչինչ գրած չը լինելով այդ կողմերը, օգտառում ենք առիթից մի քանի հարցերի մասին խօսելու:

Վահանը(3) եւ ընկերները (Բ[արձրաւանդակ]ից) վերջի նամակներից մէկում գանգատում էին որ իրենց յատկացրւած դրամը (կարծեմ 100 ոսկի) չի ուղարկւում ըստ պատկանելոյն եւ ծախսում է տեղումդ... Համոզւած լինելով որ դա բացառութիւն է եւ հետեւանք ձեր անելանելի վիճակի, մենք այնուամենայնիւ զարմանում ենք որ չէք յայտնած այդ մասին ում հարկն է՝ բացարելով այդ վարմունքի պատճառները ու խնդրելով հարկ եղած դէպում՝ ներողութիւն: Կարեւոր էր դա նամանաւանդ եւ այն պատճառով, որ նոյնանման դժգոհութիւններ (Աքրոյի գերեզմանի եւ գաւառների կողմից) յայտնւած են եւ տեղումդ գտնւած ապրանքների վերաբերմամբ:

Ինչպէս կը յիշէք, ժամանակին մեր ընկերները որոշած էին որպէսզի եղած եւ եկող ապրանքների մօտ ½-ը փոխադրւի Բ[արձրաւանդակ] (Աքրոյի գերեզման), իսկ մնացած կէսը բաժանուի շրջանումդ գտնուած վստահելի, նւիրւած, անձնագոհ մարմինների մէջ, ըստ իրենց ուժի եւ ապագայ գործունէութեան: Մատնացոյց էին արւած նոյնիսկ ձեզ յայտնի յատուկ վայրեր: Սակայն ապրանքները մնում են կուտակւած մի տեղ, կարեւոր վայրերը մնում են առանց իրենց սպասած միջոցների, կազմակերպութեան մէջ ընկնում է դիսցիպլինը եւ ընկերական պարտաճանաչութիւնը: Համեմատած միւս վայրերի հետ տեղիդ ուժերը ունեն աւելի յարմարութիւններ ապրանք ձեռք գցելու եւ պաշտպանողական դիրք բռնելու: Ուստի աւելի քան կարեւոր է որպէսզի ընկերների կողմից արւած վերը յիշւած որոշումը իրա-

գործւի առանց ժամանակ կորցնելու:

Մենք չը գիտենք ինչ է լինելու վաղը-միւս օրը եւ պարտաւոր ենք պատրաստ լինել ամէն տեսակ անակնկալութիւնների: Ի նկատի ունենալով անցեալի փորձերը եւ ապագայում սպասւող դէպքերը, մեզ թւում է որ աշխատելու է զատել այն նւիրւած տարրը, որը իրա վերայ է վերցնում ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը, մի կողմ ժողնելով օժանդակ խմբերը, որ կարող են կառավարուել եւ իրանցից ընտրւած մայր խմբի կողմից: Բացի այդ մինչեւ մարմինդ իր կատարեալ տրամադրութեան տակ չունենայ մի քանի գործող, կուի պատրաստ խմբեր, անկարելի կը լինի ոչ միայն ոեւէ գրական բան կատարել, այլեւ պաշտպանւել հարկ եղած եռանդով ու տուկունութեամբ...

Հասարակական հորիզոնի վերայ մութ ամպեր են կուտակւում: Ռուսների եւ ճապոնացիների յարաբերութիւնները շատ լարւած են, բայց դեռ յոյս կայ որ պատերազմ չի ծագիլ: Հակառակն է երեւում Բալքաններում: Մակեդոնացիների մեծ մասը արւած զիջումներին չեն տալիս առանձին նշանակութիւն եւ պատրաստում են գործի, մղելով պատերազմի Բուլգարիային եւ Սերբիային: Բուլղարիան 25 միլիոն է յատկացրած (գաղտնի ժողովում) պատրաստութեան համար. Սերբիան գտնում է պատերազմի մէջ պատւոր միջոց իր ներքին գործերը շտկելու համար: Նրանք պահանջում են մեզ եւս ձեռնպահ չը մնալ եւ գործել համերաշխ իրենց հետ: Յամենայնդէպս նոյնիսկ Բալքանների արձագանքը կարող է վտանգաւոր լինել մեզ համար կոտորածների տեսակէտից եւ օր առաջ հաւար է կանչելու՝ ամէն տեղական ինքնապաշտպանողական խմբեր կազմելու համար:

Մենք էլ գրում ենք. դուք էլ ձեռք էք առնելու անհրաժեշտ միջոցներ մանրուքների փոխադրութիւնը ապահովելու եւ կանոնաւորելու համար:

Ուշադրութեան արժանի է մանաւանդ Տաք Աղբիւրի(4) գիծը քանի որ Մրգաստան եւ Քարոտ(5) լինելու է մանրուքների անհրաժեշտ պատրաստութիւն...

Շնորհակալ ենք Կոմսի գրած թղթակցութիւնների համար: Համոզւած ենք որ Բայանտուր իշխանը(6) եւս կը շարունակէ իր ոտանաւորները, ոգեւորւած նոր տպաւորութիւններով, քաջ լեռնականների նոր մոտիւներով ու պատմութիւններով: Ուղարկւած բոլոր նիւթերից կ'աշխատենք օգտւել ե՛ւ մենք, եւ մեր բարեկամ ֆրանսիացիները եւ ամերիկացիք: Ազատ ժամանակ ինդրում ենք զբաղւել եւ տեղեկութիւններ ժողովելով Պետոյի, Վազգէնի, Սերովի(7) եւ այլ ընկած յեղափոխականների մասին, նրանց կենսագրութիւնները եւ յեղափ[ոխութեան] պատմութիւնը կազմելու համար:

Լուսանկարչական գործիք այդտեղ լինելու է... գուցէ կարելի լինի օգտըւել եւ այլ տեղացի լուսանկարներից...

Աշխատէք կանոնաւոր կապ պահպանել Վահանի եւ ընկ[երների] հետ (Բար[ձրաւանդակ], Աբրոյի գերեզման) ստանալով նրանցից տեղեկութիւն-

ներ, հասցնելով իրենց հրատարակութիւններ, մանրուքներ, մանաւանդ մանրուքներ(8) եւ նոյնիսկ դրամ: Լուր տւէք իրենց որ իրենց պահանջած գումարը կայ արդէն, որ մաս մաս փոխադրւում է: Իրենք թող արագացնեն պատրաստութիւնները:

Ի՞նչ դրութեան մէջ է Պուրակ(9): Դրա նման վայրերում գոնէ լինելու են գործող մարմիններ:

Ընկերներ կը հասնեն ձեզ գուցէ մի քիչ ուշ: Կ'աշխատենք կանոնաւոր թղթակցել ձեզ հետ, ուղարկել թերթեր, տեղեկութիւններ: Այս անգամ ուղարկում ենք Մինարէ(10) 1500 ֆր., որի մի մասը կ'ուղարկեն ձեզ:

**Համբոյրներով ու բարեւներով
Ա.Բ. [ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]**

**Ռեմինգտոն կամ տպարան անյարմար են. կ'աշխատենք ուղարկել մի-
միոգրաֆ, որ չատ աւելի նպատակայարմար է:**

- 1.- Վահան Փափազիան:
- 2.- Աշոտ-Երկար, բուն անունվ Արմենակ Լեռնեան:
- 3.- Վահան Մանուկեան-Տողրամաճեան, որ Դաշնակցութեան ներկայացուցիչն էր Սասնյ մէջ: Բարձրաւանդակը կամ «Աբրոյի գերեզմանը» նոյնպէս Սասունն է:
- 4.- Ծածկանունն է Տիատին գաւառի Սիրզաջան գիտին, որ գենքի փոխադրութեան կտտերէն մէկն էր:
- 5.- Միգաւանոն Երեւանն է, իսկ Քարուր՝ Ալեքսանդրապոլ:
- 6.- Բայամտուր Իշխանը՝ Վանայ Իշխանն է, բուն անունվ Նիկոլ Պողոսեան-Միքայէլեան:
- 7.- Յաջորդաքար Աղեքսանդր Պետրոսեան (Պետօ), Տիգրան Տերոյեան (Վազգէն) և Սերոք Արքիւր (Վարդանեան):
- 8.- Մանրուքը՝ գենքի մասերն են:
- 9.- Ախարի ծածկանունը:
- 10.- Մինարէ՝ Սալմաստի կուս. ծածկանունը:



Վահան Մանուկեան

Չհամարակալուած բացիկ-գրութիւն, որուն վրայ սեւ մատիտով գրուած է «Վերցրւած Օր. Լիզա Սարումեանի քղթերից»: Վերջինս Ժընեվի համալսարանի ուսանողներէն էր: Բացիկը կը կրէ Ժընեվի նամակատան կնիքը և ստացման թուականը՝ 13 - I - 04:

12 - I - 1904

Օր. Լիզային


Խնդրեմ հարցնէք ձեր տան տիկնոջ եւ մայրիկին՝ արդեօ^oք ձեր ժընեւում գտնւած ժամանակ ֆակտէօրը⁽¹⁾ չի հարցրած ինձ... Մի տեղից սպասւող պատւիրւած նամակ վաղուց է որ ինձ չի հասնում: Վախենում եմ որ յետ լինի դարձրած...

Երեւի Լուսնթագը արդէն գիտէ որ Նատալիան⁽²⁾ ազատւած է 10-15 օր առաջ: Բարեւներս մայրիկին եւ լօգանցոց:

Ա. ԶԱԻԱՐԵԱՆ

1.- Նամակաբաշխը:

2.- Նատալիա Մատիմեան, որ ծերբակալուած ու բանտարկուած էր:



Կիլիկիայի Պատ. մարմնին

Հնկերներ,

Ներփակ կը գտնէք երէկ Հարարից(1) ստացած մի նամակի պատճէն (զրւած 30 XII-ին եւ Ա. Զամանեան ու Զ. Ստեփանեանի ստորագրութիւնը կրող), որի վերայ դարձնում ենք ձեր ամենալուրջ ուշադրութիւնը:

Պարոնները, որ հաւանական ոչ մի շահ չունեն այդ վաճառականութեան մէջ, իրենք իրենց կողմից բարձրացնում են այն բոլոր հարցերը, որոնց մասին գրած էինք մենք ամսիս 9-ի նամակում: Նախատեսւած անպատճութիւնների վերայ աւելացնում են եւ մի քանի նորեր: 1) Ինչպէս երեւում է Արաբեանը իր վերջի նամակում սխալւած է փամփուշտների քանակութեան վերաբերմամբ, հաշւելով մէկ հրացանի համար 1000 հատ, 100-ի տեղ: Վերջի թիւը ստացւում է եւ փամփուշտների ընդհանուր գումարը (20.000) հրացանների թւի (200) վերայ բաժանելուց (20.000 : 200 = 100): Իսկ ի նկատի ունենալով մեր պայմանները ձգտելու է որ ամէն մի հրացանին գոնէ մի քանի հարիւր փամփուշտ, եթէ անկարելի է մեր անցեալ նամակում յիշած 700-1000-ը: Ճիշտ է հրացանը առնել եւ ծախելիս միշտ հաշւում են 100 փամփուշտով, բայց դա ազատ պայմաններում, երբ փամփուշտ դուրսը կարելի է ճարել: Իսկ մեր պայմանները դոցանից հարկաւ շատ տարբերում են:

2) Սակայն, ամենադժւար հարցը մնում է փոխադրութեան մէջ: Համաձայնութիւն տալով Արաբեանին մենք համոզւած էինք որ ապրանքը կարելի կը լինի պահել մինչեւ յարմար ժամանակ Պորտ-Սաիդ... Իսկ հիմա այնպէս է երեւում, որ այդ բոլոր գալու է Մարսէյլ, այսինքն ընկնում ֆրանսիա առնուած ապրանքի դրութեան մէջ: Խնդրում ենք իմանալ այդ մասին հարկ եղած տեղեկութիւնները եւ կատարելապէս վստահ լինելով փոխադրութեան նկատմամբ, գրել Հարար հարկ եղած պատասխանը:

3) Ապրանքի եւ փամփուշտների փորձերը գուցէ կարելի լինի վստահել եւ իրենց, քանի որ իրենք եւս ազնիւ կերպով շահագրգուած են երեւում:

4) Իրենց մենք պատասխանում ենք որպէսզի նախ քան վերջնական որոշում անելլ սպասեն ձեր պատասխանին:

* * *

Պ. Սեմերձեանին յայտնէք որ իրա խմբագրատանը թողած կապոցներից՝

բոլորը դուրս եկաւ «Զէյթունի անցեալէն», Ա. Հատորէն... Մենք կարծում
էինք որ Բ (II) հատորն է եւ խորհում էինք ուղարկել ընկերներից եւ ուզեցող-
ներից նրանց, որոնք արդէն ստացած էին Ա. Հատորը... Արդեօ՞ք դա հասա-
րակ սխալմունք է. կարող էինք ուղարկել դա ուր ինքը կը ցանկանայ:

* * *

Յունւարի 2-ին Փարիզից H. Galfayan – poste restante ուղարկւած է 5000
ֆր.-ի չէք: Հաւանական ստացած լինէք:
Զեր 7-1-04-ից գրած նամակը ստացանք:

Բարեներով
Ա. Բ. [ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]

1.- Քաղաք Երովալիոյ մէջ (նախկին Աբխազիա կամ Հարէշստան):



Յարութիւն Գալֆայեան

Կիլիկիայի Կենտրոն. կոմիտէին

Սիրելի ընկերներ,

Տեղեկանալով ձեր վերջի գրութիւնից, որ ժամանակին տւած էք հեռագիր ձեր համաձայնութեան մասին Հ. Ժ.-ին հրաւիրւելիք չորս ընկերների մասին, մենք դիմեցինք տեղիս հեռազրատուն եւ տեղեկացանք որ այդ տեսակ հեռագիր այստեղ ստացւած չէ: Արէք հարկ եղած դիմումը ապագայում այդ տեսակ թիւրիմացութիւնների առաջը առնելու համար:

Իֆլիքչեան տունը Մանչեսթրից ժամանակին յուր էր տւած պ. Գասպարեանին, որ իզմիրի մեր ընկերների դիմումի հիման վերայ նրանք պատրաստ են նւիրել 100 անգլ. եւ այս քանի օրս ուղարկած են պ. Գասպարեանին նոյն գումարի փոխանակագիր:

Գրելու է իզմիր, որպէսզի գումարի ստացւելու մասին տեղեկացնեն ում հարկն է.

Անցեալ անգամները երկարօրէն կանգ էինք առած ձիբութիի գնելիք բերդանի հրացանների եւ նրանց փոխադրութեան վերաբերեալ հարցի վերայ: Այժմս տեղեկանում ենք որ եւրոպական ամենավստահելի առեւտրական տներից մէկը առաջարկում է զանազան տեսակ մթերքներ (ֆրանսական gras հրացանը 20-ական ֆրանքով առանց փամփուշտի) եւ պարտաւորւում տանել ապրանքը Միջերկրականի նաւահանգիստները: Եթէ ձիբութիի ապրանքը անկարելի է իսկապէս ամբարել Պորտ Սահիդ կամ մօտերքը, այլ փոխադրելու է Մարսէլլ, աւելի լաւ չէ^o արդեօք այդ պարագայում թողնել Հարէչստանի կասկածելի ապրանքը եւ մտածել այստեղինի փոխադրութեան միջոցների մասին...

Ամենակարեւորը հարկաւ ներս հասնելու հարցն է եւ այդ մասին հաւանական դուք աշխատում էք, ամենալուրջ կերպով:

Ընկերական բարեւներով
Ա. Բ. [ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]

Փաստ. 14-43

Հ.Յ.Դ. երրորդ Ընդհ. ժողովին անմիջապէս ետք, Սոֆիային Կովկաս անցնելու ճանապարհին Ս. Զաւարեան կը գրէ Ռումանիային հաւանաբար Թիֆլիս կամ Ասրապատական:

24 - III - 1904

Ռումանիա

Սիրելի ընկերներ,

Նամակս գրում եմ ճանապարհից մի կարեւոր նիւթի մասին: Ներփակ կը գտնէք մի նիւթ, որի կարիքը զգացւում է մեծ չափով Շամ եւ այլուր: Այդ նիւթից կարելի է գնել մեծ քանակութեամբ Բուլղարիա: Խնդիրը հիմա փոխադրութեան մէջ է դէպի ձեզ: Մենք մտածեցինք այսպէս. որ եթէ այդ «ապրանքը» (որ իւղի(1) լաւ տեսակն է) կարելի լինէր այլտեղ իբրեւ ձեւի ներկ, կամ մի այլ ապրանքի անւան տակ դրա նման, եւ եթէ կապոցների վերայ գրւած լինի տպած Փրանսերէն լեզով թէ սա այսինչ ձեւի, այսինչ բանի համար գործածելիք իր է (ներկ, ոեւէ արժան եւ տարածւած դեղ կամ այլ անկասկածելի բան) այդ ժամանակ մաքսատնից կարող էք ապրանքը անցնել: Լաւ է հարկաւ ունենալ ոեւէ թուրքի կամ անկասկածելի վաճառականի հասցէ: Խորհրդակցէք, մտածէք այդ մասին եւ եթէ դա հնարաւոր է գրեցէք ինձ Խվան Սոսով Թիֆլիս ցպահանց(2) եւ ստացողի հասցէն եւ ուղարկելիք ձեւը: Եթէ Ռուսաստանով տրանզիտը անցնում է, կարող էինք ուղարկել մեծ արկղներով (50-80 քիլօ), արկղը աւելի յարմար է փոխադրութեան համար, իսկ եթէ տրանզիտ չը կայ, ստիպւած ուղարկելու ենք փոքր արկղիկներով – colis postal (3 թէ 5 քիլօ ամէն մէկը): Այս բանի մասին էլ չը մոռանաք լուր տալ: Շտապելու ենք:

Շամ(3) կարող է տագնապի մէջ ընկնել եւ յետոյ դժւար կը լինի մտածել փոխադրութեան մասին:

Կարդացի Յորդանանեանի նամակը Հնդկաստան մարդ ուղարկելու մասին: Պատասխան կ'առնէք խմբագրատնից(4), բայց լատ իս աւելի լաւ է սպասել Պարթեւի վերադարձին: Նրանց Հնդկաստան գրւած էր աշխատել կալւածական խնդիրը անդլիական կառավարութեան միջոցաւ դնել Լահէյի դատարանի առջեւ: Առ այժմ աւելի լաւ է սպասել ինչ կ'անեն այդ ուղղութեամբ:

Բացի դրանից, այս տարի այնքան մենք անելիք գործ ունենք եւ այնքան քիչ մարդ, որ գուցէ աւելի նպատակայարմար լինէր զբաղւել այդ նաղդ(5) անհրաժեշտ անելիքներով:

Հնդկաստանը սպասել է 10-15 տարի, թող մի $\frac{1}{2}$ – 1 տարի եւս սպասէ...

մանաւանդ որ Պարթեւ կը բացատրէ... ինչ կարելի է այնտեղից սպասել:
Գուցէ հանգանակութեան կէսը գնայ ճանապարհածախսի:

Բարեւներով՝ ձեր Ս. Օ[ՀԱՆԵԱՆ]

**Այս իւղի նմուշից առանձին échantillon-ով(6) ուղարկւած է Վլիւննայից,
ստացած:**
Ինչպէս է գնում ձեր փոխադրութիւնը:

- 1.- Խօսքը պայթուցիկ նիւթի մասին է:
- 2.- Բնագրին մէջ ոուստառ:
- 3.- Ծամ – ծածկանուն Վան-Վասպուրականի:
- 4.- Խմա՝ Ժղնելից:
- 5.- Պատրաստի իմաստով:
- 6.- Ֆրանսերէն նմոյշով:

47

Փաստ. 1146-30

**Երկուշաբթի – Մարտ 1904
Ռումանիա**

Սիրելի Միքայէլ(1),

**Զը գրեցիր ինչ էր դրած Արտաշէս Յովսէփեանը(2) ասորիների յարաբե-
րութիւնների մասին:**

**Զէյթ[ունի] անց[եալէն] Ո գ[իրքը] ծերուկը նւիրած էր եւ ինձ եւ քեզ եւ
Խաչ[ատուր]ին(3). ուղարկիր դրանցից մի երկուքը...**

Ուղարկիր Տրիեստի եւ Աւստրիայի մեր ունեցած հասցէները:

**Քիյառը գրած էր որ Պր[եսանսէի](4) կարծիքով ներկայ պայմաններում
միտք չունի բան անել, որ Ֆր[անսա] առանց Ռուս[աստան]ի չի ուզենայ բան
անել Մօտ[աւոր] Արեւելքում... Ահա քեզ Ֆր[անսա]ի ազատ քաղաքականու-
թիւնը Հ[այկական] ինդրում...**

**Ստացած ենք Բասենի խմբերի պատկերները. մի երկուքը եկող համարի
համար կ'ուղարկեմ այսօր Միւնիխ (Յունանեանին) որ պղնձի վերայ փորա-
գրել տայ ու հասցնէ ձեզ...**

Լաւ ենք... Բարեւներ բոլորիդ

ՕՀ[ԱՆԵԱՆ]

Նամակները ուղարկելիս կշռիր. ամէն անդամ տուգանք եմ վճարում:

- 1.- Սիր. Վարանդիան:
- 2.- Արտաշէս Յովսէփեանը ծանօթ Մալխասն է:
- 3.- Խաչատուր Մալումեան, Ակնունի:
- 4.- Քիյառը «Թրօ-Արմենիա»-ի խմբագրապետն է. Պրեսանսէն Ֆրանսայի Ազգային ժողովի անդամ, Դաշնակցութեան բարեկամ քաղաքական յայտնի անձնաւորութիւն:

Կոմսին, Շամ(1),

Ղազարոսի անունով գրած նամակով ժամանակին ստացւած է եւ հարկ եղած կարգադրութիւնները արւած: Թէ եւ ես չեմ մնալու միւենոյն վայրում, բայց նամակներդ կարող ես ուղղել նոյն եւ այլ հասցէներով, որ տրուած են ընկերոջդ: Եթէ չեմ սխալում Յունարի 7/20ին գրած էի մի երկար նամակ Մինարէի(2) վրայով, որի պատասխանը դժբախտաբար մինչեւ ցարդ ստացւած չէ: Դա ինձ շատ զարմանք է պատճառում ի նկատի ունենալով մանաւանդ որ սա առաջի անգամը չէ երբ կորչում են այդպիսի կարեւոր նամակներ: Միջոցներ է ձեռք առնելու ապահովելու համար գոնէ տարրական ազնը լուութեան պայմանները՝ յանձնել ըստ պատկանելոյն բոլոր գրութիւնները:

Նոյնը ասելու է եւ այն նամակների եւ փոխադրութիւնների մասին որոնք ուղարկւելու են Աբրոյի գերեզմանատուն(3): Տարրական ընկերային պահանջ է, որպէսզի աւելի մօտ եւ յարմար պայմաններում գտնւածները միշտ օգնեն աւելի հեռու եւ դժւար պայմաններում գտննողներին: Անհամբեր սպասում եմ պատասխանիդ: Առողջութիւնս լաւ է. գործերս բաւարար: Բայնդուրին(4) եւ միւս ազգականներին ու բարեկամներիս յիշիր յարդանքներս ու բարեւներս իմ ջերմ ցանկութիւնների հետ միասին յաջողակ լինել: Շատ բարեւներ եղբայրներիցդ. տեսնեցի Մերգէյի հետ. լաւ է եւ համեմատաբար գոհ իր գործից. կարծեմ միանալու է Կարմրաթշիկ Վիշապեանի(5) հետ: Ուրեմն, ողջոյններս ու բարեւներս:

Մնամ քո ՍիՄ[ՂՆ]

- 1.- Վահան Փափազեանին. Շամ – ծածկանուն Վան-Վասպուրականի:
- 2.- Սինարէք Սալմասի կուս. ծածկանունը:
- 3.- Աբրոյի գերեզմանը Սասունն է:
- 4.- Բայանդուր՝ Վանայ իշխանին (Նիկոլ Պօղոսեան-Միքայէլեան) գործածած մէկ այլ ծածկանունը:
- 5.- Կարմրաթշիկը՝ այլապէս ծանօթ նաեւ Սափո ծածկանունով, Սարտիրոս Սարգարեանն է: Վիշապեանը՝ Պոյսոյ ծածկանունն է: Վիշապեան, – հաւանաբար ըսել կ'ուզէ՝ պիտի անցնի Պոյխս Սուլբան Համիտի նահափորձի գործով:

Փաստ. 14-22

30 IV / 13 V - 1904(1)

Թիֆլիս

Սիրելի Վարանդ(2),

Ինչպէս տեսնում ես սաղ սալամաթ հասած եմ տեղս. տեսած եմ ծանօթ-ներիս եւ համբուրած փոքրիկներիս. եղանակը շատ լաւ է. առողջութիւնս միջակ:

Շատ էլ լաւ չեն կարող համարւել գործերս: Զմեռւայ երկարութեան պատճառաւ խոտը սակաւ էր, դաշտերում կեր չկար. ընկաւ սով, որի պատճառաւ միար եւ մանաւանդ պանիրը ծախւում են չը տեսնւած գներով – արի եւ սրանից յետոյ գիւղատնտեսութեամբ պարապիր: Տարիների աշխատանքը մի քանի օրւայ մէջ խորտակւում է...

Մեր ծանօթներն ու բարեկամները լաւ են, Լիզան սարսափելի ջղային է դարձել. Նիւթական միջոցները այնքան էլ փայլուն չեն: Վախենում եմ որ նաեւ Սիսեանի(3) ճանապարհորդութիւնը ուշանայ...

Բարեւներով քո Ա.

1.- Այս մէկուն, ինչպէս նաեւ յաջորդ կարգ մը նամակներուն վերեւ Զաւարեան կը գործածէ իին եւ նոր տոմարով զոյգ բուականները. այստեղ՝ 30 Ապրիլ – 13 Մայիս 1904:

2.- Սիր. Վարանդնան, որ կը գտնուէր Ժընա:

3.- Սիսեան՝ ծածկանուներէն մէկն է Աւետիս Սիարոննեանի:

Փաստ. 14-39

Սմբատ (Զաւարեանի ծածկանուններէն մէկը) ստորագրութեամբ Ժընեւ
ուղղուած գրութիւն:

30 - IV - 1904

13 - V - 1904

Թիֆլիս

Սիրելիք,

Մի շաբթից ես ճանապարհ կը ընկնեմ Օդեսայի վրայով. Օդ[եսա] կը լինեմ
Մայիս 12-15ին. Եթէ մինչեւ այդ ժամանակ տեղեկութիւններ ստանամ թա-
յինեանից(1) եւ Վարանդեանից որ Կարիճը(2) արդէն ճանապարհ է ընկած եւ
որ յոյս չը կայ Փարիզում դիւրութիւններ ստանալ ապագայ ճանապարհոր-
դութեան համար, գուցէ Օդեսայում ուղղակի նաւ նստեմ եւ հասնեմ ձեզ
առանց նրանց հանդիպելու: Յուսով եմ Աղասէրը(3) ապագայ փոխադրու-
թիւններին վերաբերեալ բոլոր կարգադրութիւնները արած է եւ այդ կողմից
էլ իմ ներկայութիւնը աւելորդ կը լինի Թայինեանի եւ Ղազարեանի(4) մօ-
տերքը: Շուտով հասնելս ձեզ մօտ կարող էր նպաստել որպէսզի միասին
խորհելով գործնական քայլերի դիմէինք...

Օգտուում եմ առիթից մի քանի հարցերի մասին գրելու համար:

1) Կոնխայից(5) երկաթուղին առաջ է գնուում: Շինութեան ժամանակ ան-
պատճառ գործ են ածւելու այլ եւ այլ պայմուտցիկ նիւթեր. եթէ ճարպիկ
մարդիկ լինեն, միշտ կարող են կապալառուներից այդ մթերքներից գնել, որ
մեզ համար կարեւոր է. յանձնարկք այդ մասին վատահելի մարդկանց եւ
զանազան տեղեր. եթէ հանքեր կան չմոռանաք հանքային գործարանները:

2) Աղասէրին ծանօթ Հայկը (Արշակի եղբայրը) պատրաստ է մտնել ուր
օգտակար կը լինի. Եթէ նաւերի վերայ կարիք կայ – լուր տւէք ինձ ճանա-
պարհածախս յանձնեմ, որպէսզի չուշանայ:

3) Զը գիտեմ ինչ դրութեան մէջ է Արաբեանի գէնքերի հարցը... Շ[ատի-
կը](6) գնաց թէ չէ: Լսելով ընկերների ասածները, ես եկայ այն եղրակացու-
թեան որ ամէն մի հրացանի հետ դնելու է մի մի հատ եւ փչացող մասերից
(ասեղ, կատու եւայլն...) եւ որ մի քանի հարիւր փամփուշտ դնելու տեղ կա-
րելի էր դնել հարիւրական հատ պատրաստի փամփուշտ եւ 4-500-ական
փամփուշտ առանց կապարի:

Կապարը կարող են դնել ստացւող տեղուում, իսկ փոխադրութեան տեսա-
կէտից դրա բեռը կը թեթեւցնէ առնւազը 2 անգամ (100 փամփուշտ կապա-
րով կը կշռէ այնքան ինչքան 3-400-ը առանց կապարի): Եթէ Արաբեանի մօտ

փամփուշտ շատ չը լինի արդեօք լաւ չէ պատւիրել դա Եւրոպայում. յիշւած մասերի եւ լայնելու գործիքների հետ միասին?

Եթէ դուք կարծում էք որ Եւրոպայով անցնելը կարեւոր չէ (անցագրի հարցը կը պարզւի Թայինեանի նամակից) եւ աւելի լաւ է Օղեսայից մեկնել՝ ուղղակի ձեզ մօտ, հեռագրեցէք Օղեսա՝ Բոյաջեան «արի»: Եթէ Հայկի մասին անելու է կարգադրութիւն (մեկնել դէպի ձեզ), աւելացրէք անունը հեռագրի մէջ:

Ի՞նչ էք մտածում մեր Եւրոպայում ունեցած իւղի(7) փոխադրութեան մասին – արդեօք մտցնելու որեւէ հնար երեւո՞ւմ է թէ չէ:

Եթէ փամփուշտների, իւղի կամ այլ գործի համար պէտք կը լինեմ Փարիզ, հեռագրէք Օղեսա՝ «Մնա», գրելով այդ բոլորի նկատմամբ մանրամասն նամակ Գասպարեանին. աշխատէք որ հեռագիրը հասնի Օղեսա Մայիս 15-16-ը:

**Բարեւներով
ձեր՝ ՍՄԲԱՏ**

Ներփակ նամակը պահէք մինչեւ իմ գալը:

1.- Յովի. Լոռու-Մելիքեանից:

2.- Սիսաք Գոյցումճեան, ծանօթ Առանձար գրական ծածկանունով:

3.- Յակոբ Աղասէր, Կիլիկիոյ իին գործիշներէն – Գրիգորեան Յակոբ:

4.- Թայինեան – ծածկանուն Լոռու-Մելիքեան Յովհաննէսի: Վրքանէս Ղազարեան – Մարսէյի ընկերներէն, որ կը զբաղէր «Դոչշակ»ի առաքումով եւ գլնք-զինամթերքի ծովային ճամբով դէպի Կովկաս փոխադրութեան գործով:

5.- Կոնիա կամ Գոնիա – քաղաք Փոքր Ասիոյ (Թուրքիա) հարավը:

6.- Շատիկեան Պողոս – Կիլիկիոյ գործիշներէն:

7.- Խող – պայքուցիկ նիւթ:

Փաստ. 14-9

Տղերք(1),

Կը ճանապարհւեմ այս կողմերից մօտ մի շաբաթից յետոյ. կը մտնեմ Օդեսա, ուր կը սպասեմ մի քանի տեղեկութիւնների եւ ըստ այնմ կ'որոշեմ իմ ապագայ մարշրուտը(2): Հիմա միայն հաշւեցի, որ Ժընեվ-Փարիզ անցնելով՝ ես պէտք է աւելորդ ծախս անեմ 200 ֆր., որ ափսոս է: Այդ կողմերը գալը կապւած է մասամբ Միսակին(3) համոգելու, մասամբ ապահով անցագիր եւ պատրւակ ստեղծելու, մասամբ էլ ձեզ հետ տեսնելու: Եթէ Միսակը գացած է կամ որոշած է գնալ, եթէ յարմար պատրւակ դժւար լինի (դա Թայինեանից(4) եմ սպասում), գուցէ եւ Օդեսայից ուղղակի նաւ վերցնեմ դէպի Գալֆայի վայրը(5): Խնդրեմ նամակս առնելուն պէս, ինձ գրէք այդ թղթի [?] մասին (նամակով թէ թերթով – բանդերուով(6) – Օդեսա, poste restante, Arsoff:

Քրիստափորը մինչեւ ե՞րբ այդտեղ կը լինի. Գալֆա մինչեւ երբ կը մնայ Ալեքսանդրիա:

**Բարեւներով
ՍիՄՈՆ**

1.- Զաւարեանի մէկ նամակին պատճենն է, Քրիստափոր Միքայէլեանի ձեռքով: Գրուած է Կովկասէն, որ մնենած էր Գ. Ընի. ժողովին ետք, Արեւելք (Կիլիկիա, Եգիպտոս) Վերադարձի պատրաստութեան օրերուն: Գրութեան վրայ մակազրուած է ստացնան բուականը՝ 24 Սայիս 1904:

2.- Մարշրուտ – ճանապարի ուղիի գլխաւոր կետերը, կայսաները:

3.- Միսակ – Գույումծան, ծանօթ Առանձար գրական ծածկանունվ, որ Զաւարեանի եւ այլոց հետ ընտրուած էր Կիլիկիյ Պատ. մարմնի անդամ:

4.- Թայինեան – Յովի. Լոռու-Մելիքեան, Երոպայի մէջ հայ դատի պատասխանատու:

5.- Գալֆայի վայր – Գալֆան Յարութիւն Գալֆայեանն է, որ կը մնար Աղեքսանդրիա (Եգիպտոս):

6.- Բանդերով – Փարաբան:

Փաստ. 223-2

Աղեքսանդրիայէն Թափառիկ (Տոքք. Կ. Փաշայեան) 13 Յունուար 1905 թ. երկողով մը կ'իմացնէ, որ Ս. Զաւարեան «արդէն Ծոց [Պէյրութ] հասած է», ներփակելով Մարթինին (Աշոտ Մարթին, Մուրատեան, անդամ Յուցական մարմնին) ուղղուած Զաւարեանի նամակին պատճենը, յայտնելով «Պ. Մնբատ ձեր մասին հետեւեալը գրած է»:

13 Յունուար 1905, Աղեքսանդրիա

«Սարհատին լուր տւէք որ հետը անպատճառ բերէ մի պարտիա այն բոլոր մանր իրերից, որոնց ցանկը կազմած եւ իրան էր տրւած, սկսած ամորսներից, որ շատ կարեւոր են. թող խօսի եւ ճանապարհ գցի իր հայրենիք Աթէնքում ապրող մեր ընկեր Յարութիւնին (Կօշկակարին): Հեղեղատ(1) ուղարկած ընկերը (Յօշանը եւ Սարհատն(2) էին դա կարգադրած) վաղուց վերադած է Հովիտ(3) եւ անպէտք, վարձկան ուժ է: Իսկ Կօշկակարը կարող է շատ օգտակար լինել: Նախքան գալլ նա (Կօշկակարը) թող լաւ վարժւի պայթ[ուցիկ] նիւթերի գործածութեան եւ այլ անհրաժեշտ ճիւղերի մէջ...: Եկողները այդ ամէնը գիտնալու են, հակառակ պարագային թող չգան...»:

- 1.- Հեղեղատ – 1904-էն սկսեալ Քեսապի համար գործածուած ծածկանուն:
- 2.- Յօշանը՝ Ներսէս Պաղտոյեանն է, Մարիատը՝ Յ. Յակոբեան, երկուքն ալ Կիլիկիոյ գործիչներէն:
- 3.- Հովիտ՝ Այնիքապի կուս. ծածկանունը:




Տոքք. Կարապետ Փաշայեան – Թափառիկ

Փաստ. 947-8

Ս. Զաւարեանի այս երկողող-քացիկը գրուած Եզիպտոսի Փոր-Սահմ քաղաքէն, ուղղուած է Աքենք գտնուող Իզմիրի և Կիլիկիոյ գործիչներէն Սարհատին, որ իր ամերիկեան անցազրով ծանօթ էր նաև Ժան Ժարու (Յ. Յակոբեան) անունով:

Միեւնոյն հասցեին ուղղուած է նաև իր յաջորդ՝ 5 - III - 05 թուակիր նամակը (փաստ. 947-30), որ գրուած է ֆրանսերէն:



13 - I - [19]05

Սիրելի,

Շատ ու շատ բարեւներով եւ
բարեմաղթութիւններով Ցարու-
թիւնի (Կօչկակարի) անունով
գրում եմ երկար ապահովագրած
նամակով եւ որ յուսով եմ կը
ստանաս նրա հետ միասին:

Քո ՍՍԲ[Ա.Տ] ՕՀ[ԱՆԵԱՆ]

Փաստ. 15-33

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Նոյ. 1904 – Փետր. 1905-ի

Ուահվերի (Վարդանեան Սիսաք) եւ Սարհատի (Յակոբեան Յարութիւն) հաշուեքննութեան այս տեղեկագիրը բաղկացած է 9 էջերէ. բացի եզրափակիչ վերջին էջեն, միասները կը պատկանին Ս. Զաւարեանի (Սմբատ) գրչին:

Փաստաթուղթը բուական չունի բայց հետեւցնելով քննուող հաշիւներէն, որոնք ներառած են 1905 թ.ի Փետրուարի ծախսերը, ապա նաև յիշատակութիւնը Դաշնակցութեան Խորհուրդին, «որն արդէն սկսած է» կ'ըսուի, կարելի է որոշ կերպով հաստատել որ այս փաստաթուղթը կազմուած է 1905 թ. Սարտ-Ապրիլ ամիսներուն:

Ռահվերի 1904 – 1905 հաշւին վերաբերեալ

Թէեւ անցեալ՝ 1904 տարուայ ընթացքում, ինչպէս եւ Հնդկ. ժ[ողով]ի ժամանակ պ. Ռահվերի հաշիւների առթիւ ծագած էին անախորժ եւ յեղափոխականի մը համար անվայել խօսակցութիւններ։ Զափազանց ուշ (1904-ի Օգոստոսի վերջերին միայն) ներկայացրած անցած տարւայ հաշւի քննութիւնը համոզեց ընկերներին՝ Ռահվերի անարդարացի առատօրէն ծախքեր ընելու մէջ եւ հարկադրեց ձեռք առնել կտրուկ միջոց։

Լիբանանի ժողովին մասնակցող ընկերների եւ իրա Ռահվերին ընդհանուր համաձայնութեամբ որոշւեց որ նա հաստատի Հալէպ, 3-4 ամսւայ ընթացքում գտնէ իրա համար ուեւէ գործ ծախսելով ամիսը 50-60 ֆր. եւ միեւնոյն ժամանակ ձգտէ ուժեղացնել տեղի մարմինը, հաստատէ կապ, փոխադրէ թերժ, գրքեր, Ծոցի(1) հետ՝ ուրֆացի ջորեպաններու միջոցաւ եւ Հովտի(2) մարմին համաձայնութեամբ, աշխատէ գնել տեփոնական(3) զէնք շօշափելի քանակութեամբ։ Իր աշխատանք գտնելու անհրաժեշտութեան մասին մի քանի անգամ յիշւած էր իրեն եւ Հովտի ընկերներու կողմէ, իսկ Դեկտեմբերի վերջերին տարին փակելու համար ինդրւած էր հաշիւները ուղարկել Ծոց։

1905-ի Փետրւարին Ռահվերը հաստատւած է մասնաւոր գործով Ծոցի մօտերքը (ուր տեղի մասին նա խօսում էր վաղուց) եւ նոյն ամսու վերջին ներկայացրած է ներփակ հաշիւը։

Այդ ծախքերի ցանկի եւ իր գործունէութեան քննութիւնը պարզում է մեզ. —

1) Թողնելով մի կողմ անցագրի չափազանց մեծ ծախքերը մի մարդու համար որ ունէր կանոնաւոր վկայագիր, ինչպէս եւ Զահլէ(4) կառքով գնալու դժւար ստուգելի գումարը,

ա.- իր ապրուստի համար վեց ամսւայ ընթացքում նա ցոյց է տւած 451 ֆր., այսինքն 211 ֆ. աւել (4 ամսւայ համար, 60-ական ֆրանկով նա հաշւելու էր առառաւելն 240 ֆր.):

բ.- Ճանապարհորդութեան համար անհրաժեշտ 88 ֆր.-ի տեղ (ինչպէս կը հաշւեն բոլոր ճանապարհորդած ընկերները) նա նշանակած է 162½, այսինքն աւել... 74½ ֆր.

գ.- Բացի այդ, Թափառիկի(5) կողմէն իրեն անցեալում յանձնւած 100 ֆր.-ը չէր մտցրած իր Օգոստոսին ներկայացրած հաշւին մէջ. հետեւաբար իր քով մնացած 37½ ֆր.-ի հետ միասին, ընդամէնը Ռահվերի վերայ է համարելու (211 + 74½ + 100 + 37½) 423 ֆր.

2) Դաշտում Վարդանը(6) ասած եւ շեշտած էր իրեն չը գնել մանր-մունր ատրճանակներ ոչ էլ հատ հրացաններ, որոնց չճանչնալը ինքը խոստովանւած է: Նոյն բանը կրկնած էին եւ տեղացի ընկերները:

Չը նայած դրան, բաւական չը համարելով իր մօտ եղած գումարը, 40 ոսկի նա ինդրում է Հովտից(2) եւ գնում մանր-մունր զէնքեր, արդարանալով նրանով, որ հովտեցիք կը վերցնեն այդ ապրանքը իրենց հաշւին:

Պարզ է, որ այս պայմաններում կատարած գնումից առաջ եկած վնասի պատասխանատւութիւնը ընկնելու է Ռահվերի վերայ:

2) Դաշտում եւ Հովտում գտնւած ատեն նա ոչ միայն չի նպաստել կազմակերպութեան ուժեղանալուն, այլ ընդհակառակը ըրած է ոչ ճիշտ եւ անվայել ակնարկներ, գործի ու բացակայ ընկերներու մասին, մեր ուղղութեան հետ դեռեւս լաւ չը ծանօթ[ացած] ընկերներուն տւած է խորհուրդներ որ միմիայն կարող էին նրանց տանել դէպի անբարոյական վերաբերմունքը կազմակերպութեան հանդէպ:

Ի նկատի առնելով այս ամէնը, որոշում է.

1) Պարտաւորեցնել Ռահվերին վերադարձնել կազմակերպութեան վերը յիշած 423 ֆր.-ը, ուղարկելով ամիսը առնւազը երկու ոսկի Թափառիկին սկսեալ 1905-ի Մայիսէն:

2) Դաշտում գնւած ապրանքները Հովտի ընկերների միջոցաւ վաճառել եւ վնասը դրել Ռահվերի հաշւին իբրեւ շարունակութիւն վերը յիշած պարտքի:

3) Յայտնել Ռահվերին խիստ յանդիմանութիւն իր բռնած յեղափոխականին ոչ վայել ուղղութեան համար եւ մինչեւ վերը յիշւած պարտքերի վճարումը արգելել նրան մասնակցել շրջանին վարչական դեր չունեցող մարմիններու մէջ:

Լ[եռնավայրի](7) Պ[ատասխանատու] մարմնի անդամ
ՎԱՐԴԱՆ
ՍՄԲ. ՕՀ[ԱՆԵԱՆ]
ՅՈՇԱՆ
ՇԱՏԻԿ(8)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Նոյ. 1904 – Յունիս 1905-ի

Սարհատի 1904 – 1905 հաշվին վերաբերեալ

1) Անցեալ Պատասխ. մարմինը, թէ նրա անդամներից մին ժամանակին առաջարկած է եղել Սարհատին սահմանափակել իր ամբողջ անձնական ծախքերը ամիսը 100 ֆր.-ով: 1904-ի Օգոստոսի վերջերը Լիբանանի ժողովում նա ներկայացրեց ամիսը 130 ֆր. իրեւ անհրաժեշտ իր ապրուստի համար, չը նայած որ Ծոցում(1) կեանքը $1\frac{1}{2}$ անգամ Եւրոպայից աւելի արժան է եւ տեղում միջակ ապրող ուսանողները բաւականանում են 50-60 ֆր.-ով:

Սարհատը ականատես էր այն խիստ յարձակումներին, որին ենթարկւեց Ռահվերը իր առատ, շատ առատ ծախքերի համար (ամիսը մինչեւ 150-160 ֆր.); Նա մասնակից էր այն կտրուկ որոշման որ արձակւեց Ռահվերի նկատմամբ, Լեռնավայրի(7) շրջանում շուայլութեան վերջ դնելու համար: Ծայրայեղ խնայողութեան անհրաժեշտութեան մասին նրան յիշւած եւ օրինակ էր ցոյց տրւած Վարդանի կողմէ Աթէնքում...

2) Երբ երկու ամիս առաջ Սարհատին գրւեց Յարութիւնի ներս գնալու օգտակարութեան մասին (որ որոշւած էր դեռ Լիբանանի ժողովում) շեշտըւեց որ Յարութիւնը նախ պարապելու է մի քանի տեսակէտից (ծանօթանալ լաւ ծրագրի ու մեր ուղղութեան հետ, պայթուցիկ նիւթերու գործածութեան եւ այլն): Ի պատասխան այդ առաջարկին Սարհատի առաջի գրութեան որ նա տւել է Յարութիւնին 700 ֆ. ճանապարհածախք եւ որ Յարութիւնը շուտով ճանապարհ կ'ընկնի, անմիջապէս պատասխանւած եւ ասւած է որ այդ տեսակ դրամ շպրտելը սիսալ է եւ որ Յարութիւնի նման համեստ, մաքուր, ապագայում գործ-, աշխատանքով ապրող տեղացի մարդուն

150-200 ֆր.-ից աւել չի կարելի յանձնել (շատ փոքրիկ նպաստի վերայ ակ-նարկած էր եւ ինքը Յարութիւնը Սմբատին, Շատիկին...):

Երբ առաջ եկաւ Մարթինի եւ Տիրանի ներս գալու խնդիրները, բոլոր Աթէնքում գտնւած ընկերներին (Սարհատ, Մարթին, Տիրան, Յարութիւն) Յ Փետրւարին եւ յետոյ ուղարկւեց մի ընդհանուր գրութիւն եւ մասնաւոր նամակներ, ուր բացատրւում եւ շեշտում էր որ բոլոր եկողները ներսում ապրելու են ուեւէ աշխատանքով, (արհեստ կամ այլ) ստանալով կազմակերպութիւնից միայն ճանապարհածախք, 1-2 ամսւայ համեստ ապրուստի միջոց մինչեւ գործի վերայ հաստատելը եւ մի փոքրիկ միանւագ նպաստ (10-15 ոսկի) արհեստը սկսելու համար: Մարթինի կողմից գրւած նամակներից երեւում է որ նրանք օգտակար եւ նպատակայարմար չեն գտնում Պատ. մարմնիս եւ Ծոցի ընկերներին կողմից ընտրւած այս ուղղութիւնը եւ սպասում են մեր նոր գրութեան:

3) Ինչպէս բոլոր դաշնակցականներին, Սարհատին եւս յայտնի են կազմակերպութեանս հաշւապահութեան վերաբերեալ կանոնները, մանաւանդ տարւայ վերջին շրջանիս վերայ ծանրացած մեղաղբանքներից յետ. եւ սակայն նա – գաղտնապահութիւնից դրդւած թէ թերի ըմբռնելով ապակենտրոնացման եւ ընկերական յարաբերութիւնների ուղղութիւնը – հաշիւները եւ նրանց վերաբերեալ դոկումանները դրկած է Արեւմ. Բ-ին եւ իրեն ուղղած ընկերական նամակին, դրկել հաշիւները կամ նրանց ամփոփ պատճէնը –, ներփակ ցանկի պատճէնի վերայ, այն էլ խառը, նա աւելացնում է հետեւեալ հակաընկերական եւ ոչ քաղաքավարի խօսքերը. «Այս հաշիւները մանրամասնօրէն իրենց տոկիւմաններով Բ..... (Բիւրոյին երեւի) ուղարկած էի. կը զարմանամ որ այդ բանին անդիտակ ձեւանալով դուք ալ հաշիւներ կը պահանջէք»:

Թողնելով սակայն այս՝ ձեւին եւ քաղաքավարութեան վերաբերեալ հարցը եւ դիմելով բուն հաշիւների քննութեան ըստ էութեան, դժւար է դալ հարկ եղած բաւարար եղրակացութեան:

1) **Սեպտ.** 28-էն մինչեւ Յունարի 1-ը (այսինքն երեք ամսւայ ընթացքում), բացի 318,15 ք. ճանապարհածախքից Սարհատը ցոյց է տալիս

ա) **Զոր ուտելիքի,** հագուստի, զանազան մարդոց հետ ճաշի, Պիրէ(9) գնալ գալու, նամակադրոշմի եւայլն:

բ) 513 Փր.-ից ո՛ր մասը ծախսւած է զանազան մարդոց ճաշի, Պիրէ գնալ գալու եւ այլ ոչ անձնական պէտքերու վերայ – յայտնի չէ. դա միայն կարող են իմանալ տեղի ընկերները: Սակայն, անհաւատալի է որ այդ ոչ անձնական ծախքերը 100-150 ֆր.-էն աւելի բարձր լինեն: Ի վերջոյ, երեք ամսւայ ընթաց-

քում Սարհատը իր անձի վերայ ըստ երեւոյթին ծախսած է լինելու 1400-1450 ֆլ.:

Սարհատը իր «Հաշւի» պատճենի մէջ ոչինչ չի ասում իր ծախքերի մասին Օգոստոսի վերջից (Լիբանանի ժողովից) սկսած մինչեւ Սեպտ. վերջը՝ Բայց դա լինելու է երեւի Լիբանանի հաշւի ժամանակ իր մօտ մնացած 167,70 ֆր.-ը եւ Սեպտեմբերին Ռահվերի կողմից յանձնած 230 ֆր.-ը, այսինքն 397,70 ֆր.-ը. Պարզելու է նաև Թափառիկից ստացած գումարների ծախքը՝ առաջինը իր 15 Յուլիս – 31 Նոյեմբեր 1904 հաշւի մէջ Սարհատին յանձնած է 682 ֆր. իսկ Սարհատը իր ներկայ հաշւի մէջ Թափառիկից ստացած նշանակած է 91 եւ 152 (հետեւաբար, համեմատելու է նախընթաց ամիսների ծախքերը):

Եթէ այս անհաւատալի թւերում չկայ ոեւէ տառախալ, կամ սա անտեղի կատակ չէ, ամիսը 400-ական ֆր. ծախսելը (100-130-ի տեղ), առնւազը համարելու է շուայլութիւն՝ անբարեխողճութեան աստիճանի, որ հաւասար է կազմակերպութեան միջոցների վատնումի: Զեռնարկելու է հարկ եղած քայլեր, աւել ծախսած (մօտ 1000 ֆր.) կազմակերպութեան վերադարձնելու համար:

ՍՄԲԱՏ

2) Իր հաշւի մէջ նշանակած է ընկերներին տւած դրամ 1170 ֆր.: Հաշւից չի երեւում ովքեր են այդ ընկերները, իսկ սա դժւար չէր եւ պէտք էր նշանակել կարծում ենք: Շրջանումս աշխատող ընկերներից միայն Շատիկը առած է իրմէ 100 ֆր. եւ Տիրանը նշանակած է 150 ֆր.: Մարթինը չի տւած դեռեւս համաձայնութիւն մարմնիս դրած պայմաններին, չի ընդունած դեռեւս պաշտօնապէս Լեռնավայրի շրջանում աշխատող, եւ հետեւաբար, նրա ծախքերը ընելու է Վիշապի(10) մարմնոյ հաշւից: Յամենայն դէպս երկու ամսւայ ընթացքում Աթէնքում Մարթինի ծախքերը 200 ֆր.-ից չէին կարող անցնել:

Յարութիւնը, գտնում է նոյն պայմանների մէջ, այն տարբերութեամբ որ ապրում եւ աշխատում է իր բնակած քաղաքում, ուր իր ծախքերը չէին կարող 50 ֆր.-էն աւել լինել:

Հետեւաբար, «ընկերներուն տւած» 1170 ֆր. դրամից, Սարհատի մօտ կամ նրա պատասխանատութեան տակ է համարելու մօտ 900 ֆր., որի իսկական քանակը կարելի է պարզել միմիայն դոկիւմաններից եւ Սարհատի, Մարթինի եւ Յարութիւնի տւած բացատրութիւններից:

Այդ գումարը եւս վերադարձելու է շրջանիս Պատ. մ[արմն]ին:

ՍՄԲ. ՕՀ[ԱՆԵԱՆ]

Ի նկատի ունենալով Սարհատի հոս ուղարկած հաշիւների մէջ իրա գուտ անձնական (միայն ուտելիքի եւ բնակարանի) ծախքերի չափազանց մեծու-

թիւնը (Սեպտ. 28-ից մինչեւ Յունաւար 1, այսինքն 3 ամսւայ ընթացքում 1021 ֆր. եւ 513 ֆր. չոր ուտելեղէնի, զգեստի, զանազան ճաշերի, Բիրէ գնալ գալու) որը մեզ սարսափեցնում է (եթէ միայն հաշիւների մէջ թիւրիմացութիւն չկայ). այդպիսի ծախքերի ընդունելլ եւ վաւերացումը մեր ոյժերից բարոյապէս վեր համարելով, անհրաժեշտ ենք համարում առաջարկել Սարհատի անձամբ ներկայանալ Արեւմտեան բիւրոյին, կայանալիք Խորհուրդին (որը արդէն սկսած է) եւ բացատրութիւններ տալու եւ նրա որոշումները լսելու:—

Նախ քան գնալլ այդտեղ եղած աւելորդ դրամները՝ որոնք ներկայումս անհրաժեշտ չեն մեզ՝ բանկայի չէքով փոխադրել Բիւրոյին Պ. Միքայէլ Յովհաննէսեանի(11) անունով, իսկ զէնքերը եւ միւս պարագաները ի բացակայութեան յանձնել մեր ընկերներից Մարթինին եւ կամ Յարութիւնին:—

Ոսկեհանքի(12) մեր ընկերոջ առաջարկը Սարհատի առթիւ՝ ներկայումս անպատշաճ ենք գտնում:—

Պարտք ենք համարում յիշեցնել, ի նկատի ունենալ մեր առաջարկած պայմանները ներս մտնող ընկերների վերաբերմամբ. չհամաձայնողները ազատ են:

**ՇԱՏԻԿ
Լ[եռնավայր]ի Պատ. մ[արմնի] անդամ ՍՄԲ[ԱՏ] ՕՀ[ԱՆԵԱՆ]
ՅՈՇԱՆ
ՄԱՅԻԼ
ՎԱՐԴԱՆ**

- 1.- Պէյրուրի:
- 2.- Այնքապի:
- 3.- Երեմի՝ պահեստանոցէ, այսինքն գնումները կատարել մեծաքանակ եւ ոչ հատ-հատ:
- 4.- Զահիկ՝ քաղաք Լիբանանի մէջ:
- 5.- Թափառիկ ծածկանունն էր Տոքք. Կարապետ Փաշայեանի, որ կուսակցութեան ներկայացուցիչն էր Աղեքսանդրիոյ մէջ:
- 6.- Խանասորի Վարդանն է (Սարգիս Սեհրաբեան), որ 1904-5 թթ. իրեւ Կիլիկիոյ Պատ. մարմնի անդամ կը գտնուեր Կիլիկիա: Դաշտը՝ ծածկանունն է Հալէպ քաղաքի:
- 7.- Լեռնավայր՝ ծածկանուն Կիլիկիոյ:
- 8.- Յաջորդաբար՝ Մեհրաբեան Սարգիս (Խանասորի Վարդան), Սիմոն Զաւարեան (Սմբատ Օհանեան), Պաղտոյեան Ներսէս (Յօշան), Շատիկեան Պողոս (Շատիկ):
- 9.- Պիրէ՝ նաև հանգիստ Յունաստանի մէջ, Արէնքի մօս:
- 10.- Վիշապ՝ ծածկանուն Կ. Պոլսոյ:
- 11.- Միք. Վարանդեանի իսկական անունը:
- 12.- Ոսկեհանք՝ ծածկանուն Իզմիրի:

Փաստ. 947-30

Ս. Զաւարեանի Պէյրութէն զրուած ֆրանսերէն բացիկ՝ ուղղուած Յակոբեան Յարութիւնի (Jean-Jacob):

5 - III - 05
Beyrouth

Cher Jacob,

Aujourd'hui j'ai reçu vortre lettre de 7/20. Ça m'étonne que la poste arrive ici à 14ème jour... deux fois plus tard que de Londres et Paris...

Je vous ai écrit l'autre jour une carte en vous priant [de] m'envoyer les comptes pour ces jours. J'espère que vous l'avez envoyé déjà... Notre amie Mlle Migi est toujours malade ; elle espère sortir dans un mois. Je me porte bien. Je suis très content de Beyrouth, surtout de la mer qui est belle qu'à Athènes.

Dans quelques jours on commencera à se baigner... Des touristes viennent de plus en plus.

Salutations amicales
Votre SEMBAT

Թարգմանութիւնը:-

Սիրելի Ժակուր,

Այսօր ստացայ ձեր 7/20-ի նամակը։ Կը զարմանամ որ փոստը հոս կը հաս-նի 14-րդ օրը... երկու անգամ աւելի ուշ քան Լոնտոնէն եւ Փարիզէն։

Անցեալ օր ձեզի բացիկ մը գրեցի, խնդրելով որ այս օրերուն ինծի ուղարկէք հաշիւները։ Կը յուսամ որ արդէն ուղարկած էք։ Մեր բարեկամուհին, օր Միզի, միշտ հիւանդ է։ Կը յուսայ ելլել մէկ ամիսէն։ Ես լաւ եմ։ Շատ գոհ եմ Պէյրութէն, մանաւանդ ծովէն, որ աւելի գեղեցիկ է Աթէնքէն։

Քանի մը օրէն պիտի սկսինք լողալ... Զբօսաշրջիկներ կու գան աւելի եւ աւելի։

**Բարեկամական բարեւներով,
Զեր՝ ՍՄԲԱՏ**

Զաւարեանի այս նամակը, որ արտագրուած է նոյնպէս Տոքք. Կ. Փաշայեանի զբով, ուղղուած ըլլալու է Թիֆլիս, Արեւելեան քիւրոյի անդամ Բժ. Յովսէվի Տէր Դաւթեանին: Գրուած է ամբողջութեամբ այլարանական ոճով, այլ խօսքով՝ զաղտնագրութիւն է՝ պահարակելու համար կարգ մը գործիչներու կատարած անհաշիւ ու շոայլ ծախսերը:

Նամակը արտագրողը աւարտին կը գրէ. «Այս նամակը ընդօրինակութիւնն է Պեյրութից Սիմոնի որկած նամակին, որ ինքը ուզել էր պահել»:

Սիրելի Յովսէվ,

Ժամանակին դժբախտաբար ոչ մի լուր չառի քեզմէ մեր փոքրիկ Տիրանի առողջութեան եւ դպրոցական յաջողութիւնների մասին: Ի նկատի ունենալով Պաթումի ջերմերը ևս խնդրած էի քեզմէ ուղարկել անոր քով, ուր կը կրծատւէին ծախքերը: Ուղարկելու պայմաններու մասին ըսած էի խորհիլ Հատիկին հետ. հետը դրկել հոս վաճառելու յարմար մի քանի ապրանքներ (կաշի, սամովար եւայլն) եւ միեւնոյն ժամանակ չը մտնել մեծ ծախքերու տակ: Ամէն ինչ արւած է իմ խորհուրդներուս հակառակ: Ա-րդ կարգով դրկելով դուք գցել էք զիս պարտքերու տակ, սովորեցնել տղային շռայլ ծախքերու, սուլ հիւրանոցներում իջնելու եւայլն: Բացի այդ, նա ճանապարհ է ընկած առանց հարկ եղած պատրաստութեան, առանց իրեն բժշկող տոքթորին նամակը, առանց դպրոցական ոեւէ վկայագիր վերցնելու հետը: Հիմա ստիպւած է պարապ ամիսներ հոս նստիլ եւ սպասել...:

Թէեւ ակնարկած եմ իրեն անհրաժեշտ կարողութիւնների մասին, ինչպէս եւ անոր որպէսզի պարապ չը մնայ եւ ոեւէ աշխատանք գտնէ, բայց յոյս չունիմ: Ենթարկւելով յոյն եւ այլ երիտասարդներու վատ օրինակին, երկար ատեն մնալով պարապ եւ վարժելով շռայլ կեանքին, դժւար թէ նա հետեւի բարի խորհուրդներու: Եթէ այս կարճ ժամանակամիջոցում նա անկարող լինի ոեւէ հաստատ դիրք ստեղծել, հաւանական հարկադրւած զգամ զիս նորէն յետ ուղարկելու իր դպրոցը Պաթում: Ան ալ դժբախտաբար կը լսեմ որ փակւած է: Յուսամ կ'ունենաք անոր վրայ հարկ եղած հսկողութիւնը համեստութեան, ինայողութեան նկատմամբ: Տղան կարող կ'ըլլար կարգին մարդ դառնալ, իսկ հիմա ծնողների բարեխնամ հսկողութեան բացակայու-

թեան պատճառաւ ով գիտէ ինչ ճանապարհի վրայ կանգ առնէ: Նորէն կը խնդրեմ եւ կ'աղաջեմ, սիրելի Յովսէփ, Հսկեցէք, ձեր խորհուրդները պակաս չընէք այդ երիտասարդին: Դուք ինձմէ աւելի լաւ գիտէք ինչ կորստաբեր հետեւանքների է հասցնում աղայական խաբուսիկ դիրքը: Եթէ կրթւած, փորձը պաշտօնեաները, լոկ կոնտրոլի բացակայութեան չնորհիւ, գայթակղում են, կաշառակեր ու յանցաւորներ են դառնում, հապա ինչ ըսել դրամ չը տեսած, դեռեւս լուրջ բարոյական սկզբունքներից գուրկ վառվուուն երիտասարդներու մասին: Միայն բարի խորհուրդները եւ խիստ կոնտրոլն է, որ կայնեցնում է մարդկանց անասնական եւ հակահասարակական զգացմունքները, միայն աշխատանքը, աշխատանքը, արիւն քրտինքով հաց վաստակելն է, որ կազմում է թէ անցեալի, թէ ներկայի եւ թէ ապագայի հասարակական արդարութեան հիմնաքարը: Ես կ'ուզէի որ Տիրանը սնուցանւէր այս ուղղութեամբ, ես կը խնդրէի քեզմէ, յարգելի Յովսէփ, փոխարինել զիս եւ հանդիսանալ Տիրանին եւ գթասէր հայր եւ խիստ եւ արդարադատ անդրանիկ եղբայր:

Ես առողջ եւ գոհ եմ վիճակէս. ազահութեամբ կարդում եմ Ռուսաստանից եկող բոլոր լուրերը: Յանկանում եմ ձեզ յաջողութիւն ձեր բոլոր գործերում:

Մնամ ձեզ երախտապարտ միշտ



Զերու ՍՍԲԱՏ

Յարգանքներս Տիկ. Արմենուհուն

Փաստ. 949-46

Լեռնավայր-Կիլիկիոյ թղթածրաբին մեջ գտնուող Ս. Զաւարեանի այս անքուակիր նամակը, գրուած Արևմտեան թիւրոյի անունով, ուղղուած է Կիլիկիոյ գործիշներէն Մարքինին (Մուրատեան): Հաւանաբար սեւազրութիւն է, որուն հիմամբ պէտք է գրուիր պաշտօնական նամակը, քանի կը յիշ-ի «Լեռնավայր»ի շրջանի Պատ. մարմնի անդամ պ. Սմբատ», որ նոյնինքն Զաւարեանն է: Վստահօրէն 1905 թ.ի գրութիւն է:

Մարթինին

Լ[եռնավայր]ի շրջանի Պատ. մարմնի անդամ պ. Սմբատէն լուր եմ առած որ նա անկարող է բարեխիղճ համարել ձեր ըրած ծախքերը եւ վաւերացնել ներկայացրած հաշիւը: Այդ հաշիւները տեսնելով նա անկարող է համաձայնութիւն տալ ձեր ներս երթալուն(1):

Ատոր հետ միասին հրահանգած է ինձ որ ձեզ արդարացնող բացատրութիւնները եւ այլ եւ այլ գրութիւնները գործի եւ դրամի մասին դուք ուղղէք անմիջապէս Վարդանին(2):

ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] Բ[ԻՒՐ]Օ

Բիւրոյից գրել կարծիք Մարթինի, Տիրանի:

1.- «Ներս երթալուն» – իմա՝ Կիլիկիա-Լեռնավայրի շրջան երթալուն:

2.- Վարդան՝ Խանասորի Վարդանն է, բուն անունով Մեհրաբեան Սարգիս, նոյնպէս անդամ Լեռնավայրի Պատասխանատու մարմնին:

Ս. Զաւարեանի գրչով անսկիզբ եւ անթուակիր մէկ էջնոց ձեռագիր թերթ: Ինչպէս նախորդող գրութիւնները (15-13 եւ 949-46 թուահամարները կրող փաստաքուղարքերը), այս մէկը եւս Լեռնավայր-Կիլիկիոյ գործիշներէն Սարքին Սուրատեանի դրամական շռայլութիւններուն մասին է. այդ իսկ պատճառաւ այս գրութիւնը, որ հաւանաբար 1905 թ. սկիզբներուն է գրուած, կը գետեղենք վերոյիշեալ փաստաքուղարք կողքին:

Մարթինի մասին վերջնական խօսք կարող եմ ասել միայն ընկերներուս հետ խորհրդակցելուց յետ:

Արդէն գրած էք վերեւ որ բոլոր եկողները յաւ մասնագէտներ են ըլլայու: Դա անհրաժեշտ է մանաւանդ մեր շրջանի համար: Եթէ ապագայում Մարթինը մտնելու լինի յաւ պիտի գիտենայ բոլոր ճիւղերը...

Բացի այդ, ցուցական մարմնի գործունէութիւնը որոշած էր Հ. Ժ.-ի կողմէ(1). պարտաւորեցուցիչ էր անոնց համար եւ մանաւանդ Մարթինի համար, որ երեք տարի դուրս մնալը քաւելու համար ինքը թողեց Լ[եռնավայր]ի շրջանը (չը նայած ինձ տւած խօսքին) եւ մտաւ ցուցական մարմնի մէջ:

Մինչեւ ցուցական մարմնի գործունէութեան վերջը ես դժւարանում եմ ուեւէ վերջնական խօսք ասել: Գոնէ ինձ անհրաժեշտ է Վիշապի(2) շրջանի պատասխ. մարմնի կարծիքը ի...-ցոց(3) առհասարակ եւ մասնաւորապէս Մարթինի գործունէութեան մասին:

ՄՄ[ԲԱՏ] ՕՀ[ԱՆԵԱՆ]

Եթէ Յարութիւնը մտնէ Հեղեղատ(4), չեմ կարծեր որ Մարթինի ներկայութիւնը հեշտացնէ հոն Յարութիւնի գործունէութիւնը:

1.- Հ. Ժ. - Հ.Յ.Դ. Գ. Ընդհ. Ժողովի մասին է, գումարուած Սոֆիա, 1904-ին:

2.- Վիշապ - ծածկանուն Կ. Պոլսոյ:

3.- Բնագրին մէջ կիտաւոր, առանց բուն անուան յիշատակութեան:

4.- Հեղեղատ - ծածկանուն Կիլիկիոյ մէջ Սուէտիա գիտաքաղաքի:

Սիրելի Մար(1) ջան,

Նախ շատ ու շատ բարեւում, անվերջ համբուրում եմ քեզ: Գիտեմ շատ ես ձնչւած, շատ յոգնած:

Մայրիկիդ էլ Մայիսին խոստացած եմ որ դու շուտով լինելու ես քովը: Գնա՛ ուղղակի մօտը, հանգստացիր. կամ գուցէ աւելի լաւ լինի մի առ ժամանակ հանգստանաս Եւրոպայում! Հիմա հոն շատ վատ է եղանակը, բայց մի երկու ամսից լաւ կը լինի: Այս ամբողջ դարձածից յետոյ հանգստանալու դու իրաւունք ունես եւ քաշւելը քո կողմից կը լինէր մեր բոլորին համար վիրաւորանք:

Այսօր իմացայ որ մեծ իշխան Գէորգին (Մոսկայի կառավարիչը) տւել է հրաժարական: Նա Միրսկու եւ ռեֆորմների հակառակորդ էր:

Ասում են որ Գոլցինի տեղ նշանակւում է Ալէքսէներ, որի մայրը իբրեւ թէ հայուհի է: Ռուսաստան հիմա լաւ է. հանգիստ կարող ես մտնել. եթէ յանցանք էլ լինէր, ընկած ես լինելու մանիֆեստի տակ:

Իմ ճանապարհորդութիւնից ես գոհ եմ. կամաց կամաց ամէն ինչ մտնում է ցանկալիի ուղիի մէջ... բայց դեռ շատ աշխատանք է հարկաւոր:

Ինձ թւում է որ մի քանի շաբաթից գուցէ ես էլ անցնեմ մի առ ժամանակ Եգիպտոս... կը տեսնենք, բայց եթէ դա չը յաջողւի, գրիր քո մտածմունքները, դիտողութիւնները... Եթէ առանց ինձ տեսնելու գնաս, մայրիկիս, քոյրերիս, եղբօրս շատ ու շատ կը համբուրես:

Օհանէսը լաւ էր իրեն զգում, միայն թէ շատ յոգնած էր: Մօրդ եւ քրոջդ ծանրութիւնը նրա վերայ է... նրա (ինչպէս այլ) շրջանում գործերը շատ բարդացած են... չեն կարողանում ժողովրդեան շարժման ղեկը պահել...

Կարաւան(2) տեսայ Բ-ին. շատ վախենում է. նոյնը ըսելու է եւ Պօղոսի մասին:

Համբոյրներս, քո՝
ՍՄԲԱՏ

1.- Մար՝ ծածկանունն էր Սիր. Տեր Մարտիրոսեանին, նուիրեալ դաշնակցական գործիչ, որ ծեր-բակալուած էր Կիլիկիոյ մէջ և 1899 Յուլիսն մինչեւ 1904-ի Հոկտեմբեր բանտարկւած էր Մարաշի մէջ, ուրիշ հրաշքով ազատելով անցած էր Եգիպտոս:

2.- Կարաւան՝ կուս. ծածկանունն էր Խոկենտերուն-Ալեքսանտրէրի:

Սիրելի Մար(1),

Քանի ժամանակ է ինչ առած եմ քո 6 - I նամակը: Յուսով էի որ աւելի արմատականօրէն ես բժշկւել, իսկ հիմա նորից սկսած ես չարչարւել... Կարծեմ սիսալքոնն է՝ չէ՞ որ այդ անպիտան ժընեւը չափից դուրս խոնաւ է: Գոնէ թիֆլիս լինէիր հաստատած, կարող էիր օգտւել տեղի բաղնիքներից: Իսկ հիմա ճիշտն ասած ինչը լաւ է անել: Այստեղացիք ուզում են մի ազատ մարդ: Իսկապէս մի այդպիսի ներկայութիւնը կարող էր օգտակար ըլլալ եւ ներսի գործերին, եւ դու այդ կոմբինասիոնին(2) համար ամենայարմարն ես: Սակայն տեղական միջոցներու վերայ յոյս դնելը կասկածելի է... Գուցէ կարելի լինէր ծախսերի մի մասը կատարել [Եռնավայր]ի(3) հաշւին, մի մասը՝ տեղական մարմինների... Այս հանգամանքը եւս ի նկատի ունեցիր — եթէ հիւանդութիւնդ սաստկանայ:

Հարկաւ Աղասէրի(4) հետ նախապէս գրագրութիւն է ունենալու, քանի որ նա էլ կարծեմ, գոնէ առժամանակ, տեղումս մնալու հակառակ չէ:

Շատ լաւ ես ասում որ պէտք է ամբողջը մաքրել, բայց... ինչպէ՞ս: Զէ՞ որ մարդիկ խաղալիք չեն որպէսզի նրանց շպրտել կամ չշպրտել, չէ՞ որ կանոնագրութիւն կայ եւ վերջապէս ինչո՞վ եւ ինչպէ՞ս համոզւել որ այս կամ այն անձնաւորութիւնը դուրս շպրտելու չափ մեղաւոր է: Մնում է ամէն դէպք առանձին առանձին քննել, հարկաւոր է որպէսզի ամէն մի մարմին հնարաւորութեան սահմաններում մաքրէ իր շրջանը:

Սիսալ է ամէն մի հարց անվերջ ձգձգել, յիմար ու մանր դէպք հասցնել մինչեւ Ընդհ. ժողով, որը դե facto անկարող է իսկ մանրամասն քննութիւն կատարել... դրանով մենք միայն կը խրախուսենք ծուռ մարդկանց, որոնք միշտ ձգտելու են ամէն մի դատարկ խնդիր հասցնել Ը. ժողովին, թէկուզ միմիայն ձգձգելու համար: Թէեւ ձեռք լւալը ամենահեշտ եւ անձնական տեսակէտից ամենաղիւրին բանն է ընդհանուր շահի տեսակէտից, բայց դա ո՛չ ամենանպատակայարմարն է, ոչ էլ ամենակորրեկտը (գործի առաջ):

Ստացած եմ Բիւրոյի նամակը, նորէն Աթէնք գնալու մասին: Այժմս տրամադրութիւն եւ ժամանակ չունեմ մանրամասն պատասխան գրելու:

Կարծեմ մեր գործերում պարզ եւ դուզ է լինելու, եւ հարկ չը պիտի լինի «վիստաբաններին» միայն վայել բացատրութիւնների դիմելու:

Գիտցէք յամենայն դէպս որ Աթէնքի գործերում ես չեմ խառնւելու: Պատճառները կը պարզւեն երբ ուշադրութեամբ կարդաք Փետրւար եւ Մարտ 1905-ի եւ մի ամիս առաջ գրած նամակները: Խնդիրը պահանջում է պաղա-

րիւնութիւն, հետեւողականութիւն, ծանօթութիւն, որ կրնան ունենալ նըրանք, որոնք վերջի քսանը ամիսների ընթացքում պաղարիւնութեամբ եւ այդչափ հետեւողականութեամբ ոտնատակ արին մեր մարմնի կամ թէկուզ ներսում մնացած միակ անդամի առաջարկները եւ նոյնիսկ իրաւունքները:

Նորից ես նստելու եմ նաւ Օդեսա-Թիֆլիս գնալու նպատակաւ: Վախնամ սակայն, որ Հ[նդհ.] Ժ[ողով]ը Կովկաս գումարւի եւ զուր տեղը ծախսերի տակ ընկնենք, չը հաշւերով իմ կրած անախորժութիւնները: Յոյս գնելով սակայն ձեր կրկնակի հաղորդութեան որ Կովկաս է լինելու Ժ.-ը ես գնում եմ...:

Ես Ժողովից շատ բան չեմ սպասում: Ո՞վ կայ արդեօք ներսը Ժողովին, որ սպասելով մնացած լինէր անորոշ վիճակի մէջ... Պարզ է որ Կովկասէն դուրս ազատ ուժերը զբաղւելու են ներսերի կազմակերպական գործերով ու պլրոպագանդով, մի բան որ մեզանից շատ ծախս չի պահանջելու:

Լ[եռնավայր]ի շրջանի համար ես արդէն յիշեցնում եմ մեր մի տարի առաջ տւած որոշումը.

1) Որ գնացողները լինելու են անկասկած անձնւէր եւ զոհաբերութեան պատրաստ մաքուր ուժեր.

2) Քիչ շատ ընդունակ են լինելու կազմակերպելու, ծանօթ են ըլլալու ծրագրին, կուսակցական բաժանումներին եւայլն.

3) Հաստատելու են լեզար կերպով եւ ապրելու են աշխատանքով, ստանալով շատ փոքրիկ նպաստ իրենց արհեստը սկսելու համար.

4) Լինելու են տեխնիկական-գինուրական ճիւղի մասնագէտ...

Հովտից(5) գրում են, որ Արծ[ուաբերդ](6) մօտ 25 հոգի են բանտարկւած: Զենք կարողանում բացատրել ի՞նչն է դրա պատճառը, ո՞ւր տեղից է քամին փչում: Խոր Վիր[ապ](7) եւս մերոնցից մի քանիսը բանտն են:

Մարտիրոսը լաւ է. պարապութիւնը կը սպանէ նրան. խորհուրդ տուի առողջանալուց յետ զբաղւի զինուրական լուրջ ուժի կազմակերպութեամբ (Բուլղարիա կամ մի այլ վայր)...

Է - Գ. Կոնստանին իմ շատ ու շատ բարեւները:

Համբոյրներով քո՝ ՍԻՄՈՆ

Օդեսա ես կը մնամ երեւի 4-5 օր. եթէ մինչեւ 6 Փետրւար կը հասցնես մի նամակ գրիր ինձ, poste restante.

1.- Սիր. Տէր Մարտիրոսեան:

2.- Դաստիրութիւն, դժուար դրութենէ դուրս գալու հնարք:

3.- Լեռնավայր - ծածկանուն Կիլիկիոյ եւ յարակից Սուրբոյ եւ Լիբանանի շրջաններուն:

4.- Աղասէր - ծածկանուն Գրիգորեան Յակոբի:

5.- Հովհան - ծածկանուն Այնքապի:

6.- Արծուաբերդ - ծածկանուն Զէյթունի:

7.- Խոր Վիրապ - ծածկանուն Ատանայի:

Փաստ. 43-138

Անթուակիր եւ անսկիզբ նամակ, ուղարկուած Ժընեվն: Գրուած պէտք է դյայ 1906 թ. Յունուարին, նախքան Զաւարեանի Կովկաս մեկնիլ:

Լրբանում են... եթէ հիմիկւանից Խորհուրդը(1) որոշ կտրուկ դիրք չը բռնէ, երես կ'առնեն եւ միւսները... 130 ֆր-ից մի սանտիմ աւել ընդունելու չէ մեզ վրայ (հաշւած եւ շորերը, բնակարանը, գւարճութիւնը եւ բոլոր անձնական ծախքերը այդ 130-ի մէջ):

Լորիսին(2) գրած էի մի քանի խօսք(3) մասին: Ի՞նչ արիք, ի՞նչ մտածեցիք դրանց կացութեան մասին: Առ այժմս հարկաւ այդտեղ կը լինեն, բայց անելու է այնպէս, որպէսզի եւ ապագայի նեղութիւնների առաջը առնըւի...

Ես էլ (ինայողութեամբ թէ աշխատանքով) կարող եմ եւ իրաւունք ունեմ մասնակցելու նրանց օգնութիւն հասցնելու հարցում. չը մոռանաք այդ կէտը...

Լաւ կ'անես նամակս առնելուն պէս գրել այստեղ Թափառիկի(4) միջոցաւ. եթէ գնացած էլ լինեմ նա ինձ կը հասցնէ երուսաղէմ:

Տղերքը (գուցէ դուն էլ մէջները) «անարդարացի» էիք գտել իմ նկատողութիւնները խմբագրութեան նկատմամբ: Ես գիտեմ որ իմ գրածները նորմալ տարու համար շատ էին:

Բայց 1904/5-ը Դ[րօշակի] համար բացառիկ տարի էր, գործողների թւով (եւ խմբագրութեան անդամների), եւ գրամով եւ մանաւանդ գործունէութեամբ: Սասունը մեր յոթելեանն էր, կովկասեան շարժումները ամէն տարի չեն կրկնւելու. դա բացառիկ էր. իսկ խմբագրութիւնը ա'յդ բարձրութեան վերայ չը գտնւեց: Ցանձնէք թերթը մի քանի անկողմնապահ հոգոց համեմատել միւս տարիների հետ եւ կը տեսնէք որ իմ ասածս ճիշտ է... Այլ նկատողութիւններ ունէի անելու, բայց վախնալով որ ամէն ինչ «անարդարացի» կը համարւի, չեմ անում: Մի բան կը խնդրեմ եւ իբրեւ դաշնակցական կը պահանջեմ որ ձեր գրածների մէջ սխալներ եւ խոշոր սխալներ թոյլ չը տրւեն ըստ էութեան: Ճշմարտութեանը երբեք հակասելու չէ, ինչքան էլ այդ ճշմարտութիւնը մեզ դուր գալու չը լինի:

Ի՞նչ եղաւ Լիզան, գալի՞ս է թէ չէ...

Իմ համբոյրները ի. - Գ. Կոնստ[ան]ին, Ռուբէնին, շատ շատ բարեւներ Մարիանին[?] Վար-ին[?], տղերանցը...

Քո՝ Սմ. ՕՀ[ԱՆԵԱՆ]

1.- Խորհուրդը գերազոյն մարմինն էր, որ Ընդհ. ժողովներու միջեւ ինկած ժամանակաշրջանին իրաւասու էր կուսակցութեան անունով որոշումներ կայացնելու:

2.- Յովի. Լոռու-Մելիքեան:

3.- Անընթեռնելի երկու բան:

4.- Թափառիկ - ծածկանուն Տոքք. Կարապետ Փաշայեանի, Աղեքսանոյիա:

Փաստ. 16-1

26 Յունիար – 8 Փետր. 1906, Օդեսա

Արեւմտեան Բ[իւրո]յին

Հնկերներ,

1) Ներփակ քաղաքար կը կազմէք Լ[եռնավայր]ի շրջանի կացութեան մասին: Հրատարակութեամբ թէ այլ մի ձեւով եթէ կարող էք ուշադրութիւն դարձէք նրանց դրութեան վերայ: 1½ ամիս առաջ Խոր Վիրապից Կիլիկեանը(1) գրած էր իր ընկերներու բանտարկութեան ու Դաշտ(2) փոխադրելու մասին: Տեղական կուսակալն իսկ աշխատած էր «իր շրջանը» խաղաղ եւ հաւատարիմ ցուցնել, սակայն Դաշտից պնդել էին... Նրանից յետ իմ յարաբերութիւնը Կիլիկեանի հետ դադրած է (հասցէ չը տալու պատճառաւ), թէեւ Հովտից(3) վերջերս լուր էին տւած ինձ որ Խոր Վիր[ապ]ի համար ուղարկած են իմ շեշտած 20 ոսկին (Խոր Վիրապի 2 շրջիկի համար). Հետեւաբար Հովիտը կապ ունի Խոր Վիրապի հետ, թէեւ դրութիւնները ծանր է համարելու:

2) Դեռ սկզբից իմ ցանկութիւնն էր որպէսզի Լ[եռնավայր]ի շրջանի պատասխանատու մարմին հանդիսանային տեղի Կ. կոմիտէների ներկայացուցիչները, Հնդկ. Ժ[ողով]ից ընտրւածների հետ: Կենտր. Կ.ների չը գոյութեան պատճառաւ (Խոր Վիր[ապ]ը յետոյ ուժեղացաւ) ստիպւած նրանց իրաւասութիւնը ինչպէս եւ դերը յանձնեց եղած քիչ շատ ուժեղ մարմիններին: Ամէն տեղ ընթացիկ գործերը կարգադրուում էին տեղացիների հետ միասին՝ ընդհանուր խորհրդակցութեամբ ու համաձայնութեամբ: Տեսնելով ամէն մէկի (թէ մարմնի թէ անհատի) ցանկութիւնը իշխել միւսի վերայ, նկատելով անբարեխիղ առատածեռն վերաբերմունքը դէպի դրսից եկած միջոցները եւ, միւս կողմից, ուրիշ աւելի նպատակայարմար միջոց չը գտնելով իսկական կոնտրովի եւ մարմինների զարգանալու համար, վերջերս ես աւելի եւ աւելի սկսայ ծանրանալ եղած մարմինների խորհրդակցութեան վերայ (թէ-կուզ շրջիկների միջոցաւ) եւ առաջարկեցի որ դրսից եկած միջոցների բաշխումը կատարի եղած մարմիններու (Խոր Վիրապ, Հովիտ, Սահմանաբ[երդ], Արծ[ւաբերդ], Դաշտ)(4) խորհրդակցութեամբ ու հաւանութեամբ: Այս ուղղութեամբ միայն կազմակերպութիւնը կարելի է քալել քիչ շատ հաստատուն հողի վերայ: Մինչեւ այդ խորհրդակցութիւնը ու համաձայնութիւնը, ես հաւանութիւն եմ տւած միայն հետեւեալ ծախսերի.—

ա.- Խոր Վիրապ փոխադրել 20-30 ոսկի (իրագործւած):

բ.- Զատկացնել Մարմինին Վարդանի(5) խոստացած 10-15 ոսկին յարմար արհեստ ձեռնարկելու համար:

գ.՝ Ապահովել Գուրգէնի հետ կապւած ծախքերը Արծ[ւաբերդ] մնալու համար:

դ.՝ Հովհան գնացող շրջիկի ծախսը (1-1½ ոսկի ամիսը), ինչպէս եւ ժամանակաւոր շրջիկների ճանապարհածախսերը:

Այս միջոցաւ եղածը կը պահպանվի ու կը զարգանայ: Աւելի լուրջ ծախսերի գիմելը առ այժմս սխալ կը լինէր:

Արծ[ւաբերդ]ցիք վերջերս ասած էին որ մինչեւ իրենք իրենց պատրաստ չը տեսնեն, չեն կարող դրսից բան ստանալ: Բացի այդ ես համոզւած եմ որ ապրանք գնելը կամ ապրանքի պահել-վստահելը կարելի է միայն այն մարմիններին, որոնք ունեն կ. կ.ի կամ գոնէ կոմիտէի ոյժ (նւազագոյն պահանջների համեմատ): Այսինքն դրսից վստահած միջոցները պիտի համապատասխանեն իրենց, տեղական մարմինների ուժին: Այլ կերպ կը խաբւենք եւ իրենք էլ կը գայթակղւեն, կը փչանան:

Հետեւաբար առ այժմս զբաղւելու է միմիայն լուրջ կազմակերպական գործով:

Երկու ամիս առաջ Հովհանում գանձապահ Բաբան յանձնած էր 100 ոսկի: Ծոցում եղած Աւետիսը իր վրայ մնացած 40 ոսկուց խոստացաւ 25-ը փոխաղբել Դաշտ: Բացի այդ Հաճընին տւած 200 ոսկուց մի խոչոր մասը (Աշոտ Լեւոնի ասելով 150-ը) լինելու է Ժիրայրի քով(6): Այդ գումարները կը բաւեն ընթացիկ կազմակերպական պէտքերի համար: (Ճիշտ թւեր կարելի կը լինի իմանալ իրենց ուղարկելիք հաշիւներից):

3) Երկրին պակսում է գիտակցութիւնը՝ նւիրւած, բանիմաց մարդիկ. այդ մասին գրւած էր եւ II [Փետրուար] 1905-ի տեղեկագրում եւ յատուկ Ամերիկա (նոյնպէս 1905-ի II-ին): Մեր այդ գրութիւններում շեշտում էր որ ներս գնացողները լինելու են ա.- անպայման անձնելը, զոհաբերութեան պատրաստ (իրենց դիրքի համեմատ). բ.- ապրելու են լեզալ կերպով իրեւ հայեր, զբաղւելու ոեւէ արհեստով, աշխատելու են իրենց հացը, միմիայն փոքրիկ նպաստ ստանալով արհեստը սկսելու համար գ.- ծանօթ քիչ շատ փորձւած են լինելու ծրագրական-կազմակերպական հարցերու հետ՝ ինչպէս եւ հանդիսանալու են լինստրուկտորներ այլ եւ այլ բուն գինւորական ճիւղերի մէջ: Այս պայմանները անհրաժեշտ է համարելու բոլոր ներս մտնողներու համար: դ.- էդւարդը եւ նրա նմանները չեն համապատասխանում այս պայմանների մեծ մասին: Սխալ է վարձկաններով գործ տեսնել. լաւ է ունենալ մի համապատասխան ոյժ քան 10 միջակներ եւ 50

4) Բախտախնդիրներ-աֆերիստներ, իրաւաբանական-ֆորմալ հողի կանգնելու տեղ, աւելի լաւ էր ամերիկացոց լիշեցնել այս ամէնը, ինչպէս եւ տեղեկութիւն տալ էդւարդի ու Տօ. [ընկերութեան] քաջագործութիւնների մասին: Այն ժամանակ առաջարկութիւն իսկ չէր լինի:

5) Եգիպտոսը ամենամօտ վայրն է L[եռնավայր]ին եւ յարմարութիւններ

ունի: Նրանց սերտ կապը երկրի հետ լաւ է թէ՝ երկրի, թէ իրենց համար: Պատ մարմնի անդամներից մէկի մնալու տեղ Եգիպտոսում, աւելի լաւ էր այդ դերը յանձնել մի կովեգեալ մարմնի: Լ[եռնավայր]ի գործերին նպաստելու համար Եգիպտոսու [ի միջի այլոց կազմեցինք մի օժանդակ մարմին: Այսուհետեւ ուեւէ լուրջ հարցի մասին գրելիս, գրամ ծախսելու, ընկեր ուղարկելու դէպքում, Թափառիկը⁽⁷⁾ կը խորհրդակցէ Գահիրէի Կ[ոմիտէ]ի անդամ Աստուրեանի եւ Մկ. Եփրեմեանի հետ: Վերջիններիս գուցէ միանայ եւ Բաբեան (Հովտի նախկին գանձապահը, եթէ հաշիւները մաքուր դուրս գան): Այդ օժանդակ մարմնի ընդհանուր պատասխանատութեան է յանձնւած եւ Թափառիկի մօտ եղած գումարները (մօտ 6000 ֆր.), որ ապահով կարող է համարւել:

Այս երկու տարւայ ընթացքում Լ[եռնավայր]ի շրջանում համեմատաբար ամենաեռանդուն գործունէութիւն ցոյց է տւած Խոր Վիրապը: Եղած ոյժերը աւելի քան համապատասխան են Կ. Կ.ի կոչման (նւազագոյն պահանջների համեմատ): Հետեւաբար, եթէ Կիլիկ[եան]ը դուրս գայ, կամ մէկին ուղարկէ (որ յոյս չունեմ) նրանք մասնակցելու են Ը[նդհ] Ժ[ողով]ին: Թափառիկին ասւած է այդ բանի մասին:

6) Մարթինի գանգատի մասին ինձ ոչինչ յայտնի չէ: Գանգատը հարկաւ ուղղելու է տրւած հասցէին, սակայն զարմանալի է որ գոնէ պատճէնը ինձ չէք հաղորդած:

7) Դուք «Հրաժարւելով Հրաժարւում էք» անկանոնութիւնները, անբարեխղճութիւնները, խաչագողութիւնները հովանաւորելուց կազմակ[երպութեան] մէջ եւ պարզ ճակատով յայտարարում էք, որ միշտ ու ամէն տեղ հալածած էք այդպիսի երեւոյթները: Դժբախտաբար, ցանկալի էր որ ոչ միայն խօսքերով թուղթի վերայ դա լինէր, այլ էապէս. անկանոնութիւններ թոյլ չը տալու համար, նախ զերծ պիտի լինել այդպիսի մեղադրանքներից: Սակայն ձեր վարմունքը դէպի մեր շրջանի դրամների ծախսելը, պ. Սարհատին Ռուկէ⁽⁸⁾ մտցնելը՝ մեր շրջանից վոնդւելուց յետոյ այնպիսի դէպքեր են, որոնց առաջ մարում են Աշոտի ընտանիքի նպաստը, իզմիրի դրամ վատնելը: De jure պ. Սարհատին «ցաւ» յայտնեց եւ ֆորմալ կերպով դուք մեղաւոր չէք, բայց de facto դուք մեղսակից էք այն յափշտակութիւններու մէջ որ արեցին յետոյ Լ[եռնավայր]ի շրջանում (Շատիկ՝ 2000 ֆր., Բաբա՝ 40-150 ոսկի, Աւետիս՝ 15 թէ 40 ոսկի եւայլն), քանի որ սրանք բոլորը սկրտ առան, խրախուսւեցին Սարհատի անմեղ դուրս գալուց եւ չը պատժելուց: Անկանոնութիւնների ու շուայլութիւնների առաջը կարելի է առնել ոչ այնքան խօսքերով, ցաւեր յայտնելով ու անվերջ ձգձգումներով, ինչքան այս կամ այն կոնկրէտ դէպքում կտրուկ եւ չօշափելի միջոցներ ձեռք առնելով կասկածելի անձանց առաջը կապելու համար...: Դուք այլ կերպ էք դատում:

Ճիշտ մի տարի առաջ մենք շեշտած էինք մի շարք (թւով 10 թէ 12) անկանոնութիւնների եւ զեղծումների վերայ ու դուք (թէ Խորհուրդը) լոեցիք 10

ամիս եւ այսօր միայն օդեսացու մասին խիստ բացատրութիւն ուզեցիք!!!...
Դա հալածա՞նք է ձեր կարծիքով:

8) Պ. Շատիկը(9) խաբեց մեզ, կերաւ մօտ 2000 ֆր. եւ փախաւ (տես իմ գրութիւնը նրա մասին): Եթէ ինքը ցանկանում էր – քննելու էր նրան, իսկ եթէ դա չեղաւ, գոնէ իր վարմունքի մասին տեղեկութիւն էր տալու նոյն մարմնին ուր նա գտնուում է: Հարկաւ լռելը ամենալաւ բանն է, եւ ամենահանգիստ: Իսկ եթէ նիւ եորկցիք – անտեղեակ անցած դարձածից – մի նոր գործ տան նրան, դուք կը լինիք հովանաւորած խաբեբային թէ նրանք?

Պ. Քրիսը (Աշոտի ասելով) հաշիւ չէ տուած իր ձեռքով անցած 18.000 ֆր.ի մասին: Դատավարութիւնից իմացաք նրա սիրուհիների մասին... եւ վերջերս յանձնում էք այդ պարոնին ինչ որ փամփուշտների փոխադրութեան հարց... Դա խաչագողութիւն հալածել է թէ հովանաւորել? գլխից ուադ անելու համար(10) «Հարկաւ եւ» ամենայիմար եւ ամենադատարկ բան: Իսկ կարելի է վերջի վերջոյ ձգձգել մինչեւ Ը[նդհ.] Ժ[ողով]: Սակայն դա ոչ լաւ է եւ ոչ օրինական: Վարչական մարմիններն են որ վերջացնելու են իրենց «Հաշիւները», մաքրելու են իրենց ցեխերը: Ը. Ժ[ողով]ը ինչպէ՞ս կարող է քննել ամէն մի տեղական հարց, ինչո՞ւ պիտի զբաղեի այդ մանր ու մունք դէպքերով: Եւ այդչափ ձգձգումներով կարող են արդեօք ըստիրախուսել խաչագողները?!... Մախլաս(11)!

Մնաք բարով
Ս. ՕՀ[ԱՆԵԱՆ]

Առած եմ Միքայէլի երկտողը, Մարի(12) 28 Յունւարի դրածը: Մի քանի օր է այստեղ եմ. Թիֆլիսից հեռագրել են սպասել մէկին:

Բարեւներով Ս. ՕՀ[ԱՆԵԱՆ]

- 1.- Խոր Վիրապ՝ ծածկանունն էր Ատանայի, Կիլիկեանը՝ Զաքարիա Պատիկեանի:
- 2.- Դաշտը՝ Հալէպն է:
- 3.- Հովհանը Կիլիկիոյ Այնքապ քաղաքն է:
- 4.- Սահմանաբերող՝ Սարաշն է, Արծաթերող՝ Ջերուն, իսկ Դաշտը՝ Հալէպ:
- 5.- Խանասորի Վարդանն է (Սարգիս Սեհրաբեան), որ անդամ էր Լեռնավայր-Կիլիկիոյ պատ. մարմնին:
- 6.- Աշոտ-Լեւոն – ծածկանուն Սարգիսեան Նշանի, Ժիրայր – ծածկանուն Միրճեան Կարապետի:
- 7.- Թափառիկ՝ Տոքք. Կ. Փաշայեան, Դաշնակցութեան ներկայացուցիչը Աղեքսանդրիոյ մէջ:
- 8.- Սարհատ՝ Կիլիկիոյ և Խզմիրի գործիչներէն Յ. Յակոբեան. Ռսկեհանքը՝ Խզմիրն է:
- 9.- Շատիկեան Պողոս:
- 10.- Ռադ անել – վանել, հեռացնելու համար:
- 11.- Սախլաս – վերջապէս, ինչեւիցէ:
- 12.- Միքայէլ՝ Վարանդեանն է, Մարը՝ Միք. Տէր Մարտիրոսեան:

18/30 - III - 1906

Թիֆլիս

Սիրելի Միքայէլ(1),

Ահա քանի շաբաթ է այստեղ եմ... առողջ եմ. տնեցիք էլ լաւ են: Երեւան դեռ չեմ գնացած որպէսզի կարողանայի աչքովս տեսածս գրել ձերոնց մասին: Տեղիս դրութիւնը թէեւ լարւած չէ ինչպէս երկու ամիս առաջ, բայց եւ խաղաղութիւն չը կայ. նման է զինադադարի: Զարագործներն ու աւազակապետները ազատ կերպով պտտում են. չեն պատժած նոյնիսկ սենատոր Կուզմինսկուց մատնացոյց արւած պաշտօնեաները... երկու կողմերն(2) էլ վնասաւած են սարսափելի կերպով. գտնւել են թալանից միայն աւազակապետ-բէկերից մի քանիսը... Նոյնիսկ թուրք խուժանի մէջ սկսւել է խուլ դըժգուհութիւն վերջինների դէմ: Եկող գարունն ու ամառը կարող է շատ ծանր հետեւանքներ ունենալ ամբողջ երկրի համար: Volens nolens(3) սպասելու ենք...

Բացի այդ, ինքնապաշտպանութեան հարցից որը միացնում է համարեաբոլորին, կայ մեր մէջ եւ հասարակական ռեֆորմների պահանջի հարց, որը օրէցօր աւելի շեշտւում է: Իսկ այդ տեսակէտից մենք դեռեւս համարեաբան չենք արած: Մտածում եմ մի քիչ այդ հարցերը շօշափել, թէեւ դեռ չեմ որոշած ինչ ձեւով: Դորա համար, մասսամբ էլ այլ պատճառներից, ինձ հարկաւոր է ունենալ այն իմ գրքերը – նկատողութիւնները, որ գտնւում են այդտեղ(4) (կարծեմ Ռոստոմի նախկին սենեակի մի պահարանում իմ իրերի հետ միասին):

Ուղարկելու է նաեւ այն լուսանկարչական ապակինները ու ձեռագիր տեսքերը, որ 15 ամիս առաջ Ալեքսանդրապոլից ես դրկած եմ տեղդ: Ապակինները խնդրում եմ սրբես, մէջները մաքուր թղթեր դնես ու այնպէս տեղաւորես արկղիկներում (լուսանկարչութիւնից հասկացող մէկը կը բացատրէ):

Եթէ կարողանայիր այդ ապակիններից 1-2-ական հոդ մի լուսանկարչի տպագրել տալ, կարելի էր միայն նկարները ուղարկել. բայց վախենամ որ դա աւելի ուշանայ: Ուրեմն առաջի եկողի հետ ուղարկիր բոլոր ձեռագրերս, գրքերը եւ լուս[անկարչական] ապակինները (իմ նկարները): Եթէ այս մի քանի շաբթում եկող չի սպասւում, այդ բոլոր իրերը իմ այդտեղ ունեցած մի քանի շորերի հետ միասին դարսիր մի սնտուկի մէջ, եւ Աննմասից(5) (մաքսից ազատւելու համար) ուղարկիր Մարսէլլ որպէսզի այնտեղ յանձնեն առաջի Պակէի(6) նաւին որը գալիս է մինչեւ Բաթում... եթէ իրերը կարելի կը

լինի յանձնել մինչեւ Թիֆլիս՝ կ'ուղարկես իմ անունով ուղղակի Թիֆլիս,
իսկ եթէ կարելի է ուղարկել միայն մինչեւ Բաթում, կ'ուղարկես հօրեղօրս
անունով՝ Zourab Zavaroff-ի:

Գրքերի մի մասը, որ այնքան էլ մեծ չեն, օրինակ առարկա տվյալներ՝
Տարբերակ առաջնային գրքերը, ուղարկել առաջնային գրքերը՝ մի երկու թերթերում՝ առելի լաւ է չուշացնելու համար ուղարկել նոյնիսկ փոստով, ապահովագրած բանդրում՝ ուղարկել ինձ՝ գիւղատնտեսական ընկերութիւն...
Յատուկ խնդրում եմ ձեռագրերս, գրքերս եւ լուս. տեսարանները չուշացնես եւ ուղարկես շուտ եւ շուտ:

Բացի այդ մի գրավաճառի միջոցաւ բերել տուր ինձ համար եւ ուղարկիր՝
ա) Շուելյարիային վերաբերեալ ամենավերջի (1905-ի երեսի) առարկա՝
ֆրանսերէն):

բ) Հիւքնէրի Stat-geogr. Tabellen ամենանոր (երեսի 1905-ի) հրատարակութիւնը:

գ) Ֆրանսիայի գիւղատնտեսութեան եւ հողատիրութեան վերաբերեալ
գիրքի առարկա (եթէ այդպիսին հրատարակւում է):

Բարեւներս բոլորիդ
Քո ՍիՄ[ՈՆ]

1.- Սիր. Վարանդիան:

2.- Երկու կողմերն էլ – այսինքն թէ բուրքերը եւ թէ հայերը. ակնարկութիւն է. հայ-քարարական ընդհարումներու ընթացքին կատարուած անկարգութիւններուն:

3.- Լատիներէն ասացուածք՝ ուզերով չուզերով, կամայ ակամայ իմաստով:

4.- Այսինքն Ժընե, «Դրշակ»ի խմբագրատան:

5.- Աննմաս – Զուիցերիոյ սահմանակից ֆրանսական քաղաք:

6.- Պակէ – Պարումի և Մարտէյի միջեւ երթեւեկող նաւային ընկերութիւն:

7.- Զուիցերիոյ վիճակագրական տարեգիրք:

8.- Քաղաք Գերմանիոյ մէջ:

Փաստ. 16-45

16-IV /2 - V - 1906

Թիֆլիս

Սիրելի Թափառիկ(1),

Ուղարկած գրքերը մի քանի օրինակներ էին: Բացի այդ, մի մի օրինակ ուղարկած էի եւ Ծ[ոյ]-ի(2) կովկան, նաեւ Գարոյի եղբօրը: Հստ իս մտածելու եւ հնարաւորութիւն էր գտնելու այդ գրքերից փոքրիկ գրադարաններ հաստատել նաեւ այլ վայրերում ու տեղերում ուր սորվող երիտասարդութիւն կայ, մանաւանդ բողոքականների ունեցած կովկաններում (Ռուբերտ, Իզմիրի, Թարսուսի, Մարսանի, Քարբերդի եւ հայ կեդր. դպրանոցներում (Կեսարիա, Պոլիս, Երուսաղէմ եւայլն) եթէ հնարաւորութիւն կայ, կամ գոնէ նոյն վայրերում ունենալ գրադարաններ մասնաւոր կերպով: Խորհելու է այդ շրջանների հետ կապ ունեցող տղաների հետ եւ այս բանը ձեռնարկելու: Անհրաժեշտ գրքերի համար նապատ յոյս ունեմ գտնել, մասնաւանդ եթէ տեղացիք եւս որոշ չափով (օրինակ արժէքի ½-ով) մասնակցեն: Մասնաւորաբար Թարսուսի դպրանոցի համար դրկելիք գրքերի հասցէ կրնայիք ուզել Խոր Վիրապից(3)... Յակովը թող խորհի Հովտի – Սահմանաբ[երդի](4) մասին (գուցէ կարելի է Dr. Շիպերտի հասցէին ուղղակի դրկել): Ամասիայի շրջանի համար կրնայ տեղեկութիւններ տալ Եփրեմ[եան]ը ընկերներով. Քարբերդի մասին՝ Ծոցեցիք, Վիշապի՝ մեր բժ. ուսանողը. Երուսաղէմի մասին՝ Ղարախ[անեան վարդապետ]ը, եւայլն, եւայլն:

Զէի կարծում որ Աստ[ուրեան]ը այդքան ծանր մարդ է. աշխատելու է մի ուրիշ 1-2ին աւելացնել. քանի Հանգոյցը(6), Յակովը այդտեղ են, աշխատիր կարգադրել այդ հարցը:

Տեղական մարմնի հասոյթների յատկացնելը անելու է Արեւմտ. Բ.ի խորհրդակցութեամբ: Հստ իս առ այժմս աւելի լաւ է ներսի անհրաժեշտ ծախքերը հոգալ եղած միջոցներից, ոչալիզէ ընելով տոմսերից մէկ-երկուքը...⁽⁷⁾

Մարտիրոսին հեռագրով ուզած էին իր ընկերները (Ժընեւի) Խորհրդի համար... ափսոս ուշացաւ:

Հ[նդհ.] Ժ[ողով]ը հաւանականորէն կը գումարւի XII [Դեկտեմբեր] 1-15-ին (8): Դաշտի շրջանը(9) թող դա ի նկատի ունենայ եւ աշխատէ իր անդամների թիւը հասցնել 200-ի: Յակովի արտագրած տեղեկագիրը ստացւած է եւ կը ներկայացւի ըստ պատկանելոյն: Վերջաւորած չէ: Ամենակարեւորը՝ հա-

շիւներ չը կան, գոնէ այն գումարների որ ծախսւած են հովտեցոց(10) միջոցաւ, որոնք կազմել են այդ տեղեկագիրը: Յուսամ մինչեւ Խորհուրդը(11) պակասը կը լրացւի:

Հանգոյցը(6) հարցրած էր խմբագրատնէ մի տղայի մասին, որ իր ծախսով կ'ուզէ գալ Կովկաս: Մենք ամէն կերպ աշխատում ենք ընդհարումները դադրեցնել, թէեւ յոյսեր շատ քիչ կան: Հետեւապէս չենք կարող հաստատ խօսք տալ մասնակցութեան: Եթէ դա նւիրւած տղայ լինէր եւ գործ չը լինէր, կարող էր պարապել մի գործով եւ ոչ ոքի վերայ չը ծանրաբեռնւել: Ի՞նչ եղաւ այստեղ գալիք մեր ընկերը՝ աւստրալիացին:

* * *

Մեզ շատ հետաքրքրում է թուրքական շարժումը հարկերի դէմ: Դա շատ ուրախալի երեւոյթ է: Ժամանակն է որպէսզի Զաւադ բէյին (բժիշկը) կազմէր համապատասխան դիմումներ եւ կոչեր! Հարկաւոր է շարժումը լայնացնել առ այժմս միմիայն ֆինանսական հողի վերայ: Թուրքերէն թուուցիներ կամ բրոշիւրների մէջ ըստ իս ծանրանալու է գլխաւորապէս ժողովրդի տնտեսական քայլայիշ վիճակի վերայ, քննադատելու է տուրքերի անտանելի ծանրութիւնը ու կամայականութիւնը, եւ վերջի վերջոյ եզրակացնելու պահանջելու է:

1) Իջեցնել «տասանորդը» մինչեւ զուրանով ընդունւած իսկական տասանորդի (եւ ոչ թէ հիմիկւայ 1/8 եւ նոյնիսկ 1/5-ի շնորհիւ զեղծումների):

2) Իջեցնել անսասունների վերայ որոշւած տուրքը մինչեւ կէսի:

3) Ընդհանուր եկամտային նոր տուրքից ազատել ժողովրդի ամենաաղքատ տարրը (նրանց՝ որոնց տարեկան եկամուտը տարին 10 ոսկուց ցած է):

4) Ոչնչացնել այլեւայլ փուլերն(12), ինչպէս եւ անցագրերը: Ազատ երթեւեկութիւն բոլորի համար:

5) Զինակոչութեան ժամանակը իջեցնել կիսով (6 տարու տեղ 3 տարի): Կիսով պակսեցնել եւ քրիստոնեաների վճարելիք զինւ[որական] տուրքը:

6) Հող չունեցող գիւղացիներին յատկացնել որոշ հողաբաժիններ:

7) Պոլսի բնակչութիւնը ենթակայ դարձնել նոյն տուրքերի, որին ենթակայ են եւ գաւառները:

8) Միւսների հետ միասին տուրքի ենթարկել եւ պալատի կալւածքներն ու գիւղերը:

9) Կրծատել փաշաների ու այլ բարձր պաշտօնեաների ոռնիկները:

10) Ամէն նահանգի եկամուտի կէսը գործածել տեղական պէտքերի վերայ:

11) Թէ՛ նահանգների-գաւառների ելեւմուտքի կոնտրոլն ու գործածութիւնը, թէ ընդհանուր պետութեան բիւղմէի կազմելն ու կոնտրոլը ենթակայ դարձնել ժողովրդի կողմից ընտրւած խորհուրդների (առանց խորութեան ազգի-կրօնի)...

Դուք աւելի տեղեակ էք եւ կարող էք աւելի որոշ դնել այս հարցերը:
Հարկաւոր է պարզել հարկերի ծանրութիւնը, անարդարացի բաժանումը
եւ յիմար գործածութիւնը: Համոզիր կազմել մի քանի բաներ,— թուուցիկ-
ներ, բրոշիւրներ. օգնենք ինչով կարող ենք: Ե'ւ Վանից եւ Կարնից պահան-
ջում են այդ տեսակ գրւածքներ:

Մեր բոլոր ընկերներին ներսը (Խոր Վիրապ, Դաշտ, Հովիտ եւայն(13))
բացատրելու է այդ շարժման օգտակարութիւնը եւ յորդորելու ամէն կերպ
համերաշխ լինեն ու աջակցեն դրան:

* * *

Հանգոյցին յիշեցրու իմ ուզած նիւթերը (լրագրական) ոռոգման մասին:
Երեւի գուրս է եկած անցեալ տարւայ Եգիպտոսին վերաբերեալ rapport-ը
ֆրանսերէն. ուղարկիր ինդրեմ մի օրինակ:

Հարախ[անեան վարդապետ]ին(14) թերթը կ'ուղարկւի (եթէ չփակւի)...

Բարեւներ բոլոր ծանօթներին, տիկնոջ:

Բժ. Արծրունին բարեւում է. ցաւում է որ Պարսկ[աստան] գնալ չես հա-
մաձայնւել:

Դպրոց[ական] առողջապահութեան գիրքդ աշխատիր ծախել տալ կենտր.
գրավաճառանոցի եւ գուտենբերգի միջոցաւ:

Իմ բարեւները բժ. Ջեւադին:

ՍՄ. ՕՀ[ԱՆԵԱՆ]

- 1.- Տոքք. Կ. Փաշայեան, Աղեքսանդրիա:
- 2.- Պէյորտի. Խոսքը ներկայի Ամերիկեան համալսարանին մասին է:
- 3.- Աստանայից: Նախապէս յիշուած Թարսուսը Կիլիկիոյ Տարսոն քաղաքն է:
- 4.- Հովհանը՝ Այնքան է, Սահմանաքերդը՝ Մարաշ:
- 5.- Վիշապը՝ Կ. Պոլիսն է:
- 6.- Նիկոլ Աղբալեան:
- 7.- Ֆրանսերէն. հոս կը նշանակէ բաժնետոմսերը հնչուն գումարի վերածել:
- 8.- Խոսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. շորբորդ Ընդհ. ժողովին, որ փաստորէն գումարունցա 1907 թ. Փետրուարին:
- 9.- Հալէսի շրջանը:
- 10.- Իմա՝ հալէպիներու:
- 11.- Խոսքը Դաշնակցութեան Խորհուրդին մասին է: Այս վերջինը կը բաղկանար երկու թիւրուներու, 4 Պատասխանատու Կ. կոմիտէութեանց, Ցուցական եւ Կովկ. ինքնապաշտպանութեան մարմիններէն մէկական ներկայացուցիչներէն. Խորհուրդը Ընդհ. ժողովներու միջև ինկող ժամանակաշրջանին՝ պարբերաբար գումարունով կու տար կարեւորագոյն որոշումներ:
- 12.- Դրոշմանիշները:
- 13.- Յաջորդաբար՝ Ատանա, Հալէպ, Այնքապ:
- 14.- Ներսէս վարդապետ Խարախանեան – նախսկին Առաջնորդ Մշոյ թեմին եւ վանահայր Ս. Կարապետի վանքին. 1892-էն ի վեր բրբական կառավարութեան կողմէ աքտուած էր ան Երուսաղէմ:

Յարգելի թափառիկ(1),

Կարդացի 9 Մայիսի գրածղ Պարսկաստանը գնալուդ մասին։ Տղաների հետ դեռ չեմ խորհրդակցել. վախենամ որ Սարգսին կամ մի այլին շարժելը այլքան էլ դիւրին չը լինի։ Աշխատելու է ներսի համար կազմել մի օժանդակ մարմին, եթէ ոչ այլտեղ, գոնէ Գահիրէ։

Վստահ եմ, եթէ մի շաբաթ Հանգոյցի(2) հետ միասին աշխատէք Գահիրէ-ում դա կը յաջողուի, կամ վերջապէս թող ծրդ, 4րդին հրաւիրեն իրենք՝ Եփր[եմեան]ը, Աստ[ուրեան]ը։ Հաշիւները նոյնպէս տալու է նրանց, արժեթըլդ-թերը պահ տալով Շալ[ճեան]ի կամ Աստ[ուրեան]ի միջոցաւ (եթէ մարմինը չը կազմւի հարկաւ) եւ դնելով Արեւմ. բիւրոյի տրամադրութեան տակ։ Դըրութիւնը հիմա գուցէ քիչ փոխւած լինի եւ Տիրանը կամ միւսները համաձայնւեն մարմնի մէջ մտնել…

Դա ամենանպատակայարմար ճանապարհն է։

Ի՞նչ արիք Սիմֆերա[պոլ]ի գումարները. իրենց սիմֆերապոլցոց լուր տւի՞ք արդեօք գործադրութեան մասին։ Լաւ էր կարծեմ այդ գումարը դնել Դաշտի ու Ռոպի(3) մարմինների տրամադրութեան տակ քաղաք[ական] բանտարկեալներին օգնելու համար։ Եթէ այստեղ տեսան որ գումարները գործ են դրւում նպատակայարմար կերպով, կարելի էր նոր օժանդակութիւն ստանալ։

Ապշում եւ զարմանում եմ որ Մարթինի(4) օժանդակութեան հարցը մինչեւ օրս ենթակայ է ձգձգման։ Միթէ⁵ ժամանակին Հովտից(5) չեն յանձնած իրեն 10-15 ոսկի. ինչ էր ասում Յակովը։ Յամենայն դէպս, եթէ Ամերիկայից օգնութիւն են ուղարկում իրեն, այդ օգնութիւնը չուտով հասցնելու էր։ Փառք Աստուծոյ դա երեւի հարիւրաւոր ոսկիներ չի լինելու։ Մի նայիք սրա նրա ասածներին եւ առանց ժամանակ կորսնցնելու հասցրէք Մարթինին իրեն ուղարկւած գումարը։ Նա հիմա կարծեմ բաւական խրատւած կը լինի եւ պարապ ծախսեր չի անել։

Յակովից ամենակարեւորը՝ հաշիւները չեկան եւ չեկան...։ Ինքը Յակովը մի բան արդեօք այդտեղ սորվեց թէ չէ։ Խորհուրդը բաժանեց երկու մասի. Լեռն[ավայր]ի, Վիշապի(6) խնդիրները քննւելու են քիչ յետոյ։ Մեծ Հայաստ[անի] նկատմամբ վերջացրւեց. որոշեց մի 25 հազ[ար] ֆր.ի օգնու-

թիւն Տարօնի, Ս[ասունի] ազգաբնակութեան:

Շատ ու շատ բարեւներով, ձեռ
ՍՄԲ. ՕՀ[ԱՆԵԱՆ]

Ի՞նչ արիք Զեւադի հետ, բան տպելու էք թէ չէ:

- 1.- Տոք. Կ. Փաշայեան, Աղեքսանդրիա:
- 2.- Նիկոլ Աղբալեանի:
- 3.- Հալէպի եւ Թէյրութի:
- 4.- Սարքին Սուրատեան:
- 5.- Հովհան - ծածկանուն Կիլիկիոյ Այնքապ քաղաքի:
- 6.- Լեռնավայրը՝ Կիլիկիան է, Վիշապը՝ Կ. Պոլիս:

66

Փաստ. 16-47

30 -V - [19]06, Զորեքշաբթի

Սիրելի Հանգոյց(1),

Առած եմ V-11 եւ 25 ինձ գրածներող: Թափառիկին(2) արդէն գրած էի որ առանձին յոյս չունեմ Սարգսի այդտեղ գալու մասին: Յամենայն դէպս Ժը-նեւում մի բան կ'անեն եթէ հնարաւոր է: Յոյս չունեմ եւ ներսի գործերը չը կաղացնելու համար. միակ նպատայարմար միջոցը ինձ թւում է նա, որի մասին արդէն աշխատում էինք, տեղումդ (Գահիրէ) կազմել, կամ նշանակել մի քանի հոգի որոնք կը տանեն ներսի հետ ունեցած անմիջական յարաբերութիւնները, կը հետեւեն հաշիւներին եւ այլն...

Դա դժւար չէ մանաւանդ եւ այն պատճառաւ որ այդտեղ հասած Գուրգէ-նը, Գահիրէի Բարան (որ Հովսից(3) փախել է) կարող էին նոյնպէս մասնակ-ցել եւ տեղեակ պահել ներսի մանրամասնութիւններին:

Համոզւած եմ եթէ մի քանի օր Գահիրէ աշխատէք այդ ուղղութեամբ կա-րելի է մի բան անել:

Աշխատէք Զաւադ բէյին(4) արագացնէ իր թռուցիկները-դիմումները: Ամառայ արձակուրդները մօտենում են. Ծոցի(5) աշակերտներից շատերը կը մնան Լիբանանում, ուր շատ յարմարութիւններ կան կանոնաւոր պա-րապմունքներ տանելու համար: Կարծեմ վատ չէր լինի եթէ ձեռք դցէիր մի

անցագիր – եթէ չի կարելի հային գնալ ամառանոց, հրէական անցագիր (որ շատ դիւրին է) – եւ ամառը այնտեղ մնայիր, համ կը պարապէիր տղաների հետ, համ ֆրանսերէն կը սորվէիր (դասեր վերցնելով), համ կը հանգստանայիր:

Այդ մասին մտածիր. խորհէք եւ եթէ համամիտ էք համաձայնեցէք Բիւրօ]-ի հետ...

Եթէ Ծոցի տղաները 2-3 տեղ լինեն համախմբւած, զբաղմունքները կարելի է բաւականին կանոնաւորել...

Մարթինին(6) շատ օգնելու է այդտեղից որպէսզի նա էլ գոնէ մնայ:

Այստեղ ամէն օր սպանութիւն, թալան, կողոպուտ է. ամէն ինչի ընտելացել ենք, ջղերնիս բժացել:

Վերադառնալդ ոչ մի վտանգ կամ դժւարութիւն չի ներկայացնում: Օրը 20 մարդ բանտարկում են, 20-ը ազատում:

Շունը տիրոջը չի ճանաչում:

**Բարեւներով
ՍՄԲԱՏ**

1.- Նիկոլ Աղբալեան, որ իբրև գործիչ կը գտնուեր Եզիպտոս:

2.- Տոք. Կ. Փաշայեանին:

3.- Այնթապից:

4.- Եզիպտոս հաստատուած թուրք ազատամիտ մտաւորական եւ քաղաքական գործիչ:

5.- Պէյրութի:

6.- Մարթին Սուրատեան, Կիլիկիոյ գործիչներէն:

Փաստ. 16-51

16/29 -V- 1906, Թիֆլիս

Սիրելի Միքայէլ(1),

Երէկ ստացայ քո 16 Մայիսի գրած նամակը. ժամանակին առած էի եւ առաջինը, ինչպէս եւ 1905-ի առուaire-ը եւ միւս գրքոյկը: Ռուսումն ասում է որ իմ երկու կապոցները (իրերով եւ գրքերով միասին կապած) գտնւում են մեր տան Յրդ յարկի այն փոքրիկ սենեակում որը կից է մեր պահեստին եւ որը մտնում են սանդուղքը բարձրանալուն պէս. կարծեմ ՏՕ (Հարաւ արեւել. անկիւնն է լինելու): Կապոցների մէջ կան խառը խուռը իրեր՝ հողերի, քարերի կարոներից ու ձմեռւայ պայտոյից սկսած մինչեւ պատկերներ, գրքեր, ձեռագրեր ու մանր ծոցատեսրեր: Վերջիններս գրքերի հետ միասին հեռանալիս ես փաթթած էի լրագիրներում եւ առանձին առանձին կապած: Ինձ պէտք են մանաւանդ ձեռագիրն ու գրքերը: Ձեռագրերի մի քանի տեսրակներ (Հալէպ – Խոկենտերունի շրջանին վերաբերեալ) ֆրանսերէն-ռուսական գրւած, ուղարկւած էին լուսանկարչական պլակների հետ միեւնոյն արկղում դրւած: Մի 10-20 կտոր գիրք է լինելու. ոչ միայն stat. agri. de la France-ը(2) իր բաժիններով այլ մի քանի ուրիշ կարեւոր գրքեր տնտեսական-գիւղատնտեսական բովանդակութեամբ... Կապոցները եթէ բանաք, կը հասկանաք: Ռուսում ասելով Գալֆան(3) էլ տեղը գիտենալու է: Ես գրած էի արդէն որ եթէ պլակներ ուղարկելը դժւար է, կարելի էր ամէն մէկից տպագրել տալ մի լուսանկարի[չի] մօտ եւ նկարները ուղարկել... նորից հարց ես տալիս...

Հանգոյցի(4) Երուսաղէմ գնալը օգտակար էր գործի համար՝ տեղում մի մարմին առաջ բերելու տեսակէտից. յոյս կար որ Ծոց(5) էլ կարող էր մտնել եւ տղաների հետ քիչ մնալ: Վերջապէս, սխալ էք կարծում որ Եգիպտոսում նա աւելի օգտակար է քան թէ կարող էր լինել Երուսաղէմում...

Փաշայեանը գնում է եւ իր տեղ մարդ է ուզում: Շատ յիմար դրութիւն է իսկապէս. ամէն յիմար բանի համար յատուկ մարդ է ունենալու... Ժամանակին ուզում էի լծել Եփրեմեանին, Աստուրեանին. Փաշայեանի ասելով 2-րդը չէզոքացած է: Կարծեմ ամէնէն լաւը մի օժանդակ մարմնի կազմելն է Գահիրէ..., եթէ հարկաւ այդտեղից ոչ մէկը չի կարող Եգ. հաստատել...

Զերոնց տեսայ. մայրիկը քիչ հիւանդ է. հայհոյում է որ դու իրան մոռացել ես. Յովհաննէսն էլ երեւում [է] մերոնցից դժգոհ է. պատճառը կարծեմ զինորական դրութեան առաջ բերած չարիքներն են որոնց դէմ կուելը այնքան էլ դիւրին չէ:

Օր չի անցնում որ այստեղ թալան, կողոպուտ, սպանութիւն չը լինի. մուլթ տարրերը գլուխ են բարձրացրել:

Տեղական վարչութիւնն էլ լռելօրէն խրախուսում է օրէցօր զարդացող անարխիան: Միակ միջոցը չարիքի առաջն առնելու համար ուժեղ կուսակցութիւնների համերաշխութիւնն է. դրա վերայ էլ դժւար է յոյս դնել: Սոցդեմ.իան շատ նեղ տեսակէտ ունի. կրթւած գեկավարները պակասում են իրեն:

1½ ամիս առաջ ֆնդկլեանին (Berthollet, 20) ուղարկած էի 30 ֆրանք Reclus-ի L'Homme et la Nature սպազրւող գրքին բաժանորդ գրելու համար ինձ:

Զեմ կարծում որ դրամը ստացած չը լինի: Բայց գիրքը չը կայ ու չը կայ:

Միմ. Յակոբեանին, Մատինեանին կամ միւսներին ասս, եթէ ամառը ազատ ժամանակ ունենան եւ եթէ հետաքրքրում են տնտեսական հարցերով, թող աշխատեն պարզել արդեօ՞ք կանտոնում, օրինակ, ժամանակի ընթացքում առաջ է գնում հողերի եւ տարածութեան կենտրոնանալը քիչ ձեռքերում, թէ ընդհակառակը... Լօգան բաւականին տեղեկութիւններ կարելի է դանել դրա մասին: հետաքրքիր հարց է դա. արժէ աշխատել...

Գրած էի իրեն եւ մի առանձին նամակ: Ինչով բացատրել նրա լրութիւնը եւ գրքի չստանալը: Ապագայում ուզած գրքերը (Ժօրէսի Hist. Socialiste-ը դեռ չես ուղարկել կարծեմ): Աւելի լաւ է կարծեմ Մարսէյլ-Բաթումի վրայով ճանապարհ գցես...

Ուուզվելտի(6) դիմումը գուցէ անէ ապագայ հոգաբարձական խորհրդակցութիւնը...

Գաւառից եկած լուրերը կարդալիս մոռանալու չէ որ չափազանցութիւնները առհասարակ անպակաս են:

Քո մասին քիչ յետոյ. բարեւներս տղաներին:

Շնորհակալութիւն «Մուստին»[?] եւ իր հետի միւս ինձ յիշողներին:

Քո ՄիՄ.

1.- Միր. Վարանդեան:

2.- Statistique agricole de la France – Ֆրանսայի գիտատնտեսական վիճակագրութիւն:

3.- Յար. Գալֆայեան, նախապէս գործիշ Կիլիկիա եւ Եզիզոս, ապա Ժընեվի մեջ կը վարէր «Կրօշակ»ի եւ Արեւմտ. բիւրյի քարտուղարութիւնը:

4.- Նիկոլ Ալբալեանը:

5.- Պէյրուի:

6.- Միացեալ Նահանգներու նախագահի:

Զահէլ տղաներին, օրիորդներին խորհուրդ տուր հետեւեն մանկավարժութեան այլեւայլ ճիւղերին. հիմա դա մեզ շատ պէտք է:

Սիրելի Միքայէլ(1),

Գրած էի, որ գալու-չը գալու մասին կը գրեմ քիչ յետոյ: Խորհուրդը յետաձգւեց: յամենայն դէպս մենք որոշեցինք առաջարկել ուժեղացնել տեղիդ կազմը: Այդ մասին կը դիմւի տեղդ եւ կարծիք կը հարցւի: Զուր ես ծերացած համարում քեզ: ինձ այնպէս թւում է որ ամենարդիւնաւէտ ասպարէզը մանկավարժութիւն է եւ արժէ որպէս զի դրա համար դու պատրաստւես: Յուսամ եւ օգնութիւնը չի պակսի... Առանց ժամանակ կորսնցնելու աշխատիր այդ ուղղութեամբ... Հանգոյցին(2) իմ շատ ու շատ բարեւները թող ներէ որ առանձին չեմ գրում: Պ. Թափառիկի(3) վարմունքը ինձ ապշեցրեց... ծախսերը կատարւել են մինչեւ այս տարւայ Յունտարը, այսինքն երբ ես ներսն էի, եւ երբ իմ առաջարկութեամբ նրա հաշիւները ու մօտ եղած դրամները քննութեան էր ենթարկած Հանըմեանը, բաւարար գտած եւ Արեւմտ. բ[իւրօ]-ին էլ լուր տւած... Ուստի Բիւրոյի նկատողութիւնը որ դրա մէջ մեղաւոր եմ եւ ես՝ քանի որ դրամները թողի Եգիպտոս, անհիմն է... Թափ[առիկ]ը չի երեւացել այստեղ. երեւի չի էլ երեւայ: Հանգոյցի նամակը առնելուն պէս հեռագրեցի իրեն որ «չհեռանայ առանց դրամները յանձնելու»...

Դրամական գեղծումները մեզ համար ցաւ են դառել, կատարեալ պատուհաս: Ժողովրդական առածը որ «քամու բերածն էլ քամին կը տանէ» այնքան էլ անհիմն չէ:

Վահապը(4) տեղեկութիւններ է ուզում Շատիկեանի մասին որը ինտրիգ-ներ է լարում: Դեռ Փետրւարին գրած էի Օդեսայից Արեւմտ. Բ-ին որ նրա վերաբերմամբ իմ անցեալ տարւայ գրած բացատրութիւնը (VI թէ VII-ին Ծոցից(5) գրւած) պատճէնը ուղարկելու է Ամերիկա. նորից յիշեցնում եմ:

Ֆնդկլեանից ես ինդրած էի Reclus-ի L'homme et la Terre-ը սկզբից, մի կապոցով. նա սկսել է ուղարկել 63-րդ տետրակից. ինչ միտք ունի դա: Թող դադարի տետրակ տետրակ ուղարկելուց, այլ հասցնէ ինձ սկիզբը I-62 տետրակները ապահովագրւած: մնացածի համար դուրս գալիք տետրակների համար դրամը յետոյ կ'ուղարկեմ:

Իմացայ որ ինչ որ բան ես ուղարկել իմ թղթերից եւ ճանապարհին կորել են:

Աստւած սիրես, ազատիր, գտիր: ինձ համար այդ ձեռագիրները շատ թանգ են: ինչու ես այդչափ անհոգ վերաբերւել, յարմար մարդու չես յանձնել...

Երեւան էի, տեսայ Օհանէսին եւ միւս եղբօրդ: Օհ-ը ուզում է աշունքը

Համալսարան գնայ... լաւ էր... ծանօթ, բարեկամ տղաներին շատ բարեւ-ներս:

Քո ՍՄԲ.

- 1.- Սիր. Վարանդեան, «Իրօշակ»ի խմբագիր:
- 2.- Նիկոլ Աղբալեանին, որ այդ օրերուն ժըմեն կը գտնուեր:
- 3.- Տոք. Կարապետ Փաշայեան:
- 4.- Ա. Վոամեան:
- 5.- Պէյրուրից:

69

Փաստ. 16-54

23 - VIII - 1906, Շաբաթ/Կիրակի

Սիրելի Համօ(1),

Եգիպտոսից եկած Արշակ Սըվաճեանը եկած է մի երկու ճիւղ սորվելու համար:

Առայժմս կարծես լաւ է նրան Գանձակ ուղարկել, տարով հարկ եղած յանձնարարութիւնը: Յետոյ կը տեսնենք, գուցէ աւելի լայն պատրաստութիւնը օգտակար լինի:

Աղբալ[եան]ի գրելով Սըվաճեանը իր ծախքով է ապրելու:

Այստեղից հեռանալիս ուղում էի խօսել՝ արդեօ՞ք լաւ չէր լինի որպէսզի Յովնանին կամ Յովսէփին(2) կանչէինք Թիֆլիս... Երբ հաւաքւիք, խօսիր այդ մասին...

Կարեւոր բան լինի, ինձ գրիր ուղղակի Սանահին կայ[արան] (Կարսի երկ[աթուղիի] զիծ)(3):

Այս նամակի միւս կէսը թող Սըվաճեանը յանձնէ Գանձակում արհեստաւոր Կարոյին:

Բարեւներս
Քո ՍիՄ.

Բժ. Փաշայեանը եթէ դիմէ՝ շատ պաղ է վարւելու հետը: Նրա հաշիւները անընդունելի են: Լաւ է բացակայ էի եւ իրեն չը տեսայ:... Աւելի լաւ է մնացած գումարի համար մուրհակ վերցնել...

Ժամանակին, երբ Աղբալ[եան]ից լուր առի որ մեր գումարներից ինչ որ տպարանի ծախսն է արել, հեռագրեցի որ «չհեռանայ մինչեւ գումարներ յանձնելլ»: Տպարանը թէել են տղերքը, բայց էլի Փաշ[այեան]ի վերայ շատ պարտք է մնում:

Այդ «աֆէրան» Աղբ[ալեան]ին յայտնւել է միայն վերջի օրը... մինչեւ այդ Փաշը ոչ ոքի բան չէր ասած:

- 1.- Համօ Օհանջանեան:
- 2.- Յովնանը՝ Յոնան Դաւթեանն է. Յովսէփի թժ. Յովսէփի Տէր Դաւթեանն է, անդամ՝ Արևելեան քիւրոյի:
- 3.- Բնագրին մէջ ոուսատառ:

Սիրելի Միքայէլ,

Գնացած էի մի 15 օրով մի այլ տեղ եւ անկարող եղայ ժամանակին պատասխանել վերջի գրած նամակին:

Նամակը էլ քովս չէ որպէսզի կարողանամ կէտ առ կէտ պատասխանել: Ընդհանուր մասը, քո դժգոհութիւնները՝ թէ ինչո՞ւ այսինչ այնինչ անձնաւորութիւններ խօսում են կազմակ[երպութեան] անունից, ես լաւ չեմ ըմբռնում — միթէ ամէն մի անհատ դ[աշնակցակա]ն իրաւունք չունի՞ իր այդ կարծիքը յայտնելու եւ ենթադրելու որ իր մտքերը համապատասխանում են կազմակ[երպութեան] մտքերին: Աւելի եւս այդ կարող են անել նրանք՝ ում յանձնւած է թերթի ղեկավարութիւնը: Վերջիններս էլ անում են դա այնպէս, ինչպէս իրանք կարող են: Յամենայն դէպս նամակը կը կարդամ ընկերների շրջանում:

Գալով ասածներիդ էութեան, կարծեմ դու լաւ չես ըմբռնում այն կացութիւնը որի մէջ մենք գտնւում ենք: Ռուսաստանը այս երկու տարում 20-30 տարւայ քաղաքական հասունութիւն է առել. բոլորը մի քանի քայլ են արել դէպի ձախ:

Եթէ 1890-92-ին մենք դնում էինք մեր ծրագիրը սոցիալիստական հիմքերի վերայ (գուցէ մի քիչ քողարկւած ձեւով), հապա ինչպէս վարւելու էր հիմա, երբ պահանջւում է որոշութիւն եւ հոտառութիւն: Բոլոր երիտասարդ ու կենսունակ ոյժերը դժգոհ են նոյնիսկ մեր այդ անորոշութիւնից եւ սպասում են բաժանւել Դ[աշնակցութիւն]ից եթէ բուրժուազիան դեր կը խաղայ մեր մէջ եւ կը դնէ իր կնիքը մեր գործունէութեան վերայ:

Աւելի եւս, անհասկանալի է այն պարոնների պահանջը, որոնք առաջարկում են չը զարգացնել Կովկ[ասեան] գործունէութիւնը, սահմանափակ[ւ]ել «պաշտպանողական» տակտիկայով եւ այլն եւ այլն:

Այսպէս մտածողները խորհում են ոչ ինչպէս քաղաքագէտներ, այլ որպէս մահկանացուներ որոնք չեն հասկանում ժամանակի ու տեղի պահանջները:

Միապետութեան պարտութիւնը Ռուսաստանում, թէ կուզ միմիայն թուրքահայկ[ական] դատի տեսակէտից, նոյն է թէ յաջողութեամբ պսակել մի երկու սասունների գործեր...

Աւելի լաւ է այժմս մի-երկու Սասունի զոհել տալ այստեղ, քան թէ ապագայում ստիպւած լինել 10-20 անգամ աւելի տալ, այն էլ ուժասպառ երկրում: Զը մասնակցել Ռուսմա ազատագրական շարժման կը նշանակէ հրա-

ժարւել մեր ազգային եւ մարդկային իրաւունքներից Կովկասում, կը նշանակէ անցնել պետութեան ու խուլիգանների շարքը ապագայում գլխատւելու հաւանականութեամբ եւ կորցնել ամբողջ քաղաքակիրթ աշխարհի դէպի հայութիւնը ունեցած յարգանքը:

Այս բոլորն ասելով, ես համամիտ չեմ որ Թուրքահայաստանի գործը թուլացնելու է: Զէ, նա գնալու է իր կարգով, մանաւանդ որ ներկայ պատրաստողական շրջանում այնտեղի գործը շատ ոյժեր չի պահանջում: Գործը երկրում կաղում է, որովհետեւ կաղում է գաղափարը, չը կան մարդիկ, ամէն ինչ հիմնւած է վարձկանութեան վերայ...: Ոչ գոռով, ոչ էլ փողով չի կարել գաղափարական մարդ ստեղծել:

Նուշիկի պատմածից երեւի կ'իմացւի թէ ինչքան դժւարին է այստեղ թոշակ յաջողեցնելը: Ներս[իսեան] դպրոցը ունի մի գումար (60-70,000) որի տոկոսներով նա ուսուցչանոցներ էր պատրաստելու, բայց վերջերս ոչինչ չէ արած: Աշխատելու է այնտեղ յաջողեցնել: Եթէ գալու ես, միասին կ'աշխատենք: Եթէ կ'ուշանաս կազմիր մի խնդիրք եւ ուղարկիր հոգաբարձութեան: Ես էլ հարկաւ կը հետեւեմ:

Այսօր միայն ստացայ 6 տուփ լուսանկարներս մի քանի գրքերի հետ միասին... Աւա՛ղ ձեռագիր տեսրակներս (ներսի նկատողութիւնները ֆրանսերէն եւ ռուսերէն գրած) մէջը չը դտայ: Բերողի տեղն էլ չը գիտեմ: Արդեօք այդ տեսրակները ուղարկած ես թէ չէ: Դա իմ ունեցածի ամենաթանկագին մասն էր:

Քռ ՍՄԲԱՏ

Կովկասէն, հաւանաբար Թիֆլիսէն գրուած է Նիկոլ Աղբալեանին, որ կը գտնուիք Եզիստոս: Նիւքը կը վերաբերի Կիլիկիոյ հայկական գիտերու տնտեսական կացութեան մասին Զաւարեանի ձեռնարկած տեղեկահաւաքի աշխատանքին: Անթուակիր այս նամակի գրութեան ժամանակը պէտք է տեղադրել 1906 թ. Վերջին ամիսներուն:

Սիրելի Նիկոլ,

Խնդրեմ ազատ ժամանակդ անցնես զէյթունցու կամ Բարդողիմէոս վարդապետի քով եւ լրացնես հետեւեալ ինձ պակսած տեղեկութիւնները,—

I Ինչքան է Ֆռնուզ գիւղի (100 տան) եւ Զէյթունի տուրքերը հիմա ամբողջը՝ այսինքն՝

աշար

անասունների

զինուորական

թեմերու [?]

հողային եւ այլն:

Ինչքա՞ն են եղած այդ տուրքերը[?] 94-95ին:

Ինչպէ՞ս են բաժանւում այդ տուրքերը միմեանց մէջ, կա՞յ արդեօք օգնութիւն համայնքի կողմէ չքաւորներին եւ այլն:

II Կազմել մի միջակ, իրենց լաւ ծանօթ ընտանիքի (աւելի լաւ է երեք ընտանիքի (աղքատ, միջակ, ունեւոր) մանրամասն բիւղիք, այսինքն նշանակել ընտանիքի ունեցած չունեցածը իր արժէքով:

ա.- Ունեցած չունեցածը մէկիկ մէկիկ մանրամասնօրէն իրենց արժէքով.

ընտանիքի անդամները մէկ մէկ, անուններ, հասակը, արհեստը:

Տուն եւ այլ շինութիւններ, - արժէք

Հողեր, այգիներ (տարածքի արժէք)

Անասուններ ...

Գործիքներ (երկրագործական եւ այլ, տան պիտոյքներ, կահկարասիք

Շորեղէն

Անկողին

Զէնք

Զարդ

բ.՝ Տարւայ եկամուտ հասոյթը, քանակը եւ արժէքը.
ցանքը լին քանի է բերում:
Հացահատիկներէ, բանջարանոցներէ, այգիներից, անասուններից (միս,
իւղ, կաթ, պանիր)
Դրսի աշխատանքէ (արհեստէ, օրավարձէ)
Տնայագործիքներէ – դրամի եկամուտ:

գ.՝ Տարւայ ծախքը (թէ իր աշխատանքի, թէ դրսէն գնւած) քանակը եւ
արժէքը
Հացեղէն (տեսակ, տեսակները)
Միս, պանիր, մածուն, կաթ
Կանաչեղէն, մրգեղէն
Խմիչքներ, կաֆէ, չաքար
Նաւթ, սապոն, վառելիք
Գործի համար, զէնքի, զարդի
Տուրք. կրօնական պէտքերի, դպրոց:

Մի խօսքով մանրամասն նկարագրութիւն ամբողջ ընտանիքի ունեցած
չունեցածի, տարւայ ստացւածի եւ տարւայ կերած եւ ծախսածի:

Ներփակ հաշիւը նայէք, ուղարկէք Գահիրէ նայելու եւ ձեր նկատողու-
թիւններով զրկէք Բիւրոյին: Զը մոռանաք ուղարկել եւ միւս հաշիւները (Տի-
րանի, Թափառիկի եւայլն):

*
* *

Թափառիկի տեղական հաշւի մէջ կար «Դրօշակի» 80 համարի ծախս եր-
կիր զրկելու: Բժ.ի հետ բացատրէք դա, քանի որ երկիր գնում էր 10-15 հա-
մար եւ երկրի համարները ձրի է: Նախ քան ուղարկելը այդ սիսալը ուղղելու
է:

Բարեւներով, Քո ԱՄԲ.

III-ով տանելի է, միայն լաւ է տակը գոցելու համար մի փափուկ բան ու-
նենալ...

Մշակները սրա հետ միասին ուղարկում եմ ձեզ. արժէ ներս ուղարկել:

Զաւարեանի այս գրութիւնը ուղղուած պէտք է ըլլայ Կովկասեան մարմիններէն մէկուն:

31 - I - [19]07, Թիֆլիս

Սիրելի ընկերներ,

Անցած ընտրութիւնները տեղումդ, ինչպէս եւ ընդհանուր մի քանի խոռոր հանգամանքներ ստիպում են ինձ գրել այս երկտողը:

Ինչպէս արդէն խօսած էի առանձին առանձին մի քանիսներիդ հետ, տեղումդ ծագող տնտեսական անարխիայի առաջն առնելու, ինչպէս եւ բաւարարութիւն տալու համար բանւորական խաւերի վոփոխուող պահանջներին, ըստ իս ամէնից նպատակայարմարն է մասնակից դարձնել բանւորներին զուտ արդիւնքի մէջ (ըստ իրենց աշխատանք-կապիտալի, հող-կապիտալի եւ արդիւնաբերական-կապիտալի համաչափ քանակի), գործարանի վարչութիւնը եւս կազմելով այդ երեք կարգի կապիտալների ներկայացուցիչներից: Այլպիսով՝ մենք իրականացրած կը լինենք սոցիալիզմը կիսով չափով (որանից աւել անել Ու[ուսաստան]ում անկարելի է), եւ միւս կողմից արդիւնաբերութիւնը կը գցէինք մի հաստատուն հոսանքի մէջ:

Եթէ այդ հարցի քննութիւնը դնենք մեր բանւորական խմբերի առաջ, կարծեմ կարելի է անցկացնել եւ կամաց-կամաց իրականացնել: Դրանով տւած կը լինենք նաև մի նոր լոգունդ բանւորական հարցի լուծման համար, մի լոգունդ, որին ըստ իս ժամանակի ընթացքում ստիպւած կը լինեն յարել եւ միւս բան[ւորական] խաւերը: Իսկ եթէ չը վարւենք այդպէս, այլ հետեւնք Ս[ոցիալ] Դ[եմոկրատ]ների յետեւից, Ս. Դ. տակտիկային, իբրեւ փոքրամասնութիւն մենք ստիպւած կը լինենք դնալ միշտ Ս. Դ.ների յետեւից եւ վերջի վերջը ասպարէզը նրանց թողնել:

Այլ հետեւանք կը ստացւի իմ առաջարկած տակտիկայից. բուն բանւորական խաւերը շահագրգուսած լինելով աշխատանքի մէջ, կամաց կամաց դուրս կը գան այդ կեղծ ս[ոցիալիստ]ների ազդեցութիւնից եւ կը հպատակւեն նրանց միայն այն դէպքերում, երբ նրանք կը համոզւեն որ այդպէս էլ հարկաւոր է...

Իսկ քանի որ քաղաքական ընդհանուր հարցերի վերաբերմամբ, մեր ծրագիրը աւելի մօտ է հայ բանւորական խաւերի սրտին, ազատւելով Ս. Դ.ների գերիշխանութիւնից տնտեսական պայքարի ժամանակ (ուր Ս. Դ.ները աւելի ուժեղ են), հայ բանւորական խաւերը կը մնան կապւած մեզ հետ...

Խնդրեմ մի ազատ ժամանակ այս հարցի մասին լուրջ կերպով խորհրդակցէք:

Բարեւներով ձեր՝
ՍՄԲ. ՕՀ[ԱՆԵԱՆ]

Սիրելի Միքայէլ,

Քո Յունար 13 եւ 28-ին գրածները ստացած եմ:

Զեռքս չի անցել հոգաբարձութեան ուղղածդդ խնդրագիրը. թէ եւ դու վերջի նամակումդ ուզում ես յետ վերցնել այդ առաջարկութիւնը, բայց սխալ-ւում ես: Այսօր անկուսակցական մարդ չը կայ աշխարհումս եւ այդ տեսակի պատճառաբանութիւններ դեր չեն խաղալու: Վախենում եմ միայն մի գուցէ տնտեսական տագնապի պատճառով ուսուցչացուների հարցը յետաձգւի... Յամենայն դէպս ես ի նկատի կ'ունենամ եւ կ'աշխատեմ մի ճարգանել:

Անցած օրը Տէր Դաւթեանի հետ ուղարկեցի Օր. Օնորինի ուզած շալը, 1 արշին է. կէսը կարող էք տալ Նուշիկին: Ամբողջը արժէ կարծեմ 5 ռ[ուբ-լի] (14 ֆր.), թէ եւ յոյս ունեմ, որ եւ դուն եւ օր. Օնորինը եւ տիկին Ժիրոն այնքան բարեկամ կը գտնեեն ինձ, որ այդ հաշիւը կը թողնեն մի կողմ:

Բորեանից գրքերը ստացել եմ. դժբախտաբար ամենակարեւորը՝ ձեռագիր յիշատակարան-նկատողութիւններս չը կային: Երեւի այդտեղ են այլեւայլ խրամների [?] մէջ ընկած: Աստւած սիրես, գտիր եւ մի վստահելի մարդու միջոցաւ հասցրու ինձ:

Գրւած է Փրանս[երէն] եւ ոռւսերէն, սպիտակ թղթի վրայ սպիտակ շապկով, շապկի վրայ նշանակւած գիւղերի անունները...

Առ հասարակ լաւ կ'անէիր, եթէ բոլոր իմ գրքերը եւ թղթերը կամաց կամաց ուղարկէիր ինձ:

* * *

Քաղաքում մենք կրեցինք պարտութիւն... դա շատ լուրջ նշան է: Վտանգը ոչ միայն ձախակողմեաններից է, որոնց, չնորհիւ մեր անտակտութիւնների, մենք համարեա թէ հեռացրինք եւ որը մեր պարտութեան պատճառներից մինն էր: Վտանգը աջից է, որոնք չեն ուզում ոչինչ տեսնել, ուզում են ըրի հոսանքի դէմ դնալ եւ կազմակերպութիւնն էլ խեղդել...

Պարսկաստանից յետոյ Տաճկաստանն էլ բռնկւելու է. լուրջ նշաններ կան: Ահա մի գործ որի վերայ մենք դարձնելու ենք մեր ամբողջ ուշադրութիւնը... Դա ոռւսաց յեղափոխութեան շարունակութիւնն է... եւ կոյրերը միայն կարող են դա չը հասկանալ:

Բարեւներս ծանօթներին, քո՝
ՍՄԲ[ԱՏ] [ՕՀԱՆԵԱՆ]

Սիրելի Ստեփան(1),

Սամսոնը(2) գուցէ աւելի շուտ հասած կը լինի, քան թէ այս նամակը: Հաղորդած կը լինի անշուշտ այն քիչը որ նոր է քեզ համար: Քո ասածը ճիշտ է: Բայց ճիշտ է եւ մեր իրականութիւնը, նա որ մենք շատ քիչ ոյժեր ունենք:

Ծրագիրը(3) շուտով դուրս կը գայ եւ դուք կարող կը լինէք օգտակալու, մանաւանդ թուրքիային եւ Ռուսաստանին վերաբերեալ մասից, իսկ մինչեւ այդ կարող էք օգտակալ այս քանի օրերս ուղարկւելիքներից, որը կազմւած է Տաճկաստանի համար, եւ որի 9/10-ը օգտակար կը լինի եւ ձեր երկրի ու մեր պարսիկ բարեկամների համար:

Դա ընդհանուր ծրագիր է մօտ ապագայի համար:

Ինչ վերաբերում է օրւայ տակտիկային, հէնց այժմս անելիքներին, դա դժւար է այստեղից որոշել, եւ տեղացիքդ դրա համար աւելի ձեռնհաս կը գտնեիք...

Մեզ թւում է որ մեր ընկեր ձախակողմեաններից կազմւելու էր մի յանձնախումբ, որը մշտական յարաբերութիւն ունենար մեր բարեկամների հետ, աջակցէր նրանց ամէն կերպ եւ նոյն իսկ ապագայում միանար պաշտօնապէս:

Մեր վտանգ դա չի կարող սպառնալ, քանի որ հայ վաճառականների ճնշող մեծամասնութիւնը հաւանականօրէն չէզոք դիրք բռնէր, կամ լինէր նոյն իսկ կառավարութեան հետ...

Մեր բարեկամները կը հասկանան որ ամէն ազգի մէջ էլ կան եւ պահպանութեան համար...

Առ այժմս այսքանը:

Ուղարկում եմ մի կապոց իմ կազմած ծրագիրներից (գիւղերի ուսումնասիրութեան համար). յուսամ մի քանի ձեռնհասները կը գտնեն, որպէսզի կարողանային Ղարադաղում մի երկու գիւղ ուսումնասիրել (լաւ է մէկը հայ գիւղ լինէր, միւսը պարսիկ)...

Մնացածը տուր Սամսոնին, թող ներս ուղարկէ:

Տէր Աբրահամեանի անունով (Ալմաստ) նոյնպէս ուղարկած եմ մի կապոց – նա էլ, հարկաւ ներս կ'ուղարկէ:

Բարեւներով Քո Ս. ԶԱՀԱՐԵԱՆ

1.- Ստեփան Ստեփանեան (Բալաջան, բոն անունով՝ Յարութիւնեան Ծերուն), որ մասնակցած էր 1907-ի Հ.Յ.Դ. չորրորդ Ընդհ. ժողովին իրեւ Ասրապատականի պատգամատր:

2.- Սամսոն – Ստեփան Թաղէսսեան, պատասխանատու Ասրապատականէն դէպի Երկիր զինամբերի փոխադրութեան:

3.- Խօսքը Հ.Յ.Դ. չորրորդ Ընդհ. ժողովին մշակուած ծրագրի մասին է:

Նամակը Թիֆլիսէն է եւ պէտք է ուղղուած ըլլայ Ժընեվ՝ Արեւմտ. քիւրոյին:

5 - VIII - [19]07

Այստեղ շատ խօսւում է այն լուրջ սխալների մասին, որոնք տեղի են ունեցել Քարում(1) եւ Ղարաքիլիսայում: Առաջինի մասին կը պատմէ Ներսէսը, որ այսօր մեկնեց դէպի ձեզ. դա վերաբերում է մանրուքների(2) առեւտուրին որ շահատակութեան եւ շահագործութեան միջոց է դարձել մեր «Ընկերներից» մի քանիսների ձեռքում:

Աւելի լուրջ է երկրորդը որ կարող է բոլորովին գցել մեր պատիւն ու հմայքը: Ասում են որ Արտուշը դարձել է խաղալիք իր ազգականների ձեռքին, որոնք նրա միջոցաւ իրենց թայֆայական շահերն են առաջ մղում: Ժամանակ է եւ օգտակար է քննութիւն նշանակել այդ երկու գործերի համար էլ, մանաւանդ երկրորդի: Լաւ է որ քննութեան մէջ մասնակցեն Ոսկեհանքի եւ Մրգաստանի(3) մարմինները իրենց [ներկայացուցիչները] նշանակելով. մի քանիսը գտնուում են այդ կողմերում: Աղամալեանը, բժ. Տէր Թովմասեանը(4) (որ այստեղ է) նոյնպէս եւ կարող կը լինէին օգտակար լինել. կարելի էր խնդրել մարդ նշանակել եւ իրա՝ Քարից – քննութիւնը կը պարզէ Քարի սխալները, որը թէ բաւարարութիւն կը տայ հասարակութեան գրգռուած խղճին թէ առիթ կը լինի մաքրութեան ենթարկել Քարի մարմինը:

Վահապի(5) արած թարգմանութիւնները չուշացնէք ուղարկել ստորագրելու: Լաւ է մեկը անձամբ տանի ...

Մալխասը(6) դրամը ստացել է ...

Ափսոս Լահէում չեն իրականացրել հասարակական միտինգը, կամ մասնաւոր տեսակցութիւններ չեն ունեցած զանազան մարդոց հետ:


 ՀՀ ԿՀ Խ.
 Բարեւներով
 Զեր ՍՄԲ. ՕՀ[ԱՆԵԱՆ]

Դոստումի կինը գնա՞ց թէ չէ...

Իմ անունով թղթեր են թողնւած լինելու... խնդրեմ ուղարկէք. Զերքեղեանի կազմածի պատմէնը չը մոռանաք ուղարկել Վրէժին(7):

1.- Ալեքսանդրապոլում:

2.- Ջէնքի մասերին:

3.- Ուկեհանքը՝ Էզմիրն է, Մրգաստանը՝ Երևան:

4.- Երկուրն ալ անդամ Ուկանապատի (Պաքու) Կ. կոմիտէին:

5.- Ա. Վուանան, որ շրբորդ Ընդի. ժողովի կողմէ ընտրուած էր անդամ Արեւելեան քիւրոյին:

6.- Արտաշէս Յովսէփեան:

7.- Թաւրիզ՝ Ատրպատականի Կ. կոմիտէին:

Զաւարեանի այս գրութիւնը Թիֆլիսէն է և ուղղուած Ժընե` Արեմտ. բիւրոյին:

14 - VIII - [19]07

Ստացայ Վահապի(1) 4 VIII-ի գրածը քաղւածքի հետ միասին: Նամակները ծակորը երեւի արդէն տարած է եւ լաւ է արած: Հարցի լուծումը ինչպէս կ'երեւի կախւած է երկու աղաներից եւ այդ նամակները կարող են որոշ նշանակութիւն ունենալ: Ինձ այնպէս կ'երեւի որ Ղարիբի(2) վերջի ատեն ընկերակից Ծերուկը կարող էր որոշ քայլեր անել մեզ համակրող անհատների առաջ, որոնք կողմնակի կերպով կ'ազդէին աղայի վերայ: Ղարիբը որ գայ խորհէք այդ մասին:

Անջ[ատականների] մասին յարձակումներն ու կոփւը կը դադարւի միայն այն դէպքում, եթէ նրանք դադարեն Հայկ. Փրակցիա լինելուց(3). կոնֆերանս առաջարկելով եւ դիմումը մի մանեռվոր էր եւ ժամանակի կորուստ... Լաւ է մերձեցման նշաններ ցոյց չը տալ...

Շ[րջաբերական]ի համար պահանջների առանձին տպագրելը հարկադրում է չշտապել յառաջաբանի տպագրութեամբ, մինչեւ որ խմբագրուած չը լինի ամբողջ Ծրագիրը...

Յառաջաբանը մի ալժեբրա է որը մատչելի է միայն չնշին փոքրամասնութեան: Ընդհանուրը տպագրելիս կարելի է կարծեմ պահանջները դնել խմբագրուած եւ ուղղւած ձեւով (եւ ոչ ինչպէս Շ-ին է ներկայացւած):

Շահր[իկեան]ի դրկած գրքերը փոստով ուղարկէք ինձ:

Քարի(4) անախորժութիւնների մասին մի նամակ էի գրած. արդեօք ստացած էք...

**Բարեւներով
ՍՄԲ. ՕՀ[ԱՆԵԱՆ]**

1.- Արշակ Վռամեան:

2.- Աւետիս Ահարոննեան:

3.- Անջատականներու մեկ մասը, դժողոհ Հ.Յ.Դ. չորրորդ Ընդհ. ժողովի ընդունած ծրագրէն, դիմած էր ուսու սոցիալ յեղափոխականներուն, զիրենք ընդունելու համար իրենց կուսակցութեան մեջ իրեն հայլական ֆրակցիա:

4.- Ալեքսանդրապոլի:

7/20 - X - [19]07
Թիֆլիս

Միրելի Միքայէլ(1),

Քո երկու նամակներն էլ, որ վերաբերում էին այդտեղ մնալուդ կամ վերադառնալուդ – ժամանակին ստացել եմ: Մինչեւ հարցի որոշ գոյն ստանալը չէի ուզում պատասխանել: Այժմս յաջողւած կարող եմ համարւել որ ամիսը կարող կը լինեմ քեզ հասցնել 50-ական ո. [ութիվ]: Հնկերներից մի տասը հոգի որոշած են կատարել քո վերաբերմամբ իրենց ընկերական պարտականութիւնը եւ միջոց տալ որպէսզի դու կարողանաս գէթ մի տարի պատրաստել եւ նւիրւել քո սիրած մանկավարժական գործին: Որտե՞ղ եւ ի՞նչպէս – դա արդէն քո գործն է. աշխատելու ես միայն որպէսզի մինչեւ եկող աշուն վերջացրած լինես քո զբաղմունքները: Յուլիսի վերջերին լինելու ես այստեղ որպէսզի սրտովդ մի տեղ գտնես. դա դժւար չէ լինել[ու] քանի որ ներկայումս ուսուցիչների մեծ պահանջ կայ:

Լաւ է սակայն եթէ քեզ յաջողւի ձեռք գցել ուրէ վկայական որպէսզի կարողանաս ցուցնել որ բորիկ չես մանկավարժական ասպարէզում:

Ժամանակ շահելու համար Երեւանից քեզ հեռագրեցի որպէսզի օր առաջ տեղաւորւես ուր հարկն է: Գնալ Ամերիկա կամ Եղիպտոս շատ սխալ կը լինէր: Հերիփ է թափառել. հիմա էլ թող աւելի թարմ ոյժերը դրան նւիրւեն:

Վերջապէս մայրիկդ էլ մեղք է. անցեալ օրը Երեւանում 0հանէսը գանգատում էր, որ դու այդքան ձգձգում ես քո վերադարձը:

Բէյրութի հետ ես պահում եմ նամակագրութիւն, թէեւ շատ անկանոն կերպով:

Նրանք գանգատում են, որ չը նայած իմ մի քանի անգամ կրկնած նամակներին՝ այդտեղից ուղարկել իրենց գրքեր որոշ ուղղութեամբ, ոչնչ չեն ստացել:

Նորից շեշտում եմ այդ բանի վերայ:

Խնդրում եմ մի քանի անձանց հետ կազմէք մի քանի տասնեակ գրքերի ցանկ, մի կողմից՝ ազատագրական լայն մտքով, միւս կողմից՝ բնութեան եւ մարդկութեան զարգացման միտքը արծարծող-, գնէք այդ գրքերը եւ մաս մաս ուղարկէք իրենց: Պէտք են թէ անգլիերէն գրւածքներ թէ Փրանսերէն: (Անգլիական եւ ֆրանսական դպրոցների համար):

Եթէ դրամի խնայողութեան մասին ոեւէ խօսք լինի, գրիր այստեղ, դրամը կ'ուղարկւի:

Այդ տեսակ գրադարաններ հիմնելը լինելու է մեր նպատակներից մինը բոլոր այն տեղերում, ուր կան քիչ շատ հասակաւոր աշակերտներ: Ժամանակին դա կը տայ բաւարար արդիւնք:

Հետեւիր այս բանին խնդրեմ եւ իրականացրու, թէ չէ ստիպւած կը լինեմ գրավաճառների հետ կապւել, որ շատ աւելի սուղ կը նստի մեզ:

Ես լաւ եւ առողջ եմ. վարում եմ աւելի թափառական կեանք որը այնքան էլ դուրավի չէ եւ վատ է ազդում ջղերիս վերայ: Որոշ զբաղմունք դժբախտաբար չունեմ, թէեւ չեմ էլ աշխատած այդ ուղղութեամբ:

Բարեւներս ծանօթներին

Քո ՍիՄ[ՂՆ]

Հասցէս Ֆրէյ լինսկայա 4 (2):

Ներփակ 200 ո[ուբլի]-քեզ կը բաւի մինչեւ Յունւար: Յունւարին կ'աշխատեմ չուշացնել... Գրիր ինչպէս եւ ուր տեղաւորւեցիր:

1.- Սիրայէլ Վարանդեան, որ կ'ակնկալուեր, որ Թիֆլիս անցնի եւ Ներսիսեան վարժարանին մէջ ուսուցչական պաշտօն վարէ:

2.- Բնագրին մէջ ուսատառ:

Միրելի Միքայէլ(1),

Բաւականին ժամանակ է ինչ ստացել եմ վերջի նամակդ (թւական]ը չէիր նշանակած): Շատ գոհ եւ ուրախ եմ թէ ընտրած տեղիդ, թէ զբաղմունքներիդ առթիւ: Պարապմունքները իրենք – չափաւոր, ոյժիդ համեմատ պարապմունքները – կը կազդուրեն եւ լաւ կ'ազդեն տրամադրութեանդ վերայ: Միայն թէ չը ցրւես, կենտրոնացնես ուշադրութիւնդ մանկավարժական գիտելիքների վերայ եւ իւրացնես դա գործնականօրէն: Քննութիւն տալլը եւ վկայական առնելլը օգտակար կը լինի, անշուշտ, գուցէ եւ անհրաժեշտ ապագայ քո դիրքի համար: Առանձնապէս զբաղւիր իբագիտութեամբ, որ ցած դասարաններում մտցւած է այժմս դպրոցներում եւ ամփոփում է բնական գիտութիւնների տարերքը. "leçons de choses" է կոչում այստեղ: Մեր դըպրոցների ուսուցիչներից միայն ժընեւում սորված բնագէտներն են քիչ հմուտ դրան (Լիզան, Սաշուկը) եւ մարդ չը կայ այդ առարկաներից. Երեւանի դպրոցներում նոյն իսկ այս տարի համապատասխան ուսուցչի բացակայութեան պատճառով չէին անցնում իրագիտութիւն. անպատճառ դա անցիր եւ լաւ անցիր: Դասագիրք էլ չունենք դրանից...

Օրտանսը(2) խորհուրդ է տալիս որպէսզի մարմնամարզութիւն եւս անցնես, չատ օգտակար է մեր դպրոցների համար: Կրկնում եմ. քանի որ ժամանակը սուղ է՝ կենտրոնացրու ուշադրութիւնդ մանկավարժական առարկաների վերայ. յաճախիր թէ քաղաքի թէ հարեւան գիւղերի դպրոցները... կոնֆեսիոնալ(3) դպրոցներում կամ եկեղեցիներում ծանօթացիր ինչպէս են անցնում կրօնը, բարոյագիտութիւնը:

Նամակդ առնելուց յետոյ Երեւան չեմ եղել. եղբայրներիդ գրածներին այնքան էլ ուշադրութիւն մի դարձրու: Բացի Օհանչսից միւսները կը բնգով շատ են զբաղւած եւ կարող են եւ պարտաւոր են հոգ տանել ծնողների մասին: Ամառը կը գաս եւ մայրիկդ գոհ կը լինի...

Բէյրութում հայերէն գրքերի բաւարար գրադարան հիմնած եմ դեռ 3 տարի] առաջ եւ միշտ էլ ուղարկում եմ: Սակայն հայերէն շատ բան չը կայ: Եղած բժշկական դպրոցներում էլ (թէ անգլիական թէ ֆրանսիական) թէ եւ շատ գրքեր կան – տասնեակ հազար հատորներ – բայց ազատամիտ ուղղութեամբ եւ ոչ մի բան: Այդ բժշկանոցները կրօնական հաստատութիւններ են եւ խոյս են տալիս թէ Դարվինից, թէ Սպենսերից: Ուսանողները բոլորն էլ

կամ Փրանսերէն կամ անգլիերէն գիտեն բայց էւոլուցիոնի մասին գաղափար չունեն: Բացի այդ, ամառները արձակուրդներին գրադարանները փակւում են եւ տղաները ամբողջ Յ ամիս ազատ Լիբանանում մնում են պարապ: Իմ կարծիքով Թուրքիայի բոլոր խոշոր քաղաքներում ուր կայ երիտասարդ ուսանողութիւն, մենք ունենալու ենք եւ փոքրիկ փոքրիկ ազատամիտ գրադարաններ: Դրանք աւելի շատ բան կ'անեն, քան թէ մեր թերուս քարոզիչները:

Տղաներին հետաքրքիր քաղւածքներ կամ տպագրական (Փրանսերէն, անգլիերէն եւ գերմաներէն) նորութիւններ ուղարկէք հետեւեալ հասցէով՝ Van (Turquie) British consulat capt. B. Dichson, N. M. H. B. m.

Արժէ մի քիչ դրանով զբաղւել: Կազմեցէք մի քանի տասնեակ ազատամիտ, յեղափոխական, սոցիալիստական, անիշխանական գրքերի ցանկ Փրանսերէն եւ անգլիերէն (Բէյրութի համար) եւ կամաց կամաց ուղարկէք:

Թող տղաների միտքն ու սիրտը մի քիչ լայնանայ ու մեծանայ: Հայերէնը այստեղից կը հասցնեմ: Նոյն բանը անելու է Պոլիս, Երուսաղէմ, Իզմիր, Կեսարիա եւ այլ տեղերում: Սա օրդ անգամն է որ գրում եմ եւ յոյս ունեմ վերջինը կը լինի: Վերջերս ուզած էին եւ պայմուցիկ նիւթերին վերաբերեալ մի գործնական ձեռնարկ: Ռուբինան(4) ասեց որ մինը տեղումդ կայ. (Յովնանը գիտէ), կամ կարելի է Փարիզից բերել տալ. չը մոռանաք եւ դա:

Հիմա էլ իմ կարիքներից: Ես զբաղւած եմ մի ուսումնասիրութեամբ. ինձ պակասում են նիւթեր, թւեր: Այստեղի գրադարանը շատ աղքատ է...

1) **Խօսիր վիճակագրութեան եւ քաղաքատնտեսութեան պրոֆեսորի հետ եւ գրադարանում համոզւիր ինքդ որ ինչ գրքում կայ քիչ շատ ամփոփ տեղեկութիւններ զանազան պետութիւնների տնտեսական վիճակի մասին, մանաւանդ թուրքիայի եւ Ռուսիայի:**

Ծանօթացիր Mulhall Dictionary of Statistics 1899 եւ May Die Wirtschaft in Wergansenheit – գրքերի հետ, տես որը դրանցից աւելի լրիւ տեղեկութիւններ է պարունակում Թուրքիայի ու Ռուսիայի մասին, որտեղ կայ վիճակագրութիւն այլ եւ այլ պետութիւնների ընդհանուր հարստութեան, ընդհանուր արտադրութեան մասին եւ եթէ 50 Փրանկից սուր չեն, գրւիր եւ մինը ուղարկել տուր ուղղակի ինձ: Կարծեմ Միւլհայլը աւելի լաւ է:

2) Mulhall-ի Balancesheet of the world for ten years 1870-80 աշխատութիւնից քաղիր տեղեկութիւններ այլ եւ այլ երկիրների (չը մոռանաս Թուրքիան ու Ռուսիան) արտադրութեան արժէքի մասին անձի վերայ 1870 եւ 1880-ին...

3) Ուղարկիր ինձ ամենալաւ գրւածքը որ կայ Փրանսերէն Economie social-ի մասին. կարծեմ այդպէս է կոչում այն գիտութիւնը, որ ոսւսերէն

տնտեսական քաղաքականութեան-ի (եւ ոչ քաղաքատնտեսութեան)(5) առունն է կրում...

4) Նոյնպէս վիճակագրութեան գիրք, մանաւանդ տնտեսական վիճակագրութեան եւ ոչ ազգաբնակութեան:

5) **Բերել տուր եւ ուղարկիր ինձ Otto Hübner-ի Geographisch-Statistische Tabellen գրքոյկի 1907-ի եւ 1881 (կամ 1882) թւերի պրակները (տպագրւած է Ֆրանկֆորտում H. Keller-ի մօտ):**

Գրքերի արժէքը, գները իմանալուն պէս կ'ուղարկեմ քեզ:

Մանօթացէք, մօտեցէք տեղումդ ապրող թուրք ուսանողութեան հետ. աշխատէք գործունէութեան վերաբերմամբ համաձայնութեան գալ:

Բարեւներս Ղազարեանին, Ալիբէգեաններին:

Քո՝ ՍՄ[ԲԱՏ] ՕՀ[ԱՆԵԱՆ]

— Ներփակ ուղարկում եմ 100 ռ[ուբլի]:

— Օր եւ Տիկ. Ժիրոնին բարեւներս:

- 1.- Սիր. Վարանդեան:
- 2.- Յոնան Դաւթեանի զուիցերուի կիմը:
- 3.- Յարանուանական, կրօնական:
- 4.- Սովիա Արէշեան, ծանօթ Ռուբինա անունով:
- 5.- Բնագրին մէջ ուսաստան:

Փաստ. 18-95

Օսմանեան Թուրքիոյ մէջ Սահմանադրական իշխանութեան կազմութեան անմիջապէս նոր գրուած նամակ:

15 - VII - [19]08
ԹԻԳՐԻՄ

Արեւմտեան Բ[իւրօ]-ին,

Հնկերներ,

Երէկւայ տւած հեռագրից պարզ կը լինի ինչպէս ենք նայում մենք օրւայ հարցին, Սահմանադրութեան յայտարարութեան Թուրքիայում:

Յայտարարութիւններին առանձին նշանակութիւն չը պիտի տալ. նրանց օգտւելու է եւ էական բովանդակութիւն մտցնելու. Մեզ թւում է որ մեր տակտիկան էլ լինելու [է] խոչընդուռ չը հանդիսանալ արթնացման գործին, այլ աշխատել ամէն կերպ լայնացնել նա եւ խորացնել:

Դրա համար մասնակի առաջարկութիւններ չը պիտի անել, այլ աշխատելու է բացառիկ օրէնքներ վերացնելու միջոցաւ վերացնել եւ ազատ երթեւեկութեան արգելքները, անցագրերը, հայրենիք վերադառնալը, ազգային ժողովի գումարումը եւ այլն... Դրան, վստահում ենք, կ'աջակցեն եւ մեր բարեկամները: Բայց ամէնից կարեւորը նա է, որպէսզի ժողովներով ու խօսքի կատարեալ ազատութեան գործադրութեամբ արթնացնել քնած ամբոխը, կազմակերպել ժողովներ գաւառական ու նահանգական քաղաքներում, ուղղելով այդ ժողովների ուշադրութիւնը այն բոլոր չարիքների դէմ, որից իսկապէս տառապում է ազգաբնակութիւնը...

Ազատութիւն ստացած բանտարկեալներն ու աքսորականները պիտի հանդիսանան ազատութեան կրակը վառողներ, օսմանեան յեղ. դաշնակցութեան ծրագիրը պիտի լինի մեր բոլորին պլատֆորման: Զգտելու է յիշատակւած կէտերը մարսել տալ ղեկավար տարրերի ու ժողովրդի կողմից: Դրա համար էլ անհրաժեշտ է զանազան լեզուներով թարգմանել տալ դա, եւ ցրել, իսկ յետոյ կոմմենտարիաներ(1) աւելացնել ամէն մի կէտին... Թուրքերէն, քրտերէն (հայոց տառերով). այստեղ կը տպագրենք. հեռագրում ենք Եգիպտոս արաբերէն տպելու համար — այլ տեղ էլ տպել տւէք թուրքերէն, ալբաններէն, սերբերէն, բոլգարերէն եւ այլն...

Տեղական ինքնավարութեան ու ազգ. կուտուրական աւտոնոմիայի մասին շատ քիչ է խօսւում Օսմ. յեղ. դաշն[ակցութ]եան պահանջների մէջ... մակեդոնացիների, ալբանացիների, արաբների, հրեաների մասնակցութիւնը

գրաւական է որ դա եւս դժւար չի լինել ապահովել: Օգտւելով Նիազիի(2) յայտարարութիւնից գուցէ հէնց հիմիկւանից ոխզայականները(3) գիջեն: Առայժմս այնքան էլ շեշտելու չէ դրա վերայ. թողէք կրակը չաղանայ ընդհանուր պահանջներու հողի վերայ...

Մոմենտը շատ պատասխանատու է. այդ պատճառաւ էլ մեզ թւում է որ հէնց այժմեանից ձեզանից, Լիսի(4) մարմնից եւ Պերմանանի անդամ Նիթրայից(5) կազմելու է մի մարմին, որը եւ խօսելու ու բանակցելու է մեր կողմից: Խաչատուրին(6) հեռագրւած է այդ մասին: Նիթրան շուտով կը գայ: Չմուանաք խորհրդակցել եւ Շահնազարի(7) հետ: Բացի անմիջական օգտից նա կարող էր մեզ կապել եւ Լիսի մաքուր ազատամիտ տարրերի հետ:

Բարեւներով ձեր ՍՄԲ. ՕՀ[ԱՆԵԱՆ]

- 1.- Մեկնաբանութիւնները:
- 2.- Թուրք յեղափոխական բանակի հրամանատար:
- 3.- Ահմէտ Ոհզայի կուսակիցներ, աւելի պահպանողական եւ թուրք ազգայնական թերումով:
- 4.- Կ. Պոլսյ:
- 5.- Նիթրան՝ Յար. Շահրիկեանն է, որ Դաշնակցութեան կողմէ կ'անդամակցէր Օսմ. Թուրքիոյ ընդդիմադիր տարրերու կազմած մնայուն կոմիտէն (Պերմանան):
- 6.- Է. Ակնոնի:
- 7.- Յովի. Շահնազար, հրապարակագիր, որ տարիներ առաջ աշխատած էր մերձեցում առաջացնել Դաշնակցութեան եւ Վերակազմեալ հնչակեաններու միջեւ:

80

Փաստ. 18-100

**31 Յուլիս 1908
Թիֆլիս**

Սիրելի Յովնան,

Քանի ժամանակ է ինչ ստացած եմ Օրտանսի, Գալֆայի(1) ու քո անթւակիր նամակը. ստացած եմ նաև ուղարկւած գրքերի առաջի մասը: Շնորհակալ եմ:

Զարմանալի է նամակներ չստանալնիդ... տղերքը ասում են որ դուք էլ էք «ժղթի կտորներ» գրում: Վերջապէս, միշտ ընկերներ են գալիս գնում, պատմում ամէն ինչ, ուղարկող նամակների պատճէններն էլ բաւականին լուսաբանում են դրութիւնը:

Տեղում մեր դրութիւնը նախանձելի չէ. մեծ մասը մարմինները քայքայւած, ուժեղանալու նշաններն էլ բաւականին քիչ յուսալի: Դժւարանում եմ

դա վերագրել «ոչակցիային» ու ժամանակին: Գուցէ այս փորձերը զուր չանցնեն եւ մենք կարողանանք կանգնել աւելի ուղիղ ճանապարհի վերայ:

Փաստը սա է, որ մեր ունեցած մարմինները մեծ մասամբ անձեռնհաս են մեր առաջ դրւած բարդ հարցերին ուղղութիւն տալու...

Թուրքական սահմանադրութիւնը մի խոշոր երեւոյթ է, որին վախնամ մենք չը կարողանանք բաւականութիւն տալ:

Գաղթականների վերադարձ հարցի մի չնչին մասն է. նա կ'իրականանայ միայն այն դէպքում երբ բոլորը կը զգան որ Թուրքիան ապահով ու ազատ է... առանց դրա մասսաները չեն վերադառնալ... Առ այժմս մեր նպատակն է լինելու սահմանադրական պահանջն ու էութիւնը իւրացնել տալ ժողովը-դական մասսաներին, մշակել մի տօնուած պրոգրամ, պահանջներ, որը իրականացւելու է հէնց այսօրւանից եւ իրականացւելու է համերաշխօրէն. այլ կերպ զինուորականների գերիշխանութիւնը անուրանալի է: Վելայէթների սահմանների փոփոխութիւնն ու տեղական ինքնավարութեան ապահովութիւնը կորիզ կը դառնայ եւ շրջանային ինքնավարութեան: Փոքր ազգութիւնները եւ Եւրոպայի ազգեցութիւնը շատ մեծ են Թուրքիայում որպէսզի քրիստոնեանների դիրքը չապահովւի:

Նիթրան(2) մեկնում է քանի օրից յետոյ, գուցէ Լիսի(3) վրայով: Կարծեմ գործունէութեան կոնկրէտ պլատֆորմա մշակելու համար օգտակար լինէր բոլոր կուսակցութիւնների խորհրդաժողով հրաւիրել: Վերջինիս համաձայնութեամբ գուցէ օգտակար լինէր նոյնիսկ ապագայում մի ազատ պարլամենտ[ական] խորհրդաժողով գումարել Թուրքիայից դուրս, օրինակ Եգիպտոսում: Վերջինս կը մշակէր թէ սահմանադրութեան հիմքերը, թէ պրոպագանդ կ'անէր այն հասունացած ռեֆորմների համար որ իրականացւելու է:

Զեմ կարծում, որ թերթերն ու բոռշխրները կարողանան այն անել, ինչ որ այդպիսի մի ազատ խորհրդաժողով կ'անէր: Յամենայն դէպս, դրութիւնը այնքան պատասխանատու է որ առանձնակի քայլերը ցանկալի չեն: Ահա ինչու առաջի օրն իսկ հեռագրած էինք որ Արեւմտ. [բիւրոն], Լիսի մարմինը եւ Նիթրան իբրեւ «մնայունի» անդամ կազմելու են մի յանձնաժողով որը տանելու է այդ գործերը...

Իմ ազգակից բժիշկը այստեղ է. այնքան էլ ուրախ տպաւորութեամբ չի վերադարձած...

Ասում են Կոմսը լեռներից շուտով Շամ(4) կը վերադառնայ...

1.- Օրսանը՝ Յոնան Դաւթեանի գուիցերուիի կիսն է. Գալֆան՝ Յար. Գալֆայեանը:

2.- Յար. Շահրիկեանը:

3.- Կ. Պոլսոյ:

4.- Կոմսը՝ Վահան Փափազեանն է, իսկ Շամը՝ Վան: Նախքան սահմանադրութեան յաղթանակը, ինչպէս բազմարի յեղափոխական գործիչներ, Կոմսը են փախստական վիճակի մէջ էր Վասպուրականի լեռնային շրջաններուն մէջ:

Օսմանեան Սահմանադրութեան հոչակումն ետք շարք նը դաշնակցական դեկավար դէմքեր, ինչպէս Է. Ակնունի, Ս. Զաւարեան եւ շատ ուրիշներ, անցած էին Թուրքիոյ մայրաքաղաք, որ կազմաւրուեցաւ Հ.Յ.Դ. Պոլսոյ (Վիշապ) Պատասխանառու մարմինը: Այս վերջինին գործունեութեան գլխաւոր մարզերը պիտի ընդգրկէին մէկ կողմէ՝ Թուրքիոյ նոր դեկավարութեան հետ յարաքերութիւններու հարցը, միւս կողմէ՝ վերակազմակերպումն ու կապը Օսմանեան կայսրութեան տարածքին մինչ այդ գործող կուսակցական ընդյատակեայ մարմիններու հետ:

Ս. Զաւարեան, ինչպէս յիշուեցաւ, առաջիններէն էր Թուրքիոյ մայրաքաղաք ժամանողներէն:

Զաւարեանի ներկայ գրութիւնը ուղղուած է Ժընեւ, Արեւմտեան քիւրոյին:

31 - X - 1908, Իգմիր

Սիրելիք(1),

Մի քանի օրով եկած եմ հոս. կ'օգտւեմ առիթէ մի քանի տող գրելու:

Ընարողական գործը(2) բոլորին էլ իր վրայ է կենտրոնացրել. ընտրութիւնների խառը կերպով տանելը (Օսմ. կառավարութեան թելադրութեամբ) ոչ միայն մեր ձայները իջեցրեց ենթագրեալ 15-20-ից մինչեւ 8-10, այլև ցոյց տւեց որ հայկական ասւած գաւառները շատ քիչ հայկական են... (թուրքերին էլ դա էր պէտք): Խարբերդում հայերի զրկւելը, Խոզանում (Սիս) թուրքի չընտրւելը, այստեղ յոյների ճնշւելը ապացոյց է միայն որ ընտրութիւնները թուրքիայում չեն կարող ընթանալ թեկնածուի «արժանաւորութեան» հողի վերայ, եւ որ դրանց խառը կերպով տանելը միայն ազգային յարաքերութիւններն է լարում ու գրգռում, արգելելով միաժամանակ գաղափարական հոսանքների արտայայտւելուն ամէն ազգութեան մէջ...

Մի նոր եւ խոշոր արգումենտ որ ընտրութիւնները այստեղ տանելու է ազգութիւնների մէջ, կամ առաջուց որոշելու է, որ այս ինչ շրջանում ընտըրւելու է այսչափ հայ, այսչափ մահմեղական (ինչպէս դա Լիբանանում է...)...

Ներսերի(3) հետ լաւ է շարունակել այստեղից պահել յարաքերութիւններ, գրսերը ուղղակի փոստով ուղարկել, ինչպէս եւ պատկերները, փոստ-քարտերը... ի դէպ, վերջիններիս գները ճշտելու է, հատ-հատ. սերիաներով այնքան էլ յարմար չէ: Ամէն տեղ գինւածներու պահանջ կայ... Մի քիչ բարակ թղթի վրայ տպէք, աւելի արժան եւ շատ մեծ քանակութեամբ կը տարածւի...

Մենք շատ առաստ տեղեկագրեր ունենք. դուք միայն Տատրակինը եւ Իշխանինն(4) էիք ուղարկած. Հապա միւսները?

Խնդրեմ մէկդ, մի երկու ուսանողների հետ դրանով զբաղւէք եւ ուղարկէք Վասպուր[ականի], Բաղէշի, Խլաթի, Սղերթի եւ այլ տեղերի տեղեկագրեր, վիճակագրական եւ այլ փորագրութիւններ: Տեղերը Գալֆան կարծեմ աւելի լաւ գիտէ. Հիմա գրում է...⁽⁵⁾

Անցնում են տարիներ, այդ թանկագին նիւթերը կորցնում են իրենց արժէքը... այնինչ հիմա այնքա՞ն հետաքրքրութիւն կայ Հասարակութեան մէջ...

1.- Գրութիւնը անստորագիր է եւ ուղղուած Ժընե՝ «Գրօշակ»ի խմբագրութեան կամ, նոյն է, Արեւմտեան թիւրոյին:

2.- Խօսքը խորհրդարանական ընտրութիւններու մասին է, որոնք տեղի պիտի ունենային առաջին անգամ՝ Օսմանեան սահմանադրութեան հոչակումէն ետք:

3.- Այսինքն՝ ներքին գաւառներու հետ յարաքրութիւնները պէտք է կատարուին այստեղէն, այսինքն՝ Կ. Պոլսէն:

4.- Տատրակը՝ Գեղամ Տէր Կարապետեանն է. Իշխանը՝ Վանայ Իշխանը (Նիկոլ Սիբայէլեան):

5.- Գալֆան՝ Յարութիմ Գալֆայեան, «Գրօշակ»ի և Արեւմտեան թիւրոյի քարտուղարն էր, որ Սահմանադրութենէն ետք գործիչային առաքելութեամբ անցած էր Թուրքիա եւ այդ օրերուն կը գտնուէր Իզմիր: Արդարեւ, Զաւարեանի նամակին կցուած է Գալֆայեանի գրութիւնը, որնով ցուցնուներ կը կատարէ Ժընեի ընկերներուն, թէ ո՛ր պահարաններուն մէջ պէտք է փնտուել պահանջուած փաստարութերը:

82

Փաստ. 191-138_ր

Ս. Զաւարեանի այս հակիրճ ծանօթագրութիւնը կցուած է Երկրէն ըստացուած (Բաղէշ եւայլն) եւ Կ. Պոլսէն Ժընե՝ Արեւմտեան թիւրոյին ուղարկուած շարք մը նամակներու:

23 - XII - [19]08
5 - I - [19]09, Կ. Պոլսէն

Սիրելիք,

Ահա մի շարք նամակներ. ամենահետաքրքիրը Բաղէշի ժողովին վերաբերեալներն են որ խօսում են Դաշն[ակցութիւն] – Իթթիհատի խորհրդակցական ժողովի մասին: Արձանագրութիւնը դեռ առած չենք:

Միւսների մէջ էլ կան կարեւոր կէտեր, կարմիր մատիտով գծուած:

Փաստ. 193-165

Կ. Պոլսէն, որ կը գտնուեր Զաւարեան, Ժընեվ «Ֆրօշակ»ի խմբագրութեան ուղղուած նամակ է, կիսատ, անստորազիր եւ առանց քուականի: Այս վերջինը կարելի է մօտաւոր կերպով ճշդել: Ընդհ. ժողովը, որուն ակնարկութիւն կայ նամակին մէջ, հինգերորդն է, որ գումարուեցաւ Վառնա, 1909 թ. 14 Օգոստոսին: Երկու Բիւրներու հրաւեր-շրջաբերականը ուղարկուած էր նոյն տարուան Մարտ 1-ին:

Հաւանաբար 1909 թ. Մարտ ամսուն ալ զրուած պէտք է ըլլայ այս նամակը:

[Մարտ 1909]

Սիրելիք,

Առած եմ Մարի 7 Մարտից եւ Յովնանի վերջի գրութիւնը (թիւ ?). Խ[աչատուր]ը(1) արդէն մանրամ[ասն] գրած պէտք է լինի թէ ինչ պատճառներով Հ[նդհ.] Ժ[ողով]ին վերաբերեալ բոլոր խնդիրները ձեզ է թողնւում: Ուրեմն կարգադրելու էք: Նամակներով ես լուր տւած եմ:

Շնորհակալ եմ Միք[այէլ]ից(2) Տարօնի համար արւած նախապատրաստութիւնների համար...

Գրքերի մասին էլի կրկնելու եմ, ինչպէս ուզում էք անենք միայն թէ շուտ լինի շատ, մի տարուց յետոյ նոյն հետաքրքրութիւնը չի լինելու: Մեզանից ուղղակի պահանջում են յեղափ[ոխական] շարժման պատմութիւնը: Հինգ անգամ որոշումներ տրւած են այդ ուղղութեամբ. հիմա երբ հնարաւորութիւն կայ այդ պակասը որոշ չափով լրացնել յիշատակարաններով... ինչ որ անյարմարութիւններ էք գտնում: Մաթենիկի – հշխանի «ոչ գեղեցիկ» բաները ի հարկէ դուրս կը թողւի: Ինչպէս եւ գաղտնիքի բնոյթ ունեցող կէտերը... իսկական անունները կարելի է փոխել: Մոռնալու չէ եւ մի հիմնական կէտ. եթէ հաշւէք վնասը, հաշւելու է նաեւ օգուտը... վերջինս մի քանի անգամ բարձր է առաջինէն... Խորհէք այդ մասին եւ յուսամ կ'ուղարկէք եթէ ոչ բոլորը գէթ Խանասորի արշաւ[անքի] վերաբերեալը. եւ նրան յաջորդող մասերը, որպէսզի օր առաջ Միմ[ոն] Յակոբեանը խմբագրէ:

Գիտական բաժնի մասին արդէն քայլեր արւած են – «Ամբոխ[ային] տրամաբանութեան» յայտարարութիւնից կը տեսնէք... աւելացրէք պակասը –:

Պատկերները 20% ապառիկով մենք ուղարկում ենք շրջանները, իսկ դուք նաղդ(3) ուզում... Անցեալները Բագէլից(4) ուղարկւած է թէ քանի ոսկին մերոնք վճարած են (ճանապարհած թէ ոչ) 10 ոսկուց աւել, այդ է էժանը:

1.- Յաջորդաբար՝ Միք. Տէր Մարտիրոսեան (Մար), Յոնան Դաւթեան, Խաչատոր Սալումեան (Ե. Ակնունի):

2.- Միք. Վարանդեան:

3.- Կանխիլի:

4.- Չույցերիական քաղաքի անուն:

Սիրելի Դուռընեան(1),

Առի 26 Ապրիլի գրածդր: Հեռագիրներ քեզի չը հասցնելու պատճառը հասարակ թիւրիմացութիւն է՝ հեռագիրներ արտագրողը կարծել է որ շրջանիդ կենտրոնատեղին Բաղէշն է եւ որ էնտեղից ձեզ կ'ուղարկեն:

Յանձնաժողով ուղարկելու հարցը թէեւ պարլամ[ենտում] յետ վերցւեց, բայց մինհստրութիւնը դա կ'անէ վարչական ձեւով, ուր դա անհրաժեշտ կը դանէ: Դա վատ չէ նախ այն տեսակէտէ որ մինհստրութիւնը անկարող կը լինի ամէն մեղք ու դանդաղութիւն գցել գնացող լիազօր յանձնաժողովին վրայ. իսկ մնաց որ եթէ տեղի վարչութիւնները չաշխատէին, յանձնաժողովի գործը պիտի չէզոքացնէին... ինչեւէ. յետ վերցնելը մեզ համար պարտութիւն չը պիտի համարել:

Յուսանք որ Կարախանեան Ներսէս վարդապետը(2) ինքը անաչառ կերպով կը քննէ իր եղբօր անտակտութիւնները: Նոր բացւող դպրոցների քանակը եւ որակը կախւած է նաեւ շրջանումդ ձեռնհաս մարդոց աւելանալութը:

Նորից յիշեցրէք տեղիս Կանանց եւ Միացեալ ընկերութիւններին, շտապեցրէք առաջնորդին առանց ժամանակ կորցնելու ձեռնարկէ դպրոցների բացման պատրաստութեան, բերել տայ դասագրքեր եւայլն: Ամառւայ վերը ուշ կը լինի:

Աղանայի սոսկումներին(3) կը ծանօթանաք թերթերէ. 30-40.000 մարդ սոված է եւ աչալուրջ վերաբերմունք ցոյց չի տրւում...

Ընկածների թիւը ճշտել դժւար է, բայց երեւի 5-7000-էն պակաս չէ – հայերից: Դրա մօտ ¼-1/5 կը լինի միւսների զոհերը:

**Բարեւներով
Ք. ՍՄԲ[ԱՏ] ՕՀ[ԱՆԵԱՆ]**

Մոռացայ ասել որ Մուռադի այսօր ձեր մօտ[?] մնալու մասին մի քանի անգամ խնդիրներ են եղած շրջապատողների կողմէ: Երկու անգամ հեռագրած էինք մեկնի մեր[?] կողմերը: Քանի որ այնքան էլ ստիպողական չէ դա, իրեն բան չենք դրի մինչեւ ձեզմէ այդ մասին հեռագիր չստանանք:

ՆՈՅՆ

1.- Դուռանեան – Տարօնի Կենք. կոմիտէին ուղարկուած նամակ է:

2.- Մշոյ նախկին Առաջնորդը՝ Խարախանեան Ներսէս վարդապետ, որ բրբական իշխանութեան կողմէ տարիներէ ի վեր աքսորուած էր Երևանիմ, Սահմանադրութեան հոչակումէն ետք վերադարձած էր Տարօն:

3.- «Աղանայի սոսկումները» ակնարկութիւն է 1909 թին Ատանա քաղաքին եւ Կիլիկիոյ տարածքին Սուլթան Համիտ Բ.ի եւ Բքրիհատի մասնակցութեամբ սարքուած կոտորածներուն:

1909 թ. Աստանայի ջարդերէն ետք Ս. Զաւարեան փութաց Կիլիկիա՝ տեղույն վրայ ստուգելու համար զործուած չարիքին հետեւանքները: Յաջորդող քանի մը նամակներ անաւարտ են եւ անստորագիր: Յովնանը ծանօթ Դաւթեան Յոնանն է:

Ուրբաթ, 22 - V - [19]09
Մերսին

Սիրելի Յովնան,

Աւելի յարմարը չը գտնւելու պատճառաւ ես եկայ այս կողմերը: Թէ եւ զուհերի թիւը ստուգելը շատ դժւար է բայց սպասածիցս շատ է լինելու, կրկնակին, այսինքն մօտ 15-20 հազ[ար]: Եւ դրանց 9/10-դը տղամարդիկ, աշխատող ձեռքեր, որ մի-մի ընտանիք կը պահէին: Անկարող եմ հասկանալ այդ անգըթութեան ու ատելութեան հիմքը: ...Աջ ու ձախ շատ են խօսում (թուրքերի կողմից ի հարկէ) որ հայերի ցուցամոլութիւնները, թայֆայականութիւնը.....

Կիլիկիոյ կոստորածներէն ետք Աստանա անցած Ս. Զաւարեան կը զի՞ Կ. Պոլսոյ Պատ. նարմնին ջարդերու մասին՝ տեղույն վրայ իր քաղած կարեւոր տեղեկութիւնները մանրամասնօրէն փոխանցելով:

26 V / 8 VI - 1909
Աղանա

Սիրելիք,

Երէկ գիշեր երկար հեռագիր տւի Վարդգէսի(1) անունով, պատճէնը ներփակէ: Զոհերը շատ են. Աղանայի, Թարսուսի, Միսիաի, Համբիդիէի, Բաղչէի կազաներում գիւղ, չիֆթլիք (խոշոր կալւած), չը կայ ուր հայութիւնը կոտորւած կամ այրւած չը լինի: Թարսուսի շրջանում (Կոլլէճի անւանացուցակով) 453 զոհ կայ. իմ ներկայութեամբ մի չիֆթլիքի ազատւածի շնորհիւ զուհերի թիւը բարձրացաւ 553-ի: Եւ այդաէս շարունակւում է. բոլոր գիւղերը տուժել են առջի շրջանում:

Այդ 553-ից 55-ը երեխաներ են
48-ը կիներ, օրիորդներ
323-ը 15-16 տար[եկան] տղամարդ
127 այլ հասակի տղամարդիկ.

գումար 553

**Թւերից կը տեսնէք որ հարւածը ուղղւած է հայ կենսունակ տարրի դէմ...
 Նոյնը եւ ամէն տեղ է.**

Օսմանիէի մէջ մօտ 500 կին, երեխաներ են մնացել եւ միայն 12 տղամարդ:

Դրսեցիներ (Հաճին, Խարփութ, Տիգրանակ[երտ], Մուշ) շատ կան չիֆթլիքներում կորած: Շրջանին լաւ ծանօթ մի յոյն կալածատէր, քրիստ[ոն-եայ], չիֆթլիքներում աշխատող քրիստ[ոնեաների] թիւը կը հաշւէր մօտ 10.000. մահմեդ[ական]. չիֆթլիքներում աշխատող քրիստ[ոնեաների] թիւը՝ 3-5000: Դրանց մէջ հայ բանւորները կազմելիս են եղել 80%-էն ոչ պակաս (մնացածները՝ ասորիներ, յոյներ են):

Վախենամ որ այդ 10-15.000 դրսեցիների 9/10-դը կոտորւած լինի: Վալին երէկ ստացւած զեկուցագրերի հիման վրայ զոհերի թիւը ցոյց էր տալիս 3500 քր[իստոնեայ] + 2036 մահմեդ[ական] = 5538, չը հաշւելով դրսեցիներին, որոնց թիւը ճշտել անկարելի է իբր: Եթէ կարող էք ճնշում դործ դրէք, թող պահանջեն ցուցակագրել տէրերի միջոցաւ բոլոր չիֆթլիքներում աշխատողների ցանկը եւ կենդանի մնացածների անունները. ես էլ կ'աշխատեմ:

Եւրոպացիների ասելով զոհերի թիւը 20-30 հազարի մէջ է: Ինձ էլ թւում է որ 20.000ի շուրջն է դառնում: Ամէն տեղ մահմեդ[ականների] մէջ գտնւել են անհատներ, որ շատ օգնել են հայերին:

Ամէն տեղ լաւ են եղել յոյները, եւրոպացիները: Զէրքէզները Հաճինի, Զէլթունի շրջանում պաշտպանել են, միւս տեղեր մասնակցել: Տեղական վարչութեան ղեկավարութեամբ է եղել մեծ մասը: Շատ վայրերում տեղ[ական] իշխանութեան անդամներ դիմադրել են. աւերւած վայրերում քիչ շատ դիմադրութիւն ցոյց են տւած Աղանան եւ թարսուսը. միւս տեղերը յանկարծակի են եկել...

Բինբաշի Լիւտֆի բէյը պահում է իրեն օրինակելի կերպով. առաջի շրջանում պաշտպանում է Միսիսը, յետոյ ամերիկական հիւ[պատոսի] պահանջմամբ (7 ամերիկացիների պաշտպանութեան համար) Հաճին է փոխադրում եւ վերջինս պաշտպանում: Նրա հեռանալուն պէս Միսիսը ջարդում են – ընդհակառակը (Աղանայից) տեղիս կոմմանդանը (որ մինչեւ օրս ազատ է) ձեռքերը ծալում է, 300 զօրքերը պարապ նստեցնում եւ գաղտնի կերպով խրախուսում կողոպուտն ու կոտորածը: Նոյն դիրքն է բռնած եւ վալին որ Պոլիս է. պահանջելու է նրան յանձնել տեղիդ զին. ատեանին, բանտարկել առանց ժամանակ կորսնցնելու. մակեդոնացոց մասնակցութեամբ հաւանօրէն տեղի է ունենում, վերջիններիս խարւելով տեղացիների կողմէ...

Պարլամ[ենտ]ի ներկայացուցիչներն քննութեան համար դրսէն մարդիկ են ուզած (կէսը հայեր): Դա շատ կարեւոր է. հայերի տեղ կարելի է եւ այլ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐ: Պարլամ[ենտի] անդամների գալուց յետ դրութիւնը փոխւած է դէպի լաւ. եթէ քննիչների թիւը աւելացւէր, լաւ կը լինի: Իրանց դեռ չեմ տեսած (գնացած են դէպի Զոք Մարտուան). առ հասարակ դրսէն մարդոց գալը (ինչ ճեւով էլ որ լինի) լաւ եւ ցանկալի է... Թող պատրիարքարանը յատուկ մարդիկ, փաստաբան եւայլն զրկէ Անտիոք, Բախչէ, Հու. նաեւ ֆելդշերներ(2), բժիշկներ: Մահմեդ[ական] բժիշկներէ խոյս են տալիս, այն ինչ սոված, անտուն ժողովրդի մէջ հիւանդութիւնները անպակաս կը լինեն:

Պաշտօնեանները փոխւելու են. չը մոռնաք Բայազէդից հեռացւած միւթեսարեֆին, Վահանի գիտցած կայմակամին, պաշտօնեանների փոխւելուն: Մրանք եւս հումանիստ են. նոր պաշտօնեանները հարկաւ դրսէն են գալու (գերադասելի է Մակեդոնիա աշխատածների մէջէն ջոկել):

Եթէ միսիոնարները, Հայոց (պատր[իարքարանի]) պատւիրակները, Փրանս. Հալէպի հիւպատոսը չը լինէին հազարաւոր մարդիկ սովէն կը կոտորւէին:

30.000 ո[սկի] յատկացւելէ յետոյ իսկ կառավարութիւնը 130 դրամնոց հաց է տալիս եղել, ուրիշ ոչինչ: Հայ պատւիրակները շեշտում են որ կառավար[ութեան] օգնութիւնը (հայերին) 1500 ոսկիէն անցած չէ (կառավարութիւնը դեռ հաշիւ չէ տւած): Այն ինչ երբ 4 օր առաջ մի խառը (միջազգայնական) յանձնաժողով է կազմւում (պարլամ[ենտի] անդամների նախաձեռնութեամբ) նրա տրամադրութեան տակ է դրւում 22 հազար (8 հազ. ո. ծախսը-ւած համարելով). այդ նոր յանձնաժողովն էլ դեռ բան չի ըրած... տեսնենք:

Այսօր Մերսինից դառնալու է կաթողիկոսը. գուցէ որոշ քայլեր անենք այդ ուղղութեամբ...

Վային ասում էլ որ խնդրւած է մի նոր 30.000 եւս, որ մտադիր է եկեղեցինները, դպրոցները կառավար[ութեան] հաշւով շինել տալ: Պատիժներէ զատ ամենախոշոր հարցը (տների, գործիքների, կահ կարասիների, անասունների) առհասարակ վնասների հատուցման խնդիրը մնում է բաց: Ա-ռանց գրա կոտորածները դադրելու չեն:

Երէկ հեռագիրներ ուղարկեցի Թիֆլիսի եւ Բագւայ թերթերին օգնութիւն խնդրելով:

Կրօնական որսորդութիւնն էլ չի մոռացւում: Հայ տարրի ներկայութիւնը ամէն տեղ կարեւոր է: Կրօնի պաշտպանութիւնը չէ ի հարկէ այլ մի ժող[ովրդ]ի շիտակութեան եւ արժանապատութեան:

Իզմիրցիներից շատ շնորհակալ են. ամենաարագ եւ ամենաշատ օգնութիւնը նրանք են հասցուցած:

Որբերին կարծեմ աւելի լաւ է տեղաւորել Պարտիզակ, Ատաբազար եւ Ռոտութօ:

Այս նամակը եւ պատկերները ուղարկէք Յոնանին(3). Ժամանակ չը կար գրելու:

1.- Վարդգէս՝ Յովի. Սերենկիլեան, անդամ Օսմ. խորհրդարանին:

2.- Բուժակներ, բժիշկի օգնականներ:

3.- Յոնան Դաւթեանին:

Հնկերներ,

Առաւօտը գրեցի թէ ի՞նչ պայմաններում է կատարւում դատավարութիւնը(1): Վճռագիրը մոռցած էի դնել ծրարում, կը գտնէք ներփակ: Ճանապարհորդութիւնս շարունակելու համար նորէն տեսնեցի Վալիի հետ: Իր տւածէն (3500 քր[իստոնեայ] + 2000 մահմ[ետական] զոհ) նոր տեղեկութիւններ չի տալիս, թէեւ անցեալ օրը ուսւաց հիւպատոսին ասած էր որ 10,000-ի է հասած: Նա էլ ինձանից էր տեղեկութիւններ ուզում աւելի ճիշտ տրամադրութիւն դժուարանում եմ մի վերջնական բան ասել: Հնդհանուր առմամբ սա ճիշտ է որ ամենամեծ հարւածը կրել են հունձի եկած մշակները, որոնց թիւը որոշ չի թիւկներում(2) 10-15,000-ի կը հասնէր, չը հաշւած գիւղացիների քով աշխատողներին: Խարբերդը, Սեբաստիան, Մուշ 10-12 հազար տղամարդ զոհ տւին եւ դրանք բոլորը կորչելու են աղքատութեան մէջ:

Հողատէրերը կամ չեն հետաքրքրում նրանց անուններով այլ... միայն ծխանուններով:

.....
.....

1.- Խօսքը կը վերաբերի թրքական իշխանութեանց կողմէ, հայկական կոտորածներու մասնակիցներու դատավարութեան:

2.- Չիփրիլիկ – խոշոր, լնդարձակ կալուած, մեծ ազարակ:

Փաստ. 953-106

1 /14 Յունիս 1909, Աղանա

Սիրելի Անանեան,

Խոստացած էի գրել այստեղի անցած դարձածներու մասին: Թշւառութեան ու աւերակներու մէջ տրամադրութիւն չը կայ երկար նկարագրութիւններու: Ցիշեմ միայն որ Աղանայի, Թարսուսի, Զերել Բերեք[էթի] (եւ մասամբ Սոոյ) միւթեսարիֆութեան հայութեան տների 9/10դը թալանւած ու աւերւած է: 20,000-է աւելի մարդու կորուստ կայ. դրա 8/10-դը էրիկ մարդ, մեծ մասը աշխատաւորներ եւ կէսը դրսէն (Խարբութ, Մալաթիա, Մուշ) եկած հնձւորներ: Հետեւապէս ընդունելու է որ 20,000-15,000 ընտանիքներ գտնուում են կամ վաղը կը գտնեն իրենց սուզի մէջ: ... Աւելի մեծ է նիւթական վնասը քանի որ այստեղի չիփթիքները ունէին շատ կատարելագործւած մեքենաներ: Վիլայէթում հաշլում է մինչեւ 2000 հնձելու մեքենայ (լոկոմոբիլով):

Ամէն տեղ էլ շատ հայեր ազատւած են անհատ մահմեղականներու, յոյներու եւ մանաւանդ եւրոպացիներու շնորհիւ: Վայրագութիւնները եւս այս անգամ անցան 95-96-ի գագանութիւնները, իրենց «նրբութեամբ»: Ծովեզերքին մօտ վայրերում եւր[ոպական] նաւերը ցոյց են տւած որոշ (թէ եւ պասսիւ ձեւով) ծառայութիւն: Զինւ[որական] ատեանը իր գործերը նոր սկսած է թէ եւ սխալով, բայց յուսամ ապագային մէջ աւելի յաջող... գուցէ...

Միակիթարէք տեղացիներին իրենց տւած կորուստներով: Թող իրենց զաւակները ապրեն:

Զեր Ս. ՕՀ. [ՍՄԲԱՏ ՕՀԱՆԵԱՆ]

Ս. Զաւարեանի 193-166 համարը կրող այս լնդարձակ նամակը ուղղուած է ամենայն հասանականութեամբ Կ. Պոլսոյ Հ.Յ.Դ. Պատասխանատու մարմնին: Ըստ երեւյթին կիսաս է: Հ.Յ.Դ. Կերպ. արխիվի բոլորովին մէկ այլ բռթածրարին մէջ (953-107) կը գտնուի Զաւարեանի միեւնոյն հարցերուն նասին զրած մէկ նամակին վերջին 6 էջերը (9-14), որ այդպէս ալ հրատարակուած է Հրաչ Տասնապետեանի խմբագրած «Սիմոն Զաւարեան» գործի Գ. հատորին մէջ (Անքիլիաս, 1997, էջ 150-151):

Մեր համոզումով վերջին՝ անսկիզբ գրութիւնը մաս կը կազմէ եւ կ'ամբողջացնէ թի 193-166 նամակը, թէ իրբեւ էջերու եւ թէ իրբեւ բովանդակութեան շարունակութիւն: Այդպէս ալ միասին կը ներկայացնենք երկու փաստաբութերը, պահելով անոնց արխիւային երկու համարակալումները:

Փաստ. 953-107

Երեքաբթի 9/22 - VI - 1909
Բախչէ

Հնկերներ,

Մօտ 10 օր է ինչ ճամբորդութեան մէջ եմ: Միսիս, Համիլիէ, Օսմանիէ, էրգին, Օսմանիէ, Բախչէ: Բոլոր տեղերն էլ տեսնուում եմ զին[ւորական] տեղական հրամանատարների հետ: Օսմանիէ նստում է էրգինի (Ջեբել Բերեքեթի) զինւ. ատեանի Ի-ի քննիչ յանձնաժողովը: Ուրիշ քննիչ (թաքիքաթ) յանձնաժողովներ կան Մարաշ, Հաջին, կարծեմ եւ Անտիոք: Զին[ւորական] V (տեղական) հրամանատարները հսկում են խաղաղութեանը. տեղ տեղ վերադարձնում են թալանները, տեղեկութիւն են հաղորդում քննիչ յանձնախշմբերին անցած դարձածների մասին: Քննիչ յանձնախմբերն արդէն բանտարկում են յանցաւորներին եւ իրենց գեկուցման հետ յանձնում են զին[ւորական] ատեանին: Հասկանալի է որ ուր նստում են քննիչ յանձնաժողովները (օրինակ Օսմանիէ) այնտեղ դրութիւնը (քննութեան տեսակէտէ) աւելի բաւարար է եւ ընդհակառակը: Այսպէս Համիլիէի մէջ եւ շրջանում, ուր սպանւած է մօտ 1,500 մարդ եւ Միսիս, ուր բոլոր հայերը (մօտ 250) կոտորւել են եւ կենդանի մնացածներն էլ մահմեդականացած են ու մինչեւ հիմա էլ չեն համարձակուում գնալ Աղանա - շատ աւելի քիչ յանցաւոր է բանտարկւած քան Օսմանիէ, ուր 588 սպանւածների վրայ 572 կենդանի մնացած կայ...
Օսմանիէի քննիչ յանձնաժողովը նստելու է նաեւ Համիլիէ, Բախչէ: Բայց

Ե՞րբ է հերթը վերջիններիս հասնելու։ Քննիչ յանձնաժողովի անդամները ինձ ըսին որ մի 20-30 օրէն հազիւ վերջացնեն Օսմանիէն։ Հետեւաբար Բախչէի շրջանը 850 ընտ[անիք] 5,268 անձով, որ 759 տեղացի եւ 52 (կարսեցի) զոհ է տւած, այսինքն բոլոր տղայ աշխատաւորներու կէսը, դեռ ամիսներ սպասելու է իր հերթին։ Այն ինչ Հաճին (որ ունի առանձին քննիչ յանձնաժողով) տւած է միայն 20-30 զոհ։ Նոյնը եւ Մարաշը։ Յանձնաժողովները որոշելու էր ոչ թէ ըստ միւթեսարիփութեան, այլ ըստ այլ եւ այլ շրջանների տւած զոհերի թւի եւ աշխարհագրական դիրքին։

Այդպիսով Բախչէն (գուցէ միացնելով նրան Խասսան եւ Խոլահիէն) ունենալու էր մի առանձին քննիչ յանձնախումբ։ Այդ մասին խօսեցի Էրզինի զին[լորական] ատեանի նախագահի հետ։ Թէեւ յուսադրեց, բայց աշխատելու է այդտեղ։

Բացի այդ, նկատի է ունենալու եւ կարգադրելու է որպէսզի հաշւի առնը-ւեն հետեւեալ կէտերը։

1) Քննութիւնները կատարւեն տեղի վրայ՝ գիւղում, աւանում, ագարակում, եւ ոչ թէ գանգատաւորներին կենտրոն հրաւիրելով։ Առանց զրա 9/10-րդը վախենում են $\frac{1}{2}$, 1 օր ճամբորդել եւ գնալ քննիչ յանձնաժողովի մօտ գանգատւելու։ Բացի այդ քննիչ յանձնաժողովը, չը տեսած աւերումները, տեղ տեղ դիակները իր աչքով, տեսական եւ սիսալ գաղափար է կազմում յանցանքի մասին։

2) Քննիչ յանձ[նախումբ]ը քննելու է ոչ միայն այն դէպքերը եզր գանգատաւորներ կան, այլ բոլոր կատարւած գազանութիւնների մասին, ումնից էլ տեղեկութիւն առնէ։ Ընտանիքներ, գիւղակներ կան, որոնք բնաջինջ են եղած կամ մնացածն էլ փախած ու մահմեղականացած են։ Գանգատաւող չը կայ բայց կայ ամենասոսկալի ոճիր, որով ներկայում չեն զբաղւում... (քանի որ գանգատաւող չը կայ, ինչպէս Ջեքել Բերեքեթի Եարֆուղը, Միսիսը, շատ ագարակներ)։

3) Քննիչ յանձ[նախումբ]ը զբաղւելու է նոյնչափ տեղացիներով, որչափ այն հազարաւոր հայ ու ասորի կոտորւած հնձւորներով, որոնցով տեղացիները, կալւածատէրերը, կոտորող գիւղացիները չեն հետաքրքրուում։

4) Քննիչ յանձ[նախումբ]ի մէջ մասնակցելու են նաեւ քրիստոնեաներ, գէթիւրեւ քարտուղարներ, խորհրդականներ, մասնագէտ իրաւաբաններ։ Այլ կերպ (ինչքան էլ անաչառ լինեն զինտորականները) քրիստոնեաները պիտի մեղադրեն անոնց աչառութեան մէջ։ Մի մոռնաք որ զինտորականների մէջ գեռեւս քրիստոնեաներ չը կան եւ սպաները իրաւաբանական հմտութիւն չունեն։

5) Դժբախտաբար շարժման աստառը – կողոպուտը – թալան է (հարը-

տութեան, անասունների, հողերի, տների, կանանց): Հարցը սակայն այս տաք օրերի մէջ չէ, երբ օգնութիւն կայ դուրսէն եւ ժողովուրդը հնարաւորութիւն ունի պառաղներով (թութ եւայլն) կերակրւելու այդպէս եւ օգտւել հունձէն: Հարցը ապագայի մէջն է: Համարեա բոլոր հայ տները թալանւած են: Գործիքները, անկողին, հագուստ... տների 9/10-րդը այրւած, հոյակապ պատերը...: Շատ ընտանիքներ կան, որ աման, գդալ, դանակ չունեն: Մաճկալ [?] չունեն պարէնը կալսելու համար եւ փայտերով են ծեծում: չունեն տալու համար եւ ձեռքերով են տալիս...

Ապրում են աւերակների մէջ, ծառերի տակ թրջւելով անձրեւէն: Ոչ ոք հոգ չի տանում դրա մասին: աչքաթող են արւած...

Միսիթարւում են թէ թալանները յետ են արւում: Զինորական հրամանատարները գիւղերում այդ հրահանգը ճիշտ է ունեն եւ տաւարը որոնում են: Տեղ տեղ ինչքերն [?] ու կովերը յետ են բերւած (գէթ որոշ չափով): Նոյնը չի կարելի ասել տան իրերի մասին՝ 1/10րդն անգամ չի գտնուում... մանաւանդ արժէքաւոր բաները: Տները այրւած են ու չեն կարող վերադարձւել:

Մի քանի տեղեր հաշիւ ըրի. վնասները մօտաւորապէս հետեւեալ գումարների մէջ են տատանւում այլեւայլ ընտանիքների] համար.

Տների	12	25	35	100 ոսկի
պաշար (ուտելիք)	½	4	5	10
Տան իրեր	4	8	40	50
Անասուններ	—	6	10	60
Կարասի, դրամ, զարդ	—	—	20	

16½ 43 110 220 ո. ընտ[անիքի] հաշւի

Աւելացրէք այս ամէնին նաեւ սա որ հնձի մի մասը կորաւ, փչացւեց, մնացածը տրւեց հնձելու կիսով հարեւաններին, որ հայերը բոլորովին զրկւեցին իրենց ապրուստի գլխաւոր միջոցէ — շերամէ — եւ հասկանալի կը դառնայ կորուստի մեծութիւնը:

Զը գիտեմ ինչպէս կը կարգադրւի ապրուստի ինդիրը, տուն տեղերի, բնակարանների: Մի բան միայն պարզ է, որ ամօթ է գէթ վրաններ չը տալ այս կոտորւած ժողովրդին: Եթէ Աղանայի պահեստներում չը կայ, դժւար չէ Պոլսէն բերել տալ:

Սպանութեանց 9/10-դը կատարւել է այդ նպատակով, եւ ոչ թէ կողոպուտը կատարւել է իբրեւ հետեւանք Փանատիզմի ու կոտորածի: Ոճրի մի կողմը անկարելի է պարզել առանց միւսի: Սպանութիւնները անբաժան կերպով կապւած են կողոպուտի հետ:

Եթէ բոլոր ոճրագործները կախւեն իսկ՝ առանց թալանի վերադարձւելու, տուժողներ չեն կարող զգալ իրենց բաւարարութիւն ստացած: Հետեւաբար սպանութեան ու կողոպուտի քննութիւնը միացնելու է: Իսկ այդ պարագայում կրկնապատկելու է թէ քննիչ յանձնախմբի թիւը, թէ փոխելու է նրանց որակը, աւելացնելով իրենց մասնագէտ քրիստոնեայ քննիչեր:

Նման բան կարելի էր անել եւ զին[ւորական] ատեանների հետ, արտակարգ լիազօրութիւններ տալով այդ բացառիկ մարմիններին պարլ[ամենա]ի եւ զօրքի հրամանատարի որոշմամբ:

6) Քննութեան ու պատժի հետ մոռնալու չէ որ 30-50 տ[արի] առաջ այս շրջանի մահմեղ[ական] ազգաբնակութիւնը վարում էր աշխրական կեանք: Հիմա էլ մեծ մասամբ նստակեաց դառնալով նա դեռ շարունակում է պատկանել այս այն աշխրին, ղեկավարւել այս կամ այն «պետի» հրահանգներով: Նոյնն է համարեա եւ այլեւայլ «մուհաջիրները»: Պատժել թալողներին առանց ձեռք տալու աղաներին ու «անմեղ» պետերին, կը նշանակէ բանտարկել Սէլիդ Ալիի այս կամ այն դոլամին, կուել դանակի դէմ առանց պատժելու դանակը շարժող ձեռքը…

7) Նկատի ունեցէք որ Տարսոնէն սկսեալ մինչեւ Աղանա, Մերսին, Համիդիէ, Օսմանիէ, Չոք Մարսուան, Բախչէ, Հաւանօրէն եւ Կարս[բազար], Խասսա եւայլն բոլոր ոճրագործ պաշտօնեանները մնում են իրենց տեղը… Տեղական զին: Հրամանատարների հետ [երեւի փոխադարձ համաձայնութեամբ] վարելով վարչ[ութեան] գործերը… Դա այնքան էլ չի համապատասխանում արդարութեան:

8) Բոլոր վայրերում տեղ[ական] վարչութեան կամ ազդեցիկ անդամների հրահանգով նախ քան կոտորած հաւաքւած են ռեդիֆները(1), զէնք բաժնած, կամ պաշտօնեանների ձեռնպահութեան չնորհիւ (այսինքն արեւելեան ձեւի հրահանգով) խուժանը գրաւել է զէնքի պահեստները: Դա է որ կուի տեղ կոտորածի ձեւ է տւել: Այդ զէնքերը մինչեւ օրս չեն հաւաքւած: Մեղաւորները ազատ են:

9) Հսի որ կոտորած են ամենաազդեցիկ, ամենաաշխատաւոր, ամենախելօք, ամենաքաջ հայ անդամները: Միայն Հաճինը 3-4000 աշխատաւոր տղա-

մարդ է կորցրել: Իսկ սպանւած ընդհանուր աշխատաւորներու թիւը երեւի 15,000էն պակաս չէ: Հետեւաբար, 15.000 ընտանիքներ զրկւել են լրենց աշխատաւորներէն: Ուստի կամ անոնց ընտանիքները ապահովւելու են գէթ մի 10 տարով կամ դրանց տրւելու է միանւագ վարձատրութիւն (սպանւածների հաշւով) ամէն մի անձին հաշւելով օրինակ 100-ական ո[սկի] կամ աւելի ճիշտ կերպով ամէն մէկի տարեկան միջակ աշխատանքը capitaliser ընելով բազմապատկելով 10-ի վրայ (10% հաշւով), կամ 16-ի (6%-ի հաշւով): Հակառակ պարագայում 10,000 ոճրագործները մի 50-100 զոհ տալով հասած կը լինեն իրենց նպատակին — սովոր միջոցաւ բնաջինջ անելով հայերին —:

10) **Որբանոց-արհեստագիտ[ական]** դպրոցները նպատակայարմար է հաստատել Հաճին (հաճինցոց համար) Հասան բէյլի (Ճէբել Բերեքեթի համար), մնացածներին տեղաւորելով Պարտիզակ-Ատաբազար…

11) **Ազգութիւնը այստեղ եկեղեցիով է բնորոշւում:** Քահանաները (իբրեւ ազգութեան ներկայացուցիչներ) կոտորւել են առանձին եռանդով: Ազգէք պատրիարքարանի վրայ, որպէսզի Երուսաղէմի միաբանների եւ Արմաշի աշակերտների մի մասը ցրւեն գէթ ½-1 տարով այս շրջանի որբ մնացած վայրերում:

Նամակս շատ երկարեց:

**Բարեւներով
Զեր ՍիՄ.**

Նամակս ուղարկէք Յովնանին(2):

- 1.- Ունիփ - պահեստի զինուոր:
- 2.- Յոնան Դարեւանին:

**Սիրելի [...] Յովնանեան
Աղանայի միջնորդութեամբ**

Կը հաստատեմ 10/23 Յունիսին Բախչէն գրած նամակս: Երեւի առած ես:
Մի շաբաթ Բախչէի շրջանը պտտելով երէկ հասայ հոս: Նոյն աւերում-ներն են կատարւած ինչ որ Օսմանիէի շրջանին մէջ: Գիւղերի լեռնային դիրքի եւ հայաբնակ լինելու շնորհիւ սպանութիւնները այնքան մեծ ծաւալ չեն առած: Մօտ 850 տուն եւ 5300 անձ ունեցող շրջանը տւած է 759 տեղացի եւ մօտ 100 էլ շրջանում աշխատող դրսեցիներէ զոհ (Մարաշէն, Այնթապէն եւայլն): Միջին հաշւով տան վրայ մի տղամարդ:

Գիւղերը միմիանցից չափազանց տարբերում են: Գաւառի կենտրոն Բախչում, ուր ոչ մի դիմադրութիւն չի եղել, 111 սպանւած արհեստաւորների վրայ ապրում են 62-ը: Թուրքերի մէջ ընկած Խառնորդի մէջ 150 այրիացած կանանց վրայ կայ միայն 48 ամուսին ունեցողներ. ընդհակառակը մեծ, զուտ հայաբնակ Հասսան Բէյլիի մէջ 225 ամուսնացածներու վրայ այսօր հաշւում է 175 նոր եւս այրիացած կանայք: Այսպիսով հայր – պաշտպան ունեցող ընտանիքները կիսւած են:

Կան գիւղացիներ, ինչպէս Մարաշի Սարըարը, ուր բոլոր տղամարդիկ մորթուած են, բացի մէկէն, որին ուզել են մորթել կոկորդի տեղ վզէն եւ արիւնաթաթախ փախած է... Շատ ծանր է որբերի վիճակը: Վերջիններիս թիւը այրի կիներէ 1½-2 անգամ աւելի է: Օրինակ 287 զոհ (265 տղամարդ + 13 կին + 9 երեխայ) տւած Հասսան Բէյլին ունի 346 երեխայ 10 տարիէն վար առանց հօր եւ 100 որբ երեխայ էլ 10-15 տարեկան... Ի՞նչ է լինելու դրանց վիճակը: Դէպքերը այստեղ սկսւած են Զատկի Հինգաբթին (Ապրիլ] 3-ին կարծեմ) եւ շարունակւել են մինչեւ ամսի 22-ը, այսինքն Սուլթ[ան] Համիտի գահընկէցութենէն յետ դեռ ամբողջ տասը օր...

Տարօրինակը սա է որ Բախչէի շրջանէն դեռ շատ քիչ մարդ է բանտարկւած (քննիչ յանձնաժողովը զբաղւած է Օսմանիէի մանրամասներով) եւ բոլոր ոճրագործ պաշտօնեաները իրենց տեղերումն են (սպանութիւնները դեկավարող կայմակամը կտիրնէում նոր պաշտօն է ստացել?!): Նոյնն է եւ նպաստի նկատմամբ. 20 օր առաջ Աղանայում կազմւած կենտր. նպաստից յանձնաժողովը յայտնեց ինձ որ որոշած են քաղաքներում մի ամսով, գիւղերում երկու ամսով 5-ական մետ[ե]լիկ տալ (չը հաշւելով 17-էն վեր տղամարդկանց). մատի[?] վրայ էին բաժնել դա յատուկ իսառը յանձնաժողովնե-

րի միջոցաւ... եւ չը հաշւած [?] որ 22,000 ոսկին Աղանայումն է. Բախչէի ամենախուլ անկիւնը նոյն յանձնաժողովէն որեւէ բան չի ստացել (Ապրիլ 12-ին որոնց համար Մայիս 16-ին 5 օրւայ(1) էր): Եթէ չը լինէր Մարաշի հայութիւնը – ժողովուրդը արդէն սովէն կը կոտորւէր: Բարեբախտաբար հայութիւնը դեռ մեռած չէ: Այնթապի հայերը առանց կառավարութեան եւ առանց կուսակցութիւնների ղեկավարութեան ուշքի են եկել եւ մեծ օգնութիւն են հասցրել քահանաների միջոցաւ: Մայիսի ընթացքին մէջ Տէր Մերոպ եւ Տէր Բաբեկն քահանաների միջոցաւ արհեստաւորներէ եւ վաճառականներէ կազմւած Այնթապը փոխադրած է 512 հակ իրեր՝ հացեղէն, չոր, անկողին, ամանեղէն, սերմնացու եղիպտացորեն, օճառ, երկաթեղէն, եւայլն...

Վերը հաշւածս հակէն 370 հակը տւեր է նոյն քաղաքի լուս[աւորչական] համայնքը (.....). 80 հակը Այնթապի 2 բող[ոքական] եկեղեցիները. 46 հակը Քիլիսի համայնքը. 16-ը Ուրֆայի հայութիւնը:

Ո՞չ Պոլսէն, ոչ Իզմիրէն որեւէ լուր չէ հասած այս կողմերը... Սրտաճմլիկ տեսարաններու մէջ սա ամենաուրախալի երեւոյթն էր, որին հանդիպեցի ճանապարհորդութեանս ատեն: Այնթապի օգնութիւնը հասած է

1.- Բազմակիտերով նշանակած ենք բնագրի անընթեռնելի բառերը, երբեմն նաև նախադասութիւնները:

91

Փաստ. 953-111ա

19 Յունիս / 2 Յուլիս 1909, Մարաշ

Յ[արդելի] Վահան [Պալապանեան, Իզմիր],

Անցայ վնասւած վայրերով... Մօտ 10-15.000 տղամարդ զոհ, նոյնչափ կին այրի, $1\frac{1}{2}$ -2 անգամ աւելի երեխաներ որբ մնացած... Զոհերի կէսը ներսի գաւառներէն են...: Դրսի օգնութիւնը (չորերը եւայլն) մեծ դեր է կատարել: Դժբախտաբար Բախչէի շրջանում իսկենտերունի վրայով դեռ չոր չի ստացւած (չնայած ձեր տւած խոստումին)... ինչո՞վ բացատրել դա: Փառք եւ պատիւ Այնթապին որ մօտ 500 հակ օգնութիւն է հասցրած այստեղ. Եթէ ոչ ժողովուրդը կը կոտորւէր:

Մշում բացւելիք գորդի գործարանը մոռացութեան մի տաք. կարեւոր է: 12 օրէն կը լինեմ Մերսին (աւստր[իական] փոստ) իսկ 20 օրէն հաւանօրէն Պոլիս:

Բարեւներով Ս. ԶԱԻԱՐԵԱՆ

Փաստ. 953-153

Անաւարտ եւ անքուակիր երկտող Ս. Զաւարեամէն:

Ուրբաթ -----
Մելոխն

Հնկերներ,

Տեսնւեցայ ում հետ կարելի էը՝ , տուժած հայերի, հիւպատուների, կալւածատէրերի [?]: Դրութիւնը աւելի վատ է քան ես ենթադրում էի: Տուժածների թիւը վախենամ որ այդտեղ ենթադրածիս կրկնակին լինի եւ մինչեւ 15 հազար: Բանից դուրս է դալիս որ այս տարի այստեղ
.....

Մակագրուած է՝ «Խառն ժողովին – 13-09-1909»:

10 Օգոստոս 1909

Կ. ՊՈԼՍՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Վերջին երկուքուկէս ամիսների ընթացքին ես առիթ ունեցայ պտտելու Կիլիկիայի աւերւած վայրերի մեծ մասը: Տեսակցեցայ վարիչ ու գործող պետական, ազգային, օտար անձերու ու մարմիններու հետ: Ունիմ տեղեկութիւններ ու փաստեր, որոնք կարող են օգտակար լինել Ազգային վարչութեան, առաջարկութիւններ՝ որ պէտք է իրականացնել բոլոր հայ խաւերու համերաշխ գործակցութեամբ:

Չունենալով ժամանակ պատրաստել[ու] գրաւոր գեկուցում եւ միեւնոյն ատեն նկատի ունենալով շօշափելիք հարցերի շուտափոյթ գործադրութիւնը, կ'ուզենայի բերանացի կերպով պարզաբանել առաջարկութիւններս, որի համար խնդրում եմ սրանով յատուկ ժամադրութիւն:

Ինձ հետաքրքրող հարցերը վերաբերում են՝

ա) Նպաստների կանոնաւոր եւ նպատակայարմար բաշխման.

բ) Տների շինութեան անհրաժեշտութեան ու միջոցներին.

գ) Որբանոցների ու դպրոցների կազմութեան ու գործակցութեան ձեւին.

դ) Հայերի կրած վնասների ու հատուցման գործին.

ե) Մեղսակից պաշտօնեաների եւ այլոց դատավարութեան:

զ) Այն կալուածների կացութեան, որոնց տէրերը կոտորւած են.

է) «Ազգի» (Պատրիարքարանի) անելիքներին (պատւիրակներ, առաջնորդներ, քահանաներ եւայլն):

Կը խնդրէի ներողամիտ գտնւել եւ խնդրածս ժամադրութիւնը – յարգըւած դէպքում հարկաւ – նշանակել այս շաբթւայ մէջ. աւելի ուշ հաւանօրէն Պոլիս չը գտնւեմ:

Ա. ԶԱՒԱՐԵԱՆ

Յ. Գ. – Հասցէս՝ Օտէլ Պրօտի (նոյն անւան կղզու վրայ):

Փաստ. 77ա-16

6 - III - [19]10, *Մուշ*

Սիրելի Գալո(1),

Վստահ եմ, սկսածդ երկաթուղային գործը առաջ ես մղում քեզ յատուկ հաստատակամութեամբ եւ լրջութեամբ... Այս խուլ անկիւնում աւելի եւս համոզւեցի որչա՛փ մեծ է դրա խորհուրդը:

Գործնական լինելու համար ծանրանալու է նեղ, լեռնային տիպի գծերի վրայ... այլ կերպ, շատ կը ձգձգւի այդ հարցը, կամ թէ երկաթուղին կը սահմանափակւի կարնով:

20-30 տարի նեղ տիպի գիծն էլ կը բաւէ մեր ժողովրդին իսկ յետոյ... Աստւած ողորմած է...

Մեր Հրաչեան(2) կարծեմ գործ է փնտուում...

Գնա Հալաճեանի(3) քով եւ աշխատիր Հրաչին մի տեղ գտնել կամ երկրագործական, կամ վերջապէս ռեժիի:

Գաւառներում ազնիւ պաշտօնեաների սով է եւ նրա նման տղան մնում է առանց գործի:

Մաշուկին նամակ գրելիս ինձնից շատ եւ շատ բարեւիր...

Մեր դպրոցներին օժանդակելու ձեւի մասին գրած եմ Վարդգէսին(4): Կը յուսամ որ դու եւս կ'ազդես Աբէլեանի վրայ(5) եւ ամէն միջոց ձեռք կ'առնես մի յաջողակ բան դուրս բերելու համար... ապահովելու է մանաւանդ տոմսակների ցրելը:

Քո ՄիՄ.

Գործս բաւականին դժւար է, բայց առողջ եմ: Եթէ այս գարունը իսաղաղ անցնի եւ հունձը լաւ լինի մեծ փոփոխութիւն առաջ կը գայ մեր ժողովրդի հոգերանութեան մէջ...

Մուրադի օձիքից բռնէք որպէսզի նա ակտիւ դեր կատարէ յօգուտ մեր դպրոցների տրուելիք ներկայացման յաջողութեան:

1.- Արմէն Գարօ - Գարեգին Փաստրմաճեան (Կարնոյ դաշնակցական երեսփոխան Օսմ. խորհրդարանին մէջ), որ մշակած էր հայկական նահանգներէն անցնող երկարուղային գծի նը ծրագիր եւ զայն կը հետապնդէր խորհրդարանէն ներ:

2.- Հայանաբար Պահճայի Հրաչը (Հրաչ Թիրեաքեան):

3.- Պետրոս Հալաճեան, Օսմ. խորհրդարանի երեսփոխան:

4.- Վարդգէս, իսկական անունը Սերենկիլեան Յովհաննէս:

5.- Ըստ երեւոյթին, եւ վարը կը յստականայ, հարցը կը վերաբերի յօդուտ հայ դպրոցներուն կազմակերպուած թատերական ներկայացումի նը: Արէլեանը աէտք է ըլլայ հանրածանօթ դերասան Յովի. Արէլեանը:

Ս. Զաւարեան 1909 թ. աշնան ստանձնելով Տարօնի Ազգ. վարժարաններու տեսչութիւնը, գործի հրաիրեց խումբ մը երիտասարդ ուսուցիչներ, որոնցմէ մէկն էր Արտաշէս Եաղուպեան: Այս վերջինը «Հայրենիք» ամսագրի մէջ լրյա ընծայած իր ընդարձակ յուշագրութեան մէջ, «Ս. Զաւարեան Տարօնի մէջ» խորագրով, հետաքրքրական վկայութիւններ կը հաղորդէ մեծ յեղափոխականին նաևկավարժական խոր հմտութեան, կազմակերպչական կարողութիւններուն, ինչպէս նաև մարդկային վսեմ վերաբերմունքին մասին (տես «Հայրենիք» ամսագիր, Իթ. տարի (1951), թիւ 2, 3, 4, 5 եւ 6):

Ստորեւ բերուած նամակները եւ տեսչական շրջաբերականները (թուով 5) քաղուած են Ա. Եաղուպեանի յուշագրութեան:

8 - II - 1910

Հաւատորիկ, պ. Արտաշէս Եաղուբեանին

Յ[արգելի] ընկերակից,

Հոգաբարձուների ընտրութեան վերաբերեալ թուղթը ստորագրել է տալու գէթ գեղացիների կողմէ (եթէ րէյս-մէջլիս չը կայ):

Մինչեւ մեր փոխ յարաբերութիւնների պարզւելը միսսիոնարի հետ եւ նրանց համաձայնութիւնը հայ լուսաւորչական երեխաններին տօներին հայ եկեղեցի ուղարկել(1), աւելի լաւ է դպրոցը եւս լինի առանձին շէնքի մէջ: Թէեւ եթէ եղած դպրոցի շէնքը կառուցւած է ամբողջ գեղի միջոցներով ու անունով, մենք եւս կընայինք շէնքի մի մասը գիրցնել(2), փոխադարձ համաձայնութեամբ հարկաւ: Կիրակնօրեայ լսարանը, երեկոյի դասերը չը մոռնաք:

Յարգ[անօք] Ս. ԶԱԻԱՐԵԱՆ

Գիւղի ամբողջ հասարակութեան հետ ինչպէս միւս ուսուցիչները կ'ունենաք անշուշտ բարեկամական եւ միշտ քաղաքավարի յարաբերութիւններ:

1.- Ակնարկութիւնը գերմանացի միսսիոնարին է, որ դպրոցներ բացած էր Տարօնի գիւղերուն մէջ եւ ժողվուրդը կը նղէր բողոքականութիւն ընդունելու:

2.- Ընդարձակել իմաստով:

«Հայրենիք» ամսագիր, Իթ. տարի (Մարտ 1951) թիւ 3 (302) էջ 59:

Հաւատորիկի ուսուցիչ պ. Ա. Եաղուբեանին,

Յ[արգելի] ընկերակից,

Զանացէք աշակերտ-աշակերտուհիների թիւը աւելացնել: Թուրքերէն սորուածների հետ լաւ է չարունակել պարապել թուրքերէն. դասագրքերը ուղարկում է: Միւս օտար լեզուներից աւելի լաւ է ֆրանսերէնից պարապել, սկսելով վերջինս մի տարի թուրքերէնից յետ (ուշ): Երկու նամակ էր եկած ձեր անունով. երկուսն էլ ուղարկում ենք գրաբերիս հետ: Երեկոները աշխատէք մեծերի հետ խօսակցութիւններ ունենալ: Գուցէ եւ սորուելու ցանկացողներ գտնուեն մեծերի մէջ:

**Յաջողութեան ցանկութիւններով
Ա. ԶԱԻԱՐԵԱՆ**

«Հայրենիք» ամսագիր, Իմթ. տարի (Մարտ 1951) թիւ 3 (302), էջ 55:

ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

(Տեսչութիւն Տարօնի Ազգային վարժարաններու
պաշտօնաթղթին վրայ)

**Գոմս գիւղի վարժարանի հոգաբարձութեան,
ծխ[ատէր] քահանային, լէյս-մէջլիսին ու հասարակութեան:**

Նշանակելով պ. Արտաչև Եաղուպեանին գիւղիդ դպրոցի ուսուցիչ, կը խնդրեմ հոգ տանիլ դպրոցական գործերու կանոնաւորման, օր առաջ գործադրելով հետեւեալ առաջարկութիւնները:-

1.- Կարգի բերել դպրոցին անհրաժեշտ չորս սենեակ (կամ սենեակներ դաստուների թուի համեմատ) աւագած ու ճերմկցրած պատերով.

2.- Ապահովել դասարանների լոյսը մի քանի ապակեծածկ երդիկներով ու լուսամուտներով.

3.- Յատակը ծածկել խոտերով, խսիրներով, թաղիքներով կամ յատուկ մինտէրներով.

4.- Դնել դասարանում յարմար վառարան, անհրաժեշտ վառելիքով, սեղան, աթոռ եւ պահարան.

5.- Տալ ուսուցչին յարմար բնակարան ու վառելիք:

Դասական պիտոյքների մի մասը ուղարկում է սրա հետ միասին, մնացածը կը ստացուի մօտ ապագայի մէջ:

Զեր ունեցած այլեւայլ նկատումներն ու դիտողութիւնները խնդրեմ ներկայացնել տեսչութեան:

Վատահելով Զեր լուսամիտ զգացումներուն
Տարօնի Ազգ. Վարժ. Տեսուչ
Ա. ԶԱԻԱՐԵԱՆ

«Հայրենիք» ամսագիր, ԻԹ. տարի (Փետրուար 1951) թի 2 (302), էջ 68:

98

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՏԱՐԾՆԻ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱԿԱՆՆԵՐՈՒԻ

15 Ապրիլ 1910, Մուշ
Թիւ 11 Շրջաբերական

Վարժարանների հոգաբարձուներին,
Քահանային եւ Ռէյս-մէջլիսին,

Գիւղեր յաճախածս ատեն ու անձնական խօսակցութիւններիս ժամանակ
քանիցս անգամ խօսած եմ, որ գուցէ մեզ յաջողուի դպրոցների համար եւ¹
նոյնիսկ անոնց կից հաստատել պարտէզներ, կատարել նրանց օգտին ցանք-
սեր:

Այս ուղղութիւնը ոչ միայն կրթութեան կու տայ աւելի թարմ, աւելի ա-
ռողջ ընթացք՝ մանկութենէ ի վեր իրական կեանքի մէջ սրելով մանուկների
զգայարանները եւ զարգացնելով նրանց աշխատասիրութիւնը, այլեւ քայլ
առ քայլ հրմք կը ծառայէ դպրոցի ապահովութեան:

Դրա հետ միասին գիւղատնտեսական ճիւղերի մատցնելը դպրոցների մէջ
կը նպաստէ – յուսամ – երկրի տնտեսական յառաջադիմութեան ընդհան-
րապէս:

Եթէ փորձերը ապացուցեն, որ Մշոյ դաշտը կարող է հասցնել բամբակ, եթէ այս շրջանի մէջ սովորական դառնայ թթենի[ի] մշակութիւնը եւ շերամաբուժութիւնը – դա մեծապէս կը նպաստէ մշակուող բոյսերի բազմապիտութեան եւ արդիւնաբերութեան աւելացման ու հարստութեան յառաջացման:

Աւելացրէք դրան նաեւ մշակուող բոյսերի տեսակների լաւացնելը, մանաւանդ խաղողի, պտղատու ծառերի, բանջարեղէնների, աւելի կատարելագործուած գործիքների ընդհանրանալը, հիւանդութիւնների դէմ կռուիլը եւ դուք կը համոզուիք որ անխոնջ ու նպատակայարմար աշխատանքով տաստարուայ ընթացքին մէջ մեր աղքատ գիւղացու նիւթական ու Փիզիքական հարստութիւնը կարելի կը լինի կը կնապատկել:

Այդ ամէնին միացնելու է նաեւ բարոյականը. շատ ցանկալի եւ կարեւոր է, որպէսզի ամէն դպրոց մտնող երեխայ նոյնիսկ ամէն տարուայ գարնան եր անուան կամ յիշատակին տնկէ, խնամէ եւ մեծցնէ մի ծառ կամ այլ տունկ (բարտի, ուսի ճիւղ՝ անտառից փոխադրուած արմատով ծառ, խաղող, թթենի եւն). բոլոր գիւղերն էլ ունին դրա համար յարմար հողեր (խաղակներ, ճահճային վայրեր). նման ձեռնարկի իրականացնելը գիւղերի համար կը լինի ամենագեղեցիկ տօներից մին:

Դպրոցական տղաների անուան ծառերի բուսցնելը, չի արգելում, հարկաւ, որպէսզի մի յատուկ առանձին տեղ նոյն ձեւով (այսինքն ծառեր տնկելով) յիշատակուին եւ վերջի տարիների ծանր պայքարի մէջ ընկածների կամ մանուկների մերձաւորների յիշատակը:

«Ծառի տօնի» միջոցաւ դպրոցական մանուկները աւելի սերտօրէն կը կապուին իրենց լուսաւորութեան մայր (Alma Mater) հիմնարկութեան հետ:

Դասարանների կամ աշակերտական խմբակցութիւնների հաւաքական աշխատանքները (մեծ դասամիջոցներին ատեն, կամ տօն օրերը կատարուող) կ'ուժեղացնեն տղաների մէջ եղած ընկերական կապը, որ իր կնիքը կը դնէ մատաղ սրտերի վրայ:

Գիւղացիների հաւաքաբար կատարուած եւ համայն (կրթական) նպատակի յատկացրուած ձեռնարկը նոյնակս կը նպաստէ համերաշխութեան եւ համայն շահերով զբաղուելուն, որ ա՛յնքան կարեւոր է մեզ մօտ, ուր համարեա ամէն ինչ կատարուել է անհատական շահի եւ փոխադարձ մրցման հողի վրայ:

Մոռնալու չէ երբեք որ աշխատանքը եւ մանաւանդ հողագործական աշխատանքը ունի ամենամեծ ազնուացնող յատկութիւն: Իսկ հաւաքական ընկերական ձեռնարկների զարգանալը խոշոր ազդակ է թէ՛ հասարակական ձգտումների ուժեղացման եւ թէ նորագոյն պայմանների հրամայողական պահանջի:

Թագցնելու չէ յամենայնդէպս, որ յիշածս ձեռնարկների յաջողութիւնը կապուած է որոշ դժուարութիւնների հետ. բաւական է յիշել՝ որ գիւղերից

շատերը դեռ եւս չունին դպրոցական շէնքեր, զուրկ են յիշածս աշխատութիւնների համար անհրաժեշտ հողից:

Լուսամիտ ու պարտաճանաչ հոգաբարձուները եւ գիտակից անհատներն են, որ ամէնէն աւելի աշխատելու են այս ուղղութեամբ: Մէջտեղ դնելով (այս ձեռնարկների համար անհրաժեշտ) եկեղեցական-դպրոցական կամ որբերի հողերը, յատուկ համախօսականներով դպրոցին յատկացնելով համայնական («մարա») հողերից որոշ կտորներ, կամ վերջապէս որոշ անձերի նուիրել տալով այժմեանից հիմք դնել թէ՛ դպրոցական փոքրիկ պարտէզների, թէ՛ հասարակական ընկերական ցանքսերի՝ յանուն կրթական գործիք: Ինչպէս ամէն մի գործ սկսում է փոքրով, մենք եւս ապագայ մեծ եւ հոյակապ ձեռնարկների յուսով ձեռքերնիս ծալելու չենք. այսօր իսկ անելու ենք ա՛յն փոքրը եւ պարզը որ հնարաւոր եւ մատչելի է մեզ համար առանց յետաձգելու: Ահա՝ այդ մտադրութեամբ է որ տեսչութիւնս միջոցներ ձեռք առած է եւ ստացած է մի քանի բոյսերի սերմեր, որոնց փորձելը եւ ընդհանրանալը կարեւոր եւ օգտակար է:

Այդ տրամադրելի սերմերն են,

Ա. Ծխախոտի «սամսոն» եւ «տրապիզոն» տեսակներէ:

Բ. Թթի-ծառի (ապագայում շերամապահութեամբ պարապելու համար):

Գ. Բամպակի:

Դ. Շուտով հաւանօրէն ստանանք սուսամի (քունջութի) եւ գուցէ մի քանի այլ բանջարեղէնների սերմեր):

Դպրոցների հոգաբարձուները, ըէյս-մէջիսները եւ ուսուցիչները այս սերմերից կրնան ստանալ տեսչութեան գրասենեակէն եւ ցանել ու մշակել յարմար վայրերում եւ համապատասխան պայմաններով: Յատուկ հող լինելու եւ աշակերտների հաւաքական աշխատանք կատարելու դէպքում սերմերը անշուշտ կը գործադրուին ա՛յդ նպատակով: Հակառակ պարագայում սերմերը կը յանձնուին «ընկերութիւնների» կամ վստահելի մարդոց եւ դպրոցին կը յատկացուի սերմերից ստացուած արդիւնքի մի մասը: Կը յուսամ, որ մեր այս համեստ սկիզբը հիմք կը դառնայ ապագայ արդիւնաւէտ գործունէութեան, յօդուտ աշխատաւոր ժողովրդի լուսաւորութեան եւ բարգաւաճման:

Յաջողութեան ջերմ ցանկութիւններով,
տեսուչ Տարօնի Ազգ. վարժարաններու
Ա. ԶԱՒՐԵԱՆ

«Հայրենիք» ամսագիր, Իթ. տարի (Մարտ 1951) թիւ 3 (302), էջ 56-58:

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

21 Ապրիլ 1910, Մուշ

Շրջաբերական թիւ 12

Կարգապահութեան հարց:

Անկարգապահութեան դէպքերը վերջերս մեր շրջանում եւս սկսան յաճախակի դառնալ:

Ուսուցիչներից ոմանք թերի կերպով ըմբռնեցին «ազատութիւն», «արժանապատութիւն», «ուսուցչական շահ» խօսքերի խմաստները: Նրանք շփոթեցին այդ բառերը կամայականութեան, անձնասիրութեան, անձնական գրպանի շահի հետ: Մոռցան որ իրաւունքը անբաժան կերպով կապւած է պարտականութեան հետ եւ մէկը առանց միւսի առաջ կը բերէ կամ կամայականութիւն, կամ ստրկութիւն: Զես գիտակցում որ մէկի ազատութիւնը, արժանապատութիւնը եւ շահը սահմանափակուած է միւսի (հարեւան, դրացու, հասարակութեան ու վերջինիս ներկայացուցիչ-վարչութեան) ազատութեամբ, արժանապատութեամբ ու շահով:

Զէ՞ որ բոլորի համար հաւասար ու պարտադիր օրէնքին ու կանոնին հետեւելով է միայն, որ կարելի է կամայականութեան ու բռնութեան առաջն առնել: Սահմանադրութեան-իրաւակարգի՝ այսինքն օրէնքի իշխանութեան հաստատումը ամէնից աւելի յղ տեսակէտից է որ գնահատելի է:

Միտքս ճշտելու համար բաւական է յիշել, որ ամէնէն աւելի ազատ, ամէնէն աւելի կրթուած, ամէնէն աւելի յառաջադէմ երկիրներում ու ազգերի մէջ, ամէնէն աւելի, ամէնէն իսկստ կերպով հետեւում են նաեւ օրէնքի ու կանոնի թելադրութիւններին, վարչական կարգապահութեան ու քաղաքավարութեան պահանջներուն:

Դա հիմքն է մարդկային անհատի, հասարակական կազմակերպութիւնների ազատութեան ու յառաջադիմութեան, դա անհրաժեշտ պայման է ամէն մի ձեռնարկի յաջողութեան:

Մեր յետամնաց շրջանում, դժբախտաբար, հասարակութիւնը խմորուած է կամայ բռնութեան՝ ազայական-ստրկական «բարոյականով», որից չեն կարողանում ազատ մնալ նոյնիսկ ուսուցիչները:

Յիշեմ միայն դպրոցից չափէն աւելի յաճախ բացակայութիւնները, որ մի քանի գիւղերում վարժարանները մատնեցին անկանոնութեան: Մենք ունինք այսօր դպրոցներ՝ ուր գլխաւորապէս ուսուցիչների անպարտաճանաչութեան եւ սոսկ ձեւական վերաբերմունքի պատճառաւ աշակերտների թիւը վերջերս իջաւ 50-80%-ով, այնինչ կանոնաւոր ընթացք ունեցող վարժա-

բաններում գարնան ընական պակասը արտայայտուեց միայն 10-15%-ով:

Յաւալին այն է, որ նկատողութիւններն ու բարոյական ներշնչումները ոմանց վրայ չէին ազդում: Հարկադրուած դիմուելու էր աւելի կոպիտ միջոցներու:

Ուսումնական խորհրդի հաւանութեամբ որոշուած է Յունուարից սկսեալ ոչ բանաւոր պատճառներով՝ պաշտօնից եղող ուսուցիչների ոռնիկից զեղչել բացակայ օրերի արժէքը. աշխատանքի օրը համարելով համապատասխան ամսականի 1/20-ին:

Կը յուսամ որ նման դէպքերը կը կազմեն բացառութիւն եւ ուսուցիչները արժանի կը գտնուին իրենց կոչման եւ կը կատարեն իրենց պարտականութիւնները, որպէսզի դրանով իսկ պաշտպանած լինին իրենց իրաւունքները, չեղուելով կարգապահութեան ու քաղաքավարութեան հիմնական պահանջներից:

Կարգապահութիւնը շատ թոյլ է նաեւ աշակերտների շրջանակի մէջ: Այդ պակասի լրացումը կու տայ շօշափելի դրական արդիւնքներ կրթական տեսակէտից:

Ուսուցիչները գործադրելու են հետեւեալ առաջարկութիւնները.

Ա) Աշակերտները նստելու են կարգով, ամէն մին իրեն յատկացրած տեղը. հասակով փոքրերը առաջ, մեծերը՝ յետ: Հետեւելու է, որպէսզի լոյսը տղաներին գայ ձախ կողմէն, եւ ուսուցիչը, գրատախտակը, պատկերները գտնուին աշակերտների առաջ:

Բ) Ուսուցիչը իր բացատրութիւնները, հարցումները ուղղելու է ամբողջ բաժանմունքին, նպաստելով որպէսզի աշակերտները իրենք լրացնեն նիւթը, ուղղեն իրենց ընկերոջ սխալը: Առանց մատ բարձրացնելու եւ ուսուցչի թոյլտութեան ոչ մի աշակերտ խօսելու եւ պատասխանելու չէ:

Գ) Աշակերտները իրենց պատասխանները տալու են ոտքի վրայ, ձեռքերը պահելով ազատ կերպով (առանց կուրծքի վրայ դնելու):

Դ) Դասարանից դուրս ելնելը կատարուելու է կարգով:

Ե) Ուսուցչի, հոգաբարձուների՝ ինչպէս եւ այլ հիւրերի դպրոց մտնելու (նաեւ դասարանից դուրս ելնելու) ատեն՝ բոլոր աշակերտները լրութեամբ ոտքի են ելնելու՝ իրեւ բարեւի եւ յարգանքի նշան:

Զ) Ուսուցիչներին, հոգաբարձուներին, քահանաներին, մէջիսի անդամ-

ներին՝ ինչպէս եւ այլ պաշտօնական անձերին ճանապարհին հանդիպելիս՝ աշակերտները կայնելու են եւ աջ ձեռքը դէպի աջ յունքը բարձրացնելով (եւ ոչ վիզը ծոելով) բարեւելու են: Կարգապահութեան այս կանոնները ուսուցիչները լաւ բացատրելու են աշակերտներին, եւ հսկելու են անոնց անթերի գործադրութեան:

Առիթից օգտուելով կը յիշեցնեմ թերի գտնուած ուսուցիչներին, անցեալ շրջաբերականներում յիշուած եւ ղրկուած ընդհանուր եւ ամսական տեղեկութիւնների մասին, տասը օրուան մէջ՝ ինչպէս եւ ամէն ամսուդ վերաբերեալ տեղեկութիւնների պատասխանները ուղղել վարչութեան:

Խնդրեմ նաև ամսականներ առնելու համար՝ դպրոցը չխանգարել եւ քաղաք չմեկնիլ. ոռճիկները դիւրին է ստանալ հոգաբարձուների, ծանօթների միջոցաւ:

Դրամի անկանոն բաշխումը հետեւանք է դրամի անկանոն գանձման. իսկ վերջինիս, ուսուցիչների բացակայութիւնը կրնայ միայն նպաստել:

Տեսուչ Տարօնի Ազգային վարժարաններու
Ա. ԶԱԻԱՐԵԱՆ

«Հայրենիք» ամսագիր, Իմթ. տարի (Ապրիլ 1951), թի 4 (303), էջ 61-62:



Սիմոն Զաւարեան եւ իր որդին

Զաւարեանի այս գրութիւնը արխիվային համարակալում, ինչպէս նաև ստորագրութիւն չի կրեր: Թուականը այլ ձեռագրով մը նշանակուած է Հոկտ. 1, առանց տարեթիվի: Այս վերջինը հաւանաբար պէտք է ըլլայ 1910, նկատի ունենալով Բ. կէտին մէջ նշուած «անցեալ տարιայ նման» խօսքը: Ծանօթ է որ Ս. Զաւարեան Տարօնի վարժարաններու տեսուչի պաշտօնը վարած է երկու տարեշրջան, 1909-1910 և 1910-1911: Իսկ 1911 թ. օգոստոս ամիսէն սկսեալ ան հաստատուած էր արդէն Կ. Պոլիս:

Հոկտ. 1 [1910]

Մրբազան Առաջնորդին Հայոց Տարօնոյ եւ գաւառիս քաղաքական ժողովին,

Ի պատասխան Ձեր ... գրութեան կրթական տուրքի գանձման օժանդակելու մասին, պատիւ ունենք կրկնելու ա՛յն, ինչ որ բերանացի կերպով հաղորդած էլ մեր ընկերներէն մին:

Մենք պատրաստ ենք կուսակցական հաւաքական ոյժով օժանդակելու եւ մասնակցելու կրթական տուրքի գանձման հետեւեալ պայմաններով:

ա) Եթէ անցեալ տարւայ նման կ'ապահովւի ընդհանուր, պարտադիր եւ ձրի կրթութեան սկզբունքը, ազգային վարժարանների բիւղէին միացնելով դրսից եկող բոլոր կրթական նպաստները (ամէն մին հարկաւ ծառայեցնելով նախապէս որոշւած նպատակին):

բ) Երբ – անցեալ տարւայ նման – կրթական գործը կ'ապահովւի Առաջնորդարանի եւ Դաշնակցութեան փոխադարձ օժանդակութեամբ եւ կրթական-վարչական մարմինների մէջ (կենտրոնական, շրջանային եւ գիւղական հանգանակիչ մարմիններ ու հոգաբարձութիւններ) կը մասնակցեն կուսակցական համապատասխան մարմինների ներկայացուցիչները:

գ) Երբ կուսակցութեան ներկայացուցիչները կը մասնակցեն կրթական բիւղէին, կրթական նոր եւ կարեւոր ձեռնարկների քննութեան, պարբերաբար գումարտող խառը խորհրդակցութիւններին ու կրթական հաշւետութեան:

Այս պայմանները չընդունւելու պարագային, Տարօնի կրթական գործի նկատմամբ ամէն մի դաշնակցական կը գործէ իր անձնական պատասխանատութեամբ, իբրեւ անհատ քաղաքացի:

Արեւմտեան թիւրոյի Թուրքիոյ հատուածին (Աբրօ) ուղղուած այս գրութիւնը կը բաղկանայ ճեռազիր 12 էջերէ: Հրատարակուած է Հ. Տասնապետեանի խմբագրած «Սիմոն Զաւարեան» Գ. հատորին մեջ՝ անշատ երկու բաժիններով.— առաջին մասը՝ Զաւարեանի ճեռազրով 2 էջ (I, II եւ III կետերը, էջ 89-90), իսկ մնացեալը՝ էջ 145-148, ենթադրելով զանոնք տարբեր նամակներու անաւարտ եւ անսկիզբ մասերը: Այստեղ անոնք կը հրատարակուին վերամիացած ճեռով:

4 - II - 1911

Մուշ

Սիրելի Աբրօ,

Կարդացի գրաււած հողերու մասին կազմւած նախագիծը եւ քեզ հետ միասին զարմանքով լցւեցայ այդ օրինական խարէութեան առթիւ:

I) Նախ յիշեցնեմ որ Դաշտի մէջ ամենավատ պայմաններում գտնւած գիւղերում իսկ գնւած կամ այս ու այն ձեւով գիւղացիներից վերցրած հողերի տարածութիւնը չի անցնում գիւղական հողերի ընդհանուր տարածութեան ¼-ից: Զը նայած դրան գիւղացիք որ կը պոռան, դրա պատճառը երկուք է. նախ որ երբ մի ազդեցիկ մարդ (մանաւանդ թուրք) որեւէ տեղ ձեռք է բերում թէկուզ մի արտ եւ այսպիսով ոտք է դնում գիւղի մէջ, էապէս նա (բունի կերպով) սկսում է օգտւել 5-10 արտից: Երկրորդ, հող գնող թուրքը, դառնալով շնորհիւ արտի հողատէրաղա, սկսում է գնել գիւղի աշարը⁽¹⁾, սալաֆ⁽²⁾-պարտք է տալիս գիւղացիներին, կաշառում է իր կողմը (շատ անգամ չնչին գումարներով) գիւղի սրիկաներից ոմանց եւ այդ բոլոր միջոցներով ստրկացնում է գիւղը, քայլ առ քայլ տէր դառնում եւ միւս արտերի: Աղայի մը հաստատւելը գիւղի մէջ (ո՛վ էլ լինի) գիւղացոց ստրկութեան սկիզբն է:

II) Գրաւ դրւած մարուհա (բերանացի, պայմանագրով կամ «կիսաքոչան») հողերի տարածութիւնը նոյնչափ մեծ է որչափ եւ ծախւած-քոչան արւածների: Ուրեմն ջանալու է գրաւ դրւածները չը բաժնել ծախւածներից...

III) Գնողների, գրաւով վերցնողների թէեւ 1/10-1/15 միայն հայեր են, բայց դրանք կան, հետեւապէս ազգի, կրօնի անուն տալու չէ:

IV) Ծախւելը սկսում է գրաւով, գրաւը պարտքով, պարտքը մրիպայութեամբ: Մրիպայութեան⁽³⁾ հիմքը նա է որ դրամ (կամ անասուն, հացեւայլն) պարտք վերցնողը պարտաւորւում է այդ պարտքի եւ սերմի (որ

ստանում է դրամատիրոջից) տեղ դրամատիրոջ վճարելիր տարեկան հասոյթի (հատիկների) կէսը: Հայ գիւղերի մէջ, չնորհիւ ունեցած պարտքերի (10-20-50-100 ուկով տան գլխին) անասուն-լծկան ունեցող ազգաբնակութեան $\frac{1}{4}$ - $\frac{1}{2}$ - $\frac{3}{4}$ - 9/10 (սովորաբար $\frac{1}{2}$ - $\frac{3}{4}$) մրիպաներ են (9/10-ը քրդերի): Այսպիսով, 1000 քիլէ ցորեն ստացող գիւղը 120 քիլէն վճարելով աշար (թասիլ), մնացած 880 քիլէից ($\frac{1}{2}$ -ը եւ աւելին) տալիս է պարտատիրոջ: Հաշւած եմ որ վերցւած դրամի փոխարէն տարեկան մրիպաները վճարում են 35-50% (նայած տարւան եւ պայմանին) եւ դրամագլուխը միշտ էլ մնում է իր տեղը կանգուն: Այս պայմաններում եթէ ոեւէ ձեւով գիւղացիներին կրեդիտ(4) (crédit) չը բացի, հողային հարցի լուծումից (անշուշտ թուրքական ձեւի) մեծ բան սպասելու չէ: Յամենայն դէպս սխալ կը լինէր չը յիշել որ վերջի 2 տարւան մէջ (չնորհիւ ապահովութեան, զին-տուրքի վերացման եւ լաւ բերքի, հացի էժանութեան) պարտքի քանակը իջաւ 10-20-30%-ով, իսկ մրիպաների թիւը պակսեց 2-10%-ով:

Տաւարի կոտորածը, ձմրան սաստկութիւնը կը կայնեցնէ յառաջադիմութիւնը ապագայի համար, այնպէս որ քայլութիւնը ստանում է առաջնակարգ նշանակութիւն:

V) Ամէն տեղ էլ գիւղացիների պարտքերը (որոնց չնորհիւ հարկադրւած են եղել գրաւ դնել ու ծախել հողերը) առաջ են եկած չնչին գումարներից սալաֆի ձեւով կամ բարդացրած տոկոսներով... Տեղ-տեղ գիւղացիները զանազան ազգեցիկներից պարտք են վերցրած դիտմամբ, որպէսզի չը կոտորւեն: Բոլոր դէպքերում %-ի չափը եղած է 50-100-300%: Սկզբնական գումարը գիւղացիները վճարած են բազմից անգամ եւ բնականաբար, երբ մէջտեղը թուղթ չը կայ, նրանք հրաժարւում են պարտքից: Դիմացի (դրամ տւող) քրդերն էլ համարելով դա ոտնակոխում հին աղաթի ու սրբութեան, կամ նստած են բռնի կերպով հայ գիւղերում (Ծղակ, Վարդիսաղ), կամ դրսում սպասում են յարմար առիթի վրէժ լուծելու համար (Արգավանք եւ ուրիշներ): Բնական է որ առանց դրամի տոկոսի օրինական չափի ճշտման եւ բերանացի պայմանները նկատի ունենալու (միջնորդ ատեանի միջոցաւ) դժւար է սպասել խաղաղութեան հաստատման...

VI) Որչափ էլ բռնազբօսիկ լինեն այս բոլոր պայմանները, այնուամենայնիւ տարբերութիւն է դնելու բռնի կերպով գրաւումների (առանց մուրհակի ու քոչանի) եւ գրաւումների «օրինական» պայմաններով, մանաւանդ որ քրդական շրջաններում բռնի կերպով կատարւած գրաւումները բաւականին մեծ նշանակութիւն ունեն:

VII) Մուհաջիրների(5) պայմանները բոլորովին տարբեր են միւս կարգի գրաւումներից: Յամենայն դէպս, մուհաջիրները մեղաւոր չեն որ կառավարութիւնը իրենց հող է տւել այս այն վայրում:

Այս բոլոր եւ այլ մի քանի պատճառներով, հողային օրինագծի մասին բանակցելիս նկատի պիտի ունենալ հետեւեալ մի քանի առաջարկութիւնները,

որ կարող են բարեփոխւել այլ շրջանների կարծիքներով.—

1- Բունի կերպով գրաւած հողերը եւ ջրերը վերադարձնել նախկին տէրերին ամէնից առաջ, վերցնելով գրաւումներից՝ գրաւած ժամանակամիջոցի հողի եկամուտի չափը (օրինական տոկոսներով) առանց նկատի ունենալու գրաւողի կողմից շինուած շէնքերը եւ բարելաւումները: Գրաւողի դրամ կամ գոյք չունենալու դէպքում ենթարկել նրանց բանտարկութեան՝ հողը գրաւած տարիների թւի համեմատ:

2- 1877-ից յետ համիղիէ գնդերի շրջանների մէջ այս կամ այն «օրինական» ձեւով նորերի ձեռքը անցած հողերը եւ ջրերը, գնւած կամ գրաւի գումարի հաշւով, հին տիրոջ ազդարարութեան դէպքում վերցնել երկրագործական բանկաներէն հին տէրերին դարձնելու պայմանով (աստիճանական վճարումներով): Սկզբնական գրաւի կամ գնման արժէքի գումարի նկատմամբ երկու կողմերի մէջ անհամաձայնութեան դէպքում, ճշտել դա խառը յանձնաժողովների միջոցաւ, հաշւի առնելով պարտատիրոջ վճարելիքը՝ նախնական գումարի համար 9%-ից եւ գրաւողի հողից ստացած տարեկան հասոյթները՝ նոյնպէս բարդւած 9%-ից: Կառուցւած շէնքերը եւ բարելաւումները գնահատելիս, հաշւել դորա ո՛ր մասը կատարւած է գիւղացիների աշխատանքով:

3- Բոլոր նրանց, որոնք մեռած են բանտերում իբրեւ քաղաքական յանցաւորներ, կամ ազատւած են, նրանց՝ որոնք փախած են եղած օտար երկիրներ եւ դարձած են, համարել մուհաջիրներ եւ ենթարկել մուհաջիրների համար սահմանւած արտօնութիւնների:

4- Մուհաջիրների համար գրաւած հողերի համար, նախկին տէրերին վճարել հողերի այսօրւայ արժէքի կրկնակին (իբրեւ compensation(6) սեփականութեան իրաւունքի խախտման): Նաեւ գրաւած ժամանակամիջոցի հողի եկամուտը (բարդացւած տոկոսներով):

Այսուհետ եւ գալիք մուհաջիրներին տեղաւորել իրենց կրօնակիցների գիւղերին մէջ:

* * *

Եթէ ա'յսափ կարելի լինի յաջողցնել, էլի մեծ բան է: Մուհաջիրների նկատմամբ լաւ է կարծեմ մի քիչ զիջող լինենք:

Քանի գնում ինձ համար աւելի պարզւում է որ երկրի ընդհանուր պայմանների բարելաւումը (հարկաւ ոչ այս $2\frac{1}{2}$ տարւայ նման) աւելի արժէք ունի եւ աւելի գործնական է, քան թէ մեր ձեւով դրւած հողային հարցը...

Ճնշւած դասի եւ այս շրջանների ապագայի համար սահմանադրութիւնից յետ ամենակարեւոր նշանակութիւն ունեն հետեւեալ տնտես. բարեփոխութիւնները, որոնց հետամուտ է լինելու

ա- Զնջել զինուրական տուրքից մնացած բաքիաները(7). ամելիան (ճանապահները) վերցնել աշխատանքով կամ միացնել դա հողային տուր-

քին ու թեմեթթուին(8). զնջել օտարութեան մէջ գնացածների բաքիաները:

Մնացած բախիաներից անձի հաշւին ներում չնորհել մի քանիսական ոսկի:

բ- Անասուն չունեցողներին վճարել պարտք (անձի հաշւին թէկուզ 2-ական ոսկի) 10 տարւայ մէջ տարէց տարի վճարելու պայմանաւ:

գ- Միւլթէզիմութիւնը(9) վերացնել. աշարի քանակը հաւասարեցնել թեմեթթուի կամ պաշտօնեաների վճարածի (կառավարութեան): Զերծ պահել աշարից, տուրքից՝ կեանքի գոյութեան պահպանման համար անհրաժեշտ 18 կոտ ցորեն՝ անձի հաշւին, կամ նրա համարժէք այլ հատիկներ: Զերծ պահել աշարի հարկից նաեւ գիւղացու անհրաժեշտ սերմնացուն:

դ- Ամենամեծ կարեւորութիւնը տալ երկաթուղի անցկացնելուն, առանց որի Արեւելեան [Անատոլուի] հայկ. շրջանները չեն կարող քաղաքակրթւել...

Եթէ այլ ճար չը կայ, աշխատելու է գէթ որպէսզի Բէյրութ-Հալէպի գիծը շարունակւի դէպի Բիրեջիկ-Տիգրանակերտ (ապա Բիթլիսի յոյսով):

Ռուս-գերման համաձայնութիւնը պարզ ապացոյց է որ առանց երկաթուղու Օսմ. պետութիւնը անկարող կը լինի պահել արեւել. նահանգները: Զարմանալի եւ ապշեցուցիչ է որչա՞փ քիչ նշանակութիւն է տրւած երկաթուղիներին զինւորական տեսակէտից: Հետաքրքիր է, արդեօ՞ք գէթ հիմա սկսած են գնահատել դա թէ չէ:

Եթէ ժամանակը յարմար է, խնդրեմ գրէք ի՞նչ նպատակով Գարուն(10) գացած է Եւրոպա: Թէ Հալածեանին(11) թէ Գարոյին գրած եմ որ մի քանի տեսակէտներից կանգ է առնելու նեղ (լեռնային, տրամվայական) երկաթուղու գծերի վրայ... Այլ կերպ մենք 20-30 տարուց շոգեկառքի երես չենք տեսնելու:

ե- Երկաթուղիների վնասը (déficit-ը) մեր գրպանից չը վճարելու համար յատուկ տուրք է նշանակելու այն հողերի եւ հարստութիւնների վրայ, որոնք մօտ են եւ օգտառում են երկաթուղիներից եւ շոգենաւերից:

**Բարեւներով ձեր
Ս. ՕՀ[ԱնեԱն]**

1.- Աշար – քերքի տասանորդը որպէս տուրք:

2.- Սալաֆ – կանխիկ, կանխավճար:

3.- Սիհայա – հողազորկ գիւղացի, նշակ:

4.- Դրամատնային վարկ:

5.- Հայկական հողերու վրայ հաստատուած մահմետական զադրականներու:

6.- Ֆրանսերէն՝ հասուցում:

7.- Բաքիա – յետնեալ տուրք:

8.- Եկամտահարկին:

9.- Միւլթէզիմ – Թուրքիոյ մէջ տասանորդական տուրքի կապալառու:

10.- Արմէն Գարօ (Գարեգին Փաստրմանեան), անդամ Օսմ. խորհրդարանին, որ Արեւելեան Նահանգներէն երկարուղազիծ անցընելու ծրագրին նախաձեռնողն էր:

11.- Պետրոս Հալածեան, նոյնպէս անդամ Օսմ. խորհրդարանին:

Փաստ. 1542-4

31 - III - 1911, Մուշ

Սիրելի Աքրօ(1),

Առաջ եմ Մարտ 5-ի գրածոց: «Հողայինի» մասին ըստ իս կանգ է առնելու այստեղից ուղարկածս նախագծի վրայ: Բայց եւ այնպէս, որչափ էլ(2) օրէնք մշակւի, նա չի գործադրւելու մինչեւ որ պաշտօնեաների մի խոշոր մասը չը լինեն հայեր: Այդ ուղղութեամբ այս Յ տարւայ մէջ անհրաժեշտի 1/10-դն է խոստացւած[?]...»

Ժողովի նկատմամբ, այստեղ գումարւած շրջան[ային] խորհրդակցութիւնը կողմնակից է Ընդհանուրի: Կայ բաժանման, միմեանցից հեռանալու վախ, ընդհանուր միջոցների, ծրագրային հարցեր եւայլն...

Մեր կողմից ժողովի հարցերի մէջ նշանակելու է հետեւեալները՝

1- Հաստատւած (légalisé) եղած ծրագրի համապատասխան լինելը հիմնական ծրագրին եւ վերջի Հ[նդհ.] Ժ[ողովի] որոշումներին:

2- Անցեալ Հ. Ժ.ից մնացած եւ չը վաւերացւած հաշիւների քննութիւն:

3- Թերթերի եւ այլ մարմինների աւելորդ ծախսերի խնդիր:

4- «Կոնսորոլ» (հաշւեքննիչ) մարմնի հաստատում կուսակցութեան մէջ:

Խնդրում եմ ուղարկել՝

1- Մի քանի տասնեակ Կ. Կ.ական բլանկներ.

2- 10-20 օրինակ վաւերացւած ծրագրից (հայերէն ու թուրքերէն).

3- Մէկ օրինակ Գէորգ Զաւուշի լուսանկարով մեծացրած պատկերից.

4- Գէթ մի օրինակ Վարանդեանի վերջին աշխատութիւնից:

Վահարից(3) խնդրեմ գրել [թէ] ի՞նչ ձեւի յանձնարարականով է եկած Հային. Եթէ գիտէ նաեւ Սմբատը, Մկրտիչը, որոնք այդ հիման վրայ մտել են կեդր. կազմի մէջ:

Ժամանակին ուզած էի Ն 11-ի փչացող մասնիկներից(4). Հատ պէտք է. 20-30-ական հատ ուղարկէք:

Զեր՝
ՍՄԲ. ՕՀ[ԱՆԵԱՆ]

1.- Աբրո - ծածկանուն Հ.Յ.Դ. Աբեմտեան բիւրոյի Թուրքիոյ Կ. Պոլսոյ հատուածի:

2.- Անընթեռնելի մէկ բառ:

3.- Վահար - ծածկանուն Վահանան Արշակի (բուն անունը Դերձակեան Օննիկ):

4.- Սոսին հրացանի նասերից:

Փաստ. 1542-4»

1542-4 համարը կրող փաստաթուղթի գրութեան հետ դրկուած են նաև հետեւեալ երկու նամակները. երեքն ալ կը գտնուին Զ. Ընդհ. ժողովի թղթածրարին մէջ:

Սիրելի Վահաբ, Մար, Հրաչ(1)

Հրաչի ուղարկած գրքերի համար շնորհակալ եմ, սակայն ինդրեմ միւս անդամ հին դասագրքեր չուղարկել: Նախ որ դասագրքերի մէջ միօրինակութիւն է լինելու, երկրորդ՝ ձմեռ ժամանակ կիսարժէք դասագրքերի փոխադրութիւնը շատ սուլ է նստում, քիլոն 5 դրուշից (փոստին) աւելի: Մեզ կարեւոր են աւելի գըագարանի համար պէտքական ընթերցանութեան գրքեր:

Խնդրէք Շանթից կամ Արծիւից(2) մէկական օրինակ ուղարկել 1- «Լուսաբերներից» (Արծիւի հրատարակութիւն). 2- Աւետ. իսահակ[եան] Աբու Լալա Մահարիից:

Ժամանակին քարտ փոստեր էի ուղած Գէորգ Զաւուշի, Սուլուխի Սերովբի, Հրայրի (Տարօնի հերոսների): Գէ³ որ քարտերի եւ վաճառւած գրքերի հաշվին արդէն ուղարկած Ներսէս Խարախանեանի, Հաջի Կոտոյեանի կամայական, նախասահմանադրական եւ անպարտաճանաչ վերաբերմունքին պատճառաւ Ուսումն. խ[որհրդ]ից յետ[ոյ] հակադրւեցայ հրաժարւել եւ ես:

Այդ պարոնների այդպիսի վերաբերմունքի պատճառը իմ կողմից հաշիւների ուղելն է: Առաջնորդը 1000 ո[սկի] գումարի մասին Քաղաք[ական] ժ[ողով]ին տեղեկութիւն է տալիս մէկ տարուց յետ (իմ պահանջներից յետ) եւ վերջը համաձայնում (փոխադարձ կաշառքներով) Քաղաք. ժ[ողով]ի անդամների հետ: Սակայն գիտես որ իմ այստեղ մնալով հաշիւները մանրամասն կերպով հրապարակւելու են (որ նրանց վարկաբեկում է):

Կոտոյի հաջին, Գարմէնի(3) հետ միհացած Սասունում ծախսել են 50.000 ապրուստի, ձիերի վրայ, որ չի կարող ընդունւել Շրջ. ժ.ի կողմից: Քաղաք. ժ.ի միւս անդամներն են Միսակ Բդէեանը (ձեզ յայտնի), Իգիթեանը (որի եղբօրից 80 ո. պահանջ ունենք) եւ այլ նման անձեր:

Նրանց հետ է եւ Վարդան վարդ[ապետ], որ վանքը դարձրել է իր ազգականների ու բարեկամների շահագործման վայր... Յամենայն դէպս մի քանի ամիս մնալու եմ:

Ինձ պէտք է թղթակիցներին վերապահւած պաշտօնական թուղթ եւ ամսական մի քանի ուսկի: Առանց այն էլ պարտքի տակ եմ:

Բարեւներով Ս. Զ.

1.- Յաջորդաբար՝ Վոամեան Արշակ (Վահաբ), Տէր Մարտիրոսեան Սիրայէլ (Մար), Թիրեաբեան Հայկ (Հրաչ):

2.- Շանքը ծանօթ գրող Լեւոն Շանքն է, Արծիւ՝ Պոլսոյ յայտնի մէկ գրախանութն է:

3.- Գարմէն – ծածկանուն Սնլունեան Սկրտիչի:

Փաստ. 1542-4բ

Աբրոյին

Հեռագրով դրամ էի ուզած (անշուշտ կրթականի համար ստացւածներից, որի մէջ է եւ Սասունը): Հեռագրով պատասխանում էք որ «Սասնոյ գումարներից զատ ուրիշ գումար չունենք»: Դուք շատ յաւ գիտէք որ անցեալները այստեղ տարին հարիւրաւոր ոսկիներ են ծախսւել, որ ստացւած նպաստը դրսից շրջանս չստացաւ, որ ներքին մեծ կոիւ է այստեղ, եւ որ յամենայն դէպս այստեղի գործը կամ այստեղ աշխատելը Պոլսից շատ աւելի դժւար [է] եւ այնուամենայնիւ հեռագրով դրւած պահանջը (դրամի համար)... բարձի տակ էք գցում:

Եթէ կրթականի համար եկած դրամներ կան (Ուսանողութեան, Լալայեանի կամ ուրիշներ), խնդրում եմ 10 ոսկի փոխադրէք Թիֆլս Գուտենբերգին (Թիֆլս, «Նոր դպրոցին»):

Ուղարկած էի մի օր [ինակ] խմորատիպ հանրագրութիւնից «Օսմ. պարլ[ամենտ]ին աշխատաւոր ժողովրդի կողմից»: Լուրջ ուշադրութիւն է դարձնելու խմբագրւած կէտերի վրայ, մանաւանդ տնտես[ական] ընդհանուր նշանակութիւն ունեցող: Լաւ է pleinière(1) մի ժողովի մէջ քննել դա եւ յետոյ հաւանածը ներկայացնել պատգամաւորների մի խմբակի: Երբ ստորագրութիւնները պատրաստ լինեն (գուցէ մի քանի հազար) եւ թուրքերէն հանրագրութիւնները ուղղենք պարլ[ամենտ]ի նախագահին, լաւ էր նրա պատճէնը (խմորատիպ) հէնց այս տեղից դրկւէր մի քանի վստահելի մեպուսների(2) եւ թուրք[ական] թերթերի: Լաւ է այդպիսիների ցանկը օր առաջ մեզ ուղարկէք: Արդեօք լաւ չէր լինի ամէն գլուխ, գուցէ եւ պահանջ լուսաբանել առանձին յօդւածներով: Գուցէ ես էլ մի քանիների մասին գրեմ...

**Բարեներով՝
Մ. ՕՀ[ԱնեԱն]**

1.- Ֆրանսերէն՝ լիազումար նիստ:

2.- Սեպու՝ երեսփոխան:

Սիրելի Ռուսում,

Գացած էի Խլաթ-Բիթլիս-Խութ. Պոլսոյ հրահանգն է ամէն ինչ մեղմ-խաղաղ տանել: Այն աստիճանի «համբերող» որ զաշաղներին հանդիպելիս, նրանց փախչելիս իսկ հրացան չեն պարպում: Վալին թէեւ յոյս ունի նոյնիսկ այդ միջոցներով մարդասպանները ձեռք ձգել, բայց վախենամ որ ձանձրանայ, արձակուրդ ստանայ եւ ... չվերադառնայ: Այդ պարագայում այս շրջանում (եւ ամէն տեղ) կը սկսւի նոյնը, ինչ որ տեղի ունի վան:

Շամեցիք(1) գրած-հեռագրած էին անպատճառ այցելել իրենց... Զը կրցի կատարել իրենց խնդիրքը: Հաւանօրէն դուն էլ չես կարողացած: Նրանց յարուցած հարցերը արդիւնք են ընդհանուր քաղաքականութեան: Վախնամ որ Արաբիայի-Ալբանիայի անյաջողութիւններից եւ աշակողմեանների յաղթանակից յետ այս ընթացքը երկար շարունակւի:

Գուցէ օտարների կարծիքը եւ բիւղչի բացը մի քիչ սթափեցնէ սրանց...

Յամենայն դէպս, մինչեւ տեսնւելինս դժւար է ոեւէ վերջնական եզրակացութեան գալ: Այդ մտքով էլ գրած եմ Շամ:

Մ'եր Շրջ. Ժ.-ը (Կիսատ կերպով) վերջացաւ: Եթէ Ռուբէնը, Բժիշկը(2) (որ ընտրւած էր կազմի մէջ) գալու չը լինին մնացածների վրայ դժւար է մեծ յոյ-սեր դնել:

Որոշւեց իսմբերի հասոյթների 50%-ը թողնել իրենց մտաւոր զարգացման, տնտես-ընկերական ձեռնարկների:

Գուցէ սա մի փոքրիկ խթան հանդիսանայ իրենց վերակենդանացման...

Ոչ ընդունելի շոայլ եւ անբարեխիղճ կերպով ծախսած գումարները պահանջւելու են Հաջուց ու Գար[մէ]նից(3): Մինչեւ վճարելնին եւ վճարելուց յետ 3 տարով հեռու են մնալու շրջանիս կուս. գործերից... Սա էլ մաքուր տարրերի վրայ կը թողնէ իր ազդեցութիւնը, մի քիչ կը բարձրացնէ մեր ընկած բարոյական վարկը:

Քիւրդ գիւղացիութեան մէջ օրէցօր աւելանում է դժգոհութիւնն ու գանգատները կեղեքող աղաների դէմ: Մանազկերտ վերջի 2 ամսւայ մէջ 20 ոճիրներ են կատարւել այդ հողի վրայ:

Արտերը լաւ են, ցորենը անցեալ տարւանից աւելի արժան կը լինի: ...Ժէ-եւ խոտը չը կայ եւ շատ սուղ է: Դրանից էլ տուժելու են աւելի ունեւորները:

Ամառւանս մէջ 10-15 ընկեր-ուսուցիչներ դուրս կը գան շրջանները պրոպագանդի: Գուցէ յաջողւի մի քիչ ամուր հող - գիտակցութիւն առաջ բերել:

Հազիւ մինչեւ 10-15-ը կարողանամ դուրս գալ:

Քո ՍՍԲ[ԱՏ]

1.- Վան-վասպուրականցիներ:

2.- Ռուբէնը Տէր Սինասեանն է, Բժիշկը՝ հաւանաբար բժիշկ Յակոբ Զարեան:

3.- Կոտոյեան Յակոբ (Հաճի) և Մելքոնեան Մկրտիչ (Գարմէն):

Փաստ. 1543-25

Փաստաթուղթը (անստորագիր, Զաւարեանի ձեռագրով) կը գտնուի Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. ժողովի թղթածրարին մէջ: Ընդհ. ժողովը գումար- ած էր Կ. Պոլիս 1911 թ. Օգոստոս 17 – Սեպտեմբեր 17: Ս. Զաւարեան նա- խորդ երկու տարիներուն գործած էր Տարօն-Սաստինի մէջ իրրեւ շրջանի ազգային վարժարաններու տեսուչ եւ այդ միջոցին է, որ կազմած է այս տեղեկագիրը եւ անոր կցուած վիճակագրական նիւթերը:

**ՏԵՂԵԿԱԳԻՐ ԴՈՒՐԱՆ-Բ[ԱՐՁՐԱՀԱՆԴԱԿ]Ի
Կ. Կ.-ԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ**

Շրջան

Դ[ուրան]-Բ[արձրաւանդակ]ի շրջանը պարունակում է Բիթլիսի վիլայէ- թութիւնը՝ Բիթլիս, Մուշ, Սղերթ եւ Գինջ միւթեսարիֆութիւններով: Մշոյ եւ մասսամբ Բիթլիսի միւթեսարիֆութիւններ են, որ կիսով չափ հայկական են.—

- | | |
|--|--------------|
| — Մշոյ դաշտը 90 հայկ. գիւղեր՝ մօտ | 4000 ընտանիք |
| (մեծ մասը գուտ հայաբնակ) | |
| — Մասունը (յարակից գաւառակներով) մօտ | 1500 ընտանիք |
| — Երկու թուլանըխները, մօտ 50 գիւղ խառը | 2000 ընտանիք |
| — Մանագկերտ, 15-20 [գիւղ] խառը ? | |
| — Վարդօ, 6 գիւղ | |

Կպւած լինելով Խլաթին – Կարճկանին եւ յետոյ Վանին, Թ[ուրքաց] Հա- յաստանի մէջ ամենահայկական շրջանն է սա:

Հայկական իր մնալու պատճառը հաւանաբար հեռու լինելն է (15 օր Տրա- պիզոնից, 10 օր ոռուսաց սահմանից, 12 օր Պարսկաց սահմանից եւ 20-25 օր Միջերկրական ծովից), որ արգելք է հանդիսացել դատարկւելուն:

Բայց նոյն հեռաւորութիւնը պատճառ է եղած նաեւ նրան յետամնաց լի- նելուն, յետամնաց՝ բոլոր տեսակէտներից:

Ժողովրդի ապրուստի միջոցը կազմում է հողագործութիւնն ու անաս- նապահութիւնը: Բայց այս ճիւղերն էլ զարգացած չեն: Երկաթէ գութանը նոր է մտած, հնձելու մեքենայ՝ եւ ոչ մի հատ, տեղ տեղ կամերով կալսելու տեղ կալը կը ծեծեն անասունների ոտքերով, սայլերի տեղ գործ կ'ածեն սահ- նակներ..., պարզ քաշանի ձեւ: Լաւ ցորենից ստացւում է վատ հաց, կաթը

գործ է ածւում իւղ եւ թան ստանալու համար, պանիր շինել չը գիտեն...

Այգեգործութիւնը (որ տարածւած էր Քսենոֆոնի օրերէն) գոյութիւն ունի միայն Մուշ քաղաքի եւ շրջակայ մի քանի գիւղերի մէջ:

Բամբակ կը բուսնի բայց չի մշակւում. չալթուկը⁽¹⁾ կը մշակւի միայն վերջի տարիներ:

Արհեստները՝ ամենատարրական, ամենանախնական ձեւերով...

Ժողովրդի կենցաղը շատ ընկած, համարեա հաւասարուած քրդերի կենցաղին: Գետնափոր տներ, անկանոն-անբաւարար սնունդ. սեղանի, ափսէների բացակայութիւն: Աղտոտութիւն՝ ամենալայն իմաստով:

Այս ամէնի հետ միասին ուժեղ, դիմացկուն, աշխատաւոր գիւղացիութիւն, հայքրիստոնէական ազգի մի զանգւած, որը համիղական ոեժիմը ուղեց քանդել: Ուզեց քանդել եւ Սասունի հետ միասին ենթարկեց սիստեմաթիկ հալածանքների, սոսկալի կեղեքումների:

1906-7 թւականներին ողջ գիւղեր չքացած էին, տների կէսերից ծուխ չէր բարձրանում: Մեռնողների թիւը կրկնակի էր ծնողների թւից:

Սահմանադրութեան լուրը այս շրջանին համար հանդիսացաւ իսկական աւետիս, որ ողջունեց նոյնքան մեծ հրճւանքով, որչափ մեծ էին իրենց կրած տառապանքները, տւած զոհերը:

Վերջի երեք տարիների ընթացքին մէջ տարօնցին-սասունցին զբաղւած է շինարարական աշխատանքով:

Գաղթականները կամ բոլորը կամ գէթ նրանց 4/5-դը վերադարձան: Տները նորոգեցին ու վերաշինեցին: Պարտքով, մրիպայութեամբ⁽²⁾, սալաֆի⁽³⁾ միջոցաւ ձեռք բերեցին լծկան, կթան, ոչխառ. ցանքսերը շատցան. հայի ստացւածքը, բերքն ու եկամուտը կրկնապատկւեց:

15-20 դրուշից ցորենի գինը իջաւ 8-12 դրուշի: Մշակի օրավարձը ամառը 3-5 դահեկանից բարձրացաւ 7-8-ի:

Մի քանի փաստեր ապացոյց են ասածներիս (տես առանձին տախտակը): Անցեալի հետ համեմատած վերջի 3 տարւան մէջ շրջանի կրած փոփոխութիւնը մեծ է. կ'արտայայտվի 30-50-100%-ով: Դժբախտաբար դեռ եւս շատ բան կայ անելիք: Հայ տարրի 9/10-դը ընկած է սարսափելի պարտքի տակ (5-10-50 ո[սկի] տան վրայ), եւ դարձած է մրիպա եւ իր ստացած տարեկան արդիւնքի կէսը հարկադրւած է վճարելու դրամատէրերին:

Դրանով է բացատրում արտագաղթի ուժեղացումը, մանաւանդ դէպի Ամերիկա ուղղող:

Նիւթականի հետ միասին սահմանադրական շրջանին մէջ ուժեղացաւ եւ ժողովրդի մտաւորը: Դպրոցների թիւը կրկնապատկւած ու եռապատկւած է, բարձրացած է լուսաւորութեան գիտակցութեան որակը:

Կազմակերպութիւն

15 տարւայ պայքարի եւ զինւորական կազմակերպութեան ընթացքում կուսակցութեան մէջ էին մտած (կամ լռելեայն նրա հրամաններին կը հետեւէին) համարեա բոլոր հայերը, որ ունէին արժանապատւութեան զգացմունք: Ազգ եւ Դաշնակցութիւն դարձած էին հոմանիշ արտայայտութիւններ: «Յեղափոխութիւնը» դարձած էր կրօնի նման մի պաշտամունք ընկած հերոսները գրաւած էին վաղեմի սրբերի, աստւածների տեղը...

Սահմանադրութեան հռչակումէն յետ ստեղծւում է կանոնաւոր կազմակերպութիւն համայնական հողի վրայ (բոլոր ցանկացողներից): Թէկուզ 20-10-ական փարա անդամավճարներով, գիւղական ենթակոմիտէների եւ հետեւաբար կոմիտէների ղեկը անցնում է գիւղերի ազգեցիկների (ոչյիսների եւայլն) ձեռքը եւ նախկին զինւորները յետ են մղուում: Ժամանակին կուսակցութիւնից տուժածները եւ այսօր «իշխանութեան» գլուխ կայնածները յաճախ սկսում են վրէժ լուծել զինւորներից: 1909-ին խոստացւած չնչին ամսավճարները, կեդրոնական [կոմիտէի] կամ կոմիտէների ջանքերի չնորհիւ վճարուում են իրենց անդամավճարների մեծ մասը: Բայց յետոյ, տեսնելով որ կուսակցութիւնը բանտ ունեցող եւ մահւան ենթարկող կառավարութիւն չէ, չը հասկանալով նրա կարեւորութիւնը ներկայիս մէջ եւ մանաւանդ չը տեսնելով կոնկրէտ գործ եւ ընդհակառակը սոսկ ապրուստի վրայ վատնած գտնելով իր տւած գումարները, ժողովուրդը պաղում է: 1910-ին անդամավճարներ համարեա չը կային:

Մինչեւ օրս էլ ժողովրդի մաքուր տարրերը հազիւ են գիտակցել կուսակցութեան նպատակները. կենդանութիւն չէ առած մեր նոր գործելակերպը: Վերակազմւած խմբերը (14 ենթակոմիտէներից) բոլորն էլ խառը ձեւի են. կրնան եւ կրկնապատկւել, բայց եւ շատ սեղմուել նայած ղեկավար անձնուրաց, կենդանի գործունէութեան, տակտին, մաքրութեան: Թաքցնելու չէ որ գործունէութիւնն էլ դարձած է բաւականին դժւար ներքին պառակտումների պատճառաւ: Կուսակցութիւնը լեզալիզէ(4) չէ եղած. իթթ[իհատ]ի հետ պաշտօնական յարաբերութիւններ չը կան:

Շրջանի ցանկութիւնն է ունենալ իր մէջ գէթ 1-2 գործող ընկերներ եւ օգնութիւն ստանալ ինքնապաշտպանութեան համար:

- 1.- Կերեւը դիո չհանուած բրինձ:
- 2.- Իբրեւ հողազորկ մշակ:
- 3.- Փոխառութիւն բարձր տոկոսով:
- 4.- Լեկալիզէ – օրինականացած:

Փաստ. 109-74

Արեւմտեան քիւրոյի Թուրքիոյ հասուածի թղթածրարին մեջ գտնուող այս զրութիւնը յայտնի չէ թէ ուրտեղէն զրուած եւ որուն ուղղուած է:

19 - V - [1912]

Յ-դ օրն է ինչ այստեղ եմ. տեսած եմ 4-5 մարդ մեր յիշածներից: Ուստա
Գ-ի հասնելը դժբախտաբար յետաձգւած է անորոշ ժամանակով:

Բարեկամներս էլ կտրականօրէն հակառակ են իմ ճամբորդութեան, նոյ-
նիսկ այստեղ մնալուն: Երեւի մի քանի օրից կը մեկնեմ յետ: Դրութիւնը
անորոշ է, նոյնիսկ մեծ փոփոխութիւն չեմ տեսնում. այստեղ են եւ Հ[այր]
Աբրահամը եւ Բորիսը(1):

Բարեւներով Ս. ՕՀ[ԱնեԱն]

1.- Հայր Աբրահամ – Աւետիք Սահակէան: Բորիս – Սմբատ Խաչատրէան:

Անդրանիկին (Պարոյք) ուղղուած Սիմոն Զաւարեանի նամակը կը գտնուի 113-1 համարը կրող ծաւալուն նատեանին մէջ, որ կը բովանդակէ Հ.Յ.Դ. Արեւմտեան քիւրոյի Թուրքիոյ (Պոլիս) հատուածին առաքած զրութիւններուն պատճենները:

Ստորեւ՝ նախ Զաւարեանի զրութիւնը, ապա՝ Անդրանիկի պատասխան-նամակը շեղագիր եւ փոքրատառ:

Անդրանիկի այս հակիրճ զրութիւնը քաղած ենք Հրաշիկ Սիմոնեանի «Անդրանիկի ժամանակը» երկատորեայ ծաւալուն աշխատասիրութենէն (Երեւան, գիրք Ա., 1996, էջ 320): Կը քոի թէ ան պատասխանն է Սիմոն Զաւարեանի մէկ դիմումին իրեն՝ ընդունելու Մշոյ ընկերներուն այն առաջարկը, որմով կ'ուզեն զինք առաջադրել իբրեւ Տարօնի շրջանի երեսփոխանական թեկնածու: Ինչպէս սպասելի էր, Անդրանիկ, որ դէմ էր Թուրքիոյ հետ որեւէ ձեւի գործակցութեան, պիտի մերժէր իրեն կատարուած առաջարկը:

31 Օգ. 1912
ի Պոլիս

Սիրելի Պարոյք,

Նոր ընտրութիւնների առթիւ Մշոյ մեր ընկերները Գեղամին(1) կ'ուզեն փոխարինել նոր մարդկանցով: Կը խօսին նաեւ քո թեկնածութեան մասին: Այստեղի ընկերները եւս համակարծիք են որ որոշ պարագաներում քո թեկնածութիւնը կը լինէր լաւագոյնը:

Անշուշտ թեկնածուները պիտի ներկայացւեն եւ շահին տեղի կուսակցական ժողովի մէջ (ինչպէս կանոնագիրը կը թելադրէ), նաեւ անցնեն այլ դժւարութիւններ: Ուստի, նախ քան գործնական քայլերի դիմելը քո համաձայնութիւնը կը իննդրենք այդ գործին ընթացք տալու համար: Կը սպասենք շուտափոյթ պատասխանի:

**Ի դիմաց Արեւմտ. բիւրոյի
ՍՍԲԱՏ ՕՀԱՆԵԱՆ**

1.- Գեղան Տէր Կարապետեան, Օսմանեան խորհրդարանի պետական երեսփոխան, Մուշէն:

Անդրանիկի պատասխանը.-

Փաստ. 113-1, էջ 314

Սիրելի ընկեր,

Նամակներդ ստացած եմ եւ զարմանքով կարդացած։ Ես ո՞ւր, օսմանեան փառլամենթի անդամ ըլլալը ո՞ւր:

Այդ ոճրագործներու վոհմակները, որոնք հող նստած եմ, ես ամոնց չեմ հաւատար եւ երկրորդ որ իմ գործս չէ հող գալ եւ այդ աքոռին վրայ նստիլ։ Ես կը փափարիմ որ օր մը պատուվ մեռնիմ։ Ո՞չ այդ աքոռը, ո՞չ ալ պաշտօնը եւ ո՞չ ալ յիսուն օսմանեան ուկի ամսականը կ'ուզեմ։ Զիս հանգիստ ձգեցէք իմ պուլարական համեստ հիւղակին մէջ։

Ես կը նախընտրեմ հոս ծակտիս քրտինքով եւ բազուկիս ուժով ցորեն, զարի, լուրիա եւ զետնախնձոր ցանել եւ մշակել ու ապրիլ, քան զալ եւ փառլամենթի անդամ ըլլալ։

Բոլոր ընկերներուս բարեւ,
Զերդ ՊԱՐՈՅՌ

Փաստ. 62ա-3

Կ. Պոլսէն գրուած Ս. Զաւարեանի այս նամակը անթուակիր է. այլ ձեռագրով աւելցուած է 1911, որ թէական է, որովհետեւ ակնարկութիւն կայ բարենորդումներու ծրագրին, որուն ձեռնարկուեցաւ պալքանեան պատերազմէն եւոք միայն, այսինքն՝ 1913 թուականին: Տարեթիւի ճշտումին համար հաստատուն իիմք է Արամ Մանուկեանի վկայութիւնը 1913 թ. Վասպուրականի կացութեան մասին, զոր կը յիշատակ Զաւարեան. արդարեւ 1912 թ. Դեկտ. 18-ին Վաճէն Արեւատեան բիրոյին յղած իր նամակին մէջ, Արամ կը վկայէ՝ Ազատութեանէն յետոյ [իմա՝ սահմանադրութեան հոչակումէն] «ո՛չ այսքան ուժեղ կազմակերպութիւն ենք ունեցել եւ ոչ ալ այսքան դրամական եկանուս»: Եւ նկատի ունենալով որ Զաւարեան այդ մասին կ'ըստ վերջին 4-6 ամիսներուն, ուրեմն այս նամակի տարեթիւը պէտք է ըլլայ 1913:

Սիրելիք,

Քանի [մը] օր առաջ պատրիարքարանը թասխրում(1) յայտնեց — սպանութիւնները վերջ չը գտնելու պատճառաւ — գրաւոր կերպով լուր տալով «բարեկամ» Յ դեսպաններին, միւսներին էլ բերանացի կերպով հաղորդելով։ Այդ գրութեան մէջ (մինը կ'ուղարկւի Փ.-ին) պատր[իարք]ը կը յիշէ որ երկու տարուց ի վեր արդէն յոյսը կտրած է լուրջ առաջարկներ ընելէ եւ կը սպասէ եւր[ոպական] պետութիւններէ անհրաժեշտ ռեֆորմների։

Ամէն տեղից, դուք էլ կը հարցնէք ինքնապ[աշտպանութեան] գործի մասին... ի՞նչ որոշ բան գրել... ամէն տեղ էլ աշխատում է, մանաւանդ վերջի 4-6 ամիսները. բարձր տրամադրութիւն է մանաւանդ Շամի շրջանին մէջ... Արամի ասելով այժմս ինքնապ[աշտպանութեան] կացութիւնը աւելի լաւ է քան 1907-ին մեր կրախէն(2) առաջ։ Սակայն, զինսում են եւ քրդերը... բացի այդ հարցը քանակի մէջը չէ այլ որակի, զինսորական ոյժերի, կազմակերպութեան. իսկ այդ տեսակէտից այնքան էլ մենք առաջ չենք։ Ես միսիթարւում եմ նրանով որ այլեւս 95-ի դէպքերը տեղի չեն ունենար. սա կոիւ կը լինի արդէն, որի մէջ անշուշտ մենք կը տանք անհամեմատ աւելի շատ զուգեր... Ազգերը այդպէս են մարզւում...

Բարեբախտաբար թիւրքերը կարծեմ մի քիչ իսկեփի են դալիս։ Տրամադիր են մեզ հետ հաշտ գնալ։ Կարնոյ, Վանի վերջի տեղեկութիւնները այդ ցոյց կու տան... թէեւ տակից «իսլահիչ» գաղտնի ընկերութիւն են կազմակերպում եւ քիւրդ աւազակներին շոյում։

Իրենց մէջ էլ երկու հոսանք կայ. Զաւիդը, Զեմալը, Թալաթը լուրջ(?) բա-

ըեփոխութեան կողմն են. Հաջի Աղելը, Խայրի Բէյը հին ձգձգման: Զաւիդը նոյնիսկ իբր թէ գուայխատական(3) (թուրք-արար), կառավ[արութեան] կողմն է (ձաւ աւտո-հունգար), բայց դժւար թէ սրանք ունենան այդպիսի քաղաք[ական] մեծ յանդգնութիւն: Բացի այդ, հարկադրւած են ժողովրդին ցոյց տալ որ իրենց կամքով չէ որ զիջումները կ'ընեն, այլ ճնշման տակ: Եւ-րոպ. ճնշումը այդ տեսակէտից իրենց ճեռնտու է:

Միւս կողմից ուուսների հայերին չոյելը եւ միաժամանակ քրդերին ոյժ տալը թելադրել է տալիս, որ ուուսները ձգտում են ոչ այնքան բարեկարգութեան, որքան պղտոր ջրի մէջ ձուկ որսալու համար... Ընկած ենք երկու կրակի մէջ...

Նորից կարդացինք Ք.ի ծրագիրը: Զանալու ես Փինանսական մասին մէջ մեր ծրագրի առաջի (հարկերի համաչափութեան) եւ վերջի (մաքսից բաժին հանելու) գլուխները մտցնել տաս...

Դա մեծ կարեւորութիւն ունի:

Հանելու է այն կէտը, ուր ասւում է թէ կառավարիչները մեծամասնութիւն կազմող տարրից պիտի լինեն:

Կարեւոր է եւ ցենզի խնդիրը... թափառաշրջիկներին ձայն չը տալը չի պակսեցնել ստրկացած քրդերի թիւը: Իսկական թափառաշրջիկներ չը կան: Այդ մասին ըսած են թէ թուրքերը, թէ ուուս խաւերը... վերջի 10-20 տ[արւայ] մէջ թափառաշրջիկ քրդերը դարձած են նստակեաց...

Ուստի քրդերի 9/10-դը պիտի լինեն աղաների, ցեղապետների գործիք: Փրկութեան միակ միջոցը կը թական ցենզի պահանջն է, գրել, կարդալ գիտնալը: Կարծեմ որ եւր[ոպական] պետութիւնները եւս դրանից չեն կարող խորշել:

Ուղարկում եմ վերջի նամակներից մի քանին որ կարդալէն [յետոյ] խնդրեմ ոչնչացնէք:

Բարեւներով, ձեր Ս.

Ասուլիսների(5) դէմ ամէնից շատ ես եմ բողոքած... մի մի անգամ ակամայից եմ երեւում. զսպելու համար ծայրայեղ հոսհոսութիւնները... մեղաւորը մենք ենք:

Խեօն հասաւ, վաղը կը մեկնի:

Զ.ի շրջանի մասին գրած կը լինի Խաչ[ատուր]ը(4). չէ որ գրա համար էր գնացել:

1.- Թախիլի – Օսմ. կառավարութեան յղուած պատրիարքական պաշտօնագիր:

2.- Կրախ (ոռուերէն) – փլուզում, կործանում իմաստով: Կ'ակնարկէ դիերցի Դաւոյի նատնութեան հետեւանքով Դաշնակցութեան զինամքերքի մէկ կարեւոր մասի գրաւման Վան-Վասպուրականի շրջանին մէջ:

3.- Երկակի, ինչպէս կը յիշուի աւտո-հունգարական պետութեան օրինակով:

4.- Է. Ակնունի (Խ. Մալումեան):

5.- Ակնարկութիւն Պոլսոյ մէջ տեղի ունեցող գրական ասուլիսներուն:

Սիմոն Զաւարեանի այս եւ յաջորդող նամակը, ուղղուած իր հայրենակից լոռեցի մեծ քանաստեղծ Յովիաննես Խումանեանին, յայտնաբերած ենք Երեւանի Եղիշէ Զարենցի անուան Գրականութեան եւ արևտի քանօպարանի (ԳԱԹ) Խումանեանի ֆոնդին մէջ (Թֆ), յաջորդաբար № 1172 (իին համարը՝ 211) եւ № 1173 (իին համարը՝ 978):

Չոյզ գրութիւնները կը շօշափեն Ս. Զաւարեանի կողմէ այլ բազմաթիւ նամակներով յիշատակուած եւ պատրաստութեան մէջ գտնուող աշխատասիրութիւնը: Այս վերջինը, պատկերազարդ ալպոնի ձեւին տակ, պիտի ընդգրկէր ամբողջ Հայաստանի, Կիլիկիոյ եւ Կովկասի կեանքը՝ Երկրագործութեան եւ արհեստներու վերաբերող վիճակագրական տուեալներով, ընդհանուր կերպով հայ ազգաբնակութեան տնտեսական եւ կրթական վիճակը պատկերացնող:

Իր աշխատասիրութեան ամբողջացման նպատակով, Զաւարեան կը դիմէր այեւայլ անձնատրութիւններու, ինչպէս Նիկոլ Աղբալեանին եւ Սիմոն Վրացեանին: Ներկայացուող զոյզ նամակները ուղղուած են Յովի. Խումանեանին յատկապէս Լոռիի, իրենց հասարակաց հայրենի աշխարհի բաժինը լրացնելու համար:

9/22. [19]13. Կ. Պոլիս(1)

Սիրելի Օհանէս,

Քո ունեցած բազմազան զբաղումներին մի փոքրիկն էլ ես կ'ուզեմ աւելացնել: Ներփակ տպագիր նամակը կը բացատրէ նպատակս ու միտքս: Կ'ուզենայի որ Թիֆլիսի նահանգին մանաւանդ մեր Լոռուն վերաբերեալը դու լրացնէիր: Հետաքրքիր բաներ կան երմակովի մօտ(2), գուցէ եւ Գնունու: Դերասան Վրոյրը(3) եւս գեղեցիկ բաներ պիտի ունենայ: Գիտեմ, սակայն, որ ամենալաւերը, ինձ համար ամենակարեւորները պիտի պատւիրել յատկապէս մէկին, գուցէ [կը պակսի մօս երկու տող] էլ եմ դժւարանում որ ճիւղի վրայ կանգ առնել: Բոլորն էլ այնքա՞ն գեղեցիկ են, այնքա՞ն ինքնուրոյն: Զը մոռնաս յամենայն դէպս մի երկու որսորդական խմբեր, ձուկ որսալու տեսարաններ – ճիւղ, սարի-խաչնարածութեան, այրերի եւ այլ մեղւանոցները... ամրացրւած այրեր-սղնախները: Կ'ուզենայի եւ Սարգսի(4) խաչքարը (Զաքարիայի հօր, փակւած մատուռի մէջ, ուր Արդութէան ները(5) կը թաղւեն), Հաղբատի, Քիւրդ իշխանի(6) – մատուռ-գերեզմանները, քոբէրը[?] սղնախով, Սրբ. Գէորգի աղբիւրը վանքով...*: Մի լայն բազմաբովանդակ տեսարան՝ գիւղով, ձորով-դաշտով-սարերով:

Մնացածները գու գիտես...

Մի փոքրիկ խնդիրք-պատւէր էլ:

Այս ձեռնարկը խորհած սկսած լինելով 14 տարուց ի վեր չէի ուզենայ որպէս զի մի ուրիշը կանխէր ինձ: Ուստի ինդրեմ – աջ ու ձախ չը տարածայնես:

Եթէ – ինչ ինչ պատճառներով – անկարող լինես կատարելու ինդիրքս, երկտողով լուր տուր: Կը դիմեմ մի ուրիշ:

Շատ ու շատ բարեւներս տանցոնց: Որչա՛ փ մեծացած պիտի լինեն բոլորը [կը պակսի մէկ տող]:

Գուցէ Մուշեղին(7) (ընկերներով) պատւիրես դա, կամ մի այլ ճաշակ ունեցողի:

***) Նաեւ մի զիւղական տիպիկ տուն սրահով, հազարաշէն(8) մեծ տնով յետեւում, զաղափար տող հայ ճարտարապետութեան սկիզբի մասին: Եթէ կարելի լինի հազարաշէն տունը վերցնել ներսից, երդիքով, աւելի լաւ:**

1.- Նշուած քուականին մէջ կը պակսի ամսաբիւր:

2.- Երմակով – ուս մասնագէտ լուսանկարիչ:

3.- Վրոյր Արամ (1863-1924) – դերասան, հնագէտ եւ լուսանկարիչ:

4.- Սարգիս Զարքեան – Սիջին դարերու Զարքեան նշանաւոր տոհմի նախահայրերէն: Զարքեանները (ԺԲ.-ԺԴ. դարեր) վրաց թագաւորութեան մէջ վարած են սպարապետի պաշտօն եւ իրենց կրանքանատպութեան ներքեւ (յատկապէս Սարգիսի որդիններ Զարքէի եւ Իւանէի) վրացական եւ հայկական զօրքերով ազատազրած սելցութերու տիրապետութեան տակ գտնուող Հայաստանի հիւսիս-արեւելեան շրջանները:

5.- Արդուրեան – իշխանական նշանաւոր տոհմ սերած Զարքեաններէն. տոհմի անդամներուն կը տրուի Երկայնաբազով տիտղոսը:

6.- Քիւրդ իշխան – Զարքեաններու տոհմէն. վերջինները կը համարուէին հայոց Արծրունի տոհմին պատկանող ու քրտացած մէկ ծիստ, որ այսուհանդերձ մնացած էր քրիստոնեայ:

7.- Մուշեղը՝ Յովի. Թումաննեանի մեծ որդին էր:

8.- Հազարաշէն – վեր բարձրացող գերաններով ծածկուած ու կոնածեւ տանիքով յատկանշուող հին բնակարան:

Յովիաննես Թումաննեան

Դարձեալ Յովի. Թումանեանին ուղղեալ այս նամակը առաջին անգամ լոյս տեսած է «ՎԵՄ» համահայկական հանդեսի՝ Սիմոն Զաւարեանի մահուան 100-ամեակին նուիրուած բացախիկին մէջ (2013, Հոկտ.-Նոյ., թի 4, էջ 246-247): Դժբախտաբար սխալաշատ է. ուղղեցինք՝ բարդատելով Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ արևստի թանգարանի (ԳԱՄԹ) Թումանեանի ֆոնդին մէջ պահուող բնօրինակին հետ:

Յիշեալ գրութեան հրատարակիչն է բանասիրական գիտ. դոկտոր Սուսաննա Գ. Յովիաննիսեան. վերջինիս կողմէ կազմուած ծանօթագրութիւնները պահած ենք նոյնութեամբ:

Սիմոն Զաւարեանի նամակը Յովիաննէս Թումանեանին(1):

27 - V - [19]13

Սիրելի՛ Օհանէս(1),

Ուրախացայ Բաթումից գրածդ երկտողիդ. «Տպաւորութիւններին» այս գործնական դարի մէջ տալու չէ մեծ նշանակութիւն: Հստ իս հետեւելու է աւելի մարդկանց գործերին, դէպքերի արդիւնքներին. յամենայն դէպս (որոշ նւազագոյն մեր անկապտելի իրաւունքների զարգացման գործնական երաշխիքների պայմանով): ցանկալի է մերձեցում, գուցէ եւ կատարեալ հաշտեցում մեր դրացիների հետ: Այսուհանդերձ մոռնալու չէ երբեք, որ մարդուս բախտի տնօրինողը ամէնից աւելի ինքը մարդն է, իր գիտակցութիւնը, ոյժը: Ուրիշի արւած բարեգործութեամբ, տւած ողորմութեամբ սնանկացած տնտեսութիւն չի վերականգնի... շատերը մոռանում են այս էական միտքը:

Գրածս ալբոմին աջակցելուդ մէջ համոզւած էի, սիրելի՛ Օհանէս, սակայն գիտնալով քո չափազանց զբաղւած լինելը, կ'ուզենայի այդ գործը չը յետաձգւէր: Լաւ է դրա համար քեզ օժանդակ վերցնես մի ուրիշի, աւելի ազատ մարդու, թէկուզ մեր Մարիամին կամ նուշիկին: Զէի ուզենալ, որպէսզի ամառը մարդկանց ցրւելու պատճառաւ ընդհատում առաջ բերէր այդ աշխատանքի մէջ: Ուստի, ինդրում եմ մինչեւ արձակուրդները ուղղակի կամ կողմնակի կերպով չը մոռնաս դիմել եւ օգնութիւն ինդրել հետեւեալ անձերից առանց յայտնելու իմ ամբողջ նպատակի մասին(2):

1. Երւանդ Լալայեանից(3) վերցնելով իր հրատարակութիւնների մի քանի տիպիկ նկարներ:

2. Տեղիդ նկարիչներ Թաղէոսեանին(4) եւ ուրիշների (լաւ, հայկական գոյն ունեցող պատկերների լուսանկարները), հայկ. քանդակների, օրնամենտների նմոցներ առնելով:

3. Վրոյրին(5), ուզելով իր լաւագոյն եւ հետաքրագոյն ապակիներից ոմանք:

4. Լուսանկար(6) Տէր Ղեւոնդեանից, Երմակովից(7) ջոկել հայ ժողովրդի կենցաղին, տիպերի վերաբերեալ նկարներ:

Իզմիրեան մրցանակի Հ[ա]մ[ա]ր Լալայեանը ուղարկած է այստեղ Վայոց ձորի նկարների հաւաքածուն (կարծեմ Երմակովի նկարածը): Մի քանիսը դրանցից ես ջոկած եւ բերել կու տամ Երմակովից(8):

Արդեօք Մարը(9), Թորամանեանը(10) հրատարակած չունին Անիի շրջակաները գտնած իրերի արժէքաւոր հնութիւնների նկարները:

**Զես մոռանալ, անշուշտ, Լոռի, Շուլաւէր հանւելիք ուղածս նկարները:
Բարեւներս ծանօթներիս:**

Քո ՄիՄ[ՈՆ]

(Ընդգծումները Սիմոն Զաւարեանին են – Ս. Յ.)

1.- Նամակը հրապարակում է առաջին ամօամ: Խնճնագիրը պահում է Եղիշէ Զարենցի ամուան գրականութեան եւ արուեստի բանագրանի (ԳԱԹ), Թումանեանի ֆոնդում (ԹՖ) No 1173 (հին համարը 978):

2.- Զաւարեանը կասկածում էր, որ բոլորը չեն կարող անշահախնդիր օգնել, հետեւաբար ալբորդը հրատարակելու բուն նպատակը Կովկասում նա վստահում է միայն Թումանեանին եւ նամակում ընդունում է նպատակը զադունի պահելու խնդրանքը:

3.- Լալայեան Երուանդ Ակերսանդրի - ազգագրագէտ, բանահանք, հնագէտ, «Ազգագրական հանդէս»ի (1896), Ազգագրական հրատարակչական ընկերակցութեան (1900) եւ Հայոց Ազգագրական ընկերութեան (1906) հիմնադիր եւ նախագահը - 13.03.1864, Ակերսանդրապոլ, այժմ՝ Գիւմրի - 24.02.1931, Երևան:

4.- Թաղենուտեան Եղիշէ Մարտիրոսի - նկարիչ, Հայ արուեստագէտների միութեան հիմնադիրներից մէկը եւ նախագահը (1916), Վրաստանի Գեղարվունակի ակադեմիայի հիմնադիրներից (1923), ՀՍՍՀ արուեստի վաստակաւոր գործիչ - 12.09.1870, Վաղարշապատ, այժմ՝ Էջմիածին - 22.01.1936, Թրիլիս (բաղուել է Երեւանում):

5.- Վրոյր Արամ Մինասի (Մաքաշեան) - դերասան, բատերական գործիչ, բնմադրիչ, բարգմանիշ, հնագիտական ուսումնասիրութիւնների հեղինակ - 13.03.1863, Կ. Պոլս - 05.03.1924, Թիֆլիս: Զաւարեանը խնդրում է Թումանեանին դիմել նրա օգնութեանը, բանի որ Վրոյրը գրադում էր նաև լուսանկարչութեամբ եւ 1904-1917-ին մասնակցել էր Ն. Մանի գիտաշաւաներին (Անի, Գանձի, Վան եւ այլն), եւ հէնց նրա մասնակցութեամբ են 1905 թ. յայտնաբերուել Անիի Գրիգոր Լուսաւորչի տաճարի (Գագկաշէն) աերակմերը: Բայց այդ 1912-ից նա Ցովի. Թումանեանի նախագահութեամբ գործոց «Հայ գրողների կովկասեան ընկերութեան» անդամ էր, իսկ 1913-ին խնդրագրում եւ հրատարակում էր «Յոշարար» հանդէսը:

6.- Լուսանկար՝ իմա լուսանկարից [Ե. Փ.]: Տէր-Ղեւոնդեանը հաւանաբար ժամանակի լուսանկարչներից էր:

7.- Երմակովը Ռուսաստանի լաւագոյն մասնագէտ լուսանկարիչներից էր:


8.- Երուանդ Լալայեանը աւելի ուշ իշխանական Վայոց ձորի, Վասպուրականի եւ Նոր Բայագէտի յուշարձաններին նոյնուած երեք նկարագրադ, ստուարածաւալ ալբոմ՝ հայերէն, ուստեղ եւ ֆրանսէրէն բացատրութիւններով:

9.- Մար Նեկողոյն Եափունիշ - շոտլանդացի /սկոլփիացի - Ե. Փ./ (մայրը՝ վլացի) անուանի լեզուարան, արեւելագէտ, հայագէտ, ակադեմիկոս - 25.12.1864 (Քուրայիս) - 20.11.1934 (Լենինգրադ, այժմ՝ Պետերբուրգ): Ժամանակակիցներին, այդ բուօն Զաւարեանին զաղտնիք չէր, որ Մարը դեռ 1904 թ. ամռանից սկսել էր Անիի պարբերական պեղումները, որոնց մասնակցել է նաև Թորամանեանը՝ շափագրելով Անիի եկեղեցիները, պալատները, պարիսպները, կամուրջները եւ այլն: Հենց այդ պատճառով էլ Զաւարեանը խնդրում էր իր հայրենակից բարեկամից, օգտագործելով իր հեղինակութիւնը, ձեռք բերել Մարի եւ Թորամանեանի հաւաքածուն:

10.- Թորամանեան Թորոս Յարութիւնի - ճարտարապետ, հայկական ճարտարապետութեան գիտական ուսումնասիրութեան հիմնադիր - 18.03.1864, Չապին Գարահիսար - 01.03.1934, Երևան: Դեռ 1903-ին՝ մինչեւ Մարի պեղումները, Թորամանեանը բանասէր Կ. Բասմաջեանի հետ գնացել էր Անի՝ ճարտարապետական յուշարձանների ալբոն կազմելու մտադրութեամբ:

– ՅԱՏԵԼՈՒԱԾ –

Ս. ԶԱՒԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ
ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ



Աւտոիդ իսահակեան եւ Միամանթօ, Ժընև, 1914

Ծանօթ խմբագրութեամ.-

Սիմոն Զաւարեանի անտիպ նամակները բովանդակող հատորի վերջին՝ յաւելուածական բաժնով կու տանք երեք բանաստեղծութիւններ, գրուած յաջորդաբար Սիամանթոյի, Աւետիք Իսահակեանի և Հրանդ Նազարեանցի կողմէ: Յայտնի է որ Զաւարեանի կանխահաս մահը, ինչպէս նաև անոր մարմնին հանդիսաւորութեամբ փոխադրութիւնը Պոլիսէն Թիֆլիս, մեծ ցնցում առաջացուցած էր թէ՝ արեւմտահայ և թէ արեւելահայ շրջանակներուն մէջ: Այդ օրերուն Պոլսոյ և Կովկասի հայ մամուլը, կարելի է ըստել, ողողուած էր մեծ յեղափոխականին յիշատակը պանծացնող արձակ ու ուսանաւոր գրութիւններով: (Տեսնել այս մասին Հ. Տասնապետեանի կազմած ու Զաւարեանի կեանքին ու գործին նուիրուած եռահատոր գործի Ա. հատորը, Պէյրութ, 1983):

Ներկայ յաւելուածով կը ներկայացնեմք վերոյիշեալ երեք բանաստեղծութիւնները: Անոնցմէ առաջինէն՝ Սիամանթոյի «Զաւարեանի հոգի»-էն քանի մը հատուածներ առաջին անգամ լոյս տեսած են «Իրօշակ»ի 1914-ի Մայիս-Յունիսի թի 5-6 (240) համարին մէջ. Խմբագրութիւնը կը յայտնի թէ բանաստեղծութեան ամրողութիւնը ի մօտոյ լոյս պիտի տեսնի Պոլսոյ և Կովկասի թերթերուն մէջ: Արդարեւ, այդ օրերուն ինչպէս նաև յետազայ տարիներուն հրատարակուած Սիամանթոյի ամրողական երկերուն մէջ տեղ գտած է այդ քերթուածը, բայց բոլորին մէջ կը պակսին, «Իրօշակ»ի հրապարակած հատուածներուն հետ համեմատած, երկու քառեակներ: Ներկայ յաւելուածին մէջ կու տանք բանաստեղծութեան ամրողութիւնը՝ ներառելով այդ երկու քառեակները (շեղագիր տրուած):

Երկրորդը՝ Աւետիք Իսահակեանի բանաստեղծութիւնը քաղած ենք «Աւետիք Իսահակեան. Ընտիր երկեր» ժողովածուէն (Երեւան, 2007):

Իսկ վերջինը՝ ծանօթ արձակագիր Հրանդ Նազարեանցի բանաստեղծութիւնն է, զոր քաղած ենք «Ազատամարտ» օրաթերթի հինգերորդ տարուան, 1913-ի 3/16 Նոյեմբերի համարէն: Հեղինակը, որ այդ շրջանին կը գտնուէր Իտալիա, շուտափոյք արձագանգողներէն է եղած Զաւարեանի մահուան:

Ե. Փ.

ԶԱՒԱՐԵԱՆԻ ՀՈԳԻՆ

Ահաւասիկ մօրդ արցունքն իմ ճակատիս,
Եւ իր աղերսն ու հեծեծանքն աչքերուս մէջ,
Եւ աւասիկ զաւկի զարմանքն ու զարհուրանքը հոգիս հետ՝
Ես քե՛զ կու զամ քու մաքուր մահդ ողջունելու...

Եւ ես կ'ողջունե՛մ քեզ, ո՞վ Լոռիի լոին զաւակ,
Որ Սանահինին դէմ՝ դուն քու հոգիդ ծաղկեցուցիր.
Եւ ես կ'ողջունե՛մ քեզ Արարատի ազնիւ որդի,
Արազածի հարսնեղրայր, եւ Արարսի արզասիր...

Եւ ես կ'ողջունե՛մ քեզ, ո՞վ մարդկային հայելի,
Որուն մէջ մին իր հրաշքին ծանօթացաւ,
Եւ որուն մէջ ուրիշ մը իր սեւ դէմքէն էր շանքահար...
Եւ որուն մէջ անքիւներ առաքինութեամբդ օժունցան...

Եւ ես կ'ողջունե՛մ քեզ, ո՞վ յանկարծամահ ուղեւոր
Եւ փառքերէ փախստական եւ բոպէի տարագիր,
Ակնթարթի մէջ ոգեվարուող եւ լոյսէն արա՛գ մահացեալ,
Եւ այսպէս քո՞ն ողջունեն քեզ, մահուանդ առջեւ երգելով...

Եւ քո՞ն ողջունեմ քեզ, ո՞վ հոգիի ուսումնարան,
Ուր մարդերն սկսան մէկզմէկու վրայ խորիիլ,
Եւ ես կ'ողջունեմ քեզ, ո՞վ բարեհամբաւ բանտարկեալ,
Երբ քու քաղցի օրերուդ՝ դուն քու սիրտդ կրծունեցիր...

Եւ ես քո՞ն ողջունեմ քեզ, երէ՛ց եղբայրը մեր ամէնուն,
Մեր ամէնուն խնկարկու, մեր ամէնուն մտրակիչ,
Եւ անկաշկանդ հուսորդ եւ մաքսաւրաց հալածիչ...
Եւ դուն՝ տաճարներ մաքրագործող լմկերային Նազովրեցի՛...

Ծանօթ խմբագրութեան.— «Դրօշակ»ի մէջ հրատարակուած այս բանաստեղծութեան երկրորդ եւ երրորդ բառեակները (շեղագիր) կը պակսին յետազայ բոլոր հրատարակութիւններուն մէջ:

Եւ ես կ'ողջունե՞մ քեզ, ըմբոստորթեանց կարմիր դրօշ,
Որ գերիին եւ անխիղճին համար նոյն ժամանակ ծածանեցար,
Եւ դեռ քաղցրօրէն դուն՝ ձիթենի խաղաղութեան
Եւ մրրկէ մը տարուած քազմապուղ եւ բարի ծառ...

Եւ ես կ'ողջունե՞մ քեզ, խորիրդանիշ պայծառութեան,
Դուն՝ մարդերու խղճին նժար,
Դուն՝ մարդերու մտրակիչ եւ մարդերէն մարտիրոս,
Եւ դուն՝ անոնց անզին նոխազ, եւ դուն՝ անոնց անզին զերի...

Եւ ես իմ սէրովս կ'ողջունեմ քեզ, քափառական այցելու,
Դուն՝ որիշին ուղեցոյց, դուն՝ որիշին արահետ.
Դուն՝ որիշին ոտքի հող, եւ որիշին զլսու պասկ,
Եւ որիշին ողջակէզ, եւ որիշին համար ամրոց...

Եւ ես կ'ողջունե՞մ քեզ, ո՞վ փրկարար փորորիկ,
Դուն՝ գարշութեանց մաքրիչ եւ փոքրոգութեանց խարազան,
Դուն քու խաչդ ուսիդ՝ Գողգոթքայէն վեր մազցող
Ո՞վ սրբակրօն Սիմեոն, ո՞վ եղերական մարդ-Ձիսու...

Եւ դարձեալ քեզ կ'ողջունե՞մ, հայ ժայռերու կողէն հոտոյ,
– Բայց ծարաւիդ թշնամի – աղքիր քերքի, աղքիր պայծառ,
Որ առուակէ առուակ, եւ հոսանք հոսանք, ու դաշտէ ի դաշտ,
Դուն քու կեանքիդ այդ անմահ գետն յօրինեցիր...

Եւ ես նորէն կ'ողջունեմ քեզ, ո՞վ ձեռքէ ի ձեռք շրջող
Հողէ սափոր անպերճանք,
Որուն մէջէն ժողովուրդ մը յուսահատ
Քու հոգիդ հուրքը խմեց...

Եւ տրտմութեա՞մբ կ'ողջունեմ քեզ,
Ո՞վ միամիտ ու պաշտելի պարտիզապան,
Որ մշակած կարդաստանէդ
Բախսին հովը բուրմոնք մը իսկ քեզ չի բերաւ...

Ու դարձեալ կ'ողջունեմ քեզ, ո՞վ տառապանքի բեռնակիր,
Հասարակաց դուն՝ ուղղամիտ սպասաւոր.
Ժողովուրդի ժամկոչ, զրկեալներու իրաւարան,
Եւ պարագլուխ խոնարհ, եւ անդադար մշակ, եւ մեծարժեք քանուոր:

Եւ երազներո՞վս կ'ողջունեմ քեզ, ո՞վ դուն՝ եղնիկ պատառոսուն,
Ո՞վ իմ մեռեալս մեծարժեք, ո՞վ իմ ընկերս անխարդախ.
Եւ կ'ողջունե՞մ քեզ, սոսուերիդ հետ արբեցութեամբ պարելով,
Ո՞վ կարօւներու կոռունկ, եւ Կիլիկեան գուժաքեր...

Եւ նորէն քեզ կ'ողջունեմ, գերերջանիկ գիւղատնտես,
Երբ քու գութդ ուրիշին համար գարուն էր...
Երբ ամառդ առասութիւն էր թշուառին,
Երբ աշունդ արդի՛նք էր, եւ քու ձմեռդ արեգակ...

Եւ ամէն խիղճ քո՞ն ողջունէ քեզ, ո՞վ մաշած ծունկով ճգնաւոր՝
Գաղափարի եւ զիսութեան մեծահմուտ տարածիչ,
Անխոնջ ցանող հայ դարերէն մեր ժառանգած յոյսերուն
Եւ յոյսի վրայ, յոյսի եղբայր, յոյսէն զինով գործաւոր:

Եւ ամէ՞ն ոք քո՞ն ողջունէ քեզ, ո՞վ անօրի ճանապարհորդ,
Որ իր ցուազն ի ձեռին ուրիշին համա՛ր միայն մուրաց.
Եւ քո՞ն ողջունեն քեզ, ո՞վ զգացմանց յատակ ջրվէժ,
Որուն սիրտը աղբիւր մըն է մէն մի ծարաւի հանդէպ...

Ու մարդերն քո՞ն ողջունեն քեզ, ո՞վ հազուազիւտ լուսարար,
Որ իր կաթիլ մը իւղովն ուրիշին կանթեղը կը վառէր...
Ու նորէ՞ն քեզ քող ողջունեն, ո՞վ նուիրական կտաւազործ,
Որ իր անձին մէկ պատանքէն ուրիշին պատրոյգ միայն կտրեց...

Եւ վերջապէս իմ ձեռքերս դէպի երկինք՝ քո՞ն ողջունեմ քեզ,
ո՞վ Խրիմեանի մը հոգւոյն եղբայր.
Դո՞ւն՝ լոյսի սրինգ, լո՞յս աչքերով հողէն ելած ուրուական,
Լոյսին վազող առաքինի, լո՞յս բաժանող հայրենասէր,
Լոյսին ոլինաց ծնրադիր եւ լոյսին համար մահացող մարդ...

ՍԻԱՍԱՆԹՈ

Միամանթօ. «Ամրողական երկեր», Անթիլիսս, 1989, էջ 215-218

ՍԻՄՈՆ ԶԱԿԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Նա գալիս էր հին, հեռաւոր դարերից,
Պատմումանը փոշիներով քարաւոն.
Մուծակները պատառ-պատառ քարերից,
Ճակատը բաց՝ ցուրտ հովերուն, արեւուն:

Նա նստել էր ոտների տակ Յիսուսի,
Ունկնդրել աստուածային Կտակին,
Հոգում երկինք անհուն սիրոյ եւ յոյսի,—
Եւ նա եկաւ այնպէս հե՞զ ու կաթողին:

Բարեկամի, օտարի հետ, ամէնուր,
Սեղան նստեց, մեզ հետ կտրեց աղ ու հաց,
Եւ բափառեց աւանդելով դրներուն
Յաւերժական պատգամները մոռացուած:

Յաւերժական պատգամները մոռացուած.—
Սիրել, ներել ե՛ քշնամուն, ե՛ չարին,
Լինել ծըլին, փոշուն, որդին ողորմած,
Ու սերմանել միշտ ճշմարիտն ու բարին:

Այս նիւթամոլ, այս կեղծաւոր դարի մեջ,
Արհամարհեց նա ամէն բարձ ու պատիւ,
Սիշտ վառ պահեց այն երկնային ջահն անշեց,
Եղաւ բոլոր որք սրտերի քաջ հովիւ:

Խարազանեց ամէն սուտը ու վատը,
Լացեց ամէն տառապողի լացի հետ,
Կեանքով կոփեց ազատութեան լոյս-դատը,
Եւ չկնտռեց նենզ փախուստի արահետ:

Սիշտ պատճեշին, եւ կուրծքը բաց, անզրահ,
Արշալոյսից կոռւեց մինչեւ արշալոյս,
Եւ այրուեց հուր վերքերով մեզ վրայ,
Որ մռայլում հեծծողներիս բաշխեր լոյս:

Եղաւ համեստ, անխոնց, ծառայ ամենքին,
Եւ մշակեց անդաստանը բոլորի,
Եղրօրից շա՝ տ սիրեց խեղճին, տնանկին,
Եղաւ փարոս, որ ո՛չ մի նաւ մոլորի:

Եւ չունեցաւ գլուխ դնելու մի չոր քար,
Զեռք չմեկնեց ո՛չ ընկերի, ո՛չ եղրօր,
Ինչ որ ուներ, տարաւ մօտիկն ու օտար,
Իրեն մնաց մի սիրտ անտոն, վիրաւոր:

Դու, Չոհալ աստղ, մեր վէրքերի բալասան,
Սեր ցաւերի համար եկած այս աշխարհ,
Սեր արիւնոտ հովլիտների սուրբ շուշան,
Դու յաւերժ ես, դու չմեռա՛ր, չմեռա՛ր:

Նա չմեռաւ, նա յոգնեցաւ, նա գնաց,
Բայց երբ նորից աշխարհ ընկնի հուր ու քուր,
Նա պիտի զայ պատզամներով մոռացուած,
Աւանդելով սէրն երկնքի դռնեդրուտ...

ԱՐԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

1913 Նոյեմբեր, Ժընեվ

ՎԵՀԱՓԱՆ ՍԻՐՏԸ

Անհետացող Հայ գեղեցիկ սիրտին,
ՍԻՐՈՆ ԶԱՒԱՐԵԱՆԻ
Անմռանալի ու հզօր յիշատակին:

Ո՞վ իմ Ցեղիս սիրտը արեւ, ով վեհափա՞ն տրտմոթիւն,
Որ, խա՛չ-քնար, աստղերուն տակ կ'այրիս դեռ,
Որ, եօթնաղի,- եօթն ալ միարիք անդունդներ...-,
Չարչարանքի տեսիլքներով ցաւազին,
Գեղեցկութեան լոյս երազդ կուլաս դեռ,
Ո՞վ իմ Ցեղիս սիրտը աղուոր, ողջո՞յն քեզ...:

Հայ մենութեան զարհութելի՝, արիւնո՞ւ սիրտը արեւ,
Որ մեր Սուզին ծովի՞ն վրայ ես ծագեր,
Դա՞ր դարերո՞վ խոհուն վիշտդ քառաթեւ
Հրաշածայն քերքուածներուդ աղամանդ
Կշռոյթին մէջ եղենօրէն ես խաչեր,
Հայ մենութեան սիրտը աղուոր, ողջո՞յն քեզ...:

Արեւելքի դաւաճան, խոլ ծուլանքին մէջ սպաննոյ,
Դուն, Ապրելո՞ւ պայծառ խորհուրդը խորին,
Օրհասին դէմ՝ Կեանքին վրէժն ուժանակ,
Դուն, Սահուան դէմ՝ Անմահութեան ճառագայք,
Դուն, ուշացող այլ անվրէպ Յաղթանակ,
Ո՞վ իմ Ցեղիս արեւ հոգին, ողջո՞յն քեզ...:

Դարերու հոծ կուրծքէն ժայթքող հերոսական կամքերու
Ո՞վ մշտագօր ու մշտահու լուսարքի՞ր,
Որ բոլիսելով իին փառքերու հեռանհետ
Քիրակունքէն, դեռ կը հոսիս արիւնի
Ճամբաներէն, արքայական ահաւոր
Տրտմութեան մը հանդիսաւոր լրջութեամբ,
Հայ կամքերու հերոսական մեծութիւն, ողջո՞յն քեզ...:

Զու վիշտը մեծ, ո՞վ վեհափառ Ցեղիս սիրտը մենաւոր,
Չի՛ հասկցուած, աստուածային վիշտդ անհուն՝
Վի՛շտն է բեղուն, վրէժխնդիք Հանճարին
Որ իր պատկերն կ'ուզէ օր մը քանդակել
Անմահութեան լուսաշողջող ճակատին,
Ո՞վ վեհափառ Ցեղիս սիրտը, ողջո՞յն քեզ...:

ՀՐԱՄ-Դ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Հռովմ

«Ազատամարտ» օրաբերք, Պոլիս, հինգերորդ տարի, Կիրակի 3/16 Նոյեմբեր 1913:

ԱՆՁԱՆՈՒՆԵՐ*

- Արբօ** (Սահմանական Մկրտիչ) – 17, 18, 86:
Ալոյեան Գալուստ (Թորոս) – 38, 39:
Ակնունի է. (Մալումեան Խաչատուր) – 94, 148, 150, 152, 193:
Ահարոնեան Աւետիս – 55, 96, 141:
Աղասէր (Գրիգորեան Յակով) – 29, 60, 62, 97, 98, 114, 115:
Աղբալեան Նիկոլ (Հանդոյց) – 123-127, 129-132, 194:
Աղբէր (Մոկացի Յարութիւն) – 31, 32, 50:
Անդրանիկ (Օզանեան) – 27, 190, 191:
Անմեղ – Տես Սեւքարեցի Սաքօ:
Աշոտ Երկաթ (Լեւոնեան Արմենակ) – 23, 29, 45, 75, 76, 78, 84-86, 88:
Աշոտ Լեւոն (Սարգիսեան Նշան) – 118-120:
Ապտիւլ Համիտ Բ. – 95, 153, 164:
Արաբեան Գ. – 78, 83, 84, 90, 97:
Արաբօ – 23, 89:
Արդութեան Յովսէփ (Իշխան) – 17, 18:
Արդութեաններ – 194, 195:
Արմէն Գարօ (Փաստրմաճեան Գարեգին) – 168, 181:
Արվաշի (Վարդ-Պատրիկեան Յակով) – 17, 18, 60, 61:

Բասմաջեան Կարապետ – 197:
Բորիս (Խաչատրեան Մմբատ) – 17, 18, 189:

Գալֆայեան Յարութիւն (Վահրամ) – 33, 35, 40-42, 60-62, 66, 74, 91, 99, 129, 148, 149, 151:
Գասպարեան Միքայէլ – 75, 76, 92, 98:
Գարմէն (Մելքոնեան Մկրտիչ) – 183, 185:
Գէորգ Զաւուշ (Աղամեան) – 7, 182, 183:
Գիսակ (Վարդգէս – Սերենկիւլեան Յովհ.) – 23-27, 29, 31, 32, 36, 37, 45, 49-53, 56, 64, 72, 73, 154, 156, 168:
Գույումճեան Միսաք (Կարիճ) – 97-99:

Դաւթեան Յոնան – 132, 146, 148, 152, 154, 156, 163:
Դաւթեան-Փոլատեան Յարութիւն – Տես Աղբէր:
Դաւթեան Օրտանս – 144, 146, 148, 149:
Դժոխք – Տես Հրայր-Դժոխք:
Դրօ (Կանայեան Դրաստամատ) – 7:

Եաղուպեան Արտաշէս – 169, 170:
Եռւսուֆեան Յովհաննէս – 14, 15:
Երկաթ – Տես Աշոտ Երկաթ:
Երմակով – 194, 195, 197:
Եփրեմեան Մկրտիչ – 119, 126, 129:

*). Զանց առած ենք նշել Միմոն Զաւարեանը (1865-1913), որուն անունին կարելի է հանդիպիլ հասորի գրեթէ իւրաքանչիւր էջին:

- Գ**արդարեան Ռուբէն (Ասլան) – 66:
Զաւրեան Յակոբ – 185:
Զաքարեան Սարգիս – 194, 195:
- Ժ**աղէսսեան Եղիշէ – 196, 197:
Ժամիրեանց Գրիգոր – 46, 47, 103:
Ժափառիկ (Փաշայեան Կարապետ) – 100, 103, 106, 107, 109, 116, 119, 120, 123, 126, 127, 129, 131, 132, 136:
Ժիրեաքեան Հայկ (Ֆարհատ, Հրաչ) – 40, 42, 168, 183:
Ժորամանեան Ժորոս – 197:
Ժումանեան Մուշեղ – 195:
Ժումանեան Յովհաննէս – 6, 7, 194-197:
- Ի**սահակեան Աւետիք – 6, 183, 198, 199, 204:
- Լ**ալայեան Երուանդ – 196, 197:
Լիզա (Մելիք-Շահնազարեան) – 96, 116, 144:
Լոռու-Մելիքեան Յովհաննէս (Ժայինեան) – 97-99, 116:
Լուսնթագ – 89:
- Կ**ամսարական Արմենակ – 44, 48:
Կարիճ (Գույումճեան Միսաք) – 60, 61:
Կոմս (Փափազեան Վահան) – 86-88, 95, 149:
Կոտոյեան (Յակոբ) Հաճի – 183, 185:
- Հ**ալածեան Պետրոս – 168, 181:
Համալեան Կարապետ (Ուրֆացի) – 50, 56:
Հայր Աբրահամ (Սահակեան Աւետիք) – 189:
Հանըմեան Արտաւազդ – 131:
Հրայր-Դժոխվա (Ղազարեան Արմենակ) – 37, 39, 49, 50, 56, 63, 72, 73, 183:
- Ղ**ազարեան Վլթանէս – 97, 98, 146:
Ղարախանեան Ներսէս Վլդ. – 123, 125, 153, 183:
- Ճ**ղուկեան Յ. – 54, 66:
- Մ**աղաքեան Աւետիս (Աւօ) – 85:
Մանուէլեան Վահան – 23, 29, 31, 32, 36, 39, 49, 56, 57, 72, 73, 86-88:
Մանուկեան Արամ – 192:
Մառ (Նիկողայոս Եակովլեւիչ) – 197:
Մատինեան Նատալիա – 89:
Մատինեան Նիկոլ – 130:
Մար (Տէր Մարտիրոսեան Միքայէլ) – 34, 74, 113-115, 120, 152, 183, 197:
Մարգարեան Մարտիրոս (Սաֆօ) – 95:
Մարթին – Տես Մուլրատեան Մարթին:
Մելիք-Գրիգորեան Բարսեղ (Ղարամելիք) – 13, 17, 18:
Մեծն Մուրատ (Պոյածեան Համբարձում) – 64:
Մենակ (Առստամեան Գէորգ) – 23:
Միրճեան Կարապետ (Ժիրայր) – 118, 120:
Միքայէլեան Քրիստափոր – 5, 7, 43, 55, 99:

Մուրատեան Մարթին (Մարթին) – 33-35, 40-42, 48, 60, 100, 105, 106, 111, 112, 117, 119, 126-128:

Յակոբեան Սիմոն – 130, 152:
Յակոբեան Վարդան Վրդ. – 183:
Յարութիւնեան Մարտիրոս (Ասլան) – 57, 75, 76:
Յովհաննիսեան Գ. Սուսաննա – 196, 197:
Յովհաննիսեան Արտաշէս (Մալիսաս) – 81, 82, 94, 140:

Նազարեանց Հրանդ – 199, 205:
Նեշտար (Օհանեան Քրիստովոր) – 17, 18:
Նիթրա – Տես Շահրիկեան Յարութիւն:
Նիկոլ Դուման (Տէր Յովհաննիսեան Ն.) – 7, 8, 17, 18, 75:

Շահնազար Յովհաննէս – 148:
Շահրիկեան Յարութիւն – 141, 148:
Շանթ Լեւոն – 183:
Շատիկեան Պօղոս – 97, 98, 104, 105, 107, 119, 120, 131:
Շարաֆ (քիւրտ ցեղապետ) – 17, 18:
Շաքիր փաշ – 13:

Ուրֆացի – Տես Համալեան Կարպետ:

Պաղտոյեան Ներսէս (Ցօշան) – 100, 104, 107:
Պետրոսեան Ալեքսանդր (Պետօ) – 87, 88:

Պատիկեան Զաքարիա (Կիլիկեան) – 60, 61, 66, 117, 119, 120:
Պրեսանսէ Ֆրանսիս – 94:

Ջեմալ փաշ – 192:
Ջեւադ բէյ – 124, 125, 127, 128, 192, 193:

Թահվեր – Տես Վարդանեան Միսաք:
Թոստոմ (Զօլեան Ստեփան) – 5, 7, 8, 12, 17, 121, 129, 185:
Թոռքինա (Արէշեան) – 145, 146:
Թոռզուելու – 130:

Սամսոն (Թաղէսուեան Ստեփան) – 24, 25, 29, 31, 32, 56, 58, 59, 139:

Սարկաւագ (Տէր Ղեւոնդեան Յակոբ) – 23:

Սարհատ (Յակոբեան) – 100-102, 104-108, 119, 120:

Սարումեան Լիզա – 89:

Սերեմճեան Արտաշէս (Թորգոմ) – 32, 36, 39, 50, 56, 57, 59:

Սերեմճեան Պետրոս – 32, 36, 39, 50, 56, 57, 59:

Սերենկիւլեան Յովհ. – Տես Գիսակ:

Սերոբ Աղբիւր (Վարդանեան) – 7, 17, 18, 72, 73, 87, 88:

Սերոբ Սուլուխցի – 183:

- Սեւքարեցի Սաքօ (Ծովիանեան) – 17,**
18, 24, 25:
Սըվաճեան Արշակ – 132:
Սիամանթօ – 6, 67, 198, 199, 202:
Սիվրիսարեան Ազնիւ – 46, 47:
Սուրէն (Շխեան Սիմոն) – 34:
Ստեփանեան Ստեփան (Բալաջան) – 139:
- Վահագրամ – Տես Գալֆայեան Յառութիւն:**
Վանայ Իշխան (Բայանտուր Իշխան) – 87, 88, 95, 151:
Վարանդեան Միքայէլ – 27, 38, 39, 45, 75, 76, 94, 96, 97, 107, 120-122, 129-133, 138, 142-144, 146, 152, 182:
Վարդան (Խանասորի) – 17, 75, 76, 103, 104, 107, 111, 117, 120:
Վարդանեան Միսաք (Ռահվեր) – 40-42, 60, 61, 102, 103, 107:
Վարդան Շահպազ (Տօնիկեան) – 29, 63, 72, 73, 75, 76:
Վարդգէս – Տես Գիսակ:
Վարդ-Պատրիկեան Յակոբ – 83, 85:
Վարդ, Վարդ-Մանուչակ (Աբրահամեան Յակոբ) – 80:
Վռամեան Արշակ – 79, 131, 132, 140, 182, 183:
- Վրացեան Սիմոն – 5, 11, 16, 194:**
Վրոյր (Մաքաշեան Արամ) – 194, 195, 197:
- Ճանապետեան Հրաչ – 5, 11, 159, 178, 199:**
Ճառակ – Տես Տէր Կարապետեան Գեղամ:
Տէր Դաւթեան Յովսէփ – 109, 132, 138:
Տէր Կարապետեան Գեղամ (Ճառակ) – 151, 190:
Տէր Մինասեան Ռուրէն – 185:
Տէրոյեան Տիգրան (Վազգէն) – 87, 88:
Տէր Ստեփանեան Յ. – 81, 139:
- Փաշայեան Կարապետ – Տես Թափառիկ:**
- Քիյառ – 94:**
Քիւրդ Իշխան – 194, 195:
Քսենոֆոն – 187:
- Օհանջանեան Համօ – 132:**
Օրմանեան Մաղաքիա պատրիարք – 49:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Արբոյի գերեզման – Տես Սասուն:
Աթէնք – 48, 100, 104, 108, 114:
Ալքսանդրապոլ – Տես Քաղ, Քաղուտ:
Ախլաթ (Պուրակ) – Տես Խլաթ:
Աղեքսանդրիա – 11, 33, 35, 40, 43,
46, 66, 99, 100, 109, 120:
Ամերիկա – 28, 29, 33, 36, 38, 40, 41,
49, 51, 53, 55-57, 59, 64, 67, 74, 79, 81,
118, 126, 131, 142:
Այգեշատ – 7:
Անթապ (Հովիտ) – 61, 100, 102, 103,
107, 115, 117-120, 123, 125-128, 164, 165:
Անթիլիաս – 5, 159, 202:
Աննմաս – 121, 122:
Անտիոք – 156, 159:
Ապառաժ (Ղարաբաղ) – 29:
Ատաբաղար – 156, 163:
Ատանա (Խոր Վիրապ) – 9, 11, 40, 61,
115, 117, 119, 120, 123, 125, 153-155,
157, 158, 161, 162, 164, 165:
Ատպատական (Վրէժ) – 18, 24, 25,
28, 36, 49, 51, 52, 54, 56, 58, 62, 63, 66,
72, 75, 81, 86, 93, 139, 140:
Աւստրիա – 38, 84, 94:

Բաթում – Տես Պաթում:
Բախչէ (Պաղճէ) – 154, 156, 159, 160,
162, 164, 165:
Բաղէլ (Բիթլիս, Պիթլիս) – 49, 151,
153, 181, 185, 186:
Բոստոն – Տես Պոստոն:

**Գահիրէ – 11, 66, 119, 126, 127, 129,
136:**
**Գաղթաշէն (Աթաղէի վանք – Ատլո-
պատական) – 37, 39:**
Գերմանիա – 29, 122:
Գոնիս – 97, 98:

Դժոխք (Աղերդ) – 49, 50:

**Եղիպտոս – 50, 54, 65, 66, 74, 78, 99,
101, 113, 118, 119, 127, 129-131, 135,
142, 147, 149:**
Եթովպիա (Հապէշստան) – 37, 91, 92:
**Երեւան (Մրգաստան) – 16, 23, 51-53,
56, 57, 59, 81, 82, 87, 121, 140, 142,
144, 194, 197, 199:**
**Երուսաղէմ – 80, 116, 123, 125, 129,
145, 153, 163:**
**Երոպա – 43, 58, 76, 79, 84, 98, 104,
113, 149:**

Զահէ – 103, 107:
**Զէլթուն (Արծուաբերդ) – 85, 94,
115, 118, 135, 155:**
**Զուիցերիս (Շուէյցարիս) – 11, 17,
122:**

Լրպին – Տես Զերել Պերեքէթ:
Լրզըում – Տես Կարին:

Թարսուս – Տես Տարսոն:
Թաւրիկ – 53, 56, 73, 76, 140:
Թեհրան – 37, 38, 50, 51, 58, 63, 72, 81:
Թիֆլիս (Մեծ Քաղաք) – 11, 14, 16,
22, 24, 29, 31, 32, 37, 39, 50, 53, 56, 57,
67, 93, 95-97, 109, 114, 115, 120-123,
126, 129, 131-133, 135, 137, 139-142,
144, 146-148, 156, 184, 194, 197, 199:
Թուրքիա (Տաճկաստան) – 15, 70, 98,
138, 139, 145, 147-151, 178, 182, 190:

**Ճընեւ – 8, 11, 12, 14, 16, 17, 22, 27,
28, 31, 49, 60, 62-65, 67, 72, 74, 75, 77-80,
89, 94, 96, 97, 99, 114, 116, 122, 123,
130, 140, 141, 150-152, 198, 204:**

**Իզմիր – Տես Ուկեհանք:
Իսկենտերուն – Տես Կարաւան:**

**Լեռնավայր – Տես Կիլիկիա:
Լիբանան – 61, 102, 104, 106, 115, 127,
145, 150:
Լոնտոն – 65, 108:
Լոռի – 7, 194, 197, 200:
Լօզան – 130:**

**Խանասոր – 16, 18, 152:
Խասսա – 160, 162:
Խարբերդ – 74, 123, 150, 155, 157, 158:
Խլաթ (Ախլաթ) – 88, 151, 185, 186:
Խոյ – 32, 82:
Խոր Վիրապ – Տես Աստանա:**

Ծոց – Տես Պէլոռոթ:
Կալկաթա – 36:
Կարաւան (Ալեքսանտրէթ-Իսկենտե-
րուն) – 113, 129, 165:
Կարին (Կրգուլմ) – 13, 125, 168, 192:
Կարս – 23, 58, 63, 67, 132:
Կարսբազար – 162:
Կեսարիա – 123, 145:
Կիլիկիա (Լեռնավայր) – 8, 9, 11, 33,
38, 40, 42, 49, 55, 59, 60, 62, 65, 66, 73,
74, 76, 78-80, 83, 92, 98, 99, 101, 104,
107, 111, 112, 114, 115, 118-120, 125-127,
130, 135, 153, 154, 167, 194:
Կովկաս – 9, 11, 22, 28, 37, 45, 52-54,
64, 75, 76, 81, 93, 99, 115, 116, 124, 134,
135, 194, 197, 199, 202:

**Հալէպ (Դաշտ) – 102, 103, 117, 120,
123, 125-127, 129, 156:
Հաղպատ – 194:
Հաճըն – 155, 159, 162:
Համիտիէ – 154, 159, 162:
Հապէշստան – Տես Եթովպիա:
Հասան Բէյլի – 163, 164:
Հարար – 90, 91:
Հաւատորիկ – 169, 170:
Հեղեղատ (Քեսապ) – 100, 112:
Հնդկաստան – 36, 37, 50, 57, 83, 93:
Հովիտ – Տես Այնթապ:**

**Ղազուին – 57, 63:
Ղարաղաղ – 37, 139:
Ղարաքիլիսա – 140:**

Ճիպութիւ – 78, 84, 92:

Ուրմիա – 37, 81:
Ուրֆա – 165:

Մալաթիա – 158:

Մակեդոնիա – 156:

Մակու – 37, 57:

Մանազկերտ – 185, 186:

Մանչեստր – 46-48, 60, 65, 92:

Մարաշ (Մահմանաբերդ) – 61, 74, 113, 117, 120, 123, 125, 159, 160, 164, 165:

Մարզուան – Տես Զոք-Մարզուան:

Մարսէլլ – 40, 84, 90, 92, 121, 122, 130:

Մեծ Քաղաք – Տես Թիֆլիս:

Մերսին – 154, 156, 165, 166:

Միսիս – 155, 159, 160:

Միրզաջան (Տաք-Աղբիւր) – 87, 88:

Միւնիի – 60, 94:

Մուշ – 27, 64, 66, 67, 78, 125, 155, 157, 158, 165, 171, 172, 174, 178, 182, 185-187, 190:

Յունաստան – 77, 78:

Նոր Բայազէդ – 197:

Նոր Զուղա – 81:

Շամ – Տես Վան-Վասպուրական:

Շապին Գարահիսար – 197:

Շուշաւեր – 197:

Զոք Մարզուան – 123, 156, 162:

Պաթում (Բաթում) – 14, 16, 109, 121, 122, 130, 196:

Պարսկաստան – 37, 50, 53-55, 63, 64, 72, 78, 125, 138:

Պարտիզակ – 156, 163:

Պաքու (Բաքու – Ուկանապատ) – 24, 25, 50-52, 140, 156:

Պերլին – 27:

Պէլլութ (Բէլլութ – Ծոց) – 6, 9, 11, 78, 100, 102, 104, 105, 107-109, 113, 123, 126, 127, 129-131, 142, 145, 199:

Պիթլիս – Տես Բաղէշ:

Պիրենիկ – 181:

Պիրէ – 105, 107:

Պոլիս – 9, 11, 12, 14, 17, 18, 28, 33, 34, 36, 39, 48, 53, 55, 61, 85, 95, 107, 112, 123, 126, 127, 145, 148-155, 159, 161, 165, 167, 177, 184-186, 190, 192-194, 199, 202, 205:

Պոստոն – 5, 11, 37, 53, 74, 81:

Պուլկարիս – 29, 87, 115:

Ջերել Բերեքէթ – 158-160, 163:

Ջուղա – 51:

Ռեշտ – 81:

Ռոտոսթօ – 48, 156:

Ռումանիա – 93:

Ուկանապատ – Տես Պաքու:

Ուկեհանք (Իզմիր) – 33, 35, 41-44, 49, 60-62, 74, 77, 92, 107, 119, 120, 145, 150, 165:

**Ոռւսիա (Ոռւսաստան) – 9, 55, 93,
94, 110, 113, 133, 137, 139, 145, 197:**

**Սալմաստ (Մինարէթ) – 37, 39, 53,
55, 63, 81, 82, 88, 95, 139:**

Սանահին – 132, 200:

**Սասուն (Բարձրաւանդակ) – 9, 11,
18, 23, 29, 32, 38, 45, 49, 52, 57, 64, 66,
84-88, 95, 116, 127, 133, 183, 184, 186, 187:**

Սեբաստիա – 157:

Սիս – 150:

Սղերդ (Դժոխք) – 61, 74, 151, 186:

Սուէտիա – 78:

Սուխում – 33:

Սուրիա – 61, 115:

Սովիա – 59, 93:

Սպազ-Սեբաստիա – 67:

**Վան-Վասպուրական – 14, 18, 23-27,
38, 39, 45, 56, 59, 62, 64, 72-74, 78, 81,
82, 85, 93-95, 125, 145, 149, 151, 185,
186, 192:**

Վառնա – 35, 45, 152:

Վիեննա – 9, 94:

Վիշապ – Տես Պոլիս:

Վլէժ – Տես Ատրպատական:

Ճաթեւ – 50:

Տաճկաստան – Տես Թուրքիա:

Տարսոն – 123, 125, 154, 155:

**Տարօն – 8, 9, 11, 127, 152, 169-171,
173, 177, 183, 186:**

Տիատին – 88:

Տիգրանակերտ – 61, 74, 155, 181:

Տրապիզոն – 14:

**Փարիզ – 27, 49, 62, 65, 85, 91, 98,
99, 108, 145:**

Փորթ-Սալիս – 90, 92, 101:

**Քար, Քարուտ (Ալեքսանդրապոլ) –
29, 87, 88, 121, 140, 141:**

Քիլիս – 165:

Օսմանիէ – 155, 159, 160, 162, 164:

Օտեսա – 97-99, 115, 117, 131:

Ճիլիպէ – 46:

Յոնուզ – 61, 135:

Յրանկֆորտ – 146:

Յրանսա – 37, 90, 94, 122, 131:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս. Զաւարեանի անտիպները – Գեղրգ Խուլինեան -----	5
Ս. Զաւարեանի նամակներուն մասին – Ե. Փամպուքեան -----	11
1895-ի նամակներ (թի 1 և 2) -----	13
1897-ի նամակ (թի 3) -----	16
1900-ի նամակ (թի 4) -----	22
1902-ի նամակներ (թի 5–14) -----	23
1903-ի նամակներ (թի 15–39) -----	43
1904-ի նամակներ (թի 40–51) -----	81
1905-ի նամակներ (թի 52–59) -----	100
1906-ի նամակներ (թի 60–71) -----	114
1907-ի նամակներ (թի 72–78) -----	137
1908-ի նամակներ (թի 79–82) -----	147
1909-ի նամակներ (թի 83–93) -----	152
1910-ի նամակներ (թի 94–100) -----	168
1911-ի նամակներ (թի 101–106) -----	170
1912-ի նամակներ (թի 107–108) -----	189
1913-ի նամակներ (թի 109–111) -----	192

Յաւելուած

Ծանօթ խմբագրութեան -----	199
1.- Զաւարեանի հոգին – Սիամանքo -----	200
2.- Սիմոն Զաւարեանի յիշատակին – Աւ. Իսահակեան -----	203
3.- Վեհափառ սիրտը – Հ. Նազարեանց -----	205
 Անձնանուններ -----	207
Տեղանուններ -----	211

Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն
եւ ծանօթագրութիւններ՝
ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՁԵԱՆԻ

Համակարգչային շարուածք եւ ձեւատրում՝
ԹԱՍԱՐ ՄՆԱՊԵԱՆ-ՍՈՒՐՃԵԱՆԻ

Կողքի պատրաստութիւն եւ լուսանկարներու մշակում՝
ՍԱԳՕ ԳԱՍԱՊԵԱՆԻ

«ԱԷմ» մատենաշարի բոլոր հատորները տեղադրուած են
www.arfd.am կայքէջին վրայ:

Ստորագրուած է տպագրութեան՝ Հռկտեմբեր 2024:

Տպագրութիւնը՝ օֆսէթ: 13.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 1000:



ՀԱՍԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԵ ՍԷԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՏՈՒՆ